Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՍԵՐԳԵՅ ԱՎԱԳՅԱՆ

ՍՈՒՐՄԱԼՈՒ

ԵՐԵՎԱՆ 2000 թ.

Նվիրում եմ հայրենասեր, աշխատասեր, տաղանդաշատ սուրմալեցիներին

Հեղինակ

ԳՏՀ 941(479.25)
ԳՄԴ 63-3(2Հ)
Ա - 770

ԱՎԱԳՅԱՆ Ս.
Ա - 770 ՍՈՒՐՄԱԼՈՒ: [Հայրենագիտական նյութեր]-Եր.: Վան Արյան, 2000.-240էջ:/

Ա - 0503020913 / 854(01)-2000 2000թ.

ԳՄԴ 63-3(2Հ)

ISBN 99930-57-21-5

© ԱՎԱԳՅԱՆ Ս., 2000թ.

Գրքում ներկայացված են պատմաաշխարհագրական տեղեկություններ Սուրմալու գավառի և այդ տարածքի մասին, առանձին բնակավայրերի, սուրմալեցիների սովորույթների, կենցաղի, արհեստների, երկրագործության և անասնապահության մանրամասները: Բերված են սուրմալեցիների հերոսական ինքնապաշտպանական կռիվների, թուրք-թաթարական ոճրագործների բռնությունների, Սուրմալու գավառը քաղաքական խարդավանքների հետևանքով թշնամուն հանձնելու վավերագրական փաստեր:

Տրված են նաև որոշ սուրմալեցիների, նրանց ժառանգների համառոտ կենսագրականներ, հիշատակված են ավելի քան 800 անձնանուններ:

Նախատեսված է ընթերցող լայն զանգվածների համար:

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Բազմադարյան իր պատմության ընթացքում հայ ժողովուրդը համագային անդառնալի կորուստներ է կրել՝ զրկվել պետականությունից, բռնությունների ու կոտորածների ենթարկվել, կորցրել իր տարածքների զգալի մասը: Այս առումով մեզ համար ավելի ցավալի և շոշափելի են 20-րդ դարի սկզբին օսմանյան ազգայնամոլ կառավարողների ձեռնարկած՝ հայ ժողովրդի զանգվածային կոտորածներն ու տեղահանումները: Այդ ցեղասպանության հետևանքով հայաթափվեց Արևմտյան Հայաստանը: Ոճրագործների արյունոտ ճիրաններից քչերին հաջողվեց ազատվել, սփռվել աշխարհով մեկ:

Հայ ժողովրդի պատմական ողբերգությունը տարբեր ժամանակներում լուսաբանվել է մեր, ինչպես նաև արտասահմանյան խոշոր գիտնականների կողմից: Սակայն նրա առանձին հատվածներ (Սուրմալու, Շարուր, Նախիջևան և այլն) դեռևս չեն արժանացել առանձին լուսաբանումների, հետազոտությունների: Անցնում են սերունդները, և հետագայում այդ հայրենիքով զբաղվողների համար դժվարություններ են առաջանալու, խամրելու է հիշողության դաշտը, չեն լինելու ականատեսների պատմածները:

Մեր համոզմամբ, այն ինքնախաբեություն, թե «դարերի խորքից ենք գալիս և հառնում ենք որպես փյունիկ», բոլորովին էլ այդպես չէ: Ճշմարիտ է սկզբնամասը: Ինչ վերաբերում է «փյունիկի պես հառնելուն», կյանքը դա չի հաստատում: Հայերի զանգվածային և պարբերաբար կրկնվող ցեղասպանությունը հանգեցրեց նրան, որ մեր ազգը կորցրեց իր քանակի կեսը (զոհեր, դավանափոխություն, արտագաղթ և այլն): Ամենահամեստ հաշվարկներով այսօր նրա բնականոն աճը պակասել է ավելի քան 10 անգամ: Դարասկզբին, երբ մեր թշնամին ընդամենը կրկնակի չափով էր ավելի մեզանից, այսօր թվաքանակով մեզ գերազանցում է 10-15 անգամ: Երբ հաշվի առնվի այն հանգամանքը, որ արտերկրներում բնակվող հայերի մեկ-երկու սերնդափոխությունից հետո նրանցից այլևս հայ չի մնա, ապա պարզ կդառնա, որ մենք ոչ թե «հառնում ենք փյունիկի նման» (ասել կուզի՝ որքան էլ մեզ կոտորեն, տարագրեն և այլն, մենք կանք), այլ՝ օգոստոսյան հայկական արևի տակ դրված սառցակտորի նման հալվում ենք և, ո՞վ գիտե, դրանից հետագայում ինչ և ինչքան կմնա...:

Ապագայի համար հարկավոր չէ գնալ ո՛չ Բալկաններ, ո՛չ Լեհաստան և ո՛չ էլ Ամերիկա: Միա մեր հարևան, բարեկամ Վրաստանը, ինչքա՞ն հայ է մնացել Գորիի և Վրաստանի հայաշատ մյուս շրջաններում:

Խորհրդային իշխանության տարիներին, չնայած երկրի տնտեսական ծանր պայմաններին, կազմակերպվեց հայրենադարձություն: Այսօր... ազատ և անկախ Հայաստանից անկազմակերպ հայրենահոսություն է տեղի ունենում: Արդյոք դրանցից հետագայում հայ կմնա՞, իսկ եթե անգամ

մնա հայրենիքից դուրս, որքանո՞վ են նրանք երկրի հոգսերին համահունչ ապրելու: Այն ողբերգությունը, որ հայ ժողովուրդը կրել է մինչև օրս, աշխարհի հանրությանը պատշաճ ձևով չի ներկայացվել: Մեր ձայնը չի լսվել. հաճախ էլ խլացվել է այլոց կողմից, և դա այն դեպքում, երբ մեր հակառակորդը՝ հանցագործն ու ոճրագործը, ջանում և ինչ-որ տեղ կարողանում է «ապացուցել» իր «անմեղությունը», խուսափելով հանրության դատից, միջազգային իրավական պատժից: Հավանաբար պատճառը մեկն է՝ առ այսօր մենք չունենք (որքան էլ տարօրինակ է) ազգային համապարփակ, լիարժեք ծրագրեր, համընդհանուր, համազգային հստակ գաղափարախոսություն, մեր դատի գիտահիրավաբանական հիմնավորման համապատասխան հաստատություն: Ավելին, անկախ Հայաստանի Հանրապետության օրենսդրական և ոչ մի փաստաթղթում այդ մասին ոչինչ չկա և չի հիշատակվում: Համապատասխան նախարարությունները, պաշտոնյաները, գանգվածային լրատվության միջոցները այդ մասին քիչ ու ցածր են արտահայտվում, մեր պահանջատիրության մասին երկչոտությամբ են խոսում:

Սուրմալուն, ինչպես հայկական այլ տարածքներ, որոնք եղել են Հայաստանի անբաժանելի մասը, խլվեց հայ ժողովրդից և բռնակցվեց օտարին: Մշտապես գտնվելով Այրարատյան աշխարհի կազմում, նա եղել է Այրարատ երկրի անբաժանելի տարածքը: Համեմատաբար փոքր այս տարածության վրա հայ ժողովուրդը դարեր շարունակ ծաղկեցրել է իր մշակույթը, արհեստները ու առևտուրը, կրթությունն ու գյուղատնտեսությունը: Սուրմալուն մեր երկրին ու ժողովրդին տվել է պետական, տնտեսական, ռազմական, մշակույթի ու գիտության, կյանքի այլ բնագավառների տաղանդավոր շատ գործիչներ:

Ծանոթանալով գավառի և նրա բնակիչների մի մասի գործունեությանը, մենք հիացմունքի պահեր ենք ապրել. այս փոքր տարածքից՝ այսքան տաղանդներ, լուսապայծառ աստղեր...

Ձեռնարկելով «Սուրմալուի» հրատարակմանը, բոլորովին հավակնություն չունենք սպառիչ պատասխան տալ տարածքի պատմությանը, բնակիչների զբաղմունքին և կենցաղին վերաբերող բոլոր հարցերին և գիրքը չենք համարում ակադեմիական: Պարզապես ցանկացել ենք այդ փայլուն անվան և նրա զավակների մասին հիշեցնել մեր ժողովրդին, ինչպես նաև տարեցտարի ավելացող ու ծանրացող մոռացության փոշուց մաքրել այն:

Բնականաբար, այս փոքրիկ աշխատության մեջ հնարավոր չի եղել ընդգրկել Սուրմալուի և սուրմալեցիների ողջ պատմությունը, եղելությունները ու կենսագրականները: Ինչ խոսք, հնարավոր են նաև այլ կարգի թեմաներ, բացթողումներ, որոնց համար հայցում ենք մեր ընթերցողների մեծահոգությունն ու ներողամտությունը:

Աշխատության մեջ օգտագործել ենք մեր պատմաբանների. նաև օտարների աշխատությունները, հանրագիտարանային և լրատվական հոդվածներ, ականատեսների հիշողություններ:

ՊԱՏՄԱՍԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սուրմալուի՝ հայոց բուն այս տարածքի վերաբերյալ պատմությունը հիշատակում է հնագույն ժամանակներից: Ըստ Մեծն Ղևոնդ Ալիշանի «Աշխարհացույցի», Մեծ Հայքն ունեցել է 15 աշխարհներ, որոնցից Այրարատը 7-րդն էր: Ասենք նաև, որ Այրարատ անունը ըստ որոշ գիտնականների արմենական ծագում ունի և նշանակում է «բարձրություն»: Այս վարկածը հերու չէ իրականությունից: Իրոք, Այրարատ աշխարհի տարածքը գտնվում է բարձրության վրա, որտեղ կան նաև հարթություններ, որոնք ևս գտնվում են ծովի մակերևույթից համեմատաբար զգալի բարձրության վրա:

Ղազար Փարպեցին Այրարատի մասին գրվածում է խոսում. «... և այդ՝ զայսպիսի զծաղկերտ գավառ, զնշաշխարհիկ և զամենալի ըստ տեսության ամենախնամ պարարչին Աստուծոյ, զԱյրարատեան գավառ, որ է գլուխ աշխարհիս հայոց, զգավառն համբավատենչ, զգավառն ամենալի, որ բերն յանքեան զօրինակ լիության...»:

Համառոտ այս բնութագրով Ղազար Փարպեցին ամբողջացրել է Արարատյան աշխարհի, նրա գավառների նկարագիրը և նրանց նշանակությունը Հայաստանի ու հայ ժողովրդի համար, Այրարատ աշխարհը համարելով լիության և հայոց աշխարհի գլուխ:

Թվելով Այրարատ աշխարհի կազմում գտնվող գավառները, Ղևոնդ Ալիշանը «Աշխարհացույցում» նշում է դրանք ըստ հեղինակությունների՝ Բասեն վերին, Բասեն ստորին, Հավնունիք, Աբեղեանք, Գարեղեանք, Արշարունիք, Վանանդ, Շիրակ, Ճակատք, Արագածոտն, Նիգ, Վարաժնունիք, Կոտայք, Մազազ, Ոստան, Ուրծ, Արած, Շարուր, Մասյացոտն, Տոգովիտ, Ծաղկոտն, Բագրեվանդ:

Պատմահայր Մովսես Խորենացին իր «Պատմություն հայոց» հանրահայտ գրքում հիշատակում է այսպիսի ավանդություն. Արամայիսը՝ Արմենյակի որդին, տուն է շինում գետի ափին՝ մի բլրի վրա, և իր անունով այն կոչում է Արմավիր, իսկ գետի անունը իր թոռան՝ Երասխի անունով դնում է Երասխ»: Արմավիրը՝ հայոց այդ հնագույն բնակատեղին ու մայրաքաղաքը, իր աշխարհագրական դիրքով գտնվում է Սուրմալուի տարածքի դեմդիմաց, նրա հարևանությամբ, նրանց բաժանում է Երասխ-Արաքս գետը: Այդ տարածքը մտնում է Այրարատ աշխարհի Ճակատք գավառի վարչատարածքի մեջ:

Ճակատքը Այրարատ աշխարհի 9-րդ գավառն էր, ունեցել է 895 քկմ տարածք: Ճակատքն զբաղեցրել է Հայկական պար լեռնաշղթայի, Երասխ գետի, նրա աջափնյա Վարդենարգ և Ագարակ վտակների ավազանը: Ճակատքը սահմանակից է Արշարունիք և Արագածոտն, ինչպես նաև Բագր-

կանդ, Կոգովիտ գավառներին: Նրա սահմանը հարավ-արևելքում հասել է Այրարատ աշխարհի Շարուր գավառին:

Ճակատք գավառի հարավային և արևմտյան տարածքը լեռնոտ է, լեռնաշղթայի կենտրոնում բարձրանում են Բարդուղ և Փիրլու գագաթները: Լեռնաշղթայից դեպի հարթավայր են իջնում լեռնաբազուկներ: Ճակատքը սահմանակից է Արարատ լեռանը, նրա հյուսիսային լանջերին:

Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանց շահրացվո «Ստորագրություն» գրքի երկրորդ հատորում կարդում ենք. «... այս դաշտ Սուրմալուոյ, Արարատեան երկարաձիգ բոլորակ, և բաժանի՝ իր վեց մասունքս, դաշտն՝ ի միջոցի Երասխայ, Բարդղոյ լերին, Բամբակի լերին, Մեծին Մասսեայ և Սեվ ջրոյն Ակոռոյ»: Պատմագիրը տալիս է Սուրմալուի դաշտի ավելի պարզ և ընդարձակ բնութագիրը, իսկ դաշտի բաժանումը վեց մասերի հետևանք է գետակների, լեռնաբազուկների ստեղծած արհեստական արգելքներին, սահմաններին:

Սկսած քարե դարի վերջերից, Հայկական լեռնաշխարհում զբաղվել են երկրագործությամբ (մշակել են հացահատիկ, խաղող, ծիրան և այլն), գինեգործությամբ, անասնապահությամբ: Այս տարածքը եղել է մշակովի շատ բույսերի համաշխարհային տարածման կենտրոններից մեկը: Ինչպես նշում են շատ գիտնականներ՝ հացահատիկի, խաղողի, ծիրանենու մշակմամբ աշխարհում առաջինն զբաղվել են հայերը:

Ակադեմիկոս Բ. Պիոտրովսկու պեղումները Կարմիր բլուրում (1939-ին և հետագա տարիներին) հաստատեցին, որ ուրարտական թագավոր Արգիշտիի որդի Ռուսան իր ամրոցում կառուցել էր գինու մառան-պահեստներ, որտեղ խոշոր կարասների մեջ պատրաստվող և պահվող գինու քանակը հասել է 16 հազ. դեկալիտրի:

Նշանավոր գիտնական Յու. Կեբալը եկել է այն համոզման, որ նախնադարում հայերը կարողացել են պատրաստել գինի և այլ խմիչքներ: Նա գրել է. «Գինին որպես խմիչք հայտնի էր նախապատմական ժամանակներից: Ավելի շուտ՝ առաջին գինեգործները եղել են հայերը, որոնք դեռևս հին քարե դարի վերջում, մեր թվարկությունից 10-8 հազարամյակ առաջ, վայրի խաղողի պտուղների խմորումից ստացել են գինի:

Ինչպես Յու. Կեբալի, այնպես և շատ այլ խոշոր գիտնականների, հետազոտող-հնէաբանների կարծիքը մեկն է՝ Հայկական լեռնաշխարհի բնակիչները հնագույն ժամանակներից մինչև օրս զբաղվում են երկրագործությամբ, և շատ բույսերի, ծառերի և այլնի հայրենիքը եղել է այդ տարածքը: Այս բոլորը լիովին կարելի է վերագրել նաև Ճակատքին, Սուրմալուի տարածքին, որտեղ դրանց համար կան բնության ընձեռած բոլոր լիարժեք պայմանները:

Սուրմալուի դաշտերում վաղնջական ժամանակներից մշակել են ցորեն, գարի, կորեկ, բրինձ, ինչպես նաև զբաղվել անասնապահությամբ, պտղաբուծությամբ, խաղողագործությամբ:

Սուրմալուն հնուց ի վեր հայտնի է խաղողի, ցորենի մի քանի տեսակներով, գինու ընտիր խմիչքով: Մինչև վերջերս դաշտերում բուսնում էր ցորենի վայրի տեսակ, որն օգտագործում էին տնտեսության կարիքների համար:

Սուրմալուի տարածքի հողերը գորշավուն են, կան ալյուվիալ, ավազակավային հողեր: Բուսականությունը հարուստ չէ, աճում են օշինդրային բույսեր, ուղտափուշ, օշինդր, ճարճատուկ և այլ բույսեր: Անտառներից զուրկ է, տարածքի լեռնալանջերին հանդիպում են թփուտներ, մացառուտներ: Առանձին տարածքներ են զբաղեցնում աղուտները: Դաշտավայրի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 900-1100 մետրից չի անցնում: Սուրմալուի տարածքը գտնվում է հյուսիսային լայնության 36 և 44 միջօրեականների միջև: Համարյա այդ գոտում են գտնվում նաև Հունաստանի հյուսիսը, Իտալիայի հարավը, Իսպանիան և այլ երկրներ: Ի տարբերություն այդ երկրների, Սուրմալուի կլիման խիստ ցամաքային է: Այսպես. հունվարի միջին ջերմաստիճանը ըստ Ցելսիուսի սանդղակի չի անցնում -3-6°-ից: Ամառը լինում է սաստիկ շոգ, տեղումները համարյա բացակայում են, հուլիս ամսվա միջին ջերմաստիճանը 24-25° է: Այստեղ տարեկան տեղումները չափազանց աննշան են և չեն անցնում 200-350 մմ-ից: Հավանաբար խիստ չոր ցամաքային կլիման պայմանավորված է հիմնականում խոշոր ջրավազանների, օվկիանոսների, ծովերի, լճերի հեռավորությամբ: Ասենք նաև, որ տարածքին ամենամոտ ծովը Սև ծովն է, սակայն բարձր լեռնաշղթաները, լեռնագագաթները, որոնցով շրջափակված է Սուրմալուն, թույլ չեն տալիս այդ ջրավազանի խոնավության մուտքը տարածք:

Ձմեռն այստեղ ուշ է սկսվում և կարճ տևողություն է ունենում, իսկ գարունը վաղ է գալիս և դարձյալ տևում է չափազանց կարճ: Չնայած դրան, շատ խոտաբույսեր հասցնում են արագ աճել, զարգանալ, ծաղկակալվել, սերմնահատիկներ թափել և արագ թառամել, չորանալ: Այս ընթացքում աստիճանաբար լեռնալանջերը ծածկվում են բազմաթիվ խոտաբույսերով, որոնք, ծաղկելով, զանազան գույներով նախշած գորգի են նմանվում: Ամառը բավականին երկար է՝ 4-5 ամիս: Այս ընթացքում լեռնալանջերի մարգագետնային խոտածածկույթը առատ կերը է հանդիսանում արոտավայրերում գտնվող անասունների, ոչխարների և այլ կենդանիների համար:

Աշունը համեմատաբար երկար է, ոչ շոգ, դաշտերը (մշակովի) լցված են լինում հասուն մրգերով, հատապտուղներով, բանջարեղեններով, օգտագործվող վայրի բույսերով:

Հետազոտությունները ցույց են տվել, որ գավառի ընդերքը հարուստ է

բազմաթիվ օգտակար հանածոներով, կա քարածուխ, քարաղ, զանազան այլ մետաղներ և այլն: Սուրմալու գավառի հարավ-արևելյան տարածքը հարթավայրային է, որտեղով հոսում և Արաքս են թափվում լեռներից սկսվող մի շարք գետեր, գետակներ: Դրանց շնորհիվ դեռևս հնագույն ժամանակներում կառուցվել է ոռոգման խիտ համակարգ՝ ջրատար խողովակներ, առուներ, առվակներ: Տարածքում կան փոքր չափսերի և ջրատարողության լճակներ, որոնք ևս օգտագործվում են ոռոգման համար: Բնականաբար, կլիմայի չորության, տեղումների խիստ պակասի հետևանքով երկրագործությունը առանց արհեստական ոռոգման հնարավոր չէ իրագործել: Դա է պատճառը, որ արհեստական ոռոգման ջրատարները կառուցվել, փորվել են դեռևս ուրարտական ժամանակներից, իսկ հետագա դարերում նորոգվել, մաքրվել, երբեմն էլ ըստ անհրաժեշտության փոխել իրենց հունը, հունի ուղղությունը: Բոլոր ջրատարների շրջակայքում, դրանց ափերին աճել են զանազան ծառեր, որոնցից հայտնի էին Սուրմալուի նշանավոր բարդին, ուռենին, փշատենին և այլ ծառատեսակներ: Չնայած փշատենու փայտը չի օգտագործվել շինարարության համար, սակայն այն շատ սիրված ծառ էր պտուղների, մանավանդ գարնանը իր ծաղիկների արձակած զգլխիչ բույրի շնորհիվ:

Բուսականության աղքատությունը բերել է նաև վայրի կենդանիների տեսակների աղքատությանը: Դաշտավայրային մասում վխտում են գայլեր, աղվեսներ, շնագայլեր, նապաստակներ, շատ են նաև կրծողները՝ դաշտամկներ և այլն: Այս տարածքում գայլերն ու աղվեսները զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսական կենդանիներին, թռչուններին: Սրանք իրենց բները փորում կամ դնում են գետերի, գետակների զառիթափներում, հաճախ՝ լքված գյուղերի ավերակ տների թաքստոցներում: Դաշտավայրային մասում շատ կան նաև օձեր՝ ինչպես ցամաքային, այնպես էլ ջրային, կան լորտուներ, ոզնիներ՝ առանձնապես խաղողի այգիներում, մողեսների զանազան տեսակներ: Սրանք նույնպես շատ են լինում ավերակ տների պատերի ճեղքերում և այլուր:

Լեռներում, լեռնալանջերում դրանցից բացի հանդիպում են քարայծ, վայրի ոչխար (հայկական մուֆլոն), փորսուղ, իսկ եղեգնուտներում՝ վայրի խոզ, լուսան, հանդիպում է նաև գայլ արջ:

Մերձարաքսյան տարածքներում, նաև ջրավազաններում շատ են վայրի բադերը (կոնչան), սագերն ու հնդկահավերը: Մացառուտներում կան փասիաններ, դաշտավայրերում, լեռնալանջերում շատ են վայրի աղավնիները (գայլ), կաքավները: Գիշատիչ թռչուններից շատ կան արծիվներ, բազեներ, ուրուրներ, նաև բուեր: Չվող թռչուններից գարնան գալու հետ դաշտերն են լցվում լորերը, արագիլները, կռունկները, սարյակները: Ծիծեռնակները գա-

լիս են բնակարանների մոտ և նորոգում ու կառուցում իրենց բնելը: Սուրմալուում շատ են ճնճղուկները, ագռավները ու կաչաղակները: Ջրավազաններում, լճակներում ու ճահճուտներում հավաքվում են կոյարներ, մորակոյարներ, լռահավ-կոյարներ, անտառակոյարներ և որսի այլ թռչուններ:

Սուրմալուի տարածքը կրել է հնադարյան Սուրբմառի (Սուրբ Մարի) բերդաքաղաքի անունը: Հետագայում օտարները անվանել են Սուրմալի:

Սուրմալուն եղել է հայոց հնագույն ամրոց-բնակավայրերից մեկը: Այս քաղաք-ամրոցը հյուսիսային կողմից որպես պաշտպանական դիրք ունեցել է Երասխ գետը: Սա բավականին հուսալի պաշտպանական միջոց է եղել ամրոցի համար, քանզի այս մասերում Երասխը բավականին հորդառատ, լայն ու արագահոս է, մանավանդ գարնան, աշնան ամիսներին: Ամրոցը մյուս երեք կողմերից եղել է պարսպապատ և ունեցել է ամուր բերդապատեր՝ բարձր ու հզոր աշտարակներով, երկաթակուռ դարպասներով: Բերդաքաղաքի պաշտպանությունն ավելի հուսալի են դարձրել նրա երեք կողմի պարիսպներից քիչ հեռու եղած ուղղաձիգ և ժայռակոփ պատերով ձորերը, անհաղթահարելի վերամբարձ ժայռերի հարթ պատերը: Ամրոցի դիմաց, Երասխ գետի կողմից բացվել է հիմնական դարպասը, որն իր բարեկարգ ճանապարհով տարել է դեպի միջնաբերդ: Սա կառուցված է եղել բարձր բլրին և նույնպես ունեցել է ամուր պարիսպներ՝ հուսալի դարպասով: Այստեղ է գտնվել իշխանական պալատը՝ իր բազմաթիվ օժանդակ կառույցներով, ծառայողական անձնակազմի, պահակային և այլ զինվորականների համար: Այս ամրոցը կառուցվել է Խաչատրի ստորոտում, լեռան և Երասխի գեղատեսիլ վայրում, որտեղ Վարդենիսգը լցվում է Երասխ:

Սուրմալու քաղաք-ամրոցի կառուցումը, նրա պարսպապատումն ու դղյակի տեղադրումը մեր պատմաբան Թովմա Մեծոփեցին վերագրում է դեռևս հին ժամանակներին՝ հայոց Բագրատունիների տոհմին: Ըստ նրա, սրանք ամենայն հավանականությամբ ավելի վաղ ժամանակներում կառուցված ամրոց-բնակատեղին վերանորոգել, վերակառուցել ու վերականգնել են: Այսպիսով, Սուրմալուն ունի ավելի հին, անհիշելի ժամանակագրություն, քան ենթադրվում է:

Ըստ Արիստակես Լաստիվերցու՝ Վեստ Սարգիսը այս և հայկական այլ ամրոցներ գրավել է հայոց թագավոր Հովհաննես Սմբատից (1020-1041): Հետագայում Բյուզանդական կայսր Կոնստանդին Մոնոմախը (1042-1054), հորդորելով և համոզելով Հայաստանին տիրացած Էրմենիայի կենտրոն Դվինի արաբական տիրակալ Աբու-լա-Ասվարին, նրան մեծ զորաջոկատով արշավանքի է հանում Բագրատունյաց թագավորության դեմ: Այդ արշավանքի դիմաց Կոնստանդին կայսրը Դվինի ամիրային խոստանում է գրաված հայկական բոլոր տարածքները թողնել նրա տիրապետությանը:

Դվինի արաբական ամիրան, հավաքելով մեծ զորաբանակ, հարձակվում է Սուրմալուի վրա և կատաղի մարտերից ու երկար պաշարումից հետո կարողանում է գրավել, տիրանում է նաև հայկական այլ բնակավայրերի, ամրոցների: Այս ընթացքում Հայոց Գագիկ Բ թագավորին համոզելով և երդվյալ խոստանալով նրա անվտանգությունը, հրավիրում են Բյուզանդիոնի մայրաքաղաք Կոնստանդնուպոլիս: Հայոց թագավորի բացակայության ժամանակ արաբները, օգտվելով հանգամանքից, հարձակվում են Անիի վրա և բազում մարտերից հետո գրավում այն: Սակայն շուտով բյուզանդական զորավար Կատակալոն Կեկավմենոսը կարողանում է կռվով արարներից ետ վերցնել բոլոր այն հայկական տարածքները, որոնք խլվել էին Գագիկ Բ թագավորից: Այս տարածքների և բերդաքաղաքների թվում է եղել դեռևս կանգուն ու հպարտ Սուրբմարին՝ Սուրմալուն:

Պատմաբանը գրում է, որ ազատագրված Սուրմալուում Վեստ-Սարգիսը «դարձյալ բռնվում է անիմաստ և չար դիտավորությամբ՝ իր ունեցվածքը հանձնել հառոմներին ու գնալ նրանց մոտ»: Ապա, շարունակում է պատմաբանը, «այս օրերին հառոմաց զորքը չորս անգամ իրար ետևից մտավ հայոց աշխարհ, սրով ու գերությամբ անմարդաբնակ դարձրեց ամրոցս երկիրը»: Այս անդրմեջ արշավանքների, պատերազմների, կոտորածների, բնակչության տեղահանումների ընթացքում բազմիցս ավերվել են երբեմնի շեն ու բարեկարգ բնակավայրերը, տարածքի խոշոր կենտրոն Սուրմալուն:

Պատմության փոշու հաստ շերտը մաքրելով, նրա հետքերը գտնելով, որքան էլ ուսումնասիրվել, այնուամենայնիվ, դեռևս չի ճշտվել Սուրմալուի հիմնադրման ստույգ ժամանակը: Սակայն պարզվել է, որ քաղաքը հիմնվել ու կառուցվել է Երվանդակերտ քաղաքի հիմնահատակ ավերումից հետո, որի բնակիչները, խուսափելով թշնամուց, թաքնվել և շատ հեռու չեն գնացել: Նրանք պատսպարվել են մոտակա տարածքում և հարմար պահին վերադարձել ու վերականգնել են բնակատեղին, բնակություն հաստատել ապագա Սուրմալուում:

Ստեփանոս Օրբելյանը, ռուս նշանավոր ճանապարհորդ-գիտնական Իվան Շոպենը և որիշներ, Սուրմալուի տարածքը համարելով Մեծ Հայքի Այրարատ աշխարհի գավառներից, դարձյալ չեն կարողանում ասել, թե ով և որ ժամանակներում է «Ճակատք» անվանել Այրարատի կազմում մշտապես գտնվող Սուրմալուի այս տարածքը: Գուցե թե Արարատը մշտապես «ճակատով» է նայել սուրմալեցիներին:

Վաղ ֆեոդալական ժամանակներում՝ 3-4-րդ դարերում, Հայաստանում նույնպես կազմավորվել են ֆեոդալական հարաստ տներ: Այս գերդաս-

տաններից յուրաքանչյուրն ունեցել է իր սեփական բնակավայրերը, հողը, կառույցները, անշարժ և շարժական հարստությունները, նաև ամրոցներն ու զորական ուժերը:

Այդ ժամանակներում հայկական բազմաթիվ ֆեոդալական մեծ ու փոքր տներից Հայաստանում ավելի հզորն ու ճանաչում ունեցողը եղել է Արշակունյաց տոհմը: Այս տանն է պատկանել Այրարատ աշխարհի տարածքների զգալի մասը, որի մեջ և Մասյացոտն, Ճակատք, Շարուր, Կոտայք, Արագածոտն և այլ գավառներ: Սրանք եղել են Արշակունիների ոստանը, թագավորական սեփականությունը:

Հայտնի է, որ այդ դարերում Այրարատը կարևոր նշանակություն է ունեցել և մեծ դեր կատարել հայոց աշխարհում: Սկսած 5-րդ դարի երկրորդ կեսից, կարևոր տնտեսական-վարչական ու ռազմական նշանակություն է ստացել տարածքի կենտրոնում գտնվող վեհաշուք Դվին քաղաքը: Առևտրատնտեսական, ռազմական ուղիները ուղղակի առումով խաչաձևվել են ժամանակի այդ խոշոր ու մարդաշատ քաղաքում: Դվինով են անցել Հայաստանի կարևոր ճանապարհները՝ դեպի հարավ, հյուսիս, արևելք և արևմուտք: Դեպի Դվին է տարել նաև Ճակատքի հիմնական ճանապարհը՝ կտրելով Արաքսը նրա վրա կառուցված կամրջով: Ժամանակին Անի քաղաքի միջով, որը եղել է ճանապարհների հանգուցակետ, Ճակատքից հասել են Տրապիզոն և այլուր: Ուրարտական շրջանում Սուրբ Մարին հավանաբար կապ է ունեցել այդ ժամանակների խոշոր քաղաք Արգիշտիխինիլի-Արմավիրի հետ: Արտաշատի կառուցումով (180 թ. մթա) այն դառնում է Այրարատով անցնող բոլոր ճանապարհների հանգուցակետը, դրանց սիրտը: Այդ ճանապարհների կառուցումով զարկ է տրվում ներքին և արտաքին առևտրին, ընդարձակվում Այրարատ աշխարհի տարածքների կապերը ներքին և արտաքին երկրների հետ:

Այդ ժամանակներում հզորացած Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև շարունակվում են չդադարող, երկարատև պատերազմները՝ Հայկական տարածքներ գրավելու, դրանց տիրանալու, հայ ժողովրդին հարկատու դարձնելու, հպատակեցնելու համար:

Բյուզանդական մեծաթիվ զորքը 591-ին հարձակվել է Հայաստանի տարածքները գրաված պարսկական զորքերի վրա, պարտության մատնել նրան և Պարսկաստանից խլել հայկական որոշ տարածքներ: Սակայն Պարսկաստանի տիրապետությանն են մնացել հայկական այլ տարածքներ ևս, ինչպես Դվինն իր շրջակայքով, Սյունիքն ու Շարուրը, Վասպուրականը, Մոկքը և այլ տարածքներ: Սակայն այս իրավիճակը երկար չի տևել, և 630-ին Հայաստանը կարճ ժամանակով ինքնուրույնություն է ձեռք բերել. սկսվել է շինարար, ստեղծագործ աշխատանքի, առևտրի աշխուժացման,

գյուղատնտեսության վերելքի շրջան: Արաբական արշավանքների հետևանքով Հայաստանը կորցրել է իր անկախությունը և արդեն 7-րդ դարի սկզբին, այլևս հնարավորություն չունենալով դիմագրավել ահեղ թշնամուն, մնում է բռնակալի լծի տակ: Արաբները փոխել են գոյություն ունեցող վարչաձևը, տարածքային կառավարման ձևերը: Անդրկովկասի՝ Հայաստան, Վրաստան և Աղվանք տարածքներում ձևավորվում է վարչական խոշոր միավորում՝ էմիրաթություն, որպես միայնյալ փոխարքայություն: Նոր ձևավորված հսկայածավալ երկրին արաբները անվանել են Էրմենիա: Էրմենիայի վարչական կենտրոն է ընտրվում Դվին քաղաքը: Արաբների կազմակերպած վարչական այս տարածքի մեջ են մտել նաև Ճակատքը, Շարուրը: Արաբական տիրապետությունը Հայաստանում տևել է բավականին երկար: 11-րդ դարի սկզբներին Հայաստան են հասել սելջուկ կիսավայրենի ցեղերի բազմահազար կողոպտիչները: Քոչվոր անասնապահ այս ցեղերը հեղեղի նման լցվում են տարածք և մոբիլների նման սկսում խժռել, կողոպտել, ոչնչացնել ստեղծած ամեն բարիք ու կոտորել դրանց ստեղծողներին: Կոտորելով ու կողոպտելով ժողովրդին, սելջուկները մեծ ավարով թողնում են երկիրը: Սրանք, այլոց թվում, գրավել և կողոպտել են նաև Սուրմարին: Սուրմարիից և շրջակա տարածքներից քշել ու տարել են անասունների ու ոչխարների մեծ գլխաքանակ, ավերվել է նաև քաղաքը:

Սելջուկները կրկին այս տարածք են եկել 1054-ին: Դարձյալ արյուն ու կողոպուտ, կրկին հայ մարդը արտասուքով ու արյունով է հատուցում իր կյանքի և ստեղծածի համար: Սակայն այս անգամ, բռնազավթած տարածքներում իրենց համար գտնելով բնակության հարմար պայմաններ և սելջուկ զորավարների հավանությունն ու խրախուսանքը, կողոպտիչներից ոմանք որոշում են բնակություն հաստատել տեղում: Ստեղծվում է մի իրադրություն, երբ արդեն «տեղացի» օտարազգին իր արյունակցի հետագա արշավների ժամանակ անգնահատելի օգնություն կարող էր ցուցաբերել կրոնակից զավթիչներին: Ցանկացողների համար առանձնացրել էին լավագույն տները, տվել անասուններ, ոչխարներ, ձիեր, խոտառատ արոտավայրեր, հողատարածքներ ու զենք: Այս՝ երկրորդ արշավանքից ընդամենը 10 տարի անց, 1064 թ. սելջուկյան զորքերը երկրորդ անգամ են արշավում Հայաստանի վրա: Այն գլխավորում է ոչ պակաս արնախում Ալփ Արսլանը:

Հայ շինականը դեռևս ուշքի չեկած նախորդ կոտորածներից ու կողոպուտներից, կրկին կանգնում է անելանելի վիճակի առջև: Սելջուկները 1071-ին Մանազկերտի տարածքում հանդիպել են պարսկական զորքերին և երկարատև ու արյունալի կռիվներից հետո գլխովին ջարդել նրանց ու տիրացել հսկայածավալ տարածքների, բնակավայրերի: Հատկանշական է,

ոլ երկիր ոտք դրած յուրաքանչյուր զավթիչ տարածքի վարչական բաժանման իր ձևն ու եղանակն է ստեղծել՝ հնարավորին չափով հարմարեցնելով իրենց շահերին:

1118-ին Հայաստանը բաժանվել է երեք էմիրաթությունների՝ Անիի, Դվինի և Կարսի:

Սուրմալուի տարածքը, հարևան լինելով Անիի Էմիրաթությանը, բնականաբար անցնում է այդ վարչական միավորման ենթակայության տակ: Այս հանգամանքը հնարավորություն է տվել Սուրմալուի տարածքի աշխատավոր, արհեստավոր մարդկանց ավելի շատ շփվել մարդաշատ, առևտրով ու արհեստներով զարգացած Անիի հետ: Տարածքից էմիրի նստատեղին են հասցրել տուրքերն ու հարկերը՝ բնամթերք ու անասուններ, ձիեր, նաև ընտիր գորգեր, կարպետներ և այլն:

1190-1200-ին հնարավոր է դարձել Հայաստանի մի մասի ազատագրումը զավթիչներից: Սակայն արդեն հայկական շատ բնակավայրերում հասցրել էին բնակություն հաստատել թշվոր ու թափառական այս ցեղերի բազմաթիվ ներկայացուցիչներ:

Աստիճանաբար, ստեղծված ռազմաքաղաքական, տնտեսական բարենպաստ գործոնների շնորհիվ, հզորանում է Հայաստանի հյուսիսային հարևան Վրաստանը: Սկսվում են հայ-վրացական զինյալ ուժերի համատեղ գործողությունները տարածք մտած զավթիչների դեմ: Այսպիսով, 11-12 դարերում հնարավոր դարձավ ազատագրել հայկական որոշ տարածքներ երկրի հյուսիս-արևելքում: 12-րդ դարի երկրորդ կեսին ազատագրվել են Տաշիր-Ջորագետի շրջանը, ապա մայրաքաղաք Անին՝ իր շրջակա տարածքով:

Վրաստանում հաստատված Զաքարյանները, մասնավորապես Սարգսի որդի Զաքարեն, վրացական Թամար թագուհու (1184-1213 թթ.) պալատում մեծ ճանաչում ուներ և որպես զորահրամանատար՝ համբավ ու հարգանք: Զորավար Զաքարեն, վրացական Թամար թագուհու պալատում կարևոր ազդեցություն է ունեցել ժամանակի իրադարձությունների և առաջացած հարցերի լուծման գործում: Զաքարյանները գլխավորել են վրացական զորաբանակները, այն էլ՝ մեծ հաջողությամբ: Սրանք Վրաստանում համարվել են ռազմական գործի, ժամանակի մարտավարության լավագույն գիտակներ, նաև հմուտ զորահրամանատարներ: Զաքարյանների և հայ զորականների անմիջական օգնությամբ ու մասնակցությամբ զավթիչներից ազատագրվել են Ամբերդը, Բջնին, ապա և Արարատյան, Շիրակի տարածքները և այնպիսի խոշոր քաղաքներ, ինչպես Անին (1199 թ.), Դվինը (1203թ.), Ղարսը, Շարուրի դաշտը, Սյունիքն ու Բագրևանդը, Կոգովիտն ու Ծաղկոտնը, դրանց հետ նաև Սուրմալու բերդաքաղաքն իր շրջակայքով:

Ազատագրված հայկական տարածքները բաժանվել են Զաքարեի և

նրա եղբայր՝ Իվանեի միջև: Զաքարեին են անցել Լոռին, Անին, Արագածոտնը, Բագրևանդը, Ծաղկոտնը, Կոգովիտը, նաև Սուրմալուի շրջանը: Այս համեմատաբար խաղաղ ժամանակում Զաքարյանների իշխանությունը այդ տարածքներում իր բարերար ազդեցությունն է թողել տնտեսության, արհեստագործության, մշակույթի և առևտրի զարգացման բնագավառներում:

1236-ին Հայաստանի տարածք են արշավել մոնղոլական զորքերը: Սրանք էլ նախորդ բարբարոսների նման անխնա կոտորել են բնակչությանն ու կողոպտել երկիրը: Հայ շինականից խլած տայերն ու ձիերը, ջորիներն ու ավանակները՝ տիկոջ բարիքներով բարձած, թշվ ու տարել են: Այդ բարբարոսների հեռանալուց հետո աստիճանաբար երկրամասում աշխուժանում և վերելք է ապրում երկրագործությունը, ավելանում անասնագլխաքանակը, ոչխարների հոտերը: Վերելք են ապրում նաև արհեստները ու առևտուրը, տնայնագործությունը: Սուրմալեցիները ակտիվ կապերի մեջ են մտնում հարևան տարածքների բնակիչների հետ, երկրամաս բերում անհրաժեշտ ապրանքներ, այնտեղ տանում իրենց արտադրանքը և այլն: Բարելավվում են մշակութային և հոգևոր գործունեությունը: Հավատացյալ սուրմալեցիները աղոթում են Բարձրյալին խաղաղություն հաստատ պահելու, երկրին բարգավաճում պարգևելու համար: Այս ընթացքում հեռավոր ասիական տարածքներում աճել ու հզորացել էր բռնազավթիչների, կողոպտիչների ու մարդասպանների մի այլ հրոսակախումբ, որը սրի քաշելով մոտակա երկրների բնակչությանը, գրեթե լավայի նման հասնում է Հայաստան: 1386 թ. Լենկ Թեմուրի ամենակուլ ու արնախում հորդաները հեղեղում են Հայաստանը, գրավում Երևանը, շատ քաղաքներ ու բնակավայրեր: Կրկին ավերի ու ավարի են ենթարկվում հայկական բնակավայրերը, կոտորվում հազարավոր հայ շինականներ, արհեստավորներ և այլն: Իրենց սև գործը տեսնելուց հետո հրոսակները հարուստ ավարով թողնում են Հայաստանի տարածքները: Հայ մարդը հոգեպես անչափ ընկճված և հուսահատ վիճակում էր: Այս հուսահատությունը փոքր-ինչ կրկնս, ժողովրդին հույսով ու հավատով լիցքավորելու գործում մեծ դեր է խաղում հայ եկեղեցին: Ժողովրդին անկեղծորեն հավատում է Հայ Առաքելական եկեղեցու պարտաճանաչ սուրբ հայրերին՝ իրապես համոզված, որ բոլոր չարիքները իրենց մեղքերի, ոչ ամենայն ոգով ու անկեղծ հավատով աղոթքների փոխհատուցումն է, որն ուղարկվում է Վերից՝ որպես պատիժ և աղաչում էին «մեղքերի թողություն»: Միաժամանակ հավատում էին, որ մարդասպանները ու կողոպտիչները ի վերջո պատժվելու են իրենց չարագործությունների համար և այդ ժամանակը անպատճառ կգա, իսկ հայ մարդը պետք է համբերատար տանի նրանց բոլոր բռնությունները, համբերատար աղոթի և փրկություն հայ-

ցի: Սակայն սերնդից-սերունդ բռնակալները գալիս են ու գալիս, կուտակում ու ավերում են ժողովրդին ու երկրին, բայց պատիժը չգիտես ինչու ուշանում է:

Ընդամենը 8 տարի չէր անցել, երբ զավթիչները 1394-ին կրկին հայտնվում են Հայաստանում, Սուրմալուում: Նոցից սկսվում է կոտորածն ու կողոպուտը: Սրանց հետևանքով 5 տարի անց՝ 1394-ին, թեմուրական հորդան դարձյալ լցվում է հայկական տարածքներ. դարձյալ կոտորած, կողոպուտ, առևանգում, գերեվարում: Կարծես թե աստված երես էր թեքել իրեն պաշտող մոլեռանդ քրիստոնյա հայերից:

Թեմուրականների արշավանքներից մեկի մասին Սուրմալուում և տարածաշրջանում սերնդից-սերունդ հիշվում է կողբեցիների հերոսական դիմադրությունը: Սրանք, օգտագործելով Կողբի բնական անառիկ դիրքը, երկար ժամանակ դիմադրում են թվաբանակով ու սպառազինությամբ բազմակի գերազանցող թեմուրականներին: Ընդակալ Թեմուրը հետևից դիտելիս է լինում պաշտպանվողների քաջությունն ու հնարամտությունը և զայրույթ է թափում իր զինվորների վրա: Ի վերջո, բարբարոսները կարողանում են կոտրել պաշտպանվողների համառ դիմադրությունը և սիրեալ բնակավայրին, նաև ամբողջ Սուրմալուին: Այսպես շատունակ հայ մարդը իր բնօրրանում չի կարողացել շատ թե քիչ կազմակերպված ուժեղ դիմադրություն ցույց տալ զավթիչներին, բռնակալներին՝ լինի դա հզոր ռազմական ուժ թե անհատ կողոպտիչ-մարդասպան: Հարցն այստեղ հայ մարդու անձնազոհության կամ վախկոտության մեջ չէ. հայը միայնյալ թե միայնակ շատ դեպքերում կարողացել է արժանին հատուցել զավթիչներին: Բազմաթիվ դեպքեր կան (հնօրյա և նորօրյա), երբ հայ մարդը խիզախության, անվեհերության ու անձնազոհության անօրինակ գործեր է կատարել՝ տասնապատիկ ուժեղ բռնակալներին արժանի հակահարված տալով, իր երկրի և բնատանքի պատիվը պաշտպանել: Հարցը ոչ թե հայ մարդու կռվելուն, զենքին ու ռազմական արվեստին չտիրապետելուն է վերաբերում, այլ նրա հոգեկանին: Հայ քրիստոնյան դաստիարակվել է բարության, համբերության, մարդասիրության լավագույն ոգիներով ու սկզբունքներով: Եվ այդ բոլորը՝ մանկուց, մոր կաթի ու ավիշի հետ: Իսկ երբ նա մեծանում է և անհրաժեշտություն է դառնում տպանել սպանողին, բռնազավթիչին, բնականաբար ինչ-որ տեղ երկչոտություն է ցուցաբերում, ընկրկում, չցանկանալով կատարել քրիստոնյային ոչ վայել արարք, լինել երդմնազանց: Հայի մեջ քրիստոնեականի խաղաղությունն է: Մեր եկեղեցու հիմքը Ավետարանն է, այստեղ մարդասիրական այլ կանոններից մեկն էլ հային սովորեցնում է. «չարին չարով մի պատասխանիր» պատգամը: Ոճրագործը չարություն է կատարում, չարության ամենաբարձրագույնը՝ սպանում, բռնանում քո հարազատին,

քեզ, բայց դու չարին չարությամբ չպետք է պատասխանես, չպետք է սպանես սպանողին: Համբերատար պետք է աղոթել, պետք է սպասել, միևնույն է այդ չարագործը «իր պատիժը կստանա»: Դրա համար եկեղեցու մեր գիտուն այրերը իրենց հոտին համառորեն սովորեցնում են՝ «եթե մի շապիկը հանում են, մյուսն ինքնակամ տուր»: Ըստ հայ լուսավորչական կրոնի, մարդիկ երկրի վրա չպետք է մտածեն իրենց կյանքը բարելավելու մասին: Թող թշնամին սուր ճոճի, արյուն թափի, ավերի, կողոպտի, «քրիստոնյայի սուրը աղոթքն ու համբերությունը պետք է լինի»: Աղոթիր երկնավորին և համբերությամբ տար թշնամու բռնություններն ու ոճրագործությունները, կոտորածները: Այդ ինչպե՞ս է, որ մարդկությունը, թեև ունի մեկ աստված, բայց իսլամն իր հետևորդներին ուսուցանում է կոտորել այլադավանություններին, խոստանում է դրախտ, իսկ նույն աստվածը հայերին պարգևում է այն և հնազանդության կոչ անում: Արդյո՞ք քրիստոնեական ստրկամիտ դրությունը՝ հնազանդ ու համբերատար լինելը, ամենալուրջ խոչընդոտը չեղան ազգովի պայքարի ելնելու և ամեն ոճրագործի արժանին հատուցելուն: Արդյո՞ք մեր ոչ շատ հեռու նախնիները ավելի ռազմատենչ չէին՝ ունենալով սեփական աստվածն ու սեփական հեթանոսությունը: Եվ դրանո՞վ է բարոյական ներկայիս այն քարոզը, թե «Տիրատ Մեծ թագավորը կարգադրեց քանդել հեթանոսական բոլոր տաճարները, թողնել միայն Գառնին»: Ինչո՞ւ պետք է հայ քրիստոնյան հանդուրժի ոճրագործին, և ինքն էլ չգործի նույն սկզբունքով՝ արյան դիմաց արյուն: Սա՛ պետք է լինի մեր հոգեբանությունը և ոչ թե ստրկամտությունը:

Լավ է ասել բանաստեղծը.

Ներկա օրերում այլ ի՞նչ սև քնար,
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին,
Արյուն ու կրակ թշնամու վերա,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կյանքին:

Սուրբ գրքի մարդասիրական, բարոյական նորմերը մարդկային են, բայց ոչ համայն մարդկության կողմից ընդունված: Այդ սկզբունքով ապրող հայը մշտապես օրհասական վիճակում է գտնվել, հետևապես պետք է բարոզվի չարին չարով պատասխանել, շապիկդ հանողի ամբողջ հագուստը հանել...:

Վերջապես բազում դեգերումներից հետո 1441 թ. Էջմիածին վերադարձավ և գործել սկսեց ս. Էջմիածին կաթողիկոսությունը: Հայոց աշխարհի հոգևոր այս կենտրոնը, որին ձգտում էր աշխարհով մեկ սփռված հայությունը, Արարատյան երկրամասում նրա գտնվելը հույսի և հավատի շողեր էր ցանում հավատացյալ հայերի վրա: Սուրմալուն գտնվելով Էջմիածնի հարևանությամբ, մոտակայքում, ակնկալում էր նրա հոգևոր օգնությունն ու

հավասով լցվում գալիքի հանդեպ:

Հայաստանի և հայ ժողովրդի համար սկսվում է մի ժամանակահատված, երբ երկու բռնակալներ՝ օսմանյան Թուրքիան և շահական Պարսկաստանը անընդմեջ կրկնվող պատերազմներով ձեռքից-ձեռք խլելով հայկական տարածքները, յուրաքանչյուրն իր ոլորյն ձևերով ու եղանակներով է կեղեքում ու հալածահարում հայ ժողովրդին:

Այս զավթիչները սոցիալական և այլ ցուցանիշներով հայ ժողովրդից ցածր մակարդակ ունեին, հետևապես նրանց բռնատիրությունն ալեգեկում էր հայ ժողովրդի առաջընթացը: Սակայն իրականում կարծես պարսկական բռնատիրությունն ինչ-որ չափով «թեթև» էր թուրքականից: Այս առիթով ռուս մեծ գրող, քաղաքական գործիչ և հայ ժողովրդի լավ բարեկամ Ալեքսանդր Գրիբոյեդովը գրել է. «Այնուամենայնիվ, պարսկական խանությունների իշխանությունը հայերի համար ավելի հուսալի է, քան թուրք փաշաներինը»: Այս խոսքերն ապացուցվում են բազմաթիվ փաստերով: Թուրքերի հարձակումների ժամանակ պարսկական զորքերին հայերը մշտապես օգնություն են ցույց տվել: Այո՛, որքան էլ անօրեն ու հալածահարիչ էին պարսիկները, այնուհանդերձ, թուրքական բռնություններն ու ոճրագործությունները գերազանցում էին դրան:

1441 թ. պարսկական զորքերը մի շարք մեծ ու փոքր ճակատամարտերում հաղթելով թուրք օսմանցիներին, գրավում են Երևանի բերդը: Կազմավորվում է Երևանի խանություն, որի կազմի մեջ մտնում էր նաև Սարմալուն, որպես նրա առանձին մահալ-գավառ: Ճակատը դեռևս 15-րդ դարում բաժանված էր երկու վարչական միավորների՝ Կողբի և Սարմալուի. այս բնակավայրերն էլ հանդիսանում էին դրանց կենտրոնները: Օսմանցիները նույնպես տիրապետում էին հայկական ընդարձակ տարածքների: Հարևան դարձած երկու գիշատիչ տերությունների միջև շարունակվում էին պատերազմները Հայաստանի տարածքներին տիրանալու համար: Բավական է հիշել, որ 1514-1735 թթ. հայկական տարածքները 14 անգամ ձեռքից-ձեռք են անցել այդ զավթիչների միջև: Այս բոլոր դեպքերում Սարմալուն, նրա բնակավայրերը զերծ չեն մնացել թշնամական զորքերի ներխուժումից, կոտորածներից ու կողոպուտից: 1579 թ. թուրքական սուլթան Մուրադ 3-րդի զորքերը Մուստաֆա-Լալա փաշայի գլխավորությամբ պարսիկներից գրավում են Երևանը և հայկական ընդարձակ տարածքներ: Պարսկական շահը, չհաշտվելով կորցրածի հետ, մեծ զորաբանակով և հայ կամավորներով ջարդելով թուրքերի դիմադրությունը, ազատագրում (գրավում) է Երևանը և հայկական բռնագավթած այլ տարածքներ:

1639 թ. Պարսկաստանին անցած հայկական տարածքներից կազմավորվում են 3 խանություններ՝ Երևանի, Նախիջևանի և Մակուի: Սարմա-

լուն իր տարածքով դարձյալ մնում է Երևանի խանության կազմում՝ որպես նրա առանձին մահալ: Պարսկական տիրապետությունը հարյուրամյա տևողություն չի ունենում: 1724 թ. թուրքական զորքերը կրկին պարսիկներից խլում են հայկական տարածքները ու գրավում Երևանը: Հայերը Երևանի բերդի պաշտպանության ժամանակ ակտիվ մասնակցել են կռիվներին և մեծ օգնություն ցույց տվել պարսկական զորքին: Սակայն, երբ պարսկական կայազորը վճռում է թողնել Երևանը, քաղաքի շատ հայ երևելիներ հեռանում են պարսիկների հետ: 1735 թ. պարսկական հզոր Նադիր շահը Հայաստան է ուղարկում իր զորահրամանատար Թոխմախ-Կուլի խանին: Սա պարսկական մեծաքանակ զորաբանակով պարտության մատնելով թուրքերին, հասնում է Երևան, պաշարում բերդը և հայերի օգնությամբ կրկին գրավում այն: Սարմալուն, ազատվելով թուրքական տիրապետությունից, կրկին անցնում է պարսկական տիրապետության: Պարսկական տիրապետության ժամանակ աշխուժանում են առևտուրը, արհեստները ու տնայնագործությունը: Պարսկական խանը արտոնագրեր է տալիս հայ առևտրականներին այդ գործի անարգել կատարման համար:

Չնայած բազում պատերազմներին, ավերումներին, 15-րդ դարում եվրոպական ճանապարհորդ Կլավիխոն, հասնելով Սարմալու, տեսնում է այն որպես կանգուն բերդաքաղաք իր կառույցներով, շինություններով: Նա նշում է, որ Սարմալուն հանդիսանում էր ամբողջ տարածքի կենտրոնը:

Բազում և երկարատև պատերազմներից հետո, երկու գիշատիչ հարստահարող պետություններ վերջապես որոշում են Հայաստանը բաժանել և վերջնականապես տիրել նրան: 1555 թ. մայիսի 23-ին Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքվում է հաշտության պայմանագիր: Թուրքիային են անցնում Բարձր Հայքը, Վասպուրականը, Աղձնիքը, Ծոփքը և այլ հայկական տարածքներ: Պարսկաստանը տիրանում է Շիրակին, Գուգարքին, Արարատյան դաշտին, Շարուրի դաշտին, Սյունիքին, Վասպուրականի մի մասին: Սարմալուն իր տարածքով մնում է պարսկական հպատակության ներքո:

Չնայած կնքված պայմանագրին, 1579 թ. Թուրքիան հարձակվում է Պարսկաստանին անցած հայկական տարածքների վրա և գրավում Երևանը: Թուրքերն ալշավում և գրավում են Վրաստանի մեծ մասը:

Ամեն կերպ փորձելով Երևանը պահել թուրքական հպատակության տակ, սրանք սկսում են եռանդուն աշխատանքներ քաղաքի և ամրոցի պաշտպանության ամրապնդման համար: Երևանի տիրակալ Ջահիրաբ փաշան 1582-1583 թթ. ձեռնամուխ է լինում քաղաքի հարավային մասում ամրոցի կառուցմանը: Այն կառուցվում է բնական անմատչելի ուղղահայաց ժայռերի ափին, Հրազդան գետի ձախափնյա բարձրության վրա: Կարճ

ժամանակում հազարավոր հայ շինականներ օրնիբուն աշխատում են ամրոցի կառուցման համար: Տաժանակիր այս աշխատանքներում հազարավոր հայեր են մահանում: Կառուցվում են երկշարք պարիսպներ, որոնք քաղաքը շրջափակում են նրա երեք կողմերից: Ներքին պարիսպն ունեցել է հաստ և բարձր պատեր՝ 17 աշտարակներով: Բերդաքաղաքի արտաքին պատերը համեմատաբար ցածր էին, այն կառուցված էր քարի և կավի շաղախով: Սրանք ունեին 10-12 մ բարձրություն: Երկու պարիսպների միջև եղած հեռավորությունը կազմել է 35-42 մ: Արտաքին պարսպից քիչ հեռու փորված էր լայն ու խոր խրամատ, որը վտանգի դեպքում ալագ լցվում էր Գետառի ջրով: Սա հարձակման անցած հակառակորդի համար լուրջ խոչընդոտ էր, որի հաղթահարման ընթացքում անշուշտ մեծաթիվ զոհեր կլինեին: Եթե թշնամուն հաջողվեր հաղթահարել ջրային արգելքն ու նաև արտաքին պարիսպը, ապա նրա կռվողները գտնվելու էին ներքին պարսպից հարվածող պաշտպանյալների կրակի տակ, սեղմված լինելով արտաքին պարսպի ներսի պատերին: Թուրքերը Երևանի բերդի վրա տեղադրել էին 60 թնդանոթ և երկու հրանոթ: Բերդաքաղաքն ուներ երեք դարպասներ՝ Թավրիզյան, Շիրվանյան և Կամրջի: Վերջինս գտնվում էր Հրազդան գետի վրա կառուցված կամրջի դիմաց:

Ինչպես նշվեց, թուրքական տիրապետությանն է անցել նաև Սուրմալուի տարածքը: Եթե թուրքերը գրավված հայկական տարածքներում կատարում էին բռնություններ, կոտորածներ, ապա Պարսկաստանը հաճախակի էր դարձրել հայերի տեղահանումներն ու նրանց գաղթը Պարսկաստան: Այսպես, 1603-1606 թթ. պարսկական տիրակալ Շահ Աբասը իր նախորդների նման տասնյակ հազարավոր հայերի գաղթեցնում է Պարսկաստան: Բնականաբար, հայերի դատարկված բնակավայրերում, տիրակալ իշխանությունների հովանավորությամբ բնակություն էին հաստատում օտարազգիները: Պատերազմներն ու բռնագաղթն էին հիմնական պատճառը, որ կրկնվեցին միատարր հայկական բնակավայրերում աստիճանաբար հաստատվեցին օտարները և, արագ բազմանալով, հետագայում չարիք դարձան մեր ժողովրդի գլխին: Բացի այլադավան բռնակալների վտանգից, հայ ժողովրդին սպառնում էր նաև հավատքի, դավանանքի հարցը: Ամեն կերպ քրիստոնյա Եվրոպան փորձում էր Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալների մեջ պառակտում սերմանել:

Մեծանուն պատմաբան Լեոն «Հայոց պատմություն» աշխատության մեջ բերում է փաստեր, երբ ֆրանսիական թագավոր Լուի 11-ը ջանք չի խնայել Հայաստանին տիրանալ հայ ժողովրդի մեջ կրոնական պառակտումներ առաջացնելու օգնությամբ: «Ահա այս հոյակապ աստվածապետական հերոսի առանձին ուշադրության առարկա է դառնում Նախիջևանի,

Երնջակի, Ջահուկի մի բուռ ունիթոռ հայությունը», գրում է պատմաբանը: Կաթոլիկ եկեղեցու քարոզիչները, որոնք հայտնվել էին հայկական բնակավայրերում, ամենայն հովանավորություն էին ստանում Եվրոպայից: Ֆրանսիական թագավորը 1664 թ. փետրվարի 7-ին պարսից շահին հաղորդում է.... «Պաշտպանելով կաթոլիկ (ֆրանկ) քրիստոնյաների շահերը՝ ի հաշիվ մյուս քրիստոնյաների»: Թագավորը շահին առաջարկում է հայ առաքելական եկեղեցու հավատացյալներին հարստահարել, իսկ կաթոլիկ դավանանք ընդունածներին՝ պաշտպանել: Սա բնականաբար նախապայման է ստեղծում հարստահարումից ազատվելու ելքը գտնել դավանափոխության ճանապարհով:

Թուրքական պետականությունը իր կարճ պատմության ընթացքում երբեք էլ չի ճանաչել կնքված պայմանագրերն ու համաձայնագրերը: Յուրաքանչյուր պայմանագիր, համաձայնագիր թուրքերի համար պահպանվել են այնքանով, որքանով տվյալ պահին այն փոխելու, իրենց շահերին ծառայեցնելու հնարավորություն չի եղել: Ամեն անգամ, երբ թուրքը գիտակցում և զգում է իր ուժի առավելությունը, նա խախտում է դիվանագիտական, միջազգային բոլոր օրենքները ու կարգը և հարցը լուծում իր ձեով, իր օգտին:

Այսպես, այս անգամ էլ հարմար պահ ընտրելով, 1723 թ. թուրքերը հարձակվում են Պարսկաստանին անցած հայկական տարածքների վրա և, զավթելով, հասնում Երևանի մատույցներին: Երևանի գրավման համար ձեռնարկած բոլոր հարձակումներն անցնում են ապարդյուն: Թուրքերը պաշարում են քաղաքը և սպառում օգնական ուժերի: Շուտով թուրքական նոր զինուժ է գալիս և հաջողվում է գրավել քաղաքը: Թուրքերն առանձնակի դաժանությամբ էին վերաբերվում քաղաքի հայ բնակչությանը, նրանց մեղադրելով պարսկամետության մեջ և այլն:

Շատ չանցած՝ պարսկական շահը, չհանդուրժելով կորուստները, մեծ զորաբանակով 1733 թ. հարձակվում է թուրքական զորքերի վրա, ջախջախում ու վերստին տիրանում Երևանին ու հայկական տարածքներին: Կազմվում է Երևանի խանություն, Սուրմալուն դարձյալ խանության առանձին մահալն է կազմում:

Պարսկաստանին անցած հայկական տարածքներից 1747 թ. վերստին կանգնվում է Երևանի խանությունը, որի կազմի մեջ են մտնում Սարդարապատի, Շարուրի, Սուրմալուի և այլ մահալներ: Հայաստանի հարևան Վրաստանի (որը գտնվում էր ռազմաքաղաքական բարենպաստ պայմաններում) Հերակլի Բ թագավորը 1778-1779 թթ. վրացական զորքերի և հայ կամավորների համատեղ ջանքերով գրավում է Երևանը և հայկական այլ տարածքներ, որոնց թվում և Սուրմալուի գավառը:

1795 թ. հունիսի վերջերին պարսկական 50-հազարանոց բանակը ներ-

խոժում է Հայաստան: Զորահրամանատար Աղա Մահմեդ խանը իր մնալ-թիվ զորքը բաժանում է երեք զորամասերի: Դրանցից մեկը 20 հազար զինվորներով, հանձնում է իր եղբայրներ Ալի-Ղուլի և Ջաֆար-Ղուլի խանների հրամանատարությանը և ուղարկում Երևանի ու նրա տարածքի գրավման համար: Մյուս զորքերը մեկ ամիս անց հայտնվում են Երևանի հարավ-արևելյան ծայրամասում՝ Չարբախում և բանակ դնում: Մյուս՝ հիմնական զորքը իր գլխավորությամբ ալշավում է Վրաստանի վրա և 1795 թ. գրավում է Թիֆլիսը, վիրական ընդլայնակ տարածքները: Պարսկական զորքերը գրավում են Երևանը և հայկական այլ տարածքներ, որոնց թվում Սարմալու, Շարուրը և այլն: Պարսիկները գրաված հայկական տարածքներում վերականգնում են վարչական բաժանումները, կազմավորում են 12 մահալներ: Դրանք են. Էջմիածնաքաղաքը՝ իր մեջ ընդգրկել է Երևանի հյուսիս-արևելյան տարածքները, Վեղիբասարը՝ Արարատյան դաշտավայրի Վեղի գետի ավազանի տարածքները, Շարուրը՝ ընդգրկել է Վեղիբասար մահալի և Խոյի ու Նախիջևանի միջև եղած տարածքները, Սարմալուն՝ իր մեջ ներառել է Արաքսի միջհովտի աջափնյա հարավային և Արաքս գետի և Հայկական պարի միջև ընկած տարածքները:

Երևանի խանության հարավ-արևելյան վերջավորությունը ամրոցությամբ (հետագայում Սարմալուի գավառից առանձնացվում է և առանձին տեղաստան է կազմվում Դարաքեսի-Փարչենիսի տարածքը, որն իր մեջ էր առնում Փարչենիսի, Դարաքեսի, Փառնաստի ձորահովիտները). Սառը-լին կազմված էր Սարդարապատի և Թալինի մահալներից ու Ղարսի մարզի մի փոքրիկ տարածքից՝ Արփաչայ գետակի Արաքսին միանալու տեղի շրջակայքում:

Թալինի մահալը սահմանակից էր հարավային կողմում Սարդարապատի մահալին, իսկ հյուսիսում՝ Շորագյալի մահալին, Սեղրի-Սիսիանին սահմանակից էր Թալինի մահալին և տարածվում էր Արագածի հարավային փեշերին: Սարդարապատինը գտնվում էր Արաքս գետի միջին հոսանքի ձախակողմում, նրա ձախափնյա տարածքում, սահմանակից էր Սարմալու գավառ-մահալին. Տարբերվում էր Զանգիբասարին, Սարդարապատին, Սեղրին: Սարդարը զբաղեցնում էր Արագածի և Փամբակի լեռնաշղթայի միջև ընկած տարածքը, Գարաբիչագինը սահմանակից էր Փամբակի, Էջմիածնի մահալներին, Գյոգչայինն ուներ ընդարձակ տարածք, որտեղից էր Սևանի ավազանի տարածությունները:

Բան ռուս հանդիպելիս Իվան Շոգենի, 19-րդ դարի առաջին կեսերին Երևանի խանության տարածքի մեջ կար 831 գյուղ, որոնցից ավերված, հարթեցված կիսադատարակված էին 310-ը:

Մարդաբնակները փոխվում էին, և բաղաքական դաշտում հայտնվում են նոր, ավելի հզոր տերություններ: Դրանցից էր Հայաստանից բավականին հեռու, նրա հյուսիսային քրիստոնյա բարեկամ Ռուսաստանը: Այդ թվականներից սկսած՝ Ռուսաստանն սկսում է լուրջ ուշադրություն դարձնել Կովկասին և մասնավորապես Անդրկովկասին: Այստեղ կարևոր նշանակություն ունեին նաև հայերի վաղեմի հույսերը ազատագրվելու ռուսական բազավորներից՝ վրացիներից օտարներից իրենց երկիրն ու հայ ժողովրդին: Հայերը պատրաստակամություն էին հայտնում զենքով և գրիչով աջակցել նրան:

1813 թ. Ռուսաստանի և Պարսկաստանի միջև ծավալված պատերազմը վերջանում է Պարսկաստանի պարտությամբ: Ռուսաստանի հաղթանակի հետևանքով կայսրությանն են անցնում հայկական Լոռին, Լեռնային Ղարաբաղը, Ղազախ-Շամշադինը: 1827 թ. հոկտեմբերի 1-ին ռուսական զորքերը, հայ կամավորական ջոկատների ակտիվ մասնակցությամբ երկարատև պաշարումից հետո գրավում են Երևանի բերդը ու քաղաքը: 1828 թ. փետրվարի 10-ին Թորքմենչայում, ապա և 1829 թ. նոյեմբերի 2-ին Ադրիանապոլսում համաձայնագրեր են ստորագրվում, որով Ռուսաստանի տիրապետությանն է անցնում Արևելյան Հայաստանի տարածքների մեծ մասը: Հնարավորություն է տրվում հազարավոր հայերի վերադառնալ հայրենի երկրամասերը: Սարմալու են վերադառնում նախկին բռնագաղթված հարյուրավոր ընտանիքներ: Պարսկաստանից Հայաստան գաղթածներին վերաբնակեցնելու գործում անուրանալի ջանքեր է գործադրել Ալեքսանդր Գրիբոյեդովը: Ստեղծված վերաբնակեցման կոմիտեի ղեկավար, գեներալ-լեյտենանտ Մովսես Ալտությանի ջանքերով գաղթածներին տրամադրվում են բնակարաններ, հողատարածքներ և զանազան այլ օգնություն:

Չնայած վերաբնակեցման ժամանակ ծագած բազում մեծ ու փոքր դժվարություններին, այնուհանդերձ հայրենի օջախներ, բնակավայրեր ու Հայաստան վերադարձած տարագիրները անչափ գոհ էին իրենց վիճակից, ռուսական կայսրությունից: Այստեղ դժգոհությունները հիմնականում ծագում էին այն պատճառով, որ ռուսական իշխանությունները շատ վայելում օտար դավանանքին պատկանող մարդկանց բողոքում էին կամ նշանակում բարձր պաշտոններում: Վերջիններս, կարծես զգալով ռուսների բարյացակամությունը իրենց հանդեպ, հայերի նկատմամբ բացահայտ բշնամական վերաբերմունք էին ցուցաբերում, կոպիտ կերպով խախտում եղած օրենքները, բացահայտորեն պաշտպանում իրենց կրոնակիցներին, ամենավաղի վերաբերվում հայերին:

Սարմալու վերաբնակեցված բռնագաղթածները նեռանում կերպով լծվում են իրենց բնակարանների կառուցման, նորոգման, երկրագործության և անասնապահության աշխատանքներին:

1829 թ. ցարի հրամանով ռուսական կայսրության հպատակության տակ գտնվող Անդրկովկասը բաժանվում է 6 տարբեր վարչական միավորների: Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից և Օրդուբադի շրջանից կազմավորվում է Հայկական մարզ: Մարզն ուներ երկու պրովինցիա՝ Երևանի և Նախիջևանի: Երևանի պրովինցիայի վարչական ենթակայության տակ էին օկրուգներ՝ Երևանի, Շարուրի, Սուրմալուի, Սարդարապատի: Վարչական այս բաժանումը կարճ տևողություն է ունենում: Շուտով, 1840 թ. ապրիլի 10-ին, ցարի հրամանով կատարվում է նոր վերաբաժանում: Այս անգամ վերացվում է Հայկական մարզը, մի հանգամանք, որը հայ ժողովրդի բոլոր խավերում զայրույթի և զարմանքի բուռն ալիք բարձրացրեց: Անդրկովկասում կազմավորվում է Վիրա-Իմերեթյան նահանգ և Կասպիական մարզ: Հայկական մարզի մեծ մասն անցնում է Վիրա-Իմերեթյան նահանգի ենթակայությանը, որի կենտրոնն էր Թիֆլիս քաղաքը: Շուտով Անդրկովկասը ստանում է ռուսական փոխարքայության կարգավիճակ: Այս կապակցությամբ 1846 թ. Անդրկովկասի վարչատարածքային կառուցվածքը կրկին փոփոխության է ենթարկվում: Այն բաժանվում է 4 նահանգների՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախիի և Դերբենտի: Նախկին Հայկական մարզի տարածքները դարձյալ ինքնուրույնություն չեն ստանում և հիմնականում ենթարկվում են Թիֆլիսի ու Քութայիսի նահանգներին: Ընդամենը երեք տարի անց կազմավորվում է Երևանի նահանգ, որի կազմի մեջ են մտնում հիմնականում նախկին Հայկական մարզի տարածքները, այդ թվում՝ Սուրմալուն, Ալեքսանդրապոլը, Շարուրը, Սարդարապատը, Նախիջևանն ու Օրդուբադը: 1867 թ. Սուրմալուի գավառում իշխանությունների որոշմամբ կազմավորվում է դատա-իրավաբանական ծառայություն: Տարածքն ունենում է դատա-իրավաբանական իր օղակները, ոստիկանական մասը, դատաքննչական ծառայությունները: Սրանք լուծարվեցին միայն 1918 թ.:

Սուրմալուում հայկական գյուղերը մեծամասամբ տեղավորված էին գավառի բավականին հարթավայրային մասում: Թուրքական և քրդական բնակատեղիները գրված էին գավառի տարածքում և համարյա շրջապատում էին հայկական բնակավայրերը:

Ինչպես հատուկ է թուրքին, սրանք օգտվում էին հայերի բարեհոգությունից, իսկ հայերը փորձում էին սրանց երկրագործություն սովորեցնել, վարում ու փոցխում էին հողը, սերմացու ու սածիլներ տալիս, սրանք այն աննպատակ ծախսում, վատնում, դարձյալ հայերի դուռն էին գալիս:

Երկրի քաղաքական իրավիճակի, համեմատաբար խաղաղ կյանքի բարելավմանը զուգահեռ արագ թափ են վերցնում տնայնագործությունը, արհեստագործությունը, զանազան մթերքների և ապրանքների արտադրությունը: Սրա հետ կապված զարգանում և աշխուժանում է առևտուրը: Այս կապակցությամբ ապրանքների, մթերքների մուտքը և ելքը տարածք կարգավորելու, պատշաճ հսկողություն սահմանելու, պետական տուրքեր գանձելու և այլ նպատակներով Սուրմալուում կազմավորվում են հսկիչ կետեր, մաքսատներ: Այդ մաքսատներից մեկը Իգդիր քաղաքում էր: Այստեղ ստուգում էին արտասահմանից Հայաստան և տարածաշրջան ներմուծվող բոլոր ապրանքները, մթերքների իսկությունը, որակը, քանակը և այլ հատկանիշներ ու կատարում համապատասխան գրանցում, ձևակերպում: Ըստ կառավարական որոշման, կային առանձին ապրանքներ, մթերքներ, որոնց մուտքը Երևանի նահանգ, Հայաստան, Կովկաս արգելվում էր, հետևապես դրանց գաղտնի փոխադրումը համարվում էր մաքսանենգություն: Ներմուծվող ապրանքները գրանցում էին առանձին գրքերում: Այսպես. «Ա» գրքում, գրանցվում էին ասիական երկրներից ներմուծվող ապրանքները բոլոր տեսակի, քանակի, գնի և որակի՝ ինչպես հագուստ բամբակյա և այլն: «Բ» գրքում գրանցվում էին Թուրքիայում արտադրված ապրանքները, նրանց տեսակները, քանակը և այլն: Բնականաբար մաքսատանը գրանցվում էին նաև Եվրոպայից ներմուծվող ապրանքները: Մաքսանենգ ճանապարհով ներմուծվող ապրանքների հայտնաբերման դեպքում կազմվում էր արձանագրություն, ապրանքը բռնագրավվում էր, իսկ տերը՝ ենթարկվում համապատասխան պատասխանատվության: Բոլոր գրանցումները ու գրառումները կատարվում էին ռուսերենով: Կենդանիների տեղավորումը նույնպես գրանցվում և ստուգվում էր:

Սուրմալուում տեղավորված ռուսական զորքի շատ զինվորներ, ենթասպաներ խաղաղ պայմաններում զբաղվում էին նաև երկրագործությամբ: Հատկացված հողատարածքներում նրանք մշակում էին բանջարաբոստանային կուլտուրաներ (ձմերուկ, սեխ, լոլիկ և այլն): Կազակներին հատկացված էին նաև խոտհարքներ, որտեղ արածեցնում էին ձիերին, նաև խոտ հնձում, չորացնում, հակավորում ձմռան համար: Ինչ խոսք, շատերը պատկերացում չունեին այս կլիմայական պայմաններում աճող բանջարաբոստանային մշակաբույսերի, նաև մրգերի և խաղողի մշակման մասին, սակայն ռուս հասարակ զինվորը հայ շինականից ոչ միայն սովորում էր դրանց գաղտնիքը, այլև մասնակցում այդ աշխատանքներին, տեսնում, սովորում և նույնը կատարում իր հողատարածքում:

Խաղաղ համագործակցությունը, սակայն, երկար չի տևում: Թուրքական զորքերն սկսում են հարձակում արևմտահայկական (ռուսական) տարածքների վրա: Շուտով ռուսական զորամասերը թողնում են Արևմտահայաստանը, նաև Արևելահայաստանի շատ տարածքներ, որոնց թվում և Սուրմալուի գավառի տարածքը: Կոտորելով ու բնաջնջելով Արևմտահայաստանի

բնակչությունը: Սրա հետ կապված զարգանում և աշխուժանում է առևտուրը: Այս կապակցությամբ ապրանքների, մթերքների մուտքը և ելքը տարածք կարգավորելու, պատշաճ հսկողություն սահմանելու, պետական տուրքեր գանձելու և այլ նպատակներով Սուրմալուում կազմավորվում են հսկիչ կետեր, մաքսատներ: Այդ մաքսատներից մեկը Իգդիր քաղաքում էր: Այստեղ ստուգում էին արտասահմանից Հայաստան և տարածաշրջան ներմուծվող բոլոր ապրանքները, մթերքների իսկությունը, որակը, քանակը և այլ հատկանիշներ ու կատարում համապատասխան գրանցում, ձևակերպում: Ըստ կառավարական որոշման, կային առանձին ապրանքներ, մթերքներ, որոնց մուտքը Երևանի նահանգ, Հայաստան, Կովկաս արգելվում էր, հետևապես դրանց գաղտնի փոխադրումը համարվում էր մաքսանենգություն: Ներմուծվող ապրանքները գրանցում էին առանձին գրքերում: Այսպես. «Ա» գրքում, գրանցվում էին ասիական երկրներից ներմուծվող ապրանքները բոլոր տեսակի, քանակի, գնի և որակի՝ ինչպես հագուստ բամբակյա և այլն: «Բ» գրքում գրանցվում էին Թուրքիայում արտադրված ապրանքները, նրանց տեսակները, քանակը և այլն: Բնականաբար մաքսատանը գրանցվում էին նաև Եվրոպայից ներմուծվող ապրանքները: Մաքսանենգ ճանապարհով ներմուծվող ապրանքների հայտնաբերման դեպքում կազմվում էր արձանագրություն, ապրանքը բռնագրավվում էր, իսկ տերը՝ ենթարկվում համապատասխան պատասխանատվության: Բոլոր գրանցումները ու գրառումները կատարվում էին ռուսերենով: Կենդանիների տեղավորումը նույնպես գրանցվում և ստուգվում էր:

Սուրմալուում տեղավորված ռուսական զորքի շատ զինվորներ, ենթասպաներ խաղաղ պայմաններում զբաղվում էին նաև երկրագործությամբ: Հատկացված հողատարածքներում նրանք մշակում էին բանջարաբոստանային կուլտուրաներ (ձմերուկ, սեխ, լոլիկ և այլն): Կազակներին հատկացված էին նաև խոտհարքներ, որտեղ արածեցնում էին ձիերին, նաև խոտ հնձում, չորացնում, հակավորում ձմռան համար: Ինչ խոսք, շատերը պատկերացում չունեին այս կլիմայական պայմաններում աճող բանջարաբոստանային մշակաբույսերի, նաև մրգերի և խաղողի մշակման մասին, սակայն ռուս հասարակ զինվորը հայ շինականից ոչ միայն սովորում էր դրանց գաղտնիքը, այլև մասնակցում այդ աշխատանքներին, տեսնում, սովորում և նույնը կատարում իր հողատարածքում:

Խաղաղ համագործակցությունը, սակայն, երկար չի տևում: Թուրքական զորքերն սկսում են հարձակում արևմտահայկական (ռուսական) տարածքների վրա: Շուտով ռուսական զորամասերը թողնում են Արևմտահայաստանը, նաև Արևելահայաստանի շատ տարածքներ, որոնց թվում և Սուրմալուի գավառի տարածքը: Կոտորելով ու բնաջնջելով Արևմտահայաստանի

հայ բնակչության, թուրքական զորքերը մոտենում են Սուրմալուին: Սուրմալու են հասնում թուրքի արյունոտ յաթաղանից մազապուրծ, սովալլուկ և մերկ բազմաթիվ հայ փախստականներ: Սուրմալեցիները ամեն ինչ անում են տառապանքի մեջ գտնվող հայրենակիցներին օգնելու, նրանց վիշտը թեթևացնելու, ցավն ու կսկիծն ամոքելու համար: Փախստական հայերը երկար չեն մնում Սուրմալուում, փնտրում են ավելի ապահով, թուրքից հնարավոր հեռու տարածքներ: Շուտով գաղթի ճանապարհ են բռնում նաև սուրմալեցիները: Սուրմալեցիների առաջին գաղթը համեմատաբար հանգիստ և կազմակերպված ընթացավ և տեղական թուրք ու թուրք խուժանը չկարողացավ գոհեր պատճառել: Նրանց բաժին հասավ այն, ինչը չկարողացան իրենց հետ վերցնել սուրմալեցիները: Այս գավառում բնակություն էին հաստատել նաև եզդի-քրդեր, որոնց համար գավառի տարածքը շատ հարմար էր անասնապահության համար: Եզդիների անասունները, առանձնապես ոչխարի հոտերը, ամբողջ տարին լինում էին դաշտում, արոտավայրում:

Եզդիները, վաղուց ի վեր հրաժարվելով ընդունել իսլամը, մնացել են իրենց նախնիների պաշտամունքին: Նրանք թվաքանակով քիչ են՝ մի քանի հարյուր հազար, բայց հայ ժողովրդի հետ կապել են իրենց բախտը և ապրում են հաշտ ու խաղաղ: Ավելին, եզդիները ավանդաբար սեղանդից-սեղանդ փոխանցում են հայ ժողովրդի հետ եղբայրաբար ապրելու անհրաժեշտությունը: Սուրմալուում եզդիները հայերի հետ ապրում էին հարևանությամբ և իրենց աշխատանքային գործունեությամբ փոխշահավետ համագործակցում:

Սուրմալուում եզդիները վաղ գարնանից մինչև ուշ աշուն լինում էին դաշտավայրերում, ապա ձյան հալքի հետ աստիճանաբար բարձրանում լեռնալանջեր, ալպյան մարգագետիններ՝ խնամում իրենց անասուններին, ոչխարներին: Առաջին գաղթին եզդիները չկարողացան ու չցանկացան գաղթել, թողնել հարուստ արոտավայրերը: Տարածքի զավթումից հետո թուրքերը սրանց ֆիզիկական բռնությունների ու սպանությունների չենթարկեցին, սակայն բավականին անասնագույս ու ոչխարներ հափշտակեցին:

Բայի եզդիներից, Սուրմալուում, առանձնապես Իգդիրում, Կողբում բնակվում էին նաև պարսիկներ: Պարսիկները հայերի հետ նույնպես հաշտ ու խաղաղ էին ապրում, օգնում միմյանց: Հայերի գաղթը պարսիկները ցավով ընդունեցին, բայցևայնպես իրենք չթողեցին բնակարանները ու չգաղթեցին: Երբ քիչ անց փախստական սուրմալեցիները կրկին վերադարձան իրենց լքած օջախները, պարսիկ հարևանները սրտանց ուրախացան, կանչեցին և աղջիկները հանդիպելով վաղեմի հարևաններին, արտասուքով էին արտահայտում իրենց ուրախությունը: Թուրքերը պարսիկներին նույնպես

վնաս չէին հասցրել, սակայն իրենց կեցվածքով և կերպարով հիասթափեցրել էին: Պարսիկները հաճախ կրկնում էին՝ հարամվեց, կեղտոտվեց ու ամեն ինչ ավերվեց, էդ եկողները (իմա՝ թուրքերը.-Ս. Ա.) իսկի մարդու նման չեն, մարդու պատկեր չունեին:

Դեռևս 1877 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմում հայ ժողովրդի լավագույն զավակները ծառայում էին ռուսական բանակում: Հայ ժողովուրդը շրջապատված լինելով այլադավան ազգերով, մշտապես ձգտել է ռուսական քրիստոնյա պետության հովանավորությանը: Հայերը ռուսական զորքերին օգնում էին ոչ միայն զինվորներ, կամավորական զինված ջոկատներ, պարեն ու փոխադրամիջոց տրամադրելով, այլև օգնում ռազմական ամրությունների կառուցման, զինամթերքների տեղափոխման ու պահեստավորման, հիվանդ և վիրավոր զինվորների խնամքի և բազում այլ հարցերում: Ռուսական զենքի հաղթանակի շնորհիվ ազատագրվեցին Ղարսը, Սարիղամիշը, Կաղզվանը, Սուրմալուն, Օլթին: Համաձայն կնքված պայմանագրի, այս տարածքներն «առհավետ անցնում են ռուսական կայսրությանը»: Կազմավորվեց Ղարսի մարզը, որն իր տարածքով հավասար էր Երևանի նահանգի տարածքին:

Հայտնի է, որ այդ տարիներին ռուսական բանակում ծառայություն բավականին երկար տևողություն ուներ: Ռուս զինվորը ծառայությունը Հայաստանում կատարելիս, բարյացակամ վերաբերվող հայերի հետ ազատ ու լայն շփում ուներ: Նա ծանոթանում էր հայի կենցաղին, հայ մարդու շինարարական, երկրագործական, անասնապահական աշխատանքներին, շատ բան սովորում և ընդօրինակում: Հետագայում այդ զինվորը հայրենիք՝ Ռուսաստան վերադառնալով, չէր կարող հայաստանցիների բարի ու պիտանի օրինակն իր երկրում ու տանը չկիրառել: Այս առիթով չափազանց դիպուկ է ասել ռուս գրող Վասիլի Գլոտմանը. «Պասկևիչի զինվորը, ծանր սապոգները թխկթխկացնելով, կտրեց, ծայրից-ծայր անցավ Հայաստանը և իր հետ տուն բերեց աղյուս շարելու, քար տաշելու չտեսնված մի նոր ձև, որը նա փոխ էր առել հայ որմնադիրներից»: Այո, ռուս զինվորը հայերից, նրանց սովորույթներից, աշխատանքային առօրյայից և կենցաղից շատ բաներ փոխ առավ և տարավ:

Դարասկզբում ռուսական կայսրությունում աճում են ժողովրդական դժգոհությունները ու հուզումները: Ընդդիմադիր ուժերն ամեն ինչ անում էին ցարական ինքնակալության հիմքերը խարխլելու և կործանելու նպատակով: Իշխանությունները, ռուս-ճապոնական պատերազմում կրած խայտառակ պարտության, հսկայական մարդկային և նյութական կորուստներ տալու հետևանքով ժողովրդի զայրույթին էին արժանացել: Իսկ կրած բոլոր կորուստների հատուցողը ժողովուրդն էր, որի վիճակն անմխիթար ու ծանր էր:

Ուստի, որպես հնարավոր ելք, իշխանությունները ժողովրդական հուզումների ալիքը տեղափոխեցին ազգամիջյան ասպարեզ: Բազմազգ ռուսական պետությունում բավական էր մի կայծ և ազգերը կարող էին ընդհարվել ու առաջացնել անմարելի հրդեհ:

1905 թ. Ռուսաստանի խոշոր քաղաքներում ժողովուրդը բողոքի բազմահազարանոց ցույցեր է կազմակերպում, որից հատո սկսվում են փոխադարձ մեղադրանքներ, խռովություններ ու ընդհարումներ տարբեր ազգերի միջև: Հրեական հետապնդումները, ազգայնամոլական կոչերը պարարտ հող են ստեղծում բազմազգ Անդրկովկասում: Կազմակերպվում են հայ-թաթարական զինված ընդհարումներ: Բաքվի նահանգում և տարածքի հայաշատ վայրերում կազմակերպվում էին հայերի զանգվածային կոտորածներ, բռնություններ: Նման կոտորածներ տեղի են ունենում Նախիջևանում, Շարուրում: Սուրմալուում այդ հուզումներն ու ընդհարումները չկրեցին զանգվածային բնույթ, քանզի սուրմալեցիները կարողացան համախմբված հակահարված տալ թշնամուն: 1905 թ. գարնանը Սուրմալու գավառի թուրքահպատակ բդեշներն ու թուրք-թաթարները սկսում են հաճախակի հարձակումներ հայկական գյուղերի, միայնակ հայ ճամփորդների, դաշտային աշխատանքներ կատարողների վրա, բռնություններ գործադրում, սպանություններ կատարում: Հաճախակի են դառնում արտավայրերից անասունների գողանալը և այլ դեպքեր: Մայիս ամսին գավառի Տաշբուռուն գյուղի արտավայրերից տանում են հայերին պատկանող 200 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, հիմնականում կթու կովեր և մսացու ցուլիկներ, հրթեր: Մի քանի օր անց գողանում են Իգդիր Մավայի հայ բնակիչների 40 գլուխ անասունները: Լկտիացած թուրքերը, հաջողություններից ոգևորված, օրը ցերեկով հովիվների վրա ֆիզիկական բռնություն գործադրելով, քշում, տանում են Խայֆալու գյուղի հայ գյուղացիներին պատկանող 300 գլուխ ոչխարի հոտը: Գործը հասնում է այնտեղ, որ այդ ավազակները հայերի ձեռքից խլում են դաշտում աճեցրած հացահատիկն ու մրգերը, բանջարեղենն ու առվույտը: Յուրաքանչյուր գյուղ ուներ դաշտերի իր հսկիչը, որին անվանում էին դորոդչի: Ահա, Ղարադոյուն գյուղի թուրքերը օրը ցերեկով սպանում են Ալիջան հայկական գյուղի դաշտահսկիչին: Օրեցօր ավելանում էր թուրքերի բռնությունները հայերի հանդեպ: Օգոստոս ամսին թուրքական Մալաքլու գյուղի ոճրագործները դաշտային աշխատանքներ կատարելու ժամանակ սպանում են հարևան հայկական Զաքլու գյուղի բնակիչ Մարտիրոսին: Իհարկե, այս բոլոր ոճրագործությունների, բռնությունների մասին գյուղացիները տեղյակ էին պահում իշխանություններին, օրինապահ մարմինների ծառայողներին, սակայն բացարձակապես միջոցներ չէին ձեռնարկվում: Այս անտարբերության հետևանքով իրենց հանցագործություններն անպատժելի համարող թուրքերը ավելի քաջալերված ու լկտիացած մտնում են Փանիկ գյուղի ջրաղաց և սպանում այնտեղ իրենց հատիկն աղացող երեք հայերի, ապա նրանց ունեցած ալյուր ու հատիկը սպանվածների սայլերով տեղափոխում:

Սուրմալուում ընդունված կարգ էր. մինչև դաշտերի ոռոգումն սկսվելը բոլոր ջրատար առուներն ու առվակները մաքրում էին կուտակված տիղմից, չորացած խոտերից և այլն: Սա հնարավորություն էր տալիս ջրատարների տարողությունն ավելացնել, ոռոգման ջրի կորուստները կրճատել և այլն: Այդ ջրատարներից հավասարապես օգտվում էին նաև թուրքերը: 1905 թ. հունիսի 2-ին Բլուր գյուղի մի խումբ հայեր, անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներ վերցրած, առավոտ կանուխ (մինչև օրվա տապն սկսվելը) գնում են ջրատար առուները մաքրելու: Թուրքական Հախմամադ գյուղի մոտից անցնելիս, թուրքերը թաքստոցից կրակում և սպանում են երեք հայ գյուղացիների: Մնացած հայերը, չկարողանալով դիմադրություն ցույց տալ, փախուստով ազատվում և հասնում են գյուղ: Համագյուղացիները զայրույթով են լսում այդ ոճրագործության մասին և նույն օրը մտնում են թուրքական Հախմամադ գյուղ, սպանում տասը թուրքերի: Այս դեպքից հետո թուրքական մոլլան ալլահի անունից համագյուղացիներին կովի կոչ է քարոզում: Դեպքի հաջորդ օրը՝ հուլիսի 3-ին, թուրքաբնակ Յայջի գյուղի մուսուլմանները սրերով ու հրազենով, գյուղատնտեսական գործիքներով՝ բահ ու եղան վերցրած, ավելի քան 100 մարդ, հանկարծակի հարձակվում են հայկական Ալիղամար գյուղի հայերի վրա: Սկսվում է կոտորածն ու բալանը: Հիմնականում զոհ են գնում տարեց մարդիկ և անչափահասները, քանզի պահն ընտրված էր այնպես, որ ալիղամարցի երիտասարդները գտնվում էին գյուղից դուրս, հեռավոր դաշտերում, արտերում: Այս դեպքի մասին լուրն արագ հասնում է Իգդիրում տեղավորված ռուսական զինջոկատին: Շտապով Ալիղամար է ժամանում կազակների հեծյալ մի ջոկատ, որը փորձում է կարգի հրավիրել ոճրագործներին: Անհնազանդ 7 թաթար բրատվում են, 14-ը՝ վիրավորվում: Մի քանիսին ձեռքերը կապած տանում են Իգդիր: Թուրք-թաթարները ստիպված թողնում են կուտակած ավարը և շտապ ճողոպրում այդտեղից: Իգդիր՝ ոստիկանական տեղամաս տարված թաթարների մեջ էր նաև նրանց ոգեղորող և հայերի դեմ կոտորած բարձրող քրդական Բեգ Շամշադինովների հայտնի ցեղի ցեղակիցներից մեկը: Չնայած ոստիկանությունում մի քանի օր պահելուց հետո ձերբակալված թաթարներին ազատ արձակեցին, բայց այս միջադեպը բալանչի-ոճրագործներին ստիպեց լուրջ հետևություններ անել և զսպել իրենց:

Զգալով, որ Սուրմալուի հայերը պատրաստ են թուրք-բրդական ոտնձգություններին արժանի հակահարված տալ, թուրքերն այս անգամ սկսեցին

հարևան հայկական տարածքների վրա հարձակումներ գործել: Այսպես, 1905 թ. մայիսի 28-ին թուրքերը մեծ խմբով, հրազենով զինված անցնում են Արաքսի ձախ ափ և հարձակվում Ղամարլուի (Արտաշատ) Նովլուգլու (ներկայումս անմարդաբնակ) գյուղի հայ բնակիչների վրա: Գյուղի երիտասարդությունն անմիջապես զենքի է դիմում և կարողանում կազմակերպել ինքնապաշտպանություն: Ընդհարումների ժամանակ սպանվում է գյուղի 2 բնակիչ, թուրքերից՝ 3-ը: Սակայն օգտվելով ստեղծված խառնաշփոթից, թուրքերին հաջողվում է գյուղից դուրս գտնվող 20 գլուխ անասուն քշել և անցկացնել Արաքսի աջ ափ:

Սուրմալուում հայ բնակչության թիվը հասնում էր 27 հազարի, մինչդեռ թուրք-թաթարների թիվը 60 հազար էր: Չնայած այս մեծ տարբերությանը, տեղական թուրքերը չէին համարձակվում հայերի հանդեպ խոշոր հարձակումներ կատարել: Այս տարիներին գավառն ուներ 229 գյուղ, որոնց մի մասում ընդամենը մի բանի տնտեսություն էր բնակվում, կային լքված գյուղեր: Գյուղերի այդ ընդհանուր թվից 23-ը հայկական, հայաբնակ էին: 1886 թվին Սուրմալու գավառի հայկական գյուղերը հետևյալներն էին.

Կողք-ուներ 335 տուն

Աբասգեղ-41 տուն, որից 4-ը թուրքական,
Գիվլիջա (Քուլիջա)-ուներ 87 տնտեսություն
Մոլլաղամար-ուներ 53 տնտեսություն
Խալֆալու-ուներ 116 տնտեսություն
Խոշխաբար-ուներ 20 տնտեսություն
Իգդիր-ուներ 360 տնտեսություն
Իգդիր Մավա-ուներ 162 տնտեսություն, որից 84-ը թուրքական
Բահարլու-ուներ 122 տնտեսություն
Հախվերիս-ուներ 126 տնտեսություն
Ալիղամար-ուներ 126 տնտեսություն
Բլուր- ուներ 186 տնտեսություն
Զաքրլու-ուներ 67 տնտեսություն, որից 37-ը թուրքական
Փանիկ-ուներ 141 տնտեսություն
Էվջիլար-ուներ 170 տնտեսություն
Ալեքլու-ուներ 89 տնտեսություն
Նաջաֆալի-ուներ 65 տնտեսություն, որից 17-ը թուրքական
Ղազիղշլաղ-ուներ 94 տնտեսություն, որից 52-ը թուրքական
Թեջրլու-ուներ 101 տնտեսություն
Մուրշուդալի-ուներ 77 տնտեսություն, որից 7 տուն թուրքեր էին
Դաշբուռուն-ուներ 180 տնտեսություն
Ալիղրզլ-ուներ 58 տնտեսություն

Ինչպես երևում է բերված տեղեկություններից, հայկական որոշ գյուղերում բուն դրած, տեղավորված թուրք-թաթարները արագ բազմացել և անգամ գերազանցել են թվաքանակով գյուղում բնակվող բնիկ հայ ընտանիքների թվին:



Հայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին

Հետագա տարիներին, երբ սկսվում են ազգամիջյան, նաև թուրքական զորքերի կոիվները, հայկական գյուղերում բնակվող թուրքերից շատերը առաջինն իրենք էին հարձակվում և կոտորում հայ հարևաններին:

Ստեղծված տնտեսական, ռազմաքաղաքական հարաբերությունները խոշոր կապիտալիստական պետությունների միջև սրվել էին: Հարկերը փորձում էին լուծել ռազմական ճանապարհով: 1914 թ. օգոստոսի 1-ին Եվրոպայում բռնկվում է Առաջին համաշխարհային պատերազմի բոցը և արագ տարածվում աշխարհում: Կայսերական Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Օսմանյան Թուրքիան ձգտում էին աշխարհի նոր վերաբաժանման, նոր տարածքների գրավման: Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը հանդես էին գալիս սրանց դեմ և միավորված էին Անտանտայի դաշինքում:

Թուրքիան վաղօրոք նախապատրաստվել էր պատերազմին և ձգտում էր ընդարձակել բռնապետության իր սահմանները, հասնել պանիսլամական, պանթուրանական նպատակների իրագործմանը՝ տիրել Անդրկովկասին, Հյուսիսային Կովկասին, Վոլգյան տարածքներով հասնել Միջին Ասիա, Հնդկաստան, Չինաստան: Բնականաբար, պետական ու կրոնական

հնչեղություն ունեցող այս պլանի իրականացման ճանապարհին եղած բոլոր մեծ ու փոքր խոչընդոտները պետք է վերացվեին, խտրականություն չդնելով ձևի և բովանդակության միջև: Ազգայնամոլ ու բարբարոս այս ծրագրի իրականացմանն առաջին հերթին խանգարում էին Հայաստանն ու հայ ժողովուրդը:

Համաշխարհային պատերազմի առաջին օրվանից թուրքական ռազմածովային և ցամաքային ուժերը հանկարծակի հարձակվում են ռուսական ռազմական բազաների, նավերի և այլնի վրա և զգալի վնաս հասցնում: 1914 թ. նոյեմբերի 10-ին Ռուսաստանը ստիպված մտնում է պատերազմի մեջ և սկսում ռազմական գործողությունները Արևմտյան և Թուրքական ճակատներում:

Հայ ժողովուրդը, զրկված պետականությունից, չէր կարող մասնակցել այդ պատերազմին պաշտոնապես, սակայն հայ մարդկանց գոյատևման համար նախընտրեցին քրիստոնյա Ռուսաստանին և իրենց ազատագրման ու ապագայի խնդիրը կապեցին ռուսական զենքի հաղթանակի հետ, ամեն կերպ օգնելով դրա իրականացմանը:

Թուրքական զորքերը, հանկարծակի հարձակվելով Արևմտյան Հայաստանի՝ ռուսների կողմից ազատագրված հայկական տարածքների վրա, որոշ հաջողություններ ունենալով, առաջ շարժվելով գրավեցին Սարիղամիշը, Ղարսը, Բաթումը և այլ տարածքներ: Թուրքերն իրենց հաղթանակն ապահովելու և արագացնելու նպատակով կոչով դիմում են Ռուսաստանում բնակվող քրիստոնյաների կողմից իբր «բնաջնջվող» բոլոր մուսուլմաններին՝ «ռուսների դեմ սրբազան պատերազմ հայտարարել և ամենուր նրանց ոչնչացնել»: Համանման կոչով դիմեցին նաև իրենց տիրապետության տակ հեծող հայերին՝ կռվել ռուսների դեմ և «ռուսներին վռնդել Կովկասից»: Թուրքական քարոզչությունը բացեիբաց թմբկահարում էր՝ «Թուրքիայի ազգային շահերը մեզ դրդում են ոչնչացնել մոսկովյան մեր թշնամուն հանուն նրա, որպեսզի դրա հետևանքով հաստատենք մեր կայսրության բնական սահմանները, որը կընդգրկի և կմիավորի մեր ցեղի բոլոր ճյուղերը», -հայտարարում էին թուրք բարձրաստիճան պաշտոնյաները: Թուրք ժողովուրդը՝ հաշիշով տարված, պատերազմի էր գնում հանուն իր ազգի, հանուն ցեղակիցների համախմբման ու միավորման: Թուրքական ազգայնամոլական այս գաղափարախոսությունը չի կորցրել իր արդիականությունը և մեր օրերում: Աղրբեջանցիները նույնպես ձգտում են միանալ իրենց արյունակիցներին՝ Արևելքում թե մոտակայքում: Ազգայնամոլական այդ ձգտումն ուղղված է առաջին հերթին հայերի և Հայաստանի դեմ, հայ ժողովրդի բոլոր հատվածների դեմ:

Այսպես, թուրքական բանակը՝ ոգևորված առաջին հաջողություններից,

փորձում է այն շարունակել և անցնել Արևելահայաստան: 1915 թ. ձմռանը Սարիղամիշի մոտ տեղի ունեցավ հսկայական ճակատամարտ: Այստեղ ռուսական զորքը հայ կամավորական ջոկատների ակտիվ մասնակցությամբ, թուրքական լավ սպառազինված 90-հազարանոց բանակին այնպիսի ջարդ տվեց, որ թուրքերը խուճապահար փախուստի դիմեցին: Ճակատամարտի ամբողջ տարածքը ծածկվում էր թուրք այնախում ասկյարների դիակներով: Ռուսական զորքերը հաղթական մարտերով առաջ են շարժվում և 1915 թ. հուլիսի 18-ին ազատագրում Վան քաղաքը և արևմտահայկական այլ քաղաքներ ու տարածքներ: Սակայն շուտով ռուսական զորքերը թողնում են գրաված քաղաքներն ու տարածքները և նահանջում: Ռուսական զորքերի հետ իրենց պապական օջախներն ու տարածքներն են թողնում հարյուրհազարավոր հայեր: Վասպուրականի ավելի քան 200 հազար հայեր լռնում են գաղթի ճանապարհը: Սրանց մի մասը Սուլմալուով, Իգդիրով անցնում են Արաքսի կամուրջը և հասնում Սարդարապատ, Էջմիածին ու սփռվում Արևելահայաստանի տարբեր բնակավայրերում:

Գաղթականների վրա անընդմեջ հարձակումներ, կոտորածներ, թալան և առևանգումներ էին կատարում ոչ միայն թուրքական կանոնավոր բանակի արնախում ենիչերիները, այլև այդ տարածքներում բնակվող թուրք և քուրդ ոճրագործները: Կարծես իրար էին խառնվել երկիրը, դժոխքն ու երկրային կյանքը: Հոգնած ու սոված, հարազատների մահն ու արյունը տեսած սարսափահար փախստականների մի վարար մասը, մարդկային ու նյութական ահռելի կորուստների գնով, փրկվում է թուրքական ոճրագործների ճանկերից:

1917 թ. նոյեմբերին Ռուսաստանում բոլշևիկների կուսակցությունը կարողանում է արյունոտ հեղաշրջում կատարել, տապալում է ցարական իշխանությունը, ցարին:

Ռուսական կայսրությունը, որը պատերազմի ընթացքում Անտանտայի պետությունների թվում կռվում էր Գերմանո-ավստրո-հունգարական, թուրքական ռազմական դաշինքի պետությունների դեմ, խաղաղության կոչ է հղում և քաղաքական իրավիճակից ելնելով, դառնում Անտանտայի պետությունների հակառակորդ:

Ռուսական զորքերը թողնում են Թուրքական ճակատը, ազատագրված Արևմտյան Հայաստանի տարածքները և վերադառնում հայրենիք՝ Ռուսաստան:

Թուրքական զորքերի և պետության համար ստեղծվում են չափազանց հարմար, բարենպաստ պայմաններ՝ իրենց ազգայնամոլական պլանների իրագործման, Հայաստանի և հայ ժողովրդի հետ վերջնականապես հաշվեհարդար տեսնելու համար: Օրհասական այս օրերին, դեռևս 1914 թ. ցարս-

կան իշխանությունների կողմից թույլատրված հայկական ազգային զորամիավորումների վրա դրվեց անչափ ծանր խնդիր՝ նահանջող հսկայաքանակ ռուսական զորքի փոխարեն կռվել և պահպանել Հայկական տարածքները ու հայ ժողովրդին: Կազմակերպված հայկական 4 ջոկատներից, որոնք ռուսական բանակի շարքերում կռվում էին թուրքերի դեմ, անմիջապես մեկնեցին ռազմաճակատ, գրավելով համապատասխան դիրքեր: Ասենք, որ հայկական կամավորական երկրորդ ջոկատի հրամանատար էր նշանակվել սորմալեցի, արդեն քաջի և խիզախ հայրենասերի համբավ վաստակած Դրաստամատ Կանայանը, նույն ինքը Դրոն: Այդ ջոկատի առջև խնդիր է դրվում պաշտպանել Իգդիրը, ազատագրել Սորմալուն, ապա առաջ շարժվելով՝ անցնել Բայազետ, Բերկրի, դուրս գալ Վանի շրջան և միանալ հայկական կամավորական հիմնական զորքերին: Ռազմական առաջադրանք էր ստացել նաև Հայկական կամավորական առաջին ջոկատը, որի հրամանատարն էր Անդրանիկ Օզանյանը: Այս ջոկատը պետք է առաջանար մինչև Բաշ-Կալա և, ազատագրելով տարածքի բնակավայրերը, հասներ Վան: Կամավորական երրորդ ջոկատը խնդիր ուներ շարժվել Կաղզվան, գրավել Ալաշկերտը, արշավել Մանազկերտի վրա: Չորրորդ ջոկատը պետք է Սարիդամիշով անցներ Հար, դուրս գար Օրգան-Քիփրիքոյ և հասներ Էրզրում, մասնակցեր նրա ազատագրմանը: Այսպես, հայկական կամավորական ջոկատները, որոնք թուրքերի դեմ կռվելու բավականին փորձ ունեին, պատրաստ մեկնում են իրենց խնդիրների կատարմանը: Չնայած հայկական զորաջոկատները անհամեմատ փոքր էին թվաքանակով, սակայն հայ մարտիկները անձնազոհության ու հայրենասիրության բարձր գիտակցությամբ էին տոգորված:

1917 թ. դեկտեմբերին Թիֆլիսում գումարվում է Արևմտահայության ներկայացուցիչների ընդհանուր խորհրդակցություն, որտեղ ողջամտորեն գնահատելով հայ ժողովրդի վրա կախված օրհասական վտանգը, որոշում են կազմակերպել արևմտահայկական զինված զորամիավորումներ: Հայտարարվում է համընդհանուր պարտադիր զորակոչ, այն պարտադիր էր բոլոր արևմտահայերի համար: Կազմավորվող դիվիզիայի հրամանատար է նշանակվում արդեն մեծ ժողովրդականություն վայելող զորավար Անդրանիկ Օզանյանը: Այս դիվիզիան մտնում էր Հայկական կորպուսի կազմի մեջ, որի հրամանատարն էր գեներալ Նազարբեկյանը (Նազարբեկով): Հայկական կորպուսի կազմի մեջ մտավ նաև սորմալեցիներից կազմված ԻԳԴԻՐՅԱՆ՝ առանձին ջոկատը:

1917 թ. վերջերին Հայկական ռազմական գործադիր կոմիտեն կոչով դիմում է հայ զինվորներին՝ «Թուրքական ճակատը չլքել, կռվել և դիմադրել թուրք զավթիչներին»: Ռազմական կոմիտեի կոչ-ուղերձում մասնավորապես ասվում էր. «Ով չի ցանկանում թուրքական լուծը... ովքեր չեն ցանկանում դառնալ բռնակալ թուրքերի ստրուկները... կանգնեն ռազմաճակատի առաջին գծում... հայրենիքի փրկության համար»:

Թուրքերի առաջխաղացումը կասեցնելու, ռազմաճակատը համալրելու համար Երևանի նահանգի վեց գավառներում՝ Երևան, Էջմիածին, Սորմալու, Բայազետ, Շարուր-Դարալագյազ, Նախիջևան, հայտարարվում է զորահավաք: Զենքի են կոչվում հայ երիտասարդները: Զինվորագրվում էին նաև ավելի տարեց կամավորներ: Զինվորական ծառայության են մեկնում կռվելու ունակ բոլոր տղամարդիկ: Զորահավաքը հաջող կազմակերպելու նպատակով նշված էր զորակոչվածների ներկայանալիք տեղն ու ժամանակը: Սորմալու գավառի զորակոչվածները պետք է ներկայանային Էջմիածնում տեղակայված հայկական 4-րդ գունդ: Այս հետևակ գնդում նրանք պետք է կարճ ժամանակում սովորեին և տիրապետեին ռազմական գործին և համալրելով գնդի շարքերը, մեկնեին թուրքական ռազմաճակատ:

Նշանակալի է այն հանգամանքը, որ չնայած երկրի տնտեսական ծանր վիճակին, Հայաստանի կառավարությունը զինվորական ծառայության մեկնած բոլոր ընտանիքների նյութական, բարոյական հոգածություն է վերցնում իր վրա: 1917 թ. դեկտեմբերի 24-ին հատուկ կոչ է ուղղվում զինակոչի տարիքի բոլոր մարդկանց՝ բնակավայրերից չբացակայելու և պատրաստ լինելու զորամասեր մեկնելու համար: Ռազմական խորհուրդը առանձին կոչով դիմում է նաև հայ մտավորականներին՝ ինտելիգենցիային, ուսուցիչներին և ուսանողներին, դպրոցների բարձր դասարանների աշակերտներին, նախկին ֆիդայի ազատամարտիկներին՝ Հայրենիքի փրկության, հայ ժողովրդի փրկության համար կամավորական ջոկատներ կազմավորելու և թուրքական զավթիչներին հակահարված տալու համար: Ժողովրդին ուղղված այդ կոչը լայն արձագանք գտավ հասարակության բոլոր խավերում: Ոտքի ելան աշակերտները, գիմնազիստները, մանկավարժները ու գիտնականները:Նախկին ֆիդայիականները, որոնք բավական լավ փորձ ունեին թուրքերի դեմ կռվելու, նորակոչիկ կամավորականներին ծանոթացնում էին ռազմական գործին, հաղթելու արվեստին: Ամենուր հայ մարդը պատրաստվում էր դիմագրավելու ալևոխում թշնամուն:

1918 թ. ապրիլին Անդրկովկասյան սեյմի վարչապետ Չխենկելիի դավաճանական կարգադրությամբ Ղալասի բերդը, որն ուներ պաշտպանվելու, թուրքական հարձակումը կասեցնելու բոլոր հնարավորությունները, հրետանային մի քանի համազարկից հետո հանձնեցին թուրքերին: Սա ողբերգություն էր հայ զինվորի, նրա հերոսական սպայակույտի, ողջ ժողովրդի համար: Սկսվում է բնակչության և զինվորականների համընդհանուր և հապճեպ նահանջը, գաղթ դեպի Ալեքսանդրապոլ, Շիրակ: Ապրիլի 12-ին

հայկական Ղարսը, իր ամրոցով և ամբողջ շրջակայքով դատարկվեց հայերից: Հայկական զորքերի մի մասը՝ Վանի երկու ջոկատներ, նահանջելով, պաշտպանական դիրքեր են գրավում Սուրմալուի Բարդուղյան բարձունքներում: Սակայն թուրքերը, խախտելով զինադադարի վերաբերյալ համաձայնագիրն ու պայմանավորվածությունը, շարունակում են հարձակումը և ապրիլի 27-ին համընդհանուր հարձակում սկսելով, հայկական զորաջոկատներին ստիպում են նահանջել: Չնայած դրան, հաջորդ օրն իսկ մեր զորքերը կրկին ետ են շպրտում թուրքերին և դարձյալ տիրանում իրենց դիրքերին: Հայկական զորքերը տեղավորվում են Իգդիրում, զորքերի առաջապահ ջոկատները դիրքեր են գրավում Օրգովի շրջակայքում: Իգդիրյան գնդի պաշտպանական մյուս թևը Սարդարապատ կայարանն էր: Մեր զորքերի ձեռքին էր նաև Կողբի տարածքը:

Մայիսի 15-ին թուրքերը, համախմբելով իրենց ուժերը, համընդհանուր հարձակում են ձեռնարկում: Հայկական զորքերն ստիպված նահանջում են Իգդիրից, Կողբից և հասնում Արաքս գետին: Այդ ժամանակ Արարատյան դաշտը լրիվ շրջափակված էր ինչպես թուրքական կանոնավոր, այնպես էլ տեղական թաթարական խուժանի կողմից: Շարունակելով առաջխաղացումը, թուրքական զորքերը մայիսի 21-ին հայտնվում են Սարդարապատի դաշտում: Դեպի Երևան մնացել էր քիչ ճանապարհ...:

Թուրքական զորամասերը հիմնականում հարձակվում էին երեք ուղղությամբ: Բաշ Ապարանի ուղղությամբ պաշտպանական դիրքեր էին գրավել Իգդիրի քաջ զավակ Դրաստամատ Կանայանի զինվորները: Այստեղ, Կանայանի զորաջոկատի դեմ հարձակվում էին թուրքական բանակի 3-րդ դիվիզիայի ասկյարները, որոնք իրենց «քաջությունը» ցույց էին տվել Արևմտահայաստանի խաղաղ բնակչության հանդեպ: Մինչև Հայաստանի անկախ հանրապետության հռչակումը, թուրքական զորքերը հասցրել էին բռնազավթել Հայաստանի տարածքների զգալի մասը՝ Ղարսը, Արդահանը, Կաղզվանը, Օլթին, Սուրմալուն, Ալեքսանդրապոլ քաղաքն իր շրջակայքով, Էջմիածնի գավառի 3/4-ը: Հայաստանին թողնվել էր ընդամենը 28 հազ. քմ տարածք: Թուրքական հարձակման դեմ Հայաստանը մնացել էր մեն-մենակ: Հայերն ստիպված կռվում էին 4 ռազմաճակատներում, որոնցից մեկը Սուրմալուն էր և ոչ երկրորդական, քանզի այստեղից դեպի Երևան չափազանց կարճ ճանապարհ էր ձգվում:

Սուրմալուում գործում էին հայկական 9-րդ գունդը՝ 2000, 6-րդ գնդի մեկ գումարտակ՝ 1000, 7-րդ գնդի մեկ գումարտակ՝ 700 զինվորներով, նաև Ղարաբաղյան առանձին զորաջոկատ՝ 800 զինվորներով: Վերջինս գործում էր քաջ ու անվեհեր, ինքնապաշտպանական կռիվներում համբավ և մեծ փորձ կուտակած խմբապետ Թարխանյանի (Կուռո) հրամանատարությամբ:

Սուրմալուի ճակատում հայկական զինյալ ուժերը կազմում էին 4500 մարտիկներ: Սրանց թվաքանակի մեջ էր մտնում նաև եզդիների զինյալ ջոկատը, որը պակաս քաջություն չէր ցուցաբերում:

Ռազմաճակատի բոլոր հատվածներում հայերն ունեին 16700 կռվող, Զանգեզուրում կար նաև 500 հոգանոց ջոկատ, որն աղրբեջանական թաթարների հարձակման դեպքում կարող էր նրանց արժանի հակահարված հասցնել: Որպես պահեստայիններ Երևանում տեղակայված էին 1500 զինյալներ: Ընդհանուր առմամբ հայկական բոլոր կազմավորումներում զենքի տակ կար 25000 մարդ, իսկ բանակի ամբողջ անձնակազմը չէր անցնում 40 հազարից: ... Համառ մարտերից հետո թուրքերին հաջողվում է ճեղքել ճակատը և Կողբի լեռներով անցնելով, կիսալուսնով պարանոցը իրենց դարձյալ բարձրացնել հայոց հինավուրց մայրաքաղաք Անիի միջնարերդի պարսպին:

Օգտվելով ռազմաճակատում ձեռք բերած հաջողություններից և Հայաստանի տնտեսական, քաղաքական ծանր պայմաններից, թուրքերը պահանջում են 72 ժամվա ընթացքում իրենց հանձնել նաև Նախիջևանը, Շարուր-Դարալագյազի կեսը, Սուրմալու գավառը, նաև Էջմիածնի գավառը՝ Էջմիածին քաղաքով: Պահանջում էին իրենց հանձնել նաև Ալեքսանդրապոլ քաղաքը և համանուն գավառի տարածքի կեսը:

1918 թ. մայիսի 27-ին Անդրկովկասյան սեյմից դուրս էին եկել և իրենց անկախ՝ «Արևելյան-Կովկասյան-մուսուլմանական հանրապետություն» հռչակել Կովկասի թաթարները: Առանց չափազանցության սրանք շվարել էին և չէին կարողանում իրենց համար շատ թե քիչ հարմար անվանում գտնել: Միայն, շնորհիվ այրունակիչ Օսմանյան Թուրքիայի իշխանությունների հնարամտության, այս խառնամբոխն անվանվեց «ազարբայջանի»: Սրանցից մեկ օր առաջ Սեյմից դուրս էին եկել և Վրաստանի անկախ հանրապետություն հռչակել վրացիները:

Ահա այս իրավիճակում, երբ թուրքական ոճրագործները ամեն կերպ ձգտում էին Արևելյան Հայաստանը ևս արժանացնել Արևմտյանի բախտին, հայ քաղաքական գործիչները, ազգային կուսակցությունները չէին կարող վճռական քայլեր չիրագործել՝ անկախ Հայաստանի հռչակումով: Այս ակտը կատարվեց 1918 թ. մայիսի 28-ին:

Մայիսի 21-ին թուրքական զորքը մտնում է Ալեքսանդրապոլ: 36-րդ դիվիզիայի ասկյարները Շիրակի դաշտով առաջանալով, հասնում են Սարդարապատ: Դրա հետ միաժամանակ թուրքական 5-րդ, 12-րդ հետևակային դիվիզիաների զինվորները կատաղի մարտերի ընթացքում, ունենալով բավական հսկայական կորուստներ, կարողացան գրավել Սուրմալուի տարածքը և մահացու վտանգ ստեղծել Արարատյան դաշտի, Երևանի համար:

1918 թ. մայիսի 22-ին, հայկական 5-րդ հետևակային գունդը, կամավորական ջոկատները՝ գնդապետ Փիրումովի հրամանատարությամբ, Պելեկյոստկովի պարտիզանական գնդի համագործակցությամբ, Սալիբեկովի հրամանատարությամբ գործող Իգդիրյան գնդի մարտիկների և այլ զորաջոկատների հետ համատեղ, հանկարծակի հարձակվելով Քյոլպիլու (Այշալույս), Ղուլդուդուլի (Արմավիր) գյուղերի ուղղությամբ՝ թուրքական զորքերի մեջ խուճապ և շփոթ են առաջացնում: Թուրքերը, կորուստներ տալով, նահանջում են դեպի Ղամշլու (Եղեգնուտ) գյուղ, որտեղ և շրջափակվում է դրանց մի զորախումբը: Սկսվում է վճռական ճակատամարտը: Հայկական զորքերը, հայ մարտիկները ընդհանուր հարձակման են անցնում և թուրքերին զգալի վնաս հասցնելով, ստիպում են նահանջել, ապա և փախուստի դիմել: Թուրքական զորքը մայիսի 22-ին թողնում է Սարդարապատը և խուճապահար նահանջում: Ցավալի է, որ հայկական զորքերը, որոշ հանգամանքներ նկատի առնելով, ջախջախված ու խուճապահար թշնամուն չեն հետապնդում, մինչև վերջ չեն ոչնչացնում:

1918 թ. հունիսի 4-ին Բաքումի քաղաքում պատերազմող կողմերի միջև ստորագրվում է ռազմական գործողությունների դադարեցման համաձայնագիր:

Չնայած Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղալաքիլիսայի ճակատներում հայկական զորքերի տարած փայլուն հաղթանակներին և թուրքական զորքերի ակնառու պարտությանը, հայկական պատվիրակությունը, եղելությունից անտեղյակ, ստորագրում է Հայաստանի ու հայ ժողովրդի համար անցանկալի և ամոթալի համաձայնագիր: Պայմանագրի համաձայն՝ Թուրքիային են անցնում նաև Արևելահայկական զգալի տարածքներ՝ Երևանի գավառից 1360 քառ. վերստ, Ախալցխայից՝ 2367 թ. վերստ, Ախալքալակից՝ 2407 քվ, Ալեքսանդրապոլից՝ 2504 քվ, Կաղզվանի օկրուգից՝ 3843 քվ, Նախիջևանի տարածքը, Սուրմալու գավառից՝ 3147 քվ:

Տարեվերջին՝ հոկտեմբերի 30-ին, միջերկրական Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստյան փոքրիկ քաղաքում հաղթող կողմերը՝ Անտանտայի երկրները, պարտված կողմի՝ Թուրքիայի հետ զինադադար են կնքում: Այդ համաձայնագրի 4-րդ հոդվածում նշվում է. «Բոլոր հայ ռազմագերիները և տեղահանվածները պետք է հավաքվեն Կոստանդինապոլսում, որպեսզի առանց որևէ նախապայմանի հանձնվեն դաշնակից պետություններին»: Այդ նույն համաձայնագրով Թուրքիան պարտավորվում է իր բոլոր զորքերը դուրս բերել Անդրկովկասից (հոդվ. 11), իսկ 16-րդ հոդվածը պահանջում է նաև թուրքական զորքերի հեռացումը Կիլիկիայի տարածքից:

Համաձայնագրի հռչակումից անմիջապես հետո հարյուր հազարավոր հայ փախստականներ, բռնագաղթածներ ձգտում էին օր առաջ հասնել, վերադառնալ հայրենի, բնավեր երկիրն ու օջախը: Տարերային, համընդհանուր այս ձգտումը առաջացրեց զգալի դժվարություններ՝ գաղթականներին անվտանգ իրենց բնակավայրերը տեղափոխելու գործում: Բնականաբար, սուրմալեցի գաղթականները, որոնք այնքան մոտ էին գտնվում իրենց մայր հողին, և որոնց մեծ մասը Արաքսի ձախափնյա մոտակա գյուղերում էին հանգրվանել, անհամբերության և շտապողականության ավելի մեծ եռանդ էին ցուցաբերում: Ըստ տեղեկությունների, այդ օրերին միայն Էջմիածնի (Սարդարապատ) շրջանում հավաքվել և իրենց բնակավայրերն էին շտապում ավելի քան 140 հազար գաղթականներ:

Խոնված Արաքսի ափին, սուրմալեցին վերստին մտորում էր անցածգնացած օրերի, իրենց գլխին հասած արհավիրքների մասին ու հիշում բանաստեղծի տողերը.

Արազն էկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով,
Որտե՞ղ թաղեմ ես իմ դարդը,
Չոր գլուխս տափին տալով:

Հայաստանի նորանկախ կառավարությունը, գաղթականների տունդարձը կազմակերպած և այն անվտանգ դարձնելու համար կազմակերպում է ՆԵՐԳԱՂԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ: Հանձնաժողովը ընդունում է հատուկ որոշում, որտեղ մասնավորապես ասված էր. «... Դեռ հայրենի բնակավայրերը չհասած, այստեղ ընտրել գավառային, գյուղական կոմիտեներ, կազմակերպել հեծյալ միլիցիոներական խմբեր 100-200 մարդուց, գաղթի ճանապարհին ունենալ սենդի կայաններ, շրջիկ ձիավոր պարեկներ»:

Այդ ծանր օրերին Հայաստանի կառավարությունը ժողովրդավարական եղանակով թույլատրում է գաղթական բնակչությանը «ընտրել գավառային կոմիտեներ»: Հանձնաժողովը որոշում է նաև մինչև սուրմալեցիների տեղափոխվելն ու իրենց բնակարաններում տեղավորվելը, այլ տարածքների գաղթականներին ժամանակավորապես արգելել այդտեղ բնակվելը, մինչև ազատ բնակարանների հայտնաբերումը:

Մայիս ամսվա վերջերին Սուրմալուի փախստական-գաղթականները համարյա ամբողջովին վերադարձել և զբաղեցրել էին իրենց լքած տունը, շինությունները: Թուրքերը կողոպտել, քանդել էին շատ տներ և օժանդակ կառույցներ: Իրականում դրանք կատարել էր մեծ մասամբ տեղական թուրք խուժանը: Սրանք հանել էին տան դռները ու լուսամուտները, քանդել տանիքը՝ տարել գերաները ու համարյա ամեն ինչ: Շատ տեղեր կտրել էին պտղատու ծառերը, ավերել ջրատարները: Սուրմալեցիները եռանդով սկսեցին վերանորոգման ու կառուցման աշխատանքները: Մեծ էր վերադարձած հարևանների մոտ փոխադարձ օգնության ցանկությունը: Երբեմն բահ, քլունգն ու դույլը օրական մի քանի անգամ ձեռքից-ձեռք էին անց-

նում, հարևանից-հարևան: Տեղում մնացած և չգաղթած պարսիկ ու եզդի հարևանները նույնպես օգնում էին շինարարական և այլ աշխատանքներում: Շուտով սկսում են երկրագործական աշխատանքները, վար ու ցանք կատարում: Առաջին հերթին ջրատարները մաքրելուց, ծառերն ու այգիները ջրելուց հետո միջոցներ են ձեռք առնում անասնագլխաքանակ՝ կովեր և գոմեշներ, այծեր և ոչխարներ ձեռք բերել: Անհրաժեշտություն է դառնում նաև ձիերի, ջորիների և էշերի ձեռքբերումը: Դժվար հայց է դառնում լծկանի՝ սայլ ու գութան քաշող եզների ձեռքբերումը: Այս և այլ դժվարին հայցեր սուրմալեցիները կարողանում են աստիճանաբար հաղթել, լուծում գտնել և փորձում են նախկին բնականոն կյանքին անցնել: Սկսում են աշխատել Սուրմալուի այնքան հայտնի ատաղձագործներն ու դարբիները, կոշկակարները ու բրուտները: Դարբինը փորձում է կարգի գցել արդեն իսկ սառած, ածխով լի, կիսամոխիր քուրան, աշխատեցնել ժանգապատ մուրճն ու սալը և երգել.

Զարկեցե՛ք, դարբիններ, կռանը սալին,
Զարկեցեք կռանը, շղթայքն ամրանան,
Անիծյալ արքայի կապանքն ամրանան,
Զարկեցեք, դարբիններ, կռանը սալին:

Աշխատանքային այս եռուզեռի և բազում հոգսերի ճիրաններում գրաղված, հայրենի օջախները վերադարձած սուրմալեցին չնկատեց, թե ձմեռը երբ և այդքան վաղ եկավ ու չոքեց կիսավեր տան առջև: Չոքեց ու սկսեց անդուռ ու անլուսամուտ պատերից ներս մտնել, մերկ ու քաղցած եկվորներին ցրտահարել:

... Կարկուտը ծեծած տեղն է ծեծում,-ասում է մեր իմաստուն ժողովուրդը, ասում է սուրմալեցին: Ցմռան սառնամանիքները եթե մի կերպ տանելի էին, ապա անհաղթահարելի էր սովի ներկայությունը: Օրեցօր այն դառնում էր ուժեղ ու հզոր, սպառափելի և գարհուրելի: Թաղվում են առաջին սովյալները: «Կողբը սովի ճարակ է դարձել... սովից մեռնում են օրական 20 մարդ...» գրում է ժամանակի հայ մամուլը մայիսի 21-ին: Մայիսի 20-ին Բաթումի նավահանգիստ է հասնում ամերիկյան առաջին մարդասիրական օգնությունը: Նավը բերել էր 125 հազ. փութ (2000 տոննա) ալյուր: Մեկ շաբաթ անց Բաթումի հասցվեց ևս 600 հազ. փութ (9600 տ): Շալուրից սովյալ սուրմալեցիներին է ուղարկվում Շարուրի հայ բնակչության հավաքած մի քանի վագոն ցորեն: Սակայն այս բոլորը չէին կարող սովյալ բնակչության կարիքները բավարարել, «սովի դեմն առնել»:

Չնայած դաշնակից պետությունները՝ Անգլիան, Ֆրանսիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները ստիպեցին Թուրքիային զորքերը հեռացնել Հայաստանի (նաև այլ տերությունների) տարածքներից, սակայն թուրքական

իշխանությունները չէին շտապում այն իրագործել, իսկ եթե հեռանում էին, ապա տեղերում իրենց դրածոներն ու կրտնակիցները ամեն բան անում էին վերագաղթած հայերի վիճակը ծանրացնելու համար: Սրանք զանգվածային ելույթներ էին ունենում, չէին ցանկանում ճանաչել օրինական պետության՝ Հայաստանի Հանրապետության օրենքները ու իշխանության օղակները: Տարածքից հեռացած թուրքերի նպատակը մնում էր նույնը՝ Ղարսի, Սուրմալուի, Շարուրի, Նախիջևանի և Զանգեզուրի, Ղարաբաղի գրավումը և արյունակից կովկասյան թաթարների հետ միացած՝ դուրս գալ Միջին Ասիա, ապա և հեռուներ:

1919 թ. մայիսի 27-ին Սուրմալուի գավառում պաշտոնապես հաստատվում է Հայաստանի Հանրապետության իշխանությունը: Սուրմալուի գավառապետ է նշանակվում Հ. Հարությունյանը: Կազմավորվում է գավառային խորհուրդ: Նշանակալի է, որ գավառային խորհրդի անդամ է դառնում նաև ազգությամբ եզդի Ուսուբ բեգ Թեմուրյանը: Չնայած Սուրմալուի գավառը անկախ Հայաստանի Հանրապետության վարչական տարածք էր համարվում, Հայաստանի տարածք և հող, սակայն օգոստոսի 7-ին թուրքական բանակը հանկարծակի հարձակում է սկսում Կողբի հարավային մասում տեղակայված հայկական զորաջոկատների դիրքերի վրա: Հայկական զինյալները հարձակումը հաջողությամբ ետ են մղում, չզիջելով դիրքերը: Օգոստոսի 18-ին թուրքական մեծաթիվ զորքը կրկին հարձակման է անցնում: Հայկական զորքերը քաջաբար կռվում են, չզիջելով դիրքերը: Սակայն տարածքում եղած Ղամշլու, Ագարակ, Աբաս գյուղերի թուրք-թաթարները զինված խռովություն են բարձրացնում, հարձակվում հայ բնակավայրերի վրա և մեր մարտիկներին հարվածում թիկունքից: Հայկական զորաջոկատները ստիպված նահանջում են, հասնում Արաքսի ափերը: Մեր զորքերի նահանջի հետևանքով ավելի քան 5000 սուրմալեցիներ բռնում են գաղթի ճանապարհը: Քյազիմ Կարաբեքիր փաշայի ասկյարները այս անգամ՝ արդեն ճակատներին կարմիր աստղ, ծածանելով թուրքական կարմիր դրոշը, որպես կարմիր Ռուսաստանի դաշնակից, կոտորում ու ավերում են Հայաստանը, նրա ժողովրդին «դաշնակ իմպերիալիստներից» ազատագրելու մարմաջով: Այդ հաչոցներին հավատացին շատ հայ միամիտ մարդիկ, նաև շատ գիտուններ: Հայ ժողովրդի, նրա բանակի մեջ սերմանվեց կասկածի և երկմտության դավաղիր որդը:

1919 թ. հուլիսի 18-ին իր աշխատանքներն է սկսում Փարիզի խաղաղարար կոնֆերանսը: Հայ ժողովուրդն անհամբեր սպասում էր այդ համաժողովի արդյունքներին, քանզի այնտեղ որոշվելու էր Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագիրն ու ապագան:

Կոնֆերանսը որոշում է Օսմանյան կայսրությունից առանձնացնել Հա-

յաստանի, Սիբիրյի, Պաղեստինի, Արաբիայի, Միջագետքի տարածքները և ստեղծել անկախ պետություններ:

Սակայն Ռուսաստանում կատարված բոլշևիկյան հեղաշրջումը փոխեց իրերի քաղաքական ուղղվածությունը և Թուրքիայի թշնամուց Ռուսաստանը վերածվեց նրա մերձավոր բարեկամի ու հովանավորողի: Թուրքական սպառնալիքը կախված էր արդեն արևաքամ, բազմիցս բզկտված հայ ժողովրդի և Հայաստան երկրի վրա:

Քաղաքական, ռազմական և տնտեսական այս ծանր պայմաններում Հայաստանի կառավարությունը փորձում էր հնարավոր ելք գտնել ժողովրդին և երկիրը փրկելու համար: Հայկական տարածքներ էր մտել բոլշևիկյան կարմիր բանակը, սրանից գոտեպնդված՝ հարձակվում էր նաև խորհրդային դարձած Ադրբեջանը: Վերջինս պահանջում էր Ղարաբաղն ու Նախիջևանը, Զանգեզուրն ու Շարուրը: Հայաստանի կառավարությունը, ստիպված, 1920 թ. դեկտեմբերի 2-ին, կեսգիշերային ժամին Ալեքսանդրապոլում թուրքական պատվիրակության հետ ստորագրում է հաշտության դաշնագիր: Այդ դաշնագրի երկրորդ կետի համաձայն՝ Ղարսի մարզը, Սուրմալուն համարվում է վիճելի մինչև 3 տարի ժամանակով, որի ընթացքում հայոց կառավարությունը կարող է հայտարարել հանրաքվե՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների...:

Դաշնագրի 13-րդ կետում նշվում է. «Շարուրը, Նախիջևանը ժամանակավորապես օժտվում են չեզոքությամբ՝ գտնվելով Թուրքիայի հովանավորության տակ, մինչև որոշվի նրանց բախտը»: Հայաստանը ստիպված հրաժարվում է Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող բոլոր դրույթներից:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանը հայտարարվում է խորհրդային սոցիալիստական հանրապետություն: Նույն թվի դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Առաջին Հանրապետություն) իշխանությունը կամավոր, առանց պատերազմի հանձնում է Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը: Այդ նույն օրը արդեն իսկ գոյություն չունեցող Հայաստանի առաջին հանրապետության պատվիրակության հետ Թուրքիան դաշնագիր է ստորագրում և բռնագրավում հայկական լայնածավալ տարածքներ, որը հետագայում խորհրդային Ռուսաստանի ճնշման տակ «օրինականացվում» է:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևրում Մեծ տերությունները հրավիրում են կոնֆերանս: Այլ հարցերի թվում քննարկվում է նաև «Հայկական հարցը»: Ստորագրված հաշտության պայմանագրի 88, 89, 90, 91, 92, 93 հոդվածները վերաբերում էին Հայաստանին: Ըստ 88 հոդվածի, Թուրքիան ճանաչում է ազատ ու անկախ Հայաստանի գոյությունը, ապա





համաձայնում է, որ Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանները կազմվի ԱՄՆ-ի նախագահ Ու. Վիլսոնի կողմից: Արևելյան Հայաստանի տարածքը կազմում էր. Երևան՝ 3140, Էջմիածին՝ 3750, Ալեքսանդրապոլ՝ 3300, Զանգեզուր՝ 6000, Փամբակ-Լոռի՝ 5000, Ղազախ-Իջևան՝ 4000, Նոր Բայազետ՝ 4700, Դարալագյազ՝ 2000 քառ. կմ: Սա կազմում է 31980 քկմ տարածք: Արևելյան Հայաստանի մնացած տարածքները կազմում էին 39350 քկմ, ինչպես Սուրմալուն՝ 3650, Շարուր-Նախիջևանը՝ 5600, Ալաշքալակը՝ 2800, Լեռնային Ղարաբաղը՝ 10 հազ քկմ, Ղարսը՝ 5800, Կաղզվանը՝ 4450, Արդահանը՝ 400, Օլթին՝ 3000, քառակուսի կմ: Այսպիսով, Արևելյան Հայաստանի ամբողջ տարածությունը հավասար էր 71330 քառ կմ: Ըստ Սևրի պայմանագրի Արևմտյան Հայաստանի տարածքը՝ 90 հազ. քկմ, անցնում էր Հայաստանի Հանրապետության կազմին, դրանցից. Վանի տարածքից՝ 20 հազ քկմ, Էրզրումի տարածքից՝ 40 հազ. քկմ, Բիթլիսի տարածքից՝ 15000 քկմ, Տրապիզոնից՝ 15 հազ քկմ: Այսպիսով, Արևմտյան Հայաստանի տարածքներից և Արևելյան Հայաստանի տարածքներից կազմավորվում էր Հայկական պետություն, որն ունենալու էր 161370 քկմ ընդհանուր տարածություն:

Կոնֆերանսը հանձնարարում (խնդրում) է ԱՄՆ-ի նախագահին, որպես անկողմնակալ պետության ղեկավար և աշխարհում ճանաչված ու հարգված անձնավորություն, կազմել Հայաստանի և Թուրքիայի միջև պետական սահմանը:

Փարիզյան հաշտության պայմանագրի տակ դրված Լիա Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Հեյջազի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի (սերբեր, խորվաթներ, սլովակներ) լիազոր ներկայացուցիչների ստորագրությունները:

Կոնֆերանսի մասնակիցներին ուղղած իր նամակում նախագահ (պրեզիդենտ) Վիլսոնը գրել է. «... Իրեն ընձեռած իրավունքի համաձայն նա ուսումնասիրել և «արդարության գերագույն շահերում գոհացում տալու փափագով խնդիրը քննելե ետք... սահմանները հետևյալ կերպով պիտի գծվի» և թվարկել է այն բոլոր նշանավոր տեղերի, տարածքների, գետերի ու լճերի, լեռնագագաթների և այլն անվանումները, որոնք պետք է լինեն երկու պետությունների ապագա սահմանագիծը: Այդ հիման վրա պատրաստած քարտեզը ուղարկում է պետություններին: Վերջում Վիլսոնը գրում է. «Ի հաստատություն այս բոլորի, ստորագրեցի և Միացյալ Նահանգների կնիքը դրի այստեղ, 1920 թ. 22 նոյեմբերի»:

(ԱՄՆ-ի անկախության հռչակման 145-րդ տարեդարձի օրը):

Պրեզիդենտ Վիլսոնի գծած՝ Հայաստանի սահմանների տարածքը ներ-

կայիս Հայաստանի Հանրապետության տարածքին գերազանցում էր ավելի քան... 5,2 անգամ:

Սկրի հաշտության պայմանագրով նախատեսված Հայաստանի տարածքն արդեն հստակորեն էր մեր ժողովրդի բազում տառապանքների և



Ղարսի պայմանագիրը և Հայաստանը (1921թ. հոկտեմբերի 21)

հայրենի հողերի միավորման ձգտումների: Պայմանագրով նախատեսվում էր նաև թուրքերի կողմից բռնագավթած տարածքներում հայ ժողովրդի հարստության (շարժական և անշարժ գույք) փոխհատուցում:

Այդ տարածքում հայ ժողովուրդը կկարողանար ստեղծել իր անկախ և հզոր հայրենիքը, հզորությամբ ավելին, քան կարող էր լինել նրա մերձակա հարևաններից որևէ մեկը: Պայմանագրով Հայաստանը լինելու էր նաև ծովային տերություն՝ Տրապիզոնով ելք ունենալով դեպի Սև ծով, դեպի համաշխարհային ջրային ավազաններ: Սակայն... մինչև Սկրի հաշտության պայմանագրի իրականացումը, 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանը հռչակվում է Խորհրդային: Դեկտեմբերի 2-ին կառավարությունն անցնում է բոլշևիկներին: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության և Ռուսաստանի խորհրդային հանրապետությունների միջև կազմվում է բարեկամության համաձայնագիր: Ըստ այդ համաձայնագրի, որը Ռուսաստանի կողմից ստորագրում է հանրապետության լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը, ասվում է հետևյալը. «2 դեկտեմբերի 1920 թ. մի կողմից ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ ընկ. Լեգրանը ՌԿԿ-ի լիազորությամբ, ի դիմաց Ռուսաստանի խորհրդային կառավարության և մյուս կող-



Բորիս Լեգրան

մից, ընկերներ Դլոն և Տերտերյանը, ի դիմաց Հայաստանի Հանրապետության կառավարության, կնքեցին համաձայնություն հետևյալի մասին»

1. Հայաստանը հայտարարվում է անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետություն:

Համաձայնագրի երրորդ հոդվածով նշվում է. «Ռուսաստանի խորհրդային կառավարությունն ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության վարչական տարածք են անվիճելիորեն ճանաչվում Երևանի նահանգի տարածքները՝ Սուրմալուն, Շարուրը, Նախիջևանը և այլ տարածքներ, ինչպես նաև Ղարսի մարզի մի մասը և Թիֆլիսի նահանգի այն տարածքները, որոնք Հայաստանի կազմում են եղել մինչև 1920 թ. հոկտեմբերի 20-ը (Լոռին և այլն): Ռուս-հայկական այս համաձայնագրով Արևելյան Հայաստանի տարածքները միավորվում են, իսկ այդ տարածքներից բռնագաղթածները և փախստական հայերը խանդավառությամբ են ընդունում համաձայնագիրը և սկսում են կրկին վերադառնալ հայրենի օջախներ:

Փախստական և գաղթական դարձած սուրմալեցիներն ցավով էին տեսնում հայրենի երկրի ավերածություններն ու ոճրագործի ելույթում նրա գտնվելը: Այդ տեսակետից դիպուկ և բնորոշ էր այդ ժամանակներում հնչող ժողովրդական երգը:

Չկա զանգակի ձայն, չկա հայ բարբառ,
Դառել ես բնավեր, գայլերի անտառ,
Դպրոցներով հարուստ, մարդասեր գավառ,
Օձն է նստել բախտիդ վրա, Սուրմալու:

Սակայն թուրքական դիվանագիտությունն ավելի ակտիվ գտնվեց, և Մոսկվայում կնքվում է ռուս-թուրքական դաշնագիր, որը բերեց Ղարսի պայմանագրի կնքմանը, սա ջնջեց ռուս-հայկական պայմանագրի բոլոր հոդվածները:

Այսպես, 1921 թ. հոկտեմբերի 13-ին Խորհրդային Ռուսաստանի ճնշման ներքո կնքվեց Ղարսի պայմանագիրը, որով Խորհրդային Հայաստանից խլվեցին նրա օրինական շատ տարածքներ, նրան թողնելով ներկայիս մոտ 30 հազ. քկմ տարածք: Ղարսի պայմանագիրը հաստատեց մինչ այդ՝ 1921

թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի կետերը, «օրինականացնելով» հայկական տարածքների բռնազավթումը: Այդպես էլ այլոց թվում Սուրմալուն մնաց (տրվեց) օտարին, նրա բախտին «Օձն է նստել»: Հայ ժողովրդին հասցրած վնասների չափը որոշելու նպատակով դեռևս 1918 թ. վերջերին ստեղծվեց «Հայ ժողովրդի համաշխարհային պատերազմից կրած վնասների քննիչ հանձնաժողով»: Սրանց ստուգումների, հետազոտությունների արդյունքում պաշտոնապես պարզվեց, որ միայն Փամբակ-Լոռիում թուրքերի հասցրած նյութական վնասը հաշվվում էր ամենանվազագույն չափերով 45 մլն ռուբլի, որն այն ժամանակ համազոր էր ԱՄՆ՝15 մլն դոլարի: Բնականաբար Սուրմալու գավառի կրած նյութական վնասները ավելին էին լինելու, քան Փամբակ-Լոռիի տարածաշրջանինը: Իսկ Հայաստանից բռնազավթած մնացած տարածքների՞նը...:

Հավանաբար հիմա էլ ուշ չէ, եթե պետականորեն այդ գործը դրվի միջազգային նորմերի բարձրության վրա, չէ՞ որ մեր դարում նման փաստեր, իրողություններ կատարվել են, և դա գործնականում ընդունելի է:

Առաջին աշխարհամարտում թուրքական պետության պարտությունից հետո մինչև խաղաղության պայմանագրերի ստորագրումը Անդրկովկաս և Հայաստան իրենց զինյալ ուժերը մտցրին դաշնակից պետություններին, հիմնականում Մեծ Բրիտանիան: Անգլիացիները իրենց համար ավելի ձեռնտու էին համարում հանձին Այրարատյանի Կովկասում ունենալ մուսուլմանական ուժեղ պետություն, քան ռուսամետ քրիստոնյա Հայաստան: Ղրիմը ռուսական հեղափոխությունից հետո հովանավորել սկսեցին Թուրքիային և լավ ճանաչելով հայ ժողովրդին, նրա ռուսական դիրքորոշումը, հաճախ կրկնում էին՝ «Եթե խնդիրը վերաբերում է Ռուսաստանին, ապա հայի վրա չի կարելի հույս դնել, այս դեպքում **«ՀԱՅՆ ԱՎԵԼԻ ՌՈՒՍ Է, ՔԱՆ ՌՈՒՍՆ ԻՆՔԸ»**:

Այսպես, մինչև Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջումը, ցարական Ռուսաստանի զորքերը (հայ կամավորականների հետ միասին) ազատագրել էին ողջ Արևմտահայաստանի տարածքը: Բոլշևիկյան հեղաշրջումից հետո ռուսական բանակը լքեց թուրքական ռազմաճակատը, թուրքերը վերստին զավթեցին Հայաստանի հսկայածավալ տարածքներ: Միջազգային ատյաններում պաշտպանվում են հայ ժողովրդի օրինական իրավունքները՝ տեր կանգնելու պատմական տարածքներին, սակայն այն դարձյալ բախվում է մեծ տերությունների շահերին, և Թուրքիան մնում է անպատիժ: Հարյուր հազարավոր գաղթական-փախստականների, միլիոնավոր հայերի արդար ձգտումները այս անգամ էլ մնացին անկատար: Անցան տասնամյակներ...:

... Համաշխարհային երկրորդ աշխարհամարտում Խորհրդային Միութ-

յունը (Ռուսաստան) մարդկային և նյութական հսկայական զոհերի, կորուստների գնով նաև դաշնակիցների օգնությամբ հաղթանակով ավարտեցին պատերազմը: Գերմանիայի դաշնության պետությունները, որոնց թվում էր և Թուրքիան, ամեն ջանք թափեցին ետպատերազմյան շրջանում քաղաքական, տնտեսական, ռազմական նվազագույն կորուստներով հնարավորինս ազատվել պատժից: Խորհրդային Միությունը, հաշվի առնելով պատերազմի ընթացքում Թուրքիայի հակախորհրդային դիրքորոշումը, նրա կողմից գերմանական ռազմամեքենային օգնելը, 1945 թ. մարտի 19-ին չեղյալ է հայտարարում 1925 թ. դեկտեմբերի 17-ի խորհրդա-թուրքական «բարեկամության և չեզոքության» պայմանագիրը, որպես նոր իրավիճակին չհամապատասխանող:

1945 թ. հուլիս ամսին Մոսկվայում տեղի են ունենում խորհրդա-թուրքական բանակցություններ, որոնց ընթացքում ԽՍՀՄ պատվիրակության ներկայացուցիչները խոսում են Թուրքիայի կողմից բռնազավթած տարածքների մասին: Ավելին, ԽՍՀՄ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Վյաչեսլավ Մոլոտովը թուրքական պատգամավորներին պարզորոշ հայտարարում է. «1921 թ. թուրքերը, օգտվելով խորհրդային պետության թուլությունից, նրանից պոկեցին Խորհրդային Հայաստանի մի մասը»: Այսպես Խորհրդային Միության բարձրաստիճան այրը ի լուր աշխարհի հայտարարում է, որ Թուրքիայի կողմից բռնազավթած տարածքները իրոք պատկանում են Հայաստանին: Ապա Վյաչեսլավ Մոլոտովը շարունակում է. «Խորհրդային Միությունում հայերն իրենց վիրավորված (նեղացած) են զգում: Այդ հանգամանքի պատճառով խորհրդային իշխանությունը բարձրացրել է օրենքով Խորհրդային Միությանը պատկանող այդ տարածքների վերադարձնելու պահանջը»:

Հետաքրքրական և շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Իդենը Վ. Մոլոտովի հետ զրույցի հայտարարում է, որ «Թուրքերը համաձայն չեն բավարարվում խորհրդային Միության տարածքային պահանջները»: Այս առթիվ Մոլոտովն Իդենին պատասխանում է. «Այն տարածքները, որոնց մասին խոսք է գնում, թուրքերին չեն պատկանում»..: Ավելին,-շարունակել է ԽՍՀՄ արտգործժողկոմը,- պարզաբանելով բոլոր նրանց, ում հիշողությունը թույլ է,- «Ղրիմը (իմա՝ թուրքերը) անարդար են վարվել, դրանք (տարածքները-Ս. Ա.) ԽՍՀՄ (ընդգծումն իմն է-Ս. Ա.) Խորհրդային Միությունից: Լեհերը,-շարունակում է Վ. Մոլոտովը,-նույնպես անարդար էին վարվել, 1921 թ. զավթելով Խորհրդային տարածքի մի մասը: Սակայն լեհերը վճռեցին վերանայել իրենց դիրքերը և ներկայումս համաձայնվել են այդ տարածքը վերադարձնել Խորհրդային Միությանը»:

Անգլիական դիվանագիտության այդ կարկառուն ղեկավարն ամեն կերպ փորձում է թուրքական իշխանություններին պաշտպանության տակ վերցնել, ձախողել ԽՍՀՄ օրինական պահանջը: Այդ պատճառով Մոլոտովը հիշեցնում է նրան, որ անգլիական իշխանությունները բազմիցս հանդես են եկել թուրքական իշխանությունների ներքո գտնվող հայկական բնակչության պաշտպանության հարցերով:

Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթող տերությունները կրկին հավաքվում են, այս անգամ արդեն պատերազմի հաղթական ավարտից հետո: Հավաքը տեղի ունեցավ 1945 թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը, Բեռլինի արվարձաններից մեկում՝ Պոտսդամում: Կոնֆերանսին մասնակցող մեծ տերությունները՝ ԽՍՀՄ-ն, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, քննարկեցին եռապատերազմյան Եվրոպայի, աշխարհի խաղաղ գործընթացի շատ հարցեր: Կոնֆերանսում բավականին տեղ էր հատկացվել նաև ԽՍՀՄ-Թուրքիա տարածքային հարցերի լուծմանը: Այստեղ ԽՍՀՄ արտգործժողկոմ Մոլոտովը հանդես գալով, հայտարարեց. «Մենք համարում ենք ԽՍՀՄ և Թուրքիայի միջև սահմանը անարդարացի, իրականում 1921 թ. Խորհրդային Հայաստանից և Խորհրդային Վրաստանից պոկվել է տարածք, որը Ղարսի, Արդվինի, Արդահանի մարզերի հայտնի տարածքներն են...

Կոնֆերանսում այդ հարցի առթիվ Իոսիֆ Ստալինը պարզաբանում մտցնելով, ասում է... «Խոսքը գնում է մինչև Առաջին համաշխարհային պատերազմը գոյություն ունեցող սահմանները վերականգնելու մասին: -Ես,- շարունակում է Ստալինը,-նկատի ունեմ Ղարսի շրջանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում, և Արդահանի շրջանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Վրաստանի կազմում...»:

ԱՄՆ-ի նախագահ Տրումենը հայտարարում է, որ այդ տարածքային հարցերը վերաբերում են ԽՍՀՄ-ին և Թուրքիային, և որ նրանք իրենք կարող են այդ հարցերը լուծել միմյանց միջև: Սա կարծես թե հզոր Խորհրդային Միությանը հնարավորություն էր տալիս թուրքերի հետ վարվել համարյա ըստ ցանկության, այսինքն՝ ետ վերցնել բոլոր այն հողերը, տարածքները, որոնք հարկ կհամարի: Այսպես, Տրումենի հայտարարությունից հետո այլևս կոնֆերանսում ռուս-թուրքական (խորհրդա-թուրքական) տարածքային վիճելի հարցերը չքննվեցին, դրանք թողնելով ԽՍՀՄ-ի և Թուրքիայի հայեցողությանը:

Հետագայում, Պոտսդամի կոնֆերանսից 8 տարի անց՝ 1953 թ. մայիսի 30-ին, ԽՍՀՄ կառավարությունը թուրքական կառավարությանը հետևյալ հայտարարությունն արեց. «Հանուն բարիդրացիական հարաբերությունների պահպանման և խաղաղության ու անվտանգության ամրապնդման, Հայաստանը և Վրաստանը հարմար գտան հրաժարվել Թուրքիայից իրենց տարածքային պահանջատիրությունից»:

Այսպես, չնայած արդարությունը պահանջում է, որ հայկական տարածքները՝ բռնազավթված Թուրքիայի կողմից, պետք է ետ վերադարձվեն, սակայն տարբեր խաղերով տուժողի, տարածք կորցնողի անունից գավթիչին հայտարարում են «հանուն բարիդրացիական... հանուն խաղաղության...», և այլն, և այլն Հայաստանն իրեն պատկանող տարածքները զիջում է ոճրագործին, բռնազավթիչին, և դա այն դեպքում, որ դա Հայաստանի, հայ ժողովրդի անունից, դա հայտարարում է մի այլ պետություն, որի շատ հաղթանակների իրականացմանը ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել ու բազմաթիվ զոհեր է տվել այդ նույն տուժողը:

Ավելին, իր չարագործությամբ հայ ժողովրդի հանդեպ Խորհրդային Միությունը գնաց ավելի հեռուները: ԽՍՀՄ փլուզման նախօրեին՝ 1991 թ. մարտ ամսին, Մոսկվայում ԽՍՀՄ և Թուրքիայի միջև կնքվեց «Բարեկամության, բարիդրացիական հարաբերությունների և համագործակցության» պայմանագիր:

Հայկական հսկայածավալ տարածքների բռնազավթումը, որքան էլ այն «ամրապնդեն» զանազան պայմանագրերով, համաձայնագրերով, միևնույն է՝ մնում է ու մնալու է ՀԱՅԿԱԿԱՆ, քանզի այդ տարածքներում ձևավորվել և ապրել է հայ ժողովուրդը: Դրանց թվում Սուլմալուի տարածքը եղել և մնալու է հայկական, քանզի Իգդիրի, Կողբի, Սուլմալուի և տարածքի հայերի ժառանգները երբեք էլ չեն մոռանա պապենական հողն ու օջախը և մշտապես պահանջատերն են հայրենի Սուլմալուի:

ՄՇՏԱՊԵՍ ՈՒ ԴԱՐԵԴԱՐ:

ՍՈՒՐՄԱԼՈՒ

(Տեքստը տրամադրել է Շուշանիկ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ Արտաշատից)

Թող սգան հայերը կորստիդ համար,
Հայաստանի փառք ու պարծանք Սուրմալու,
Դպրոցներով հարուստ, մարդասեր գավառ,
Հպարտ է հնչում բառդ, Սուրմալու:
Նենգ ու չար ոսոխդ արյունոտ ձեռքով
Ավերակ դարձրեց քեզ, հարուստ Սուրմալու,
Պայծառ արեգակի շողերի տեղակ,
Սև ամպն է իջել գլխիդ, Սուրմալու:
Մայր Արաքսի ափին չոքել ես վիատ,
Օջախդ մարած, լքված Սուրմալու,
Հայ աղջկա անուշ երգի փոխարեն,
Քոռ բուն է վայելում հարգանք, Սուրմալու:
Սիսն ու Մասիսը աղի արցունքով,
Քո վիշտն են կիսում, անմահ Սուրմալու,
Հույսդ մի կտրիր, կգա ժամանակ
Փառքդ կհառնի, փյունիկ Սուրմալու:

Մշակեց
Էդվարդ ԽՈՆԴԿԱՐՅԱՆԸ

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ, ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Սուրմալուի աշխարհագրական դիրքը ինքնին տարածքը բաժանում է երկու պայմանական մասերի՝ Կողբի քիչ լեռնային և Իգդիրի հարթավայրային: Այս երկու տարածքներն ունեն իրենց առևտրատնտեսական, մշակութային և վարչական կենտրոնները՝ համանուն բնակավայրերով: Ինչ խոսք, ամբողջ տարածքը, լինելով վարչական մի միավոր, կապված է իրար սերտ կապերով:

Քանի որ վերջին շրջանում Սուրմալու գավառի արդյունաբերական, առևտրական, մշակութային կենտրոնները հիմնականում սրանք են, իսկ Սուրմալու բնակատեղիի և տարածքի այլ բնակավայրերի մասին ասվում է հպանցիկ և ընդհանուր են բոլորի համար, ապա հարմար ենք գտել նկարագրել Կողբի, Իգդիրի մասին քիչ մանրամասն:

ԿՈՂԲԸ Սուրմալու բնակատեղիից գտնվում է ընդամենը 4 կմ հեռավորության վրա, տարածքի հյուսիս-արևելյան մասում: Կողբի պատմական անվանումը Վարդենարգ է, հավանաբար այդ անունով էլ կոչել են Կողբի մոտով հոսող և Արաքս թափվող գետակը: Հնարավոր է, որ գետակի անվամբ է կոչվել բնակավայրը:

Վարդենարգ գետակը սկիզբ է առնում Հայկական պար լեռնաշղթայից, նրա հյուսիսային լանջերի ավելի քան 3000 մ բարձրությունից: Գետը կոչվում է նաև Չնչվար: Ժամանակին այդպես են անվանել նաև բնակավայրը՝ Կողբը: Վարդենարգն արագահոս է, լեռան լանջերում բացել է խոր ձորեր, անդունդներ: Սկզբնամասում այն հոսում է դեպի հյուսիս, ապա քիչ հյուսիս-արևելք և թափվում Մայր Արաքս: Գետը հիմնականում սնվում է լեռնային ձնհալ ջրերով, աղբյուրներով: Հորդառատ անձրևների ժամանակ առանձին դեպքերում այն հորդանում, վարարում է, անգամ դառնալով վտանգավոր՝ շրջակա բնակավայրերի, մշակովի դաշտերի համար: Գետի վարարման հիմնական պատճառը անձրևներն են, որոնց հետևանքով հալվում է լեռնալանջերին կուտակված ձյունը և լցվում գետի մեջ:

Վարդենարգը Հայկական պար լեռնաշղթայի Սինակ լեռան բարձրություններից հոսելով, անցնում է Կողբի Աղասալի կողքով, լիզում նրա ընդերքի շերտը և մինչև Արաքս թափվելը նրա զուլալ ու քաղցրահամ ջուրը դառնում է աղի, դառն ու խմելու և ոռոգելու համար պիտանի: Բնականաբար, այդ փոքրիկ գետակի Արաքս հասցրած աղաջուրը չի փոխում Արաքսի ջրի ընդհանուր բաղադրությունը: Այստեղից էլ Վարդենարգի երկրորդ անունը՝ Աղագետ, որին թուրք-թաթարները, սովորության համաձայն, իրենց անվանումն են տվել՝ Շոռ չայ:

Այս տարածքով հոսող մյուս գետակը Ագարակն է, որը դարձյալ սկիզբ է



Տեսիլ Բարդող լերինց Աղահանից Կողբայ

առնում Սինակի լեռներից, հոսում է Կողբի տարածքով և կրկին թափվում Մայր Արաքս: Ագարակը հոսում է Արասգյոլ գյուղի դաշտերով, ոռոգում նաև գյուղի մշակովի դաշտերն ու արոտավայրերը: Մյուս գետակներն են Սինակը և Թուշուջան: Սրանք Կողբի տարածքում խառնվելով իրար, դառնում են ավելի ջրառատ և հոսելով Ագարակ, Օրաշմիշ, Սուրմալու բնակավայրերի դաշտերով, կրկին թափվում Արաքսի մեջ: Կողբին տարբեր ժամանակներում տվել են նաև Կուլփ, Ղուլփ անվանումները: Ավանդույթն ասում է, որ իր անառիկ դիրքի հետևանքով այն կարծես փակված է, փակի տակ է, գտնվում է ԿՈՂԲՎԱԾ վիճակում, ԿՈՂՊ է, և հայերն անվանել են ԿՈՂԲ: Սա հեռու չէ իրականությունից, եթե հաշվի առնվեն հնագույն ժամանակները, երբ Կողբ մտնելն այնքան էլ դյուրին չի եղել նույնիսկ տեղաբնակների համար:

Գտնվելով Հայկական պար լեռնաշղթայի Բարդուղ լեռան հյուսիս-արևելյան մասում, այն մշտապես ապավինել է այդ լեռանը, օգտվել նրա բնական, բուսական և կենդանական հարստություններից: Հնուց ի վեր Կողբը գտնվելիս է եղել Այրարատ աշխարհի Ճակատք գավառի վարչական միավորման կազմում: Հնագույն ժամանակներից Կողբն առևտրական, արհեստավորական աշխույժ բնակատեղի է եղել: Միատարր հայ բնակչությունը նախնադարից սկսած՝ զբաղվելիս է եղել երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով և հանքագործությամբ:

Մեծն Ղևոնդ Ալիշանը «Այրարատում» Կողբի մասին գրում է. «Ի մտից հիւսիսոյ Չնչավատոց փարասխավ հեռի և իբր փարասխավ և կիսով յԵ-՝ռասխայ՝ ի գոգաձև վայրի կավային գետնի, շրջապատելոյ հրաբխային

բլրովք, առ խաղիվք Վարդեմարգայ»: Ահա այսպես է նկարագրում մեծ պատմաբանը Կողբը, նրա դիրքն ու տեղը: Միևնույն ժամանակ նա խոսում է Կողբի մասին հիացմունքով ու գովեստով: «Այս հռչակագույն շեն գավառին Ճակատոց, Կողբ գեղավան, ընթերցակայ Աղահանիվքն և հայրենիք գոլով յստակագույն գրչի և թարգմանչի հայերեն լեզուիս Եզնակ կամ Եզնիկն կոչեցելոյ առաջին կես Ե դարու, որոյ աղագավ և նախ առաջին նուագ յիշի գեղոն, որ յայտ է թէ և հազարամեայ դարու յառաջ ծանոթ էր վասն աղին»: Մեծ պատմաբանը գովեստով է խոսում Կողբի, հնաղարյան նրա աղահանքի, ինչպես նաև Կողբի լավագույն գավակ Եզնիկի մասին, որպես մեծագույն լուսավորչի, թարգմանչի: Փավստոս Բուզանդը նշում է, որ Խոսրովի որդի Տիրանը գումարում է նախարարների խորհրդակցություն, որոնց թվում մասնակցում էր «Կողբացոց իշխան Մանավազին»:

Կողբի մասին հայ շատ մեծանուններ գովեստով իրենց խոսքն են ասել, հիացել նրանով, սեր և համակրանք տածել նրա աշխատասեր ու տաղանդավոր ժողովրդի հանդեպ:

Հովհաննես Կաթողիկոսը Կողբի մասին ունի գովեստի խոսքեր, պատմական գրառումներ: Ըստ նրա, Սմբատ թագավորի ժամանակ Շապուհի որդի Աշոտն այս բնակավայրում կառուցել է «մեծաշեն եկեղեցի»: Պատմաբանները կարծում են, որ ժամանակին Ճակատքը բաժանված է եղել երկու վարչական տարածքների՝ Կողբի և Սուրմալուի:

Կողբը կառուցող հայերն առավելագույնս օգտագործել են բնական պաշտպանական հնարավորությունները, կառուցվող բնակատեղիի, աշխարհագրական նպաստավոր դիրքը:

Բնակավայրի դիմաց կա հսկայական ժայռաբեկոր, որը մեզ հայտնի բնության հրաշալիքներին ոչնչով չի զիջում: Իր դիրքով, կազմությամբ, գեղեցկությամբ այդ վերամբարձ ժայռաբեկորը զբաղեցնում է զգալի տարածություն, որի գագաթները բարձրանում և մխրճվում են երկնքի մովի մեջ: Կողբի մոտակայքում վեր բարձրացող Բարդուղ (Թաքալթու) լեռը գերիշխում է տարածքի վրա. այն գտնվում է ծովի մակերևույթից 1562 մ բարձրության վրա: Սա նույնպես ամրապնդում է Կողբի պաշտպանական հզորությունը, այն անմատչելի դարձնելով զավթիչներին:

Նկարագրելով բնակավայրը, Ալիշանը գրում է. «Թատերաձև կառուցեալ է՝ ի ստորոտս բլրոց, կավակերտ տամբք և անձուկ փողոցք, նշանավոր ձև ունենալով զխիտ առ խիտ աշտարական բոլորչիս՝ ապաստարանս ասպատակաց»:

Կողբը, որպես Հայաստանի և հայ ժողովրդի անխախտելի և միասնական տարածք, համահունչ է պատմական անցյալին:

620 թ. Կողբին տիրում են բյուզանդական զորքերը: Հայոց կաթողիկոս

Առաջին Փառաժնակերտցու (630-664 թթ.) հոլովությամբ Բյուզանդիոնի կայսեր Հերակլի Եզրոսը համաձայնում է Կողբի աղահանքերից ստացած աղի հանույթի 1/3-ը թողնել հայ հոգևոր կենտրոնին՝ Էջմիածնի վանքին, դրանով ամրապնդելու համազգային հոգևոր կենտրոնի նյութական հզորությունը, որը և մեր ժողովրդի հոգևոր ու նյութական բարեկեցության նպատակին է ծառայում:

Հետագայում Կողբին տիրում են Հայ Բագրատունիները:

Արաբական արշավանքների ժամանակ հայկական հսկայածավալ տարածքներ անցնում են նրանց տիրապետության տակ և 7-րդ դարի սկզբներին Կողբը դառնում է արաբներին ենթակա: 11-րդ դարի սկզբներին Կողբին տիրանում են սելջուկները, իսկ 13-րդ դարի սկզբին՝ 1236 թ., ամբողջ տարածաշրջանն անցնում է մոնղոլների տիրապետության տակ, որոնց թվում և Կողբը: Լենկ Թեմուրի հորդաները տարածաշրջան են գալիս 1386, 1393, 1398 թթ.: Թեմուրի զորքերը հարձակվում և գրավում են Սուրմալու ամրոցբնակատեղին: Այս խաշնարած ցեղերի հորդաները իրենց մեծաքանակության շնորհիվ կարողանում են տիրանալ ընդարձակ տարածքների, կոլոնացնել պետություններ և իրենց ավերիչ գործունեությամբ գրավված տարածքների ժողովուրդների առաջընթացը ժամանակավորապես դադարեցնել, կասեցնել, արգելակել: Բոլոր երեք արշավանքների ընթացքում սրանք բռնանում են կողբեցիների վրա, կոտորում, կողոպտում և ավերում երբեմնի շեն բնակավայրը:

Հետագայում ևս Կողբի վրա հարձակվում են առանձին թափառական կիսավայրենի ցեղեր, խմբեր: Դրանցից մեկի մասին (Ջալալինների) Ղևոնդ Ալիշանը «Այրարատում» գրում է. «Եկին ի վերայ Կողբայ, ի վերայ Բառնաւտի, կողոպտեցին զԿողբ, բայց բնակչացն նախատես լեալ վախստամբ գերծան ի կոտորած»: Այսպես, չնայած բազմիցս օտար բռնակալների հարձակումներից կողբեցիք խուսափում են զոհեր տալուց, սակայն նրանց ունեցվածքն ու բնակարանները դառնում են ավերի ու ավարի բաժին, մի հանգամանք, որն արգելակում էր կողբեցիների սոցիալական առաջընթացին. նրանք երկար ժամանակ ստիպված զբաղվում էին ավերվածի վերականգնմամբ, կողոպտվածի ձեռքբերմամբ: Շատ ժամանակ չանցած՝ 1441 թ. , Երևանի և շրջակա հայկական տարածքների վրա արշավում են պարսիկները և տիրանում Արևելյան Հայաստանի ընդարձակ տարածքներին, նաև Սուրմալուին, Կողբին: Գրավված տարածքում կազմավորվում է Երևանի խանություն, Կողբը մտնում է Երևանի խանության մեջ, Սուրմալու գավառի կազմում:

1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայում կնքվում է ռուս-պարսկական հաշտության պայմանագիր, որով Երևանի խանությունն իր գավառներով

անցնում է ռուսական կայսրությանը: Սուրմալուն կազմում է առանձին գավառ՝ իր նախկին տարածքներով ու Կողբով: Այդ տարիներին Կողբն ուներ ընդամենը 400 հայ բնտանիք, որոնց մեծ մասն զբաղվում էր հանքարտահանությամբ, նաև երկրագործությամբ, անասնապահությամբ: Զարգացած էր առևտուրը, որը հիմնականում կապված էր աղի արտահանության հետ: 1853 թ. նոյեմբերին թուրքական զորքերը տեղական խուժանի հետ լցվում են Սուրմալու, անցնում նրա լեռնային մասը և հարձակվում Կողբի վրա: Կողբեցիները մի քանի օր հերոսական դիմադրություն են ցույց տալիս և ունենում զգալի կորուստներ: Ապա ստիպված թողնում են գյուղը: Սակայն թուրքերը, գրավելով այն, սկսում են գյուղում մնացածներին անխնա կոտորել, կողոպտել ու հրդ ճարակ դարձնել երբեմնի շեն բնակավայրը: Կողոպուտը կատարվում է վայրենաբարո, այն, ինչ չեն կարողանում տանել, անխնա ջարդում, փշրում են, տների սյուները և տանիքները հրդեհում: Շատ հաճախ միևնույն բնակարան էին մտնում մի քանի անգամ և այն, ինչը չէր կարողացել տանել նախորդը, տանում էր այս մեկ թալանչին, այն, ինչը սա չէր կարողանում տանել, տանում էր հաջորդը: Տանում են մինչև վերջին կոճ ու կուլան, ներքնակն ու վերմակը, գդալն ու փալասը: Թուրքական զորքերին Սուրմալուից դուրս վռնդելուց հետո ցարական իշխանություններն հետագայում հնարավոր հարձակումները կանխելու նպատակով, Սուրմալուում տեղաբաշխում են ռուսական զորամաս, կազմակերպում ոստիկանական ջոկատներ, սահմանապահ ուղեկալներ և այլն: Գավառի ղեկավարումն ու բնակչության սպասարկումը հեշտացնելու նպատակով գավառը բաժանվում է առանձին ենթաշրջանների, որոնք ունենում են իրենց վարչական կենտրոնը (այսպես կատարվեց նաև Երևանի նահանգի բոլոր գավառներում): Կողբի ոստիկանական ենթաշրջանի կազմում որպես կենտրոններ Գյուլլիջա գյուղն էր իր ենթակայության 31 գյուղական համայնքով և Օղուրջան:

Կողբի ոստիկանական տարածքում բացի հայ ազգաբնակչությունից, որը գերակշռում էր թվաքանակով, բնակվում էին նաև ռուսներ, վրացիներ, ասորիներ, հույներ. սրանց թվաքանակը հասնում էր 3401-ի, թաթարներինը՝ 925, թյուրքինը՝ 1030, այլազգի բնակչության թիվը հասնում էր 7249-ի: Ենթաշրջանի բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 19 հազարի (18952): Թերևս դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ դարեր առաջ միատարր հայ բնակչություն ունեցող Սուրմալուն, Կողբն ու Իգդիրը հայտնվեցին թաթարական մեծամասնության շրջափակման մեջ, գոյատևման վտանգի առջև: Դրանով էր բացատրվում այդ տարիների Կողբի ենթաշրջանի փոքրաթիվ քանակը, որն ընդհանուրի մեջ չէր անցնում 1/3-ից:

1861 թ. Կողբն ուներ ընդամենը 1962 բնակիչ: Ինչպես ողջ Սուրմալուում,

Ռուսաստանին անցնելը, խաղաղությունը կողբեցիներին ևս հնարավորություն տվեցին առևտրի, դպրեստների, աղահանքերի զարգացմանը: Արագ կերպով մեծանում է բնակավայրի բնակչության քանակը: 1918 թ. Կողբի բնակչության թիվն արդեն հասնում էր 7200-ի:

Ըստ «Մուրճ» ամսագրի 1896 թ. թիվ 1-ում տպագրված տվյալների, Կողբը 1896 թ. ուներ 10 հազար 700 դեսյատին (մեկ դեսյատինը հավասար է 1,066 հա) հողատարածք: Այս ընդհանուր տարածքից աղահանքին էր պատկանում 1302 դեսյատինը: Չնայած կողբեցիները համարվում էին սակավահող, սակայն հողատարածքի ընդհանուր թվից առանձնացնելով աղահանքին պատկանող տարածքը, Կողբի յուրաքանչյուր շնչին հասնում էր 3 դեսյատին հող: Իհարկե, ամբողջ հողատարածքը չէր մշակման համար պիտանի:

Չնայած սրան, բազմանդամ ընտանիքները ունենում էին իրենց հասանելիք զգալի տարածք: Բայց իրական էր նաև այն փաստը, որ զանազան հարկերի և այլ հանգամանքների պատճառով շատ կողբեցիներ իրենց հողակտորները վաճառում էին: Հիմնականում սրանք զբաղվում էին աղահանքերում աշխատելով: Կողբի աղահանքերում հիմնական աշխատողները կողբեցիներն էին: Այս աշխատանքը բավականին ծանր էր, դժվար, պահանջվում էր ֆիզիկական մեծ ուժ: Աղահանքի թունելներում նաև փլուզումների վտանգ կար:

Կողբի աղն իր բարձր որակով զգալի եկամուտ էր բերում տերերին և պետությանը: Այն շահագործվել է հնագույն ժամանակներից: Ղևոնդ Ալիշանը գրում է, որ «Կողբի աղահանքը Նոյի որդոց ժամանակներեն կրանի...»:

1877 թ. սկսվում է ռուս-թուրքական պատերազմը (1877-1878 թթ.): Կողբեցիները, ինչպես և ողջ հայ ժողովուրդը, ձգտում էին ռուսական զենքի հաղթանակին: Ձգտում էին և ակտիվ մասնակցություն բերում: Հայ շատ զորահրամանատարներ ռուսական զորքերին առաջնորդում էին դեպի հաղթանակ: Թուրքիայի պարտության հետ հայ ժողովուրդը կապում էր իր ազատության վերջնանը, գոյատևումն ու հայրենիքի ազատագրումը: Կողբեցիներից շատերն անդամագրվեցին ռուսական բանակին, մի մասը պատերազմին մասնակցեց հայկական կամավորական ջոկատների կազմում, ժողովուրդն այլ օգնություններ ևս ցուցաբերեց ռուսական բանակին:

Այդ պատերազմում իրենց քաջությամբ և խիզախությամբ աչքի ընկան զգալի թվով կողբեցիներ, որոնցից շատերն արժանացան ռուսական իշխանությունների խրախուսանքին, պարգևատրվեցին շքանշաններով, մեդալներով:

1878 թ. թուրքական մեծաքիվ զորքը կարողանում է առաջ շարժվել և մտնել Սարմալուի գավառ, շրջափակել Կողբը: Կողբի համար ինքնապաշտպանական կռիվներում աչքի ընկան բոլոր բնակիչները՝ տղամարդիկ կռվում էին զենքով, կանայք զինամթերք ու պարեն էին հասցնում, վիրավորներին հանում մարտադաշտից: Հատուկ ցուցմունքով կանանց մի մեծ ջոկատ բարձրացավ լեռան գագաթ և թուրքերի կողմից համարվելով որպես զինվորական համալրում, վախ ու շփոթ առաջացրեց նրանց շարքերում: Այդ կռիվներում Կողբը մի քանի անգամ ձեռքից-ձեռք է անցնում: Չնայած պաշտպանվողները թուրքերին զգալի կորուստներ են պատճառում, սակայն, ի վերջո, թողնում են բնակավայրը և բարձրանում Աղասար: Թուրքերը կողոպտում, ավերում, ապա հրդեհում են Կողբը:

Պատմում են հետևյալը, և դա առասպել ու լեգենդ չէ, այլ ճշմարտություն: Թուրք ասկյարի անպատվությունից փրկվելու համար կողբեցի Վարթանունով մի գեղջուկ ժայռագագաթից իրեն ցած է նետում: Բարեբախտաբար Վարթն գետին է հասնում ողջ և անվնաս, ապա շտապով անցնում է Արաքսը և հասնելով ռուսական զորամասերից մեկին, պատմում է կողբեցիների օրհասական կռիվների մասին և խնդրում օգնել համագյուղացիներին: Շուտով կազակական հեծյալ մի ջոկատ հասնում է Կողբ և թուրքերին ջարդելով, հեռացնում տարածքից:

Դարասկզբին Ռուսաստանում սկսում է արագ զարգանալ արդյունաբերությունը, մասնավորապես թեթև արդյունաբերությունը (մանածագործություն, ջուլհակություն): Արդյունաբերության այս ճյուղի արագ զարգացման համար բնականաբար անհրաժեշտ էր հումք, առաջին հերթին՝ բամբակ: Ռուս իշխանավորները ու մասնավոր ձեռներեցները, ծանոթ լինելով տարմալեցիների, առանձնապես կողբեցիների բամբակենու մշակման բարձր արհեստին, նրանց խրախուսում են զբաղվել երկրագործության այս ճյուղի զարգացմամբ, լավագույն դաշտերը բամբակի մշակությանը տրամադրելուն: Երկրամասում կառուցվում են բամբակի հումքի նախնական վերամշակման ձեռնարկություններ, բամբակազտիչ գործարաններ: Մինչ այդ Սարմալուում բամբակագործությամբ զբաղվում էին հիմնականում տնայնագործության կարիքների համար: Կողբեցի գեղջուկը բամբակենու մշակման իր մշակած եղանակն ուներ: Այստեղ տասնամյակների ընթացքում կողբեցիները զբաղվել են այդ թանկարժեք բույսի մշակմամբ, որից ստացված բամբակը մեծ պահանջարկ ուներ զարգացած երկրներում, ինչո՞ւ չէ՝ նաև տնայնագործության մեջ, ընտանիքի կարիքների համար: Կողբեցիները տարածաշրջանում ստանում էին բամբակի բարձր և որակով բերք: Յուրաքանչյուր մեկ դեսյատին հողատարածքից ստանում էին 30 և ավելի փութ մաքուր և ընտիր բամբակ (մեկ փութը 16 կգ է): Բազմաթիվ կողբեցի կանայք, երիտասարդ աղջիկներ, տարեցներ զբաղվում էին տնայնագործությամբ, պատրաստում ընտիր գորգեր, փալասներ, ջեջիմներ: Սրանց ձեռքի

աշխատանքի շնորհիվ կողբեցին հագնում էր բրդյա, բամբակյա ընտիր գուլպաներ, տաք հագուստ հեռու կամ մոտ ճանապարհ գնալիս, դաշտային աշխատանքների ժամանակ օգտագործում զանազան չափերի, տարբեր նախշերով ու ծոպերով երկբաժնյա ուսապարկ-խուրջին: Ավելի մեծ խուրջիններ գցում էին գրաստների, ձիերի վրա, բեռներ տեղափոխում: Առանձին մեծածավալ խուրջիններով քարաղ էին տեղափոխում:

Կողբում գործած թեթև, բայց նախշազարդ և ծոպավոր փոքրիկ փալասները գցում էին ձիերի, էշերի թամբին, փալանին և նստում վրան: Տնայնագործությամբ զբաղվողներն իրենց արտադրանքի մի մասն ուղարկում էին Կողբի բազմաթիվ խանութներ, նաև առևտրական այլ վայրեր վաճառելու: Բնական է, որ բրդյա և բամբակյա թելերը, որոնք մանում էին հենց իրենք, տարբեր գույներով ներկվում էր եղած ներկատներում: Գորգագործությանը և այլ գործվածքներ գործելուն նպաստում էին շուկայի պահանջը ու բյուղի, բամբակի սեփական առատ հումքի առկայությունը: Խնամելով տասնյակ ոչխարներ, կողբեցի յուրաքանչյուր ընտանիք տարեկան ունենում էր տասնյակ կիլոգրամներով բուրդ: Դաշտից ստացած ընտիր, երկարաթել բամբակը մշակում և մանում էին՝ զանազան գործվածքների պատրաստման համար: Որպես կանոն կողբեցիների մեծ ու ընդարձակ սենյակի ներսի պատի մոտ դրված էր լինում գորգագործի դազգահը, որի մոտ լինում էին անհրաժեշտ սարքերն ու զանազան գույնի բրդյա և բամբակյա թելի կծիկները: Աշխատանքը կատարվում էր երբեմն մեկի, երբեմն էլ մի քանի հոգու միջոցով: Սովորաբար այն կատարում էին տնային հոգսերից, դրսի աշխատանքներից ազատ ժամերին: Հաճախ էլ, երբ երկուսով էին աշխատում միևնույն դազգահին, աղջիկները (երբ տանը բացակայում էին տղամարդիկ ու տարեց կանայք) երգում էին իրենց իմացած երգերից, պատմում տեսած երազները, հեքիաթներ և այլ հետաքրքիր պատմություններ: Կողբն ուներ նաև իր նշանավոր ու հայտնի դարբինները (սրանցից ժառանգած դարբին Ավետիքը գաղթից հետո բնակվում էր Երևանի մատույցներում գտնվող Վ. Չարբախում, 1941 թ. տեղափոխվեց Երևանի Նոր Արեշ թաղամաս, որտեղ և ներկայումս բնակվում են նրա ժառանգները):

Սրանք, սալին դրած շիկացած մետաղին հարվածելով, ստանում էին ցանկացած ձևի գյուղատնտեսական գործիքներ, արտրներ, գութանի խոփեր, լծի սամիներ, սայլերի, կառքերի զանազան տակառների համար անհրաժեշտ մետաղյա իրեր ու մասեր: Պատրաստում էին սոնիներ, անիվների մետաղյա մասեր, շղթաներ, բահեր, ուրագներ, կացիններ, հաց թխելու համար երկայն շամփուրներ, որոնց մի ծայրը գեղեցիկ ծռված էր ու թոնրի մեջ ընկած հացն արագ հանում էին այդ կեռի օգնությամբ: Պատրաստում էին նաև մեծ դարպասների ամուր ու հարմարավետ ծխնիներ, բռնիչներ, յուրաքանչյուր փականներ, որոնք ունենում էին պատրաստող վարպետի հատուկ նշանը: Դրանց վրա հաճախ լինում էին նաև կախարդական նշաններ ու զարդեր: Կողբում շատ էին նաև թիթեղագործները, որոնք իրենց երկար ու ամուր մկրատներով թիթեղն այնպես հանգիստ էին վերածում ցանկալի ձևերի, որ կարծես խաղում էին թղթի հետ: Թիթեղագործն ուներ նաև փայտյա դազգահին ամրացրած երկար մետաղյա հաստ ձող, որի վրա ճարպկորեն շուռումուռ տալով թիթեղը, կարողանում էր դրա ծայրերը այնպես ազատել իրար, որ ջրի կաթիլ անգամ չէր անցնում դրանց միջով: Սրանք պատրաստում էին թիթեղյա վառարաններ, խողովակներ, ջրհորդաններ, մեծ տաշտեր ու լվացքի, լողանալու թեշտեր, ապահովում էին բնակարանների տանիքների թիթեղապատման գործը:

Կողբում կային նաև բրուտագործներ, որոնք որտեղից-որտեղ բերում էին հատուկ կավ, մշակում ու տրորում, ապա ոտքով պտտեցնելով իրենց սարքը, ձեռքերի աշխույժ ու ճարպիկ շարժումներով դազգահին դրած կավը կենդանանում, ստանում էր կուժ ու կուլայի, կավի մեծ ու փոքր բրեղանների, ջրամանների, կճուճների, խնոցիների, տաշտերի, ձեթի ճրագների (որոնք հիմնականում օգտագործում էին գոմերում և այլուր) տեսք, ձև: Կային նաև վարպետ որմնադիր-պատշգաներ, որոնց անգամ հրավիրում էին տարածքի մոտակա գյուղերը՝ տուն կառուցելիս: Սրանք իրենց հիմնական գործիքներով՝ մալայով (մոլագիր) և ուղղաչափով (շուղոլ) այնպիսի հարթ ու ամուր պատեր էին շարում, կանգնեցնում, որ զարմանք էր պատճառում նայողներին: Տները հիմնականում կառուցում էին հում աղյուսից: Պատերը լինում էին բավականին հաստ ու ամուր: Գոմերի, այլ կառույցների պատերը մեծ մասամբ կառուցում էին լավ հունցած կավից: Բավականին պինդ կավը բահով դրվում էր քարից շարած ու գետնից 40-50 սմ բարձրության հիմքին, ապա վարպետը ձեռքի փոքրիկ բահով կտրում էր պատի երկու կողմերից կախված կավը (անհրաժեշտ հաստությունից ավելին) և այն նորից ղնում պատին: Այս ձևով կառուցվող պատը նախ արագ էր լինում, լժան, քիչ աշխատատար և զգալի հաստ ու ամուր: Այս եղանակով «շարված» պատին ասում էին «մոհրա»: Թե ինչ լեզվով էր այն կոչվում, դրան ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, միայն թե պատը լիներ ամուր և կանգուն: Կողբեցիները ունեին նաև հիանալի վարպետ հյուսներ: Սրանց աշխատանքն անսպառ էր: Վարպետ հյուսները՝ դուրգարները, պատրաստում էին դռներ, պատուհաններ, տան գերաններ ու սյուներ, հացի տախտակներ ու գրասեղան-օխլավներ (չնայած կողբեցիները օխլավ չէին օգտագործում հաց թխելիս): Գրասեղանները հետո, երբ խմորի գունդը բավականին լայնանում, բայց դեռ բավականին հաստ էր, վարպետ հացթուխները դրանք ձեռքերի վրա աջ ու ձախ արագ գցելով, այն ավելի մեծացնում ու բարակացնում էին և հետո,

փռելով մարգկա-ռաֆաթայի վրա, խվում թոնրի կողին:

Հյուսները տեղական ծառերի (մեծ մասամբ բալդի), նաև բկռվի հաստ գերանները՝ դրած բարձր «ոտքերի» վրա, սղոցում էին և ցանկացած չափերի տախտակներ, դռան, լուսամուտի շրջանակների համար հաստ ու առանց ոստի փայտեր ստանում:

Սրանցից շատերը մասնագիտացել էին նաև բնակարանների կառուցման ժամանակ առաստաղի գերանների տեղադրման (դրանք նախօրոք կեղևից, ոստերից մաքրած, անհրաժեշտ չափերի կտրած) աշխատանքներին: Պատրաստում էին նաև ուրագ-թագուջակի, բահ ու քլունգի, կացնի և եղանի պոչեր (չնայած կողբեցի շինականը մեծ մասամբ ինքն էր ծառերից կտրում հարմար ճյուղեր և ինքն էլ դրանք պոչում-հարմարեցնում որպես պոչ-բռնիչներ): Հյուսները պատրաստում էին հիանալի սայլեր, եզների համար հարմարավետ լուծ, արորի ամբողջ փայտյա մասը, ամրացնելով դարբնի պատրաստած մետաղյա սուր վարող ծայրը: Հյուսները պատրաստում էին նաև անիվավոր (մեկ) և ձեռքի սայլակներ, նաև երկու մարդու համար բեռ տեղափոխելու հարմարանք, աղյուս պատրաստելու կաղապարներ, խմոր հունցելու տաշտեր և շատ այլ անհրաժեշտ իրեր, գործիքներ, հարմարանքներ: Սրանց պատրաստած փայտյա թախտերը նույնպես գեղեցիկ էին, կային նախշազարդ «գլուխներով», կային նաև առանց դրսից՝ հարթ թախտ: Պատրաստում էին սեղաններ, աթոռներ (տաբուրետկաներ), առանձին հոգատարությամբ պատրաստվում էր մանկան օրորոցը: Այն ունենում էր եզրերում հոկված, ձևավորած ճաղեր, իսկ վերևի մասում երկու գլուխները (գլխամասի և ոտնամասի կամարակապ բարձր օղերը) միացվում էին քիչ հաստ բռնիչով, որից բռնած օրորում էին մանկանը, նաև զանազան ուլունքներ, զարդեր կախում դրանից: Հնարամիտ կողբեցի կանայք միշտ չէ, որ խանութ էին գնում օճառ գնելու: Նախ դա լինում էր իրենց համար բավականին թանկ և ոչ այնքան ձեռնտու: Սրանք տանը կոտակված արդեն սննդի համար ոչ պիտանի զանազան կենդանիների ճարպերից կարողանում էին դաշտերում այնքան շատ հանդիպող ու աճող «շոռան» և «գազ» անվանվող բույսերի ծաղիկներից, դրանց առանձին մասերից այդ ոչ պիտանի ճարպերի հետ խառնել-եփել, օճառ պատրաստել: Ապա, այն առանձին կտորներով դնում էին արևին՝ քիչ չորանա և օտագործում էին կենցաղում: Տնական այս օճառը իր որակով և այլ հատկություններով գործարանայինից համարյա չի տարբերվում: Ավելին, այս շահավետ գործը իրենց ձեռքն էին վերցրել Կողբում բնակվող մեկ-երկու ընտանիք, սրանք պատրաստում էին մեծ քանակության օճառ շուկայի համար, վաճառում ինչպես Կողբում, այնպես էլ շրջակա բնակավայրերում, իսկ հաճախ էլ սրանց փչացած ճարպերից և դաշտային այդ բույսերից եփած օճառը

իրենց համար լինում էր ձրի: Կողբեցիները լավ գիտեին բնությունը, նրանից խելացի օգտվելու եղանակները, նրա բարիքներից առավելագույնս օգտվելու պայմաններն ու հնարավորությունները:

Կողբում «եփում» էին նաև կրաքար: Աղահանքերում աղի շերտերի միջև գտնվում էր բավականին հաստ կրային զանգված: Աղահանքն օգտագործելիս այս շերտը հանվում է և առանձնացվում, որպես ավելորդ, ոչ պիտանի հումք: Կողբեցիներից մի քանի ձեռնարկներ այն խորը հորերում «այրում» էին և ստանում շինարարության և կենցաղում օգտագործվող այնքան անհրաժեշտ կիր-կրաքարը: Սրա հումքը վաճառվում էր տեղում, հենց այրման հորերի մոտ, որտեղ կրաքարը պատրաստելուց հետո հորերից հանվում և հաստ ու բարձր շերտով լցնում էին շուրջը: Կրաքարը տանում էին նաև շրջակա բնակավայրեր և այլուր: Կային արհեստավորներ, որոնք զբաղվում էին այնքան տարածված օրսիդիան քարից զանազան զարդեղեններ, կայծքարեր և այլն պատրաստելու գործով:

Կողբեցիների հիմնական մասն աշխատում էր աղահանքերում: Հանքագործությունում կային մասնագիտություններ՝ հորատող, աղ կտրող և այլն: Ասենք, որ աղահանքերում աշխատելու փորձն ու հմտությունը Կողբում փոխանցվում էր սերնդից-սերունդ: Այդ ծանր աշխատանքը կողբեցիներին հրապուրում էր նաև այն պատճառով, որ դրա դիմաց վճարում էին ռուբլով (կոպեկով), որը գյուղական տնտեսության ընտանիքի կարիքները հոգալու (արդյունաբերական ապրանքներ գնել և այլն) միակ միջոցն էր: Սովորաբար ընտանիքի անդամների մի մասն էլ զբաղվում էր գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ: Շատ հաճախ աղահանքերի առանձին տեղամասերը կոչվում էին նրա առաջին հորատողի, այն գանող-բացողի ու առաջին շահագործողի անունով (Ուսեփենց կամ Պետրենց և այլն): Յուրաքանչյուր կառավարությունը, տիրանալով Կողբի հարուստ աղահանքի տարածքին, նրա արդյունավետ շահագործման և տեղափոխման համար սկսեց ճանապարհների կառուցման, վերակառուցման աշխատանքներ կատարել: Այդ ճանապարհները ունեին նաև ռազմական նշանակություն: Այդ աշխատանքներում ընդգրկված էր նաև Կողբի բնակչության մի մասը: Սրանք աշխատում էին որպես բանվորներ, մի քանիսն էլ իրենց սայլերով, փոխադրամիջոցներով շինարարական նյութեր էին կրում կամ այլ փոխադրումներ կատարում:

Նոր բնակարանների, գոմերի ու փարախների, օժանդակ այլ կառույցների համար հիմնականում օգտագործվում էր հում կավից, չրացրած աղյուսը: Կավահողը փղոտում էին բահով, երբեմն վարում գութանով, արորով, ապա այդ հողը կուտակում առանձին փոսի մեջ, վրան ջուր (բալակ առու էին հասցնում կավահողին) լցնում, մի օր մնալուց, փափկեցուց ու խմոն-



Կողք

լուց հետո դալման շաղ տալիս վրան, ապա անդրավարտիքներր մինչև ծնկները ծալած մտնում էին ցեխի մեջ և տրոլում, ծղոտր խառնում կավին: Այս գործընթացը կատարում էին մի քանի անգամ, ապա բահեկով ցեխր կուտակում մի մեծ շերտում և սկսում այդտեղից բահով կամ ձեռքի փոխադրիչ (նասիլկա) տեղափոխում ու լցնում հարթ գետնին դրած մեկ կամ երկու-երեք տեղանի կաղապարի մեջ: Վարպետը ձեռքով, մալայով կավացեխր հավասարեցնում էր կաղապարի երեսին, կաղապարի անկյուններին ցեխ սեղմում, որ բաց չմնա, աղյուսը ամբողջովին ստացվի, ապա կաղապարը զգույշ բարձրացնում-հանում և գցում էր մոտի փոսի կամ տաշտով լի ջրի մեջ, ձեռքի եղած հին շորով կաղապարի ներսը մաքրում կավի մնացած մասերից և նորից այն դնում հարթ հատակին հենց նոր թափած աղյուսի կողքին՝ ուղիղ շարքը պահպանելով: Երբեմն, երբ աղյուս շատ էր պահանջվում, կավացեխր տրորելու համար օգտագործում էին ձի, էշ, կով ու գոմեշ: Մեկերկու օրից (նայած տարվա եղանակին) աղյուսները բավականին չորանում են և դրանք շրջում էին կողքի վրա: Մի քանի որ այդպես մնալով, սրանք լրիվ չորանում-ամրանում էին: Վերջում այդ բոլորը հավաքում և բլրաձև դասավորում էին իրար վրա, և ցանկացած պահի տեղափոխում «շինարարական հրապարակ»:

Աղյուսի պատրաստումը հիմնականում կատարվում էր ամռան ամիսնե-

րին, երբ օդի ջերմությունը բարձր էր և անձրևների հավանականությունը բացառված: Չորացած աղյուսները կառույցի մոտ էին տեղափոխում սայլերին բարձած: Սրանցից շատ քիչ և հազվադեպ էր ջարդվում փոխադրման ժամանակ, աղյուսները հում, բայց բավականին ամուր էին լինում:

Կողքում կային ջուլիականոցներ, բրդագործական արհեստանոցներ, որտեղ երկրագործությունից, անասնապահությունից ստացած բամբակն ու բուրդը վերամշակվում էր, ապա անցնում ջուլիականոց տարբեր չափերի թելեր մանելու: Արհեստանոցի տերը հաճախ հումք հանձնողին լատ պայմանավորվածության վերադարձնում էր վերամշակած բուրդը, բամբակը, փոխարենն ստանում կատարած աշխատանքի արժեքը: Հաճախ պատվիրատուն հանձնած հումքի մի մասով փակում էր իր հաշիվները:

Կողբեցիները աչքի էին ընկնում իրենց աշխատասիրությամբ, բանիմացությամբ և ազգային, նախնիների սովորույթներին հավատարմությամբ: Վաղ գարնանից մինչ ուշ աշուն կողբեցու տանը համարյա թե մարդ չէր լինում, երիտասարդները՝ կին թե տղամարդ, աշխատանքի շատ թե քիչ ընդունակ մարդիկ, այդ թվում և երեխաները, լինում էին դաշտում կամ իրենց անասունի մոտ: Մի մասը քուլիկին-չալդախին նստած կամ պառկած հսկում էր խաղողի այգին, ձմերուկի-սեխի բոստանը, մյուսներն զբաղված էին հնձով կամ քաղհանով, բերքահավաքով կամ դաշտերը ոռոգելով: Տանը մնացած տատիկները ու պապիկները (ափոները) դարձյալ պարապ չէին, վերամշակում էին կաթը, մածուն ու պանիր ստանում, կարագ հարում, ճաշ պատրաստում, կամ դաշտից բերած բարիքները՝ ծիրանն ու դեղձը, սալորն ու թութը չորացնում, տոպրակները լցնում, ձմռան համար պաշար կուտակում:

Կովերին, գոմեշներին կթում էին օրական երկու անգամ՝ վաղ առավոտյան և երեկոյան, երբ մութն ընկնում էր, և անասուններին դաշտային արոտից (նախրից) տուն վերադառնում, քիչ հանգստանում էին: Սովորաբար գարնանից մինչև ուշ աշուն անասուններին խնամում էին բակում կապած, այստեղ էլ կատարվում էր նրանց կիթը:

Հիմնականում կաթն օգտագործում էին կաթնամթերքներ՝ մածուն, պանիր, կարագ ստանալու համար: Հաճախ լայնեզր խոշոր ամանի մեջ տաքցրած կաթը լցնում-դնում էին սառը տեղ և վրայի սերի հաստ շերտը հավաքում գդալով, օգտագործում՝ վրան դոշաբ կամ մեղր լցրած: Ինչ խոսք, կաթից պատրաստում էին նաև բրնձով, ճավարով շիլաներ, որն օգտագործում էին տաք կամ սառը վիճակում: Այստեղ ընդունված էր մածուն պատրաստելու համար օգտագործել գոմեշի կաթը, պանրի համար՝ ոչխարինը, իսկ կարագ-յուղի համար՝ կովինը:

Կողբում կար 12 ջրաղաց: Թեև բնակչությունը թվով այնքան էլ մեծ չէր:

Սրանք հիմնականում աշխատում էին գարնան, ամռան և աշնան ամիսներին: Երբ որևէ ջրաղաց նորոգելիս էին լինում, առիթից օգտվելով զբաղվում էին նաև ջրատարի մաքրման գործով:

Ջրաղացներում աղում էին ցորեն, գարի, կորեկ: Սրանց բակերում լինում էին ընդարձակ տարածություններ, ծառեր, հարմարեցված սեղաններ, նստարաններ, նաև կենդանիներին կապելու, կերակրելու հարմարություններ: Բակերն այնպես էին, որ հատիկով բարձած սայլերը կարողանան ազատ շրջադարձ կատարել, չխանգարեն իրարու: Ջրաղացների շուրջը մշտապես լինում էին ուռենիներ, փշատենիներ, բարդիներ, այլ ծառեր: Այստեղ կարողանում էին նաև ձավար աղալ, խոշոր և մանր ալյուր ստանալ:

Չալթուկի (չմաքրած բրնձի) կեղևները հանում էին ջրաղացի նման ջրով աշխատող դինգում: Սա կլոր շրջագծով բավականին մեծ ու փոս հարմարանք էր, որի մեջ լցնում էին կեղևահանվող չալթուկը. վրան պտտվող ծանրությը (քարը) տրորելով կեղևահան էր անում այն և ստացվում էր սպիտակավուն բրնձահատիկը:

Կողքում կառուցել էին բամբակազտիչ գործարան: Այն կառուցվել էր, երբ Ռուսաստանում բամբակի հումքի մեծ պահանջարկ առաջացավ՝ կապված մանածագործության զարգացման հետ: Բնականաբար, ավելի հարմար էր վերամշակած բամբակ տեղափոխելը:

Աճեցրած բամբակը գյուղացիները հասցնում էին գործարանի բակ՝ սայլերին բարձած, փռում բակի մաքուր հատակին, չորացնում արևին և մեծ բարդաններով լցրած՝ կշռում ու հանձնում մթերողին: Գործարքը ձևակերպվում էր փաստաթղթով, որը հիմք էր հետագա փոխադարձ հաշիվներ կատարելու համար:

Բամբակի վերամշակման ժամանակ առանձնացվում էին նրա սերմերը՝ հունդը: Սա հանդիսանում էր բուսական յուղ ստանալու հիանալի աղբյուր, որը և կատարում էին կողբեցիները: Բամբակի սերմերից յուղի գտում-ստանալուց հետո մնում էր սերմի կեղևը, որը պարունակում էր զգալի քանակի յուղ և հանդիսանում էր կենդանիների կերակրման համար սննդարար կեր՝ սեղմված քուսպի-ժմեխի ձևով:

Գյուղում կային բազմաթիվ խանութներ, որտեղ, բացի զանազան մթերքներից, վաճառվում էին նաև տարբեր խմիչքներ, լմպելիքներ, նաև արտասահմանյան արտադրության:

Բազմաթիվ էին կողբեցի կոշկակարները, սրանց մի մասը, որպես բարձր կարգի արհեստավորներ, կարում էին ընտիր կոշիկներ, ճտքավոր և կիսաճտքավոր, մյուսներն զբաղվում էին կոշիկներ նորոգելով: Հայտնի էին Կողբեցի բարձրարվեստ դերձակները: Աչքի էին ընկնում գլխարկ կարողները, որոնց արտադրանքը մշտապես կախված էր լինում արհեստանոցի դրսի

մասում: Գլխարկները լինում էին կիսակլոր, փոքր կոզիրակով, առջևի մասը՝ բարձր, ծոծրակի մոտ՝ ցածր:

Կողբեցիները դաշտավարությունից ստանում էին հացահատիկի լավ բերք: Ցորենի ալյուրից թխում էին լավաշ, նաև կլորիկ ու հաստիկ բոքոններ: Գյուղում կային վարպետ հացթուխներ, որոնց հրավիրում էին ձմռան համար մեծաքանակ հաց թխելու: Աշնան վերջին ամիսներին, նախքան ձմռան ցրտերն սկսվելը, սկսվում էր հաց թխելու շրջանը: Հաց թխողների խումբը բաղկացած էր 2-3 կանանցից: Սրանցից մեկը վարպետ հացթուխն էր, մյուսները՝ գրտնակող-օխլավողները: Լինում էին նաև հաց հավաքողներ տանող, դրսում արևին չորացրածները իրար դարսած ներս տանող-օգնականներ, գունդ բերողներ և այլն: Արդեն օխլված կամ ձեռքերի վրա աջ ու ձախ վարպետորեն գցելով բարակեցրած ու մեծացրած հում լավաշը, հացթուխը ճարպկորեն քաշում է ռաֆաթա-մարզկայի վրա և, թիչ խոնարհվելով թոնրի բերանին, արագ շարժումով այն խփում է տաք պատին: Ձեռքը մարզկայով դուրս հանելով թոնրից, նա մյուս ձեռքով թոնրի պատից հմտորեն պոկում է արդեն եփված, օդափուչիկներով ուռած, տեղ-տեղ կարմրատակած լավաշը: Հանում և արագ նետում է մյուս հացերի մոտ: Ընտանիքի համար օրվա հացի պահանջը բավարարելու համար (եթե վերջացած է լինում աշնան թխածը) կողբեցիները բակում կամ թոնրատանը, օջախի վրա դրված հաստ թիթեղին թխում էին կլոճներ, «սաջի հացեր»:

Հացը մարդու սննդաբաժնի ամենակարևոր բաղադրիչն է: Առանց հացի հայ մարդը որքան էլ այլ մթերքներ՝ միս, կաթնամթերքներ, բանջարեղեն, ձավարեղեն օգտագործի, դարձյալ քաղցը չի հագեցնում: Այն նաև բուսական սպիտակուցների, ածխաջրերի լավ աղբյուր է: Շատ ժողովուրդներ իրենց ազգային հացը գովում և գովաբանում են: Իրոք, հացն արժանի է սրբագործման: Հայերի մոտ ընդունված սովորույթ է, որ հացը չի կարելի գցել, փչացնել: Երեխաները գետնին ընկած հացակտորը վերցնում և դնում էին ծառին կամ պատին: Այդպես էր նաև Սուրմալուում, Իգդիրում, Կողբում: Հաճախ օտարները գովերգում և սրբագործում են իրենց հացը, որոնք սովորաբար կարճ ժամանակում որակազրկվում և այլևս օգտագործման պիտանի չեն լինում, մինչդեռ մեր լավաշն այդպիսին չէ: Մենք անգամ, ինչպես հարկն է, չենք զգում նրա իսկական արժեքը: ԼԱՎԱՇԸ հավերժական հաց է, որը չի հնանում, չի բորբոսնում ու փչանում: Այն սննդարար է, դյուրամարս և առողջարար: Չոր, ամիսներ շարունակ պահպանված լավաշին ջրի բարակ շիթ ցողելով, վերականգնում ենք նրա թարմությունն ու համը, հաճելի բուրմունքը: Իսկ այդ ո՞ր հացն է, որ կարելի է ուտել նրա տարբեր վիճակում՝ չոր փշրվող, փափուկ, խմորվող, բրդած՝ ճաշի մեջ: Լավաշին դրած ձուն ու պանիրը, կանաչեղենը հանգիստ կարելի է փաթաթել և ուտել:

մար: Ասենք նաև, որ բոլոր գնորդներն ու վաճառողներն իրար ճանաչում, վստահում ու հարգում էին: Առևտուր էր կատարվում ոչ միայն խանութ-կրպակներից, այլ նաև տներից: Հաճախ աղ գնողները, շրջանցելով խանութն ու աղահանքը, իրենց ցանկացած (ոչ շատ մեծ) աղակտորները գնում էին այս կամ այն կողբեցուց, երբեմն էլ մի քանիսի տնից: Կողբի աղահանքն իր տարածքով զբաղեցնում էր 11 քմ տարածք: Ըստ հետազոտությունների, հանքում աղի շերտը հասնում էր մոտավորապես 50 մ հաստության: Այն կազմված էր հինգ հաստ շերտերից, որոնց միջև գոյություն ուներ դեղնավուն կավանման հանքային այլ շերտ: Աղահանքն օգտագործելիս, բնականաբար այդ հաստ շերտը հավաքում և դուրս էին թափում: Կողբեցիները, ինչպես արդեն նշել ենք, սա տանում էին և առանձին հարմարեցված փոսերում եփում-այրում՝ ստանալով այնքան անհրաժեշտ ու թանկ կիրը:

Կողբի աղն իր կազմությամբ և որակով առաջիններից է աշխարհում: 1866 թ. Փարիզի համաշխարհային տոնավաճառ-ցուցահանդեսում այն արժանացել է բարձր ուշադրության: Կողբից աղաբար է ներկայացվել նաև 1872 թ. Մոսկվայի ցուցահանդեսում: Այստեղ Կողբի աղն իր որակով ամենաբարձրն է գնահատվել եղածների շարքում: Ըստ հետազոտողների հաշվարկների, աղահանքի պաշարները հասնում են 2,2 մլրդ տոննայի, որը կարելի է համարել անսպառ, ինչպես բնակչության կարիքների, այնպես էլ կառուցվող արդյունաբերական համապատասխան ձեռնարկությունների համար: Երևանի խանության ժամանակ Կողբի աղահանքերը «Սարդարին տարեկան 30 հազար ռուբլու եկամուտ էր բերում, իսկ հանքերը վարձակալության (իջարա) տալուց հետո ընդհանուր եկամուտը հասնում էր տարեկան շուրջ 210000 ռուբլու, (Ա. Շահինյան, «Հայրենի դողանջներ», Երևան, 1978, «Հայաստան»):

Ըստ պատմական տեղեկությունների, Կողբի աղահանքերը ամենահինն են աշխարհում չինական հանքավայրերից հետո:

Աղի արտադրության կտրուկ ավելացման, առևտրի և արհեստների զարգացման և այլ պատճառներով Կողբի բնակչությունն արագ աճեց և անհրաժեշտություն առաջացավ բնակավայրը բարեկարգել ու ընդարձակել: Կողբը կազմված էր 3 թաղերից: Սրանցից «Հին գյուղ»՝ իր նեղլիկ ու ծռռումուռ «փողոցներով», այլևս չէր կարողանում բավարարել երթևեկող սայլերին ու կառքերին, բարձած ուղտերին ու ավանակներին: Հարկ եղավ գյուղի այդ մասը տեղափոխել Աղագետի ձախափնյա տարածք, որը գտնվում էր Աղասարի մոտակայքում, նրանից ընդամենը 5-6 հարյուր մետր արևելք: Այստեղ բնակիչներին (վերաբնակվողներին) հատկացվեց փոքրիկ հողատարածք՝ բնակարաններ կառուցելու և բանջարեղեն ու մրգատու ծառեր մշակելու համար: Կողբեցիները սկսեցին կառուցել նաև քարաշեն

տներ, ձգվեցին լայն և ուղիղ բարեկարգ փողոցներ, կառուցվեցին խանութներ, կրպակներ, արհեստանոցներ ու այլ կենցաղային ձեռնարկություններ:

Կողբի երեք թաղամասերը միասին ձգվում էին մի քանի կմ երկարությամբ և մոտ մեկ կմ լայնությամբ տարածքում: Հնուց եկած այդ թաղերն ունեին իրենց անվանումները՝ «Բախչի մահլա», «Ներքին գյուղ», «Պլան»: Սրանց յուրաքանչյուրի անվանումը հուշում է իր կառուցման, բնակեցման ժամանակն ու դիրքը: «Բախչի մահլան» իրոք կանաչապատ, ծառապատ էր, և բնակիչները մշակում էին բանջարաբոստանային կուլտուրաներ, այդ թվում՝ ձմերուկ, սեխ և այլն: «Ներքին գյուղն» զբաղեցնում էր Կողբի բնակավայրի ցածրադիր մասը, ներքևի տարածքը, իսկ «Պլանը»՝ շենքերի, բնակարանների իր դասավորությամբ, հավանաբար «պլանավորված» է եղել, նախագծված և կառուցված որևէ ճարտարապետի կողմից: Այս թաղերն իրարից բաժանված էին բնական ոչ մեծ ու ցայտուն սահմաններով: Բնակավայրի «Պլան» և Ներքին թաղերը գտնվում էին երկու գետերի՝ Վարդենիսի և Աղագետի միջնամասում, և դրանց ջրերը օգտագործում էին դաշտերի ոռոգման, անասուններին խնամելու և կենցաղային այլ նպատակների համար: Կողբի բնակչության մյուս մասն զբաղվում էր առևտրով, երկրագործությամբ, անասնապահությամբ: Կային նաև լավ արհեստավորներ: Տնայնագործությունը նույնպես լավ զարգացած էր, որով հիմնականում զբաղվում էին կանայք, երիտասարդ աղջիկները ու տարեցները: Աղագործը դրամ էր վաստակում, առևտրականն իր գործունեության ընթացքում ընտանիքի անդամների համար մատչելի գներով և որակյալ ապրանքներ էր բերում, արտադրած մթերքներն ու սպասքները վաճառքի հանում, երկրագործը՝ միրգ ու բանջարեղեն, անասնապահը՝ կաթ ու յուղ, կարագ ու մածուն, միս ու բուրդ, կաշի և այլն արտադրում: Կողբեցիների մի մասը կարիքից դրդված իրենց պատկանող հողակտորները վաճառել էին ավելի հարուստ հողատերերի և հաճախ նրանց մոտ աշխատում էին վարձով:

Կողբում կար լավ կահավորված հիվանդանոց, սակայն հիմնականում այն ծառայում էր ռուսական բանակին: Գործում էր դեղատուն:

1828 թ. Արևելահայաստանի միացումը Ռուսաստանին խթան հանդիսացավ աղահանքերի ավելի արդյունավետ շահագործման համար: Նույն թվականին հատուկ հրամանով հիմնվում է Կողբի աղահանքային վարչությունը, որի վրա է դրվում աղահանքերի արդյունավետ և խնայմամբ շահագործումը: Սա տեխնիկական առումով ենթարկվում էր Կովկասի լեռնային գործերի կառավարչությանը, իսկ ֆինանսական առումով՝ Անդրկովկասի արքունական պալատին կից ակցիզային և պետական արդյունաբերական ձեռնարկությունների բաժանմունքին:

Կողբի աղահանքերի գոյության և դրանց շահագործման վերաբերյալ

տվյալներ կան հնագույն ժամանակներից: Ստույգ տվյալներ կան նաև Բարդուղ լեռան ընդերքի ոսկու, պղնձի, կրաքարի, բազալտի զգալի պաշարների մասին: Այս տարածքում կան նաև մարմարի, պեմզայի, գիպսի, ծծմբի, տուֆի և այլ պաշարներ:

1890 թ. Ռուսական կայսրությունն սկսեց լուրջ հետաքրքրություն ցուցաբերել ինչպես Կողբի աղահանքերի, այնպես և ամբողջ Սուրմալուի տարածքի հանքային հարստությունների պաշարների հայտնաբերման և շահագործման վերաբերյալ: Կազմակերպվում են հետազոտություններ, արշավախմբեր, ուսումնասիրություններ: Զգալիորեն ավելանում է աղի արտադրությունն ու արտահանումը:

Կողբեցիները և ընդհանրապես սուրմալեցիները ոռոգման նպատակով օգտագործում էին նաև Արաքս գետի ջրերը: Այստեղ դաշտերը մշակում էին խելացի և հոգատարությամբ: Սա տալիս էր տարածքին առավել գեղեցկություն: Բամբակի մշակման գործում կողբեցիներն անգերազանցելի էին: Ոռոգումը, առանձնապես առաջին, երկրորդ ջուրը կատարում էին ժամանակին և ուշադիր:

Մեծ ուշադրություն էր դարձվում նաև բույսի քաղհանին, հողի փխրեցմանը: Բամբակենու մշակումը բավականին աշխատատար էր, հոգսաշատ, միևնույն ժամանակ նա կողբեցուն զգալի եկամուտ էր տալիս:

Մեծ պատմաբան Լեոն, որն անձամբ եղել է այդ վայրերում, Կողբում, այս տարածքը համարել է Հայաստանի ամենագեղեցիկ ու հմայիչ անկյուններից մեկը՝ «օդը մաքուր, բուրավետ ծաղիկների անուշահոտությամբ»: Նա հիացմունքով է խոսում Կողբի և տարածքի մասին:

Արաքսն աշխարհի տղմոտ գետերից է: Հայտնի է նաև երբեմն առատ հորդացումներով: Այն տարվա տարբեր եղանակներին կարծես փոխում է իր գույնը՝ կախված նրա մեջ եղած տիղմի քանակից:

Կողբեցիները ինչպես Արաքսից, այնպես էլ տարածքով հոսող գետակներից տարվա համարյա բոլոր եղանակներին կարողանում էին ձուկ որսալ: Արաքսից բռնում էին նշանավոր լոքոն, իսկ գետակներից՝ կարմրախայտն ու բեղլուն: Մաքուր, վարդագույն գինու առկայությունը, ձկնորսությունից, որսորդությունից ձեռք բերած հարուստ ավարը, նաև գյուղում հաճախակի մոլբվող անասունների և ոչխարների թարմ միսը կողբեցիներին հաճախ էր հավաքում հարևանի, բարեկամի տուն՝ ուրախ ու երկարատև խնջույքների: Առանձնապես դա լինում էր ձմռան ամիսներին, երբ դաշտավարական աշխատանքները ավարտվել էին, բերքն ու բարիքը՝ հավաքվել, կուտակվել, մնում էր միայն անասունների խնամքն ու կերակրումը: Սա էլ հիմնականում կատարում էին կանայք, երեխաները: Երեխաները բարձրանում էին տանիք և խոտի դեզից անհրաժեշտ քանակի առվույտի խրձեր էին

ցած գցում, որտեղից և տանում էին գոմ, կերակրում անասուններին: Որպես կանոն, ընտիր առվույտը տալիս էին հղի և կթվող անասուններին: Չոր խոտի մնացած, ոչ որակյալ մասը տալիս էին այծերին, ավանակներին:

Անասնապահության զարգացման համար Կողբում առանձնացված էր 890 հա տարածք՝ անասուններին արածեցնելու և խոտհարքների համար: Հայցահատիկային կուլտուրաների մշակման նպատակով օգտագործվում էր 120 հա հողատարածք, որի յուրաքանչյուր հեկտարից կողբեցին ստանում էր 40-50 ց հացահատիկ: Հեկտարից ստանում էին մոտ 0,5 տ ընտիր բամբակ: Խոտհարքների, առվույտի և կորնգանի համար տրամադրված էր 200 հա, իսկ խաղողի մշակման համար՝ 30 հա տարածք: Առվույտի, կորնգանի դաշտերը տարեկան հնձվում էին 4-5 անգամ: Յուրաքանչյուր հնձից 2-3 օր անց (մինչև հնձած խոտը չորանար և դաշտից դուրս բերվեր) դաշտը նորից ջրում էին:

Երկրագործությամբ զբաղվող գյուղացին տարին ամբողջ աշխատում էր մի կտոր հողի վրա, աշխատում ամբողջ ընտանիքով: Այդ աշխատանքի ընթացքում հողի մշակը բազում դժվարությունների առջև էր կանգնում, անթիվ մեծ ու փոքր հարցեր էին առաջանում և միայն իրենց հատուկ համառության, համբերատարության և աշխատասիրության հետևանքով կարողանում էր հաղթանակով դուրս գալ կամ մի կերպ դրանք լուծել, հաղթահարել: Այս բոլորով հանդերձ, սուրմալեցիները ժամանակի և շրջապատի այլ բնակավայրերի, այլ բնակիչների համեմատ բարեկեցիկ ու բավարար կյանքով էին ապրում. ընտանիքն ապահովված էր գյուղատնտեսական ու անասնապահական մթերքներով, հարմարավետ բնակարաններով, օժանդակ հարմարություններով:

Սուրմալեցին սիրում էր հողը, և այդ սերը փոխանցվում էր սերունդից-սերունդ:

Գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ դաշտ էին դուրս գալիս ընտանիքի այն անդամները, որոնք տվյալ աշխատանքի համար կարող էին օգտակար լինել: Խոտհնձի ժամանակ, հացահատիկային կուլտուրաների, խաղողի, բամբակի բերքահավաքներին ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը իր բաժինն ուներ ընդհանուր գործի մեջ: Այդ օրերին հողամասի եզրի ծառերի տակ, առվի ափին մեծ կաքսայով կերակուր էր պատրաստվում, ծառից կախված տոպրակի մածունի սիճուկն էր կաթկթում, և այն դառնում էր հրաշալի միջոց աղբյուրի սառնորակ ջրով խոշոր քրեղանքասայի մեջ ալդուղ պատրաստելու համար: Ցորենի, գարու կամ կորեկի դաշտը հնձելու ընթացքում երեխաները փոքրիկ գոգնոցների մեջ հավաքում էին գետնին ընկած հասկերը և լցնում առանձին պարկերի մեջ: Այցելուներից հետո նույնպես «փաշառու»-«պաշաղ» էին կատարում՝ քաղում վազելի մեջ թաքնված ողկույզները: Հավաքած խաղողը քթոցների մեջ լցված՝ տայրով

կամ էշին բալձած, տեղափոխում էին տուն: Ամառային այս աշխատանքներին տնեցիները իրենց հետ բերում էին հորքեր, գառներ, ուլեր և բայց թողնում պաածելու համար:

Առանձնակի համ ու բուրմունք էր ունենում դաշտում պատրաստված ոչխարի մսով կերակուրը: Սուրմալեցիները շատ էին սիրում օգտագործել կծու, թթու, մռու ուտելիքներ, համեմունքներ: Համարյա բոլոր կերակուրները համեմվում էին խիստ կծու պղպեղով, կամ սեղանին էր դրվում թարմ կամ թթու դրած կծու տաքդեղ և այլն:

Պղպեղ պատրաստելու նպատակով կանաչ տաքդեղը թողնում էին քոլին, որ նա գելհասունանա, կարմրի, ապա այն հավաքում էին թփից, խուշոր ասեղներով պոչերն անցկացնում թելին և երկար շարաններով կախում՝ արևի տակ չորանալու: Արագ չորանալու համար տաքդեղը կտրում էին երկու կամ չորս մասերի, բացում միջուկը:

Սովորաբար չորացած կարմիր տաքդեղը քարի սանդերի մեջ փայտյա ծանր օթակներով ծեծում և վերածում էին միասեռ կարմիր փոշու: Տաքդեղի կծվությունը ավելի ցայտուն լինելու նպատակով չորացած կարմիր տաքդեղից անջատում են փայտացած կոթունն ու սերմնազամբյուղը: Այս անգամ արդեն պղպեղ է ստացվում միայն տաքդեղի մսալի չոր մասից, բնականաբար ավելանում է կծվության չափը:

Կողրեցիները ճշմարիտ հավատացյալներ էին, գյուղն ուներ 3 եկեղեցի՝ յուրաքանչյուր թաղամասում մեկական: Սա հնարավորություն էր տալիս հավատացյալներին առանց դժվարության և երկար ճանապարհ կտրելու հասնել աստծու տուն և կատարել հայ քրիստոնյային վայել իր պարտականությունը իր խղճի ու երկնայինի հանդեպ:

...1918 թ. ապրիլին թուրքական զորքերի ներխուժման վտանգի պատճառով Կողրը գաղթեց: Մինչ այդ, այստեղ հասած Արևմտյան Հայաստանի գաղթականները սարսափելի դեպքեր էին պատմում թուրք ոճրագործների գազանությունների մասին: Կողրը բռնեց գաղթի ճանապարհը: Տեղահանվեց ամբողջ բնակչությունը, սակայն կողրեցին դա համարում էր ժամանակավոր, համոզված՝ շուտով, շատ շուտով նորից կվերադառնան հայրենի բնակավայրեր, հայրենի օջախներ: Մայիսի 20-ին հայկական զորքերը թողեցին Կողրը, Սուրմալուն և ողջ տարածքը՝ անցնելով Արաքսի ձախ ափ:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ազատագրված Արևմտահայաստանից 1917 թ. նոյեմբերյան հեղաշրջումից հետո ռուսական բանակի նահանջից օգտվելով, թուրքական բանակը, համախմբելով ողջ ուժերը, Հայաստանյան ճակատում ընդհանուր հարձակման է անցնում:

1918 թ. հունիսին թուրքերը կարողացել էին գրավել նաև Արևելյան Հայաստանի զգալի տարածքներ, հետագա փորձություններից խուսափելու նկատառումով Հայաստանի Հանրապետությունն ստիպված էր թուրքերի

հետ նստել հաշտության սեղանի շուրջ:

Այդ թվականի հունիսի 4-ին Բաթումում ստորագրվեց Հայաստանի Հանրապետության և Օսմանյան Թուրքիայի միջև խաղաղության և բարեկամության պայմանագիր, որը հայկական կողմից ստորագրեցին Հովհաննես Քաջազնունին և Ալեքսանդր Խատիսյանը: Թուրքական կողմից պայմանագիրն ստորագրեցին Վեհիբ-Մահմեդ փաշան և Խալիլ բեյը: Այդ պայմանագրով, այլոց թվում թուրքերին անցավ Սուրմալուի ամբողջ գավառը, Երևանի և Շարուր-Դարալագյազի գավառների մի մասը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների մեծ մասը: Հայաստանը մնաց 10 հազ. քմմ տարածքի վրա:

Դաշնակից պետությունների ճնշման տակ 1918 թ. հոկտեմբերին Օսմանյան Թուրքիան իրեն պարտված ճանաչեց: Թուրքիային պարտադրվեց անմիջապես գրաված տարածքներից զորքերը հեռացնել: Այլոց թվում ազատվեցին նաև հայկական տարածքները, այդ թվում և Սուրմալու գավառը: Ահա այս պարագայում էր, որ 1918 թ. վերջերին սուրմալեցիները հապճեպ կերպով վերադարձան հարազատ բնակավայրեր, հարազատ օջախներ, քանի որ ամբողջ տարածքում թուրքական զավթիչները դեռ հեռացել էին, բայց տեղական թուրք-թաթարները շարունակում էին թալանել սուրմալեցիների ունեցվածքը:

Հայրենի բնակավայրեր վերադարձած սուրմալեցիները հայտնվեցին ցրտի և սովի ճիրաններում: Իգդիրցին, սուրմալեցին մնացել էր ինքն իր հետ: Ինքն իր աստծո հետ: Սովը հայ բնակչության շրջանում դարձավ համատարած և սկսեցին սովից մահացողների թաղման պարզունակ արարողությունները:

Մեղադրել իգդիրցիներին, սուրմալեցիներին հայրենի բնակավայրեր վերադառնալու համար՝ առնվազն անմտություն կլիներ: Ցննդավայրի, պապենական օջախի կարոտն ու բոցը հանգիստ չէին տալիս գաղթականներին, և նրանք շտապեցին վերադառնալ: Սակայն այն, ինչ տեսան նրանք, երևակայությունից վեր էր.

Բերանն արնոտ մարդակերը էն անքան,
Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան,
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Ահա, մարդ չդարձած այդ արարածների պատճառով էր, որ իգդիրցին սովի մատնված հայր ու մայր էր թաղում, զավակ ու մերձավոր: Օրհասական այս պայմաններում, անսալով տարածաշրջանի սովյալների աղերսանքներին, Հայաստանի Հանրապետության կառավարությունը համարյա չկարողացավ շոշափելի օգնություն ցուցաբերել: Հարյուր հազարավոր գաղթականներ մերկ ու սովալլուկ լցվել էին Արարատյան հարթավայրի

բնակավայրեր, Էջմիածին, Երևան և այլ վայրեր: Պատերազմները քայքայել էին երկիրը, գյուղացին չէր վարել, չէր ցանել, չէր հերկել: Սուրմալեցիները, որ ժամանակին ամեն բանում օգնում էին տեղական թուրքերին, նրանց տալիս ընտիր հացահատիկ, բրինձ, թարմ և չորացրած մրգեր, խաղող ու գինի, վերջապես նրանց համար տուն կառուցում և այլն, այսօր հայ «քիրվան» սովամահ էր լինում, իսկ նա հեռվից էր նայում:

Իգդիրցիները իրենց շեն բնակավայրը գտան ավերված, տները կողոպտված ու քանդված վիճակում: Ամբարներում չէր մնացել մի հատիկ ցորեն, մի աման ալյուր, կճուճների յուղն ու պանիրը տարել էին հենց դրանցով: Իգդիրը մարած օջախի էր նմանվում, ամենուր գեղանների մնացորդներ, ամենուր հրդեհված առանց տանիքի սև ու մլոտ պատեր, թափառական շներ ու կատուներ: Իգդիրցիներն սկսեցին նորոգել բնակարանները մոտալուտ ձմռանը դիմակայելու համար: Շատ շուտով սպառվեց Սարդարապատից վերցրած մթերքը: Քանի ձմեռը մոտենում, քանի ցրտերը սաստկանում էին, այնքան պարենի պակասն ավելի էր իրեն զգացնել տալիս: Չկար մեկը, որին հնարավոր լիներ դիմել, բոլորն էլ միևնույն անտանելի վիճակում էին, բոլորն էլ միևնույն հարթության վրա: Հարևան թուրքական գյուղ գնալը վտանգավոր էր, բայց ըստ տեղեկությունների, այդպիսի համարձակներ (ճարահատյալներ) եղել են, և ըստ այդ ստույգ տեղեկությունների, կարողացել են թուրքերից ոսկով գալի ու ցորեն գնել: Գարնան գալը վիճակը քիչ փոխում, կարծես բարելավում է: Բուսել էին կֆտոն ու շլեշը, խատուտիկն ու սինձը, դանդուռն ու եղինջը, ուլցն ու թելուկը, ծտապաշարը, սխտորուկը և այլ ուտելի խոտաբույսեր: Շատերը դրանք դաշտերից քաղում և ուտում էին հում վիճակում, որի պատճառով ուռչում էին, երբեմն էլ՝ թունավորվում: Սկսվում են գարնան դաշտավարական աշխատանքները, սուրմալեցիները մի կերպ կարողանում են փոքր հողակտորների վրա վար ու ցանք կատարել:

Շուտով խարդավանքների ու անարդարությունների գոհ Հայաստանը կրկին դարձավ թուրքական արշավանքի գոհ: Խախտելով բոլոր կարգի համաձայնագրերը, թուրքական ոճրագործ բանակը նորից համընդհանուր հարձակման անցավ:

Սուրմալեցիներն ու իգդիրցիները ստիպված կրկին բռնեցին գաղթի տանջալի ճանապարհը: Օգոստոսի (1919 թ.) տապ օրերին, փոշու և քրտինքի մեջ կորած, սոված ու ծարավ սուրմալեցիները թողեցին իրենց մարգարիտը շան վզից կախ և անցան մայր Արաքսը: Անցան, որպեսզի կարոտով և թախծով հիշեն ու իրենց ժառանգներին պատմեն հայրենիքի, այդ հրաշք տարածքի պատմությունը...

Կողբեցի գաղթականների մի մասը հասավ Երևանի արվարձաններ. Սարվանլար կիսաքանդ գյուղում տեղավորվեցին 32 ընտանիք, Սարդարապատի շրջանում մնացին 30, իսկ Երևանից քիչ հեռու՝ Աղջաղշլաղում (Գետափ), 35 ընտանիքներ: Այսպես էր համալրվում Իգդիրի և Սուրմալուի մնացած հայկական գյուղերի գաղթականների դրությունը:

Կողբեցիները, որոնք մնացին Սարվանլար գյուղում, սկսում են բնակարանաշինությունն ու հողօգտագործումը: Կազմակերպում են համայնք, շինացնում և անվանում Նոր Կողբ: Նոր Կողբի կոլտնտեսությունը, որը երկար տարիներ ղեկավարել են Բեգինյանը և Արամայիս Սահակյանը, մայրաքաղաքին մատակարարում էր թարմ բանջարեղեն, խաղող, մրգեր, կար: Կոլտնտեսությունը Հայաստանի Հանրապետության առաջավորներից էր, որի աշխատողներից շատերը պարգևատրվեցին ԽՍՀՄ կառավարական բարձր պարգևներով, շքանշաններով, մեդալներով:

Ցավոք, մայրաքաղաքի կուսակցական, կառավարական այրերի անհեռատես քաղաքականության հետևանքով գյուղը, որ բարեկարգ էր, ուներ հոյակապ մշակույթի պալատ, դպրոց և այլ կառույցներ, հիանալի մնացատներ՝ իրենց պտղատու այգիներով և այլն, տեղահանվեց: Դասական հողագործին, հողի մշակին ու անասնապահին առաջարկեցին բազմահարկ տներում բնակվել: Սա կողբեցիների համար ավելի սարսափելի ու անհասկանալի տեղահանում էր, քանզի այն կատարվում էր հարազատ իշխանությունների կամքով: Միակ սփոփիչն այն էր, որ այդ գյուղի ավերակների տեղում կառուցեցին ջրամբար՝ «Երևանյան լիճը», իբր զովացնելու համար մայրաքաղաքի բնակչությանը: Մի խոսքով, այս անգամ այդտեղ Կողբի ջրախեղդ արվեց: Կողբից գաղթածներից բնակություն հաստատեցին նաև մայրաքաղաքից ոչ հեռու Աղջաղշլաղ, հետագայում Գետափ գյուղում:

Հայրենական պատերազմի առաջին օրվանից շատ կողբեցիներ մյուս հայորդիների նման զինակոչվեցին և շատերն էլ մասնակցեցին բազում ճակատամարտերի: Միայն Գետափ գյուղից զինվորական ծառայության զորակոչվեց 52 մարդ: Սրանցից ռազմաճակատի տարբեր մասերում հերոսի մահով զոհվեցին 22-ը: Ինչպես հանրապետության շատ բնակավայրերում, այնպես և Գետափ գյուղում, համագյուղացիների ջանքերով ու միջոցներով կանգնեցվել է զոհված հայրենակիցների հուշարձան-կոթող: Հուշարձանի պատին փորագրված են զոհված կողբեցի-գետափցիների անունները: Ամեն անգամ այստեղ հավաքվում են կողբեցի-գետափցիները, նրանց ժառանգները, և տարեցների զրույցներն ու հիշողությունները հայրենի Սուրմալուի, Կողբի մասին է լինում: Երբեմնի Կողբի գաղթականների ժառանգները նախնիներից լսածն ու հարազատ Կողբի հիշողությունները հաղորդում են իրենց ժառանգներին, հաղորդում և պատվիրում՝ երբեք չմոռանալ հարազատ Կողբը, տեր կանգնել նրան, պահանջատերը լինել պապենական հողի ու ջրի:

Ահա Հայրենական պատերազմին մասնակցած կողբեցի-գետափցիների ցուցակը.

Մեսրոպյան Սարիբեկ . . . . . .*վերադարձել է*
Նուշիկյան Սուրիկ . . . . . —,,—
Վելիկյան Հարեք . . . . . —,,—
Հակոբյան Դաքիկո . . . . . .*զոհվել է*
Շահբազյան Սահակ . . . . . —,,—
Ջանազյան Գուրգեն . . . . . .*վերադարձել է Գետափ*
Հակոբյան Աղասի . . . . . .*չի վերադարձել*
Ալոյան Վազգեն . . . . . —,,—
Դավթյան Տաճատ . . . . . —,,—
Սիմոնյան Պարույր . . . . . —,,—
Ներսեսյան Մովսես . . . . . .*վերադարձել է*
Ալոյան Ալեքսան . . . . . .*չի վերադարձել*
Պետրոսյան Սամսոն . . . . . .*վերադարձել է*
Քոչարյան Կարապետ . . . . . —,,—
Հակոբյան Հմայակ . . . . . .*չի վերադարձել*
Ավետիսյան Արամ . . . . . .*վերադարձել է*
Շահբազյան Սերյոժա . . . . . .*չի վերադարձել*
Միքարյան Գառնիկ . . . . . —,,—
Քոչարյան Գրիգոր . . . . . —,,—
Ճաթոյան Ռուբեն . . . . . .*վերադարձել է*
Վարդանյան Արտյուշա . . . . . —,,—
Դովլաթյան Արմենակ . . . . . —,,—
Դովլաթյան Գուրգեն . . . . . —,,—
Դովլաթյան Մեսրոպ . . . . . .*չի վերադարձել*
Մարտիրոսյան Հայկազ . . . . . .*վերադարձել է*
Ումրումյան Սուրիկ . . . . . —,,—
Մեսրոպյան Հայկ . . . . . —,,—
Պետրոսյան Վելիխան . . . . . .*վերադարձել է*
Քոչարյան Հրաչ . . . . . —,,—
Առաքելյան Զավեն . . . . . .*վերադարձել է*
Պետրոսյան Արշակ . . . . . —,,—
Դալլաքյան Ստեփան . . . . . .*չի վերադարձել*
Սիմոնյան Վարազդատ . . . . . .*վերադարձել է*
Դաղամյան Վարդան . . . . . —,,—
Ազատյան Արշակ . . . . . .*չի վերադարձել*
Ազատյան Վաղարշակ . . . . . .*վերադարձել է*

Ճաթոյան Մինաս . . . . . .*չի վերադարձել*
Դալլաքյան Անուշավան . . . . . —,,—
Ղազարյան Սահակ . . . . . —,,—
Պողոսյան Հարություն . . . . . —,,—
Ժամկոչյան Կարապետ . . . . . —,,—
Բաղալյան Հմայակ . . . . . —,,—
Առաքելյան Եղիա . . . . . .*չի վերադարձել*
Վարդանյան Հայկ . . . . . .*վերադարձել է*
Վելիկյան Մինաս . . . . . —,,—
Ալեքսանյան Վարդգես . . . . . —,,—
Սահակյան Սահակ . . . . . —,,—
Զաքարյան Արշավիր . . . . . .*չի վերադարձել*
Ղազարյան Հմայակ . . . . . —,,—
Աղեի Անդրանիկ . . . . . .*չի վերադարձել*
Եղիազարյան Լյուդվիգ . . . . . —,,—

Իգդիրը Սուրմալու գավառի արդյունաբերական, առևտրական խոշոր կենտրոն էր: Սա նաև գավառի վարչական կենտրոնն էր: Այստեղ էին կենտրոնացված գավառի խորհուրդը, գավառապետն ու գլավան՝ քաղաքապետը, հարկագանձման գրասենյակները, զինվորական հրամանատարությունը, փոստ-հեռագրատունն ու այլ օժանդակ վարչություններ, ձեռնարկություններ և այլն: Լինելով գավառի կենտրոն, բնականաբար, այստեղ ավելի շատ էին մշակութային, կրթական կենտրոններն ու հաստատությունները:

Ըստ ավանդության, որն այնքան սիրում էին պատմել ու կրկնել իգդիրցիներն ու սուրմալեցիները, այստեղ եղել է ինքը՝ Նոյ Նահապետը. նայել շրջապատին, նայել Արարատին, զննել ու ստուգել հողը, հավանաբար նաև ջրավազաններն ու հորդառատ Արաքս գետն ու Սուրմալուի բերրի դաշտերը և ինքն իրեն խոսել, գուցե խոսել այնպես, որ լսելի լինի որդիներին. «Նոյ, ապի դու այլևս հեռու մի գնա, հողն Լստեղ հաստ է. (հավանաբար Նահապետը նկատի է ունեցել հողի առանց խճաքարերի հաստ շերտը), փոխր և խոնավությունն էլ տեղը, իսկ և իսկ այգու հարմար տեղ...: Ապի դու մնա Լստեղ և... ԻԳԻ դիր-էքի դիր (էքի Իգդիրի, Շալուրի խոսակցականով նշանակում է խաղողի այգի), ԻԳԻ տնկիր»: Ապա իր որդիներին կարգադրում է. «Մոտ բերեք խուրջիններդը»: Եվ սրանց միջից հանելով նախօրոք կտրած, պատրաստի խաղողի վազերի մատները (ճյուղերը), փոսեր են պատրաստում, տնկում, հողի շերտով ծածկում ու ջրում են: Այսպիսով, ըստ ավանդության, աշխարհում խաղողի առաջին այգին տնկվում է Իգդիրի դաշտում և բնականաբար նրա առաջին մշակողներն էլ լինում են իգդիրցիները, սուրմալեցի-



Ջողկերտ-Գարագաշ. (Երվանդակերտ)

ները: ԻԳԻ ԴՆԵԼՈՎ բնակավայրի անունն էլ մնում է Իգիդիր-Իգդիր: Իգդիրը գտնվում է Արաքս գետի աջ ափին, Արարատյան հարթավայրի հյուսիս-արևմուտքում:

Կան ենթադրություններ, որ Իգդիրը միջին դարերում կոչվել է Ջողակերտ, հետագայում, թե ովքեր և ինչպես են փոխել այն, պարզ չէ: Այս տեղում եղել է ամրոց, որը հիշատակում է իսպանացի ճանապարհորդ Ռ. Կլավիխոն: Նա 1403 թ. եղել է ամրոցում և ճանապարհորդական իր հուշերում հիշատակում է, որ ամրոցի տերը կին էր:

Իգդիրն ունի հարմար դիրք, տարածքի մեծ մասը կազմում են Արարատյան հարթավայրի մերձարաքսյան բերրի հողերը: Այն Արաքս գետի վրա կառուցված Մարգարա-Կարակալայի կամրջից գտնվում է ընդամենը 12-15 կմ հեռավորության վրա: Այս հանգամանքը հնարավորություն է տվել նրան և ամբողջ տարածքին սերտ կապերի մեջ լինել Էջմիածնի, Երևանի, Արարատյան հարթավայրի այլ մեծ ու փոքր բնակավայրերի հետ: Այս համագործակցությանը, մշակութային, կրթական, առևտրական ու տարածքի բնակչության սոցիալ-քաղաքական այլ հարցերին առավելապես սատար կանգնեց 1902 թ. դեկտեմբերի 2-ից գործել սկսած Ալեքսանդրապոլ-Երևան

երկաթուղին: Հետագայում, 1906 թ. շահագործման հանձնվեց Երևան-Ջուլֆա երկաթգիծը, որով էլ ավելի ընդլայնվեց Իգդիրցիների և գավառի կապը հեռավոր տարածքների հետ:

Հիշեցնենք նաև, որ Իգդիրը Երևանից գտնվում էր ընդամենը 50 կմ հեռավորության վրա: Իգդիրով է անցնում Երևան-Էջմիածին-Սարդարապատ-Բայազետ-Խոյ խճուղին: Այն ունի խոշոր տնտեսական, ռազմավարական նշանակություն: Այդ խճուղին հնուց ի վեր Իգդիրը կապել է Երևանի, Արտաշատի, Դվինի հետ: Բեռները այդ ճանապարհով հասել են Շարուր, ապա Արփենիալ գետի ափով ճանապարհը տարել է դեպի հյուսիս, առևտրական խոշոր կենտրոն Պարտավ քաղաք: Մյուս ճանապարհը Շարուրի դաշտով անցնում և հասնում էր Թավրիզ և այլ վայրեր: Խճուղին Իգդիրից անցնելով դեպի հարավ, կտրում է Հայկական պարի լեռնաշղթան, անցնում Արևմտյան Հայաստան՝ երկու երկրամասերը կապելով իրար: Խճուղով Իգդիրից մինչև Բայազետ ընդամենը 54 կմ է, իսկ Վան՝ 244: Ըստ ստույգ տեղեկությունների, Իգդիրի բնակչությունը 1829-32 թթ. 5000-ից ավելի էր: Այդ ժամանակ քաղաքն ուներ 700 տնտեսություն: Քաղաքում բնակվում էին 70 տնտեսություն մուսուլմաններ: Կային եզդիներ, ռուսներ, հրեաներ և այլն: Ունենալով բնաաշխարհագրական հարմար դիրք, բերրի դաշտեր, առևտրի զարգացման լայն հնարավորություններ, քաղաքի բնակչության թիվն արագ աճում էր: Արդեն 20-րդ դարի սկզբներին Իգդիրի բնակչության թիվն անցնում էր 10 հազարից: Քաղաքի բնակչության մի մասը 1828-29 թթ. ռուս-պարսկական պայմանագրի համաձայն վերադարձել էր Պարսկաստանի Խոյ, Սալմաստ, Մակու քաղաքներից և շրջակայքից: Տարածքը Ռուսական կայսրությանն անցնելուց հետո բնականաբար վարչական, կառավարչական որոշ փոփոխություններ կատարվեցին: Սուրմալուի գավառի տարածքը բաժանվեց ոստիկանական առանձին ենթաշրջանների (նույնը կատարվում է նաև Երևանի այլ գավառներում): Իգդիրի ոստիկանական շրջանն ընդգրկում էր 61 գյուղ, ուներ 2961 ծուխ, 30169 բնակիչ: Սրա հարևանությամբ, ընդամենը Իգդիրից 18 կմ հեռավորության վրա, կազմավորվեց Դաշբուռունի ոստիկանական ենթաշրջանը, որն ուներ 317 ծուխ՝ 3000 բնակչով: Այսպես, ցարական իշխանությունները գավառում կազմակերպելով առանձին ենթաշրջաններ, հույս ունեին, որ կառավարումը տարածքում ավելի դյուրին և արդյունավետ կլինի:

Գավառին, այդ թվում նաև նրա կենտրոն Իգդիրին, անհանգստություն էին պատճառում Արաքսի հորդացումները, որոնք լինում էին հիմնականում գարնան ամիսներին: Արաքսը հորդանում, դուրս էր գալիս ափերից ու հեղեղում շրջակայքի դաշտերն ու արտավայրերը, ավերում առանձին կառույցները, երբեմն էլ քշում-տանում անասուններ և այլն: Գավառի բնակչությա-

նը տարերային այլ աղետներ ևս անհանգստություն էին պատճառում:

1840-ին Իգդիրի հարևանությամբ գտնվող, ըստ ավանդության աշխարհի ամենահին բնակավայր Ակոռի գյուղը ավերվեց և անհետացավ: Սա հետևանք էր Մեծ Արարատի նախկին հրաբխի սառած խառնարանից ժայթքած գոլորշու, հսկայական քանակության ցեխի ու քարերի, որոնք ծածկեցին բնակավայրը:

Իգդիրցիներից շատերը պատրաստ էին թողնել իրենց բնակարանները ու անմիջապես հեռանալ, մանավանդ որ այդ զարհուրելի տեսարանը կատարվում էր քաղաքից ընդամենը 30-35 կմ հեռավորության վրա: Տեսարանը սարսափազդու էր նաև այն պատճառով, որ ժայթքումը ընթանում էր մեծ աղմուկ-դղրդյունով, լեռան գագաթին հսկայական ամպի առկայությամբ: Բնակիչները այն ծխի տեղ էին ընդունում: Ակոռին, որը գտնվում էր Մեծ Արարատի հյուսիսային լանջին, այդպես էլ իր բնակչությամբ վերացավ Մասյացոտն գավառից, աշխարհի երեսից: Իգդիրցիները, ականատես լինելով այդ արհավիրքին, այնուամենայնիվ չշտապեցին և հրաժարվեցին այնտեղից հեռանալու մտադրությունից:

Սուրմալուում և առանձնապես Իգդիրում, ընտանիքի բարեկեցության մասին հոգ տանելուց հետո, առաջնային նշանակություն էր տրվում երեխաների կրթության գործին: Իգդիրցին սիրում էր կրթությունը, հարգանք տածում կրթված մարդու նկատմամբ: Դրա անուրանալի ապացույցն էր գավառի հայկական գյուղերում գոյություն ունեցող դպրոցների քանակը: Իգդիրում գործում էին մի քանի դպրոց, երկու վարժարան՝ արական և իգական դասարաններով: Իգդիրցի շատ երիտասարդներ տեղական դպրոցներն ավարտելով, մեկնում էին այլ վայրեր՝ կրթությունը շարունակելու, հիմնարար կրթություն ստանալու:

Քաղաքն ուներ երկու եկեղեցի, մշակութային միջոցառումների համար հարմարեցված սրահներ, շենքեր:

1828 թ. անցնելով Ռուսական տիրապետության տակ, քաղաքում արագ զարգացան արհեստագործությունը, առևտուրը: Արհեստավորները սրդեն ստեղծում էին ապրանքներ, զարդեր՝ արտաքին շուկա հանելու համար: Արագ թափով աճում էր նաև քաղաքի բնակչությունը: Ստեղծված բարենպաստ պայմաններն այստեղ էին հրավիրում կրթության մարդկանց, արհեստավորների, առևտրականների: Իգդիրը նոր կապեր հաստատեց մոտակա և հեռավոր խոշոր քաղաքների հետ:

Իգդիրցիները, ինչպես արդեն նշել ենք, բացի երկրագործությունից, զբաղվում էին նաև անասնապահությամբ: Արարատ լեռան մարգագետնային արոտավայրերը նպաստավոր էին կովերի, ոչխարների և այլ կենդանիների խնամքի համար: Վաղ գարնանից մինչև ուշ աշուն իգդիրցիների անա-

սունները ու ոչխարները արածում էին հյութեղ ու բուրավետ լեռնալանջերին: Ստացված կաթն ու մածունը, կարագն ու յուղը լինում էր առանձնակի բուրմունքով և վիտամիններով հարուստ: Առանձնապես շատ գոմեշներ էին խնամում: Այստեղ ջրավազանների առկայությունն ու հարևանությունը հնարավորություն էր ընձեռում Իգդիրի շոգ կլիմայի պայմաններում խնամել այդ կենդանիներին: Սրանք առանձնակի հոգս չէին պատճառում, վարարենք՝ կաթը բարձր յուղայնության էր (կովի կաթից մոտավորապես կրկնակի): Գոմեշները դիմացկուն են, երբեմն օգտագործում էին գյուղատնտեսական աշխատանքներում՝ վարի, նաև բեռների տեղափոխման համար: Գոմեշներն ունեն հզոր ուժ, և այն տարածքներում (լեռներում), որտեղ սովորական եզները չէին կարող սայլը քաշել, բեռներ տեղափոխել, գոմեշների համար դա սովորական էր և դյուրին:

Իգդիրցիները խնամում էին ոչխարների մեծ գլխաքանակ: Սրանց հոտերը գրեթե ամբողջ տարին լինում էին արոտավայրերում: Խիստ ցրտերին, ձյան ժամանակ, հոտերը քշում էին մերձարաքսյան տարածք, որտեղ հատնմատաբար տաք էր ու ապահով: Ոչխարի հոտերի մեջ շատ էին նաև այծերը: Սրանք հիմնականում տալիս էին կաթ ու մազ: Մազն օգտագործում էին ամուր պարաններ գործելու, քեչաներ պատրաստելու և այլնի համար: Հայտնի էր իգդիրցիների ոչխարի պանիրը՝ համեմված ուրցով, սխտորով և այլ համեմունքներով: Գտնվելով Արարատի և Արաքսի հարևանությամբ, իգդիրցիները զբաղվում էին նաև որսորդությամբ ու ձկնորսությամբ: Երեկոյան Արաքսի մեջ դրած ցանցը կամ ուռենու դալար ճյուղերից գործած զամբյուղաձև թակարդը առավոտյան իգդիրցուն վարձահատույց էր լինում թարմ ձկներով, իսկ Արաքսի լոքոն իգդիրցիների սիրած ուտելիքն էր: Լեռներում հանդիպում էին քարայծեր ու վայրի ոչխարներ, իսկ դաշտերում՝ կաքավ ու լոր, հնդկահավ ու փասիան: Արաքսի մայառուտներում կային նաև վարազ, հովազ, ջրավազաններում՝ սագեր, բադեր, թռչուններ: Ինչպես հարթավայրային, այնպես և լեռնային տարածքներում վխտում էին գայլեր, աղվեսներ, բորենիներ: Շատ էին նաև նապաստակները:

Իգդիրը, ունենալով հարմար դիրք, կայծես թե իր մեջ էր հավաքում շրջապատի արտադրած մթերքները ու արհեստագործական արտադրանքները և ստեղծում առևտրի աշխույժ մթնոլորտ: Այստեղ առևտրի էին գալիս հեռու և մոտ տարածություններից: Իգդիրի մոտակայքում էր գտնվում Իգդիր Մավա բնակավայրը: Գյուղն ուներ իր եկեղեցին՝ ս. Գևորգը: Բնակչության թիվը 1900 թվականին հասնում էր մոտ 1000 մարդու, կար 166 ընտանիք, որի կեսը՝ հայ: Գյուղի մասին պատմությունը լռում է, ով, երբ և ինչպես է կառուցել, հայտնի չէ:

Իգդիր Մավայի բնակչությունը ամենասերտ կապերի մեջ էր Իգդիրի

հետ: Սրանք նույնպես զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, արհեստներով, սոնտրով: Հետագայում գյուղը միացավ Իգդիրին, դառնալով նրա թաղերից մեկը: Իգդիրի և մոտակա բնակավայրերի կլիման առողջության համար այնքան էլ բարենպաստ չէր: Իսպանացի ճանապարհորդ Ռ. Կլավիխոն, որը եղել է քաղաքում, գովեստի խոսքեր է ասել նրա շինությունների ու բնակիչների մասին: Սակայն շրջապատի ճահճուտները և աղուտները ազդում են նրա կլիմայի վրա, մասնավորապես ամռան ամիսներին շատ են մոծակները, որոնք տարածում են տենդ (մալարիա) հիվանդությունը: Սրանցից ինչ-որ չափով ազատվելու միակ միջոցը թանզիֆ վրանները են, որոնց տակ գիշերը քնում էին իգդիրցիները:

Ժամանակին ս. Պետերբուրգում բժշկական կրթություն ստացած և հայրենի երկրամաս վերադարձած բժիշկ Ասլանյանը ջանք չէր խնայում հիվանդներին ամոքելու, խինին դեղամիջոցով մալարիայով հիվանդներին առողջացնելու հայրենանվեր գործում:

Իգդիրի մոտակայքում է գտնվում հնագույն ժամանակներից շահագործվող քարհանքը: Շատ իգդիրցիներ այստեղ էին աշխատում՝ քար կտրում, հղկում, տեղափոխում: Քարհանքի մոտիկության և քարագործ վարպետների առկայության շնորհիվ է, որ քաղաքի շատ շենքեր կառուցվել են քարից՝ մեկ-երկու հարկանի, լայն ու բարձր լուսամուտներով, դռներով, ամուր դարպասներով: Ժամանակի շատ բնակավայրեր չունեին նման կառույցներ, բնակարաններ:

Քարհանքում վարպետները, ըստ պատվիրատուի պահանջի, կարող էին քարը կտրել, հղկել ու փորագրել, ապա սայլերով այն տեղափոխում էին շինարարական վայր, և հմուտ պատշարները դրանք հարմարեցնում էին պատերին, շարում ու տներ կառուցում: Բնականարար, նման տներն ունենում էին բարձր առաստաղ, որոնց տանիքը լինում էր հարթ, կամ թեքությամբ պատրաստած ու թիթեղապատած: Սովորաբար, բնակարանի ներսի պատերը սվաղում էին կավի և հարդի խառը ցեխով, որը դիմացկուն էր և ճաքեր չէր տալիս: Բնակարանի ներսի պատերը ճիլոպի մեծ վրձնով կրաջրային լուծույթով սպիտակեցնում էին, որին քիչ մգություն տալու համար լողակ էին խառնում: Որպես կանոն, բնակարաններն ունենում էին բակեր՝ ինչպես կենդանիներին ամռան ամիսներին կերակրելու, խնամելու, այնպես էլ բերք ու բարիքը տեսակավորելու, վերամշակելու և այլնի համար: Այդ բակերում ամռան ամիսներին գիշերները ամբողջ ընտանիքով քնում էին թանզիֆից կարած վրանի տակ: Բակի առանձին, բարձր ու հարմար տեղում տեղավորում էին թախտերը՝ շատ հաճախ իրար կպած, գցում անկողիններն ու կապում թանզիֆյա վրանը՝ մոծակներից պաշտպանվելու համար:

Եթե տան տանիքը հարթ էր, ապա երիտասարդ տղաները, երեխաները

քնում էին տանիքին: Միահարկ տները կառուցում էին ինչպես ողջ Սուրմալուում՝ գերաններին փռում էին մաքրած ողորկ եղեգնյա խսիր, վրան կավ, հող լցնում և հաստ սվաղում կավահողի և հարդի խառնուրդի ցեխով: Հաճախ, եթե սենյակը մեծ էր լինում և գերանների երկարությունը չէր բավարարում, ապա սենյակի հարմար մասում հաստ գերանից հղկած սյուն էին կանգնեցնում ու գերանները դրա վրա ամրացնում: Ասենք նաև, որ Իգդիրը շրջապատված էր բալյուղներով, կաղամախիներով, հաստաբուն ու սպայիկ այլ ծառերով: Դրանց քանակը բավականին շատ էր և իգդիրցին շինարարության համար օգտվում էր նաև դրանցից: Իսկ եղեգները, բավականին հաստ ու երկար, Արաքսի ափերին անհատնում էր: Հաճախ աշնանը չորացած եղեգները հրդեհում էին, որն այրվում էր օրերով, շաբաթներով: Գարնանը սրանց տեղում աճում էին նորերը, ավելի փարթամ, ավելի խիտ:

Տան գերաններին եղեգնյա խսիր փռելը մաքրություն էր բերում տանը՝ միջատներ, կրծողներ, օձեր չէին կարող շրջել դրանց վրայից և ապա եղեգները համարյա չէր փտում, բնակարանին տալիս էր երկարակեցություն և գեղեցկություն: Որպեսզի տանիքը չկաթի, այն կավահողի և հարդի խառնուրդի հաստ շերտով սվաղում էին, տանիքին տալիս թեքություն և տեղադրում ջրհորդաններ: Ջրհորդանները պատրաստում էին տախտակներից, երկու 50-70 սմ լայնակ տախտակներ մեխում էին իրար անկյունաձև, ապա մի ծայրին 10-20 սմ եռանկյունաձև տախտակ ամրացնում և, մյուս ծայրը դնելով պատին, սվաղում էին կավով այնպես, որ անձրևաջրերը հավաքվեն և դրանցով դուրս թափվեն: Ձյան տեղումների ժամանակ տան տղամարդկանցից մեկը, երկուսը առավոտյան վաղ, մինչև օրվա տաքանալը բարձրանում էին տանիք, ձյունը քերում թիակներով, թափում պատի տակ (ոչ բակի մասում), որպեսզի հալվելիս տունը չկաթի: Ամռանը տանիքին քնողները վաղ էին արթնանում, հավաքում անկողինը կտորի մի մասում, ծածկում փալասով և վրան ծանր գերան, մետաղ դնում՝ քամուց անկողինը պաշտպանելու համար:

Իգդիրը նաև արհեստների քաղաք է: Այստեղ լայն տարածում ունեին տնայնագործությունը. արհեստագործությունը: Իգդիրի արհեստավորների համբավը պակաս հռչակ չուներ, քան Գյումրի-Ալեքսանդրապոլինը: Կային ոսկյա ձեռքերով ոսկերիչներ, հաստաբազուկ և հաղթանդամ դարբիններ, իրենց «դուքան»-արհեստանոցների պատերի տակ կքած թամբագործներ, օրնիբուն մկրատով և փոքրիկ մուրճով թիթեղներին զարկելով յուրահատուկ երաժշտություն առաջացնող թիթեղագործներ, կավի հետ խաղ անող, կավից «մարդ» պատրաստող հռչակավոր բրուտներ: Բրուտ Համբարձումի պատրաստած կուժն ու կուլան, մեծ ու փոքր կճուճները, խնոցիները, նաև քրեղան-քասա-ափսեները Սուրմալուից, Իգդիրից շատ ու շատ հեռուներն

էին գնում: Այդ ո՞ր սուրմալեցին հաշտում կամ արհեստանոցում չուներ ուստա Համբարձումի պատրաստած կուժն ու կուլան, որոնք մշտապես լցված էին ջրով և որոնց մեջ ջուրը կարծես նոր համ էր ստանում և անգամ սառում Սուրմալուի օգոստոսյան տապ օրերին: Իգդիրցի տնայնագործները գործում էին ընտիր կարպետներ, գորգեր, ջեջիմներ, փալասներ: Այստեղ գործում էին կարպետի ընտիր տեսակը, որին անվանում էին ՅԱՄԱՆԻ: Բնականաբար արտադրանքի իրացման համար իգդիրցիները լավ առևտրականներ էին, կարողանում էին շրջանի արտադրած գյուղատնտեսական հումքը՝ բամբակ, ծխախոտ, խաղող (գինի), թարմ և չորացրած մրգեր, կենդանի անասուններ, ոչխարներ, մսեղիք, նաև ոչխարի բուրդ, անասունների կիսամշակած կաշի վաճառքի հանել Իգդիրից, Սուրմալուի տարածքից շատ ու շատ հեռուներ՝ Երևան, Թիֆլիս, Հյուսիսային Կովկաս, նաև Արևմտյան Հայաստանի քաղաքներն ու բնակավայրերը:

Իգդիրցիները զբաղվում էին նաև անասնապահությամբ: Ունենալով մեծ բակով տներ, նրանք անասնագոմերը կառուցում էին բակի մի առանձին անկյունում, կամ տան պատին կից: Համարյա բոլոր ընտանիքներում, մանավանդ քաղաքի ծայրամասային՝ խնամում էին կովեր, գոմեշներ, ոչխարներ: Սրանք տարվա մեծ մասն անց էին կացնում արտավայրերում: Ամառն ամիսներին կենդանիներին, ոչխարի հոտերը տեղափոխում էին լեռնային արոտավայրեր, որտեղ նրանք մնում էին ավելի քան 6-7 ամիս: Ընտանիքի մեծահասակ կանայք՝ տատիկ-մամիկները, նաև երիտասարդ հարս ու աղջիկները հերթով լինում էին յայլաղ-օթաներում, պատրաստում անուշահամ մածուն, կարագ, յուղ հալում, սխտորակով, ուրցով և այլ համեմունքներով համեմված ոչխարի յուղալի և դուրալի պանիր մերում: Անասնապահական մթերքները վերամշակում՝ կարագն աղ դնում, ապա հալում, դարձնում էին սառուռ յուղ, լցնում «չինի» ՝ ջնարակ կավե կճուճների մեջ, բերանները ծածկում տավարի ստամոքսի բարակ կաշվով, ապա թերով ամուր կապում: Պանիրը մերում էին իրենց իսկ պատրաստած մերան-մակարդով: Դրա համար օգտագործում էին հորթի ստամոքսի հազարերիքիկը-շրդանը, որը հարուստ էր ֆերմենտներով, լվանում, դնում էին կճուճի մեջ, վրան ավելացնում գոլ ջուր, ընտրած չամիչ, ցորենահատիկներ, նոխուդ, շաբաթավազ, և որոշ ժամանակ անց (10-15 օր) պանրի մերան-մակարդը պատրաստ էր լինում: Կճուճի բերանը փակում էին հորթի, տավարի ստամոքսի նույնանման բարակ թաղանթով: Կաթը, առանձնապես ոչխարի, տաքացնում էին մեծ կաթսաներում, օջախին դրած, ապա լցնում այլ կաթսայի մեջ, համապատասխան քանակի հեղուկ մակարդ ավելացնում ու շորով ծածկում: Մի քանի ժամ անց մակարդված կաթը լցնում էին հատուկ տոպրակների՝ պանրի տոպրակի մեջ, որից առատորեն թափվում էր սիճուկը, դնում հաստ ու

ողորկ փայտին, սալաթային, վրան ծանրոց դնում: Այս եղանակով սիճուկազերծ զանգվածը հանում էին տոպրակից (տոպրակը շրջում էին), մասնատում ցանկացած չափերի, վրան առատ աղ ցանում, մի քանի օր դնում կաթսայի մեջ, իրար վրա կուտակած բաղնում «աղն ուտի», ապա դնում մեծ կճուճների մեջ, վրան հատուկ խտությամբ աղաջուր լցնում: Տան համար անմիջապես օգտագործելու որոշ քանակի պանրակտորներ աղ չէին դնում: Այսպիսի պանիրը հաճելի է ուտել, սակայն այն երկար հնարավոր չէ պահել, քանզի արագ փչանում, որսկացրկվում է: Ինչպես Սուրմալուի մնացած բնակավայրերում, այնպես էլ Իգդիրում, ոչխարի պանիրը համարյա թե լրիվ պատրաստվում էր լեռնային արոտավայրերում: Ոչխարների ծնիլ հետո, կարճ ժամանակ չանցած, հոտը բարձրանում է լեռնալանջերի ամառային արոտավայրեր, որտեղ և պատրաստվում է պանիրը: Այդտեղ էր կատարվում նաև գարնանային խուզը, որը հիմնականում կատարում էին հովիվները: Սրանք հաճախ մեն-մենակ ոչխարին գետնում էին մաքուր տարածքին և առանց ուրիշի օգնության, ամուր թիթեղից պատրաստված հասարակ հարմարանք-մկրատով խուզում: Վարպետ խուզողն այնպես էր մաքուր խուզում, որ ոչխարի մաշկի վրա ոչ մի հատիկ բուրդ չէր մնում, միևնույն ժամանակ նա չէր վնասում ոչխարին: Տարեց և երիտասարդ կանայք, աղջիկները հավաքում էին բուրդը և բարենպաստ եղանակին, գոլալ ջրում լվանում, արևի տակ չորացնում ու լցնում բարդանների մեջ: Սուրմալեցիները լավ գիտեին ոչխարի բրդի արժեքը և ամեն կերպ աշխատում էին այն լինի բարձր որակի: Ամառային արոտի շրջանում հովիվները ոչխարի հոտը մի քանի անգամ անց էին կացնում հոսող մաքուր գետակների միջով, լվանում բուրդը, առանձնապես դմակի կողքերին եղած կեղտերը: Հայտնի էին ոչխարների բուրդն արժեզրկող դաշտերում շատ տարածված փշարախոտն ու ուղտափուշը: Սրանք մտնում էին բրդի մեջ, փաթաթվում ու խորանում և, բացի կենդանուն անհանգստացնելուց, զգալի քանակությամբ բուրդ էին կլանում, որի մշակումը համարյա անհնար էր լինում: Տեղի էր ունենում բրդի զգալի կորուստ: Ուստի հովիվները հաճախ հենց ծաղկման շրջանում այնտեղ էին անում այդ խոտերը և դրանով պակասեցնում բրդի կորուստն ու որակազրկումը:

Անասնապահությամբ զբաղվող իգդիրցին հոգ էր տանում կենդանիներին ձմռան, մսուրային շրջանում անհրաժեշտ և որակյալ կերերով ապահովելու համար: Սրանք լավ գիտեին, թե որքան խոտ, դարման է անհրաժեշտ այս կամ այն կենդանուն ձմռան ընթացքում: Յանովի խոտհարքերից հնձած բուրավետ ու նոր ծաղկել սկսած առվույտն ու կորնգանը պահվում էին հղի անասունների և կթունների համար, իսկ մնացածներին կերակրում էին դաշտերից հավաքած մոլախոտերով, հարդով և այլ կերերով: Այծերին

հիմնականում տալիս էին մսուրքի մեջ մնացած չոր ու կուշտ խոտի մնացուկները, ծառերի տերևներ և այլն: Ցանովի կերաբույսերը մտցնում էին երկրագործության ցանքաշրջանառության մեջ: Արդեն «ուժասպառ» հողատարածքները վարում և առվույտ էին ցանում: Երկու-երեք տարի առվույտի լավ բերք ստանալուց հետո, այդ տարածքը տրամաղրում էին բամբակենու, հացահատիկի մշակման համար: Որպես կարգ՝ Սուրմալուի բնակլիմայական պայմաններում ռուգելի դաշտերից ստանում էին առվույտի բարձր բերք, այն հնձում էին տարեկան 5-6 անգամ: Մեկ հա տարածքից ստացվում էր ավելի քան 20 տոննա սենդարար և վիտամիններով հարուստ խոտաթություն: Առվույտի ցողունի երկարությունն այստեղ անցնում էր մեկ մետրից, իսկ արմատները գետնի տակ խորանում էին մի քանի մետր: Բերքատու էր նաև կորնգանը: Սուրմալուում այս հիանալի կերաբույսի ցանքը կատարում էին վաղ գարնանը, յուրաքանչյուր հեկտարում ցանելով 12-13 կգ սերմ: Առվույտի ցանք էին կատարում նաև գարու հետ: Այս դեպքում գարին հնձելիս հնձվում էր նաև մատղաշ առվույտը, կալսելիս ստացվում էր ավելի սենդարար դարման՝ առվույտի մատղաշ ցողուններով ու տերևներով: Առվույտի դաշտերը ծաղկման շրջանում հանդիսանում էին նաև մեղունների համար կերի առատ աղբյուր: Երկրագործությամբ, անասնապահությամբ, տնայնագործությամբ ու առևտրով զբաղվող իգդիրցիները բարեխղճորեն կատարում էին նաև իրենց հոգևոր սենդի՝ քրիստոնեական հավատքի ամենօրյա լիցքավորումը: Քաղաքում գործում էր չորս եկեղեցի, որոնցից մեկը՝ ռուսական ուղղափառ դավանանքին պատկանող: Չնայած դրան, ռուս մարդկանց որոշ մասը հաճախում էր նաև հայկական եկեղեցի: Հայ առաքելական եկեղեցիների զանգերը աստվածապաշտ քրիստոնյա իգդիրցիներին առավոտ վաղ, նաև երեկոյան հիշեցնում էին իրենց պարտականությունները աստծու և աշխարհի առջև: Շատերն շտապում էին սրբավայր՝ մոմ վառելու, իրենց ամենօրյա աղոթքն առ աստված հղելու: Աղոթում էին ոչ միայն իրենց ապահովության և մերձավորների առողջության համար, այլև խաղաղության և թուրքից անվտանգ մնալու համար: Իգդիրի եկեղեցիների զանգերի դողանջները տարածվում էին շրջակա բնակավայրերի վրա, լսվում շատ հեռուներում: Քաղաքում կանգնեցված էր նաև 1877-78 թթ. թուրքերի դեմ տարած հաղթանակի պատվին հուշակոթող: Այդ կոթողներում ռուսական զորքերին և հայ կամավորականներին գլխավորում էր ցարական բանակի տաղանդավոր զորավար, հայերի պարծանք գեներալ Տեր-Ղուկասովը, որն օգնության հասավ և փրկեց թուրքերի կողմից շրջապատված, տվի ճիրաններում տառապող Բայազեդի ռուսական կայազորին: Եկեղեցիների հարևանությամբ հաճախ գերեզմանոց էր լինում, գալիս էին հանգուցյալների հարազատները, աղոթում, խունկ ծխում, մոմեր վառում, հոգու արքայություն ցանկանում, շիրիմները մաքրում, շրջապատը ավլում: Իգդիրը քաղաքի հնագույն պատմության վկայագիրն էր նաև քաղաքից ոչ հեռու գտնված սեպագիր արձանագրությունը՝ փորագրված դեռևս ուրարտական ժամանակներում:

Ինչպես Սուրմալուի շատ բնակավայրեր, Իգդիրը նույնպես ուներ իր ջրաղացները: Այստեղ հատիկն աղալու էին բերում ոչ միայն Իգդիրի, Իգդիր Մավայի, այլ նաև շրջակա բնակավայրերից: Քաղաքն ուներ նաև բրնձահատիկ ստանալու, նրա կեղևը հանելու ջրաղացանման հարմարանք՝ դինգ: Բրնձահատիկը՝ չալթուկը (կեղևով հատիկը, սերմը) լցնում էին կլոր, բարձր պատերով հարթ քարին, իսկ սրա առանցքից պտտվող (ջրի օգնությամբ) սոնուն ամրացված էր խաչաձև կլոր քար, որը պտտվելով չալթուկի վրա, բրինձը կեղևահանում էր: Ապա այդ բոլորը հանում էին դուրս, դինգի բակ և թույլ քամու օգնությամբ հատիկներն անջատում թափիչ՝ չալթուկի կեղևից: Բրնձի, նաև գարու ծղոտը կենդանիներն ավելի հաճույքով էին ուտում, քան ցորենի դարմանը, քանի որ դարմանն ավելի կոշտ էր և ոչ այնքան սենդարար: Իգդիրը տարածաշրջանի բնակավայրերից առանձնանում էր նաև նրանով, որ այս շեն ու բարեկարգ, արհեստներով, առևտրական եռուզեռով քաղաք էին գալիս հեռավոր ու մոտակա տարածքների բնակիչներ՝ արհեստավորներ, առևտրականներ, կրթության ու մշակույթի նշանավոր գործիչներ՝ իրենց կայիքները հոգալու, առևտրով զբաղվելու, կրթության, մշակույթի հարցերում քաղաքարտնակներին օգնելու, ներկայացումներ տալու: Այստեղ էին լինում նաև ռուսական բանակի բարձրաստիճան զինվորականներ՝ ռազմական զանազան գործերով, ստուգումներով և այլն: Իգդիրը Արևմտյան Հայաստան գնալու հարմար իջևանատուն էր: Այստեղով էին Երևան գնում ուղտերի քարավանները, բեռնամրարձ սայլերի շարասները:

Իգդիրն ուներ իր քաղաքային բաղնիքը, որին կնախանձեին շատ խոշոր քաղաքներ: Քաղաքում, բացի հայերից, բնակություն էին հաստատել նաև պարսիկներ, քրդեր, եզդիներ: Եզդիները, պարսիկները ու հայերը մշտապես բարիդրացիական հարաբերությունների մեջ էին, օգնության ձեռք էին մեկնում իրար: Հայ որմնադիրները ու ատաղձագործները կառուցում էին անհրաժեշտ բնակարաններ, օժանդակ կառույցներ, տալիս ընտիր գորգեր, խուրջիններ ու գուլպաներ, նաև բանջարաբոստանային կուլտուրաների բերք, խաղող, գինի, հացահատիկ, բրինձ, նաև թութուն: Եզդիները փոխադարձաբար հայերի անասուններն ու ոչխարները իրենց անասունների, ոչխարների հետ տանում էին ամառային յայլաղներ, այստեղ դրանցից մածուն, պանիր, յուղ պատրաստում, խուզում ոչխարները և բուրդն ու կարի վերամշակումից ստացած մթերքները բերում, հասցնում տերերին: Սրանք



Ջահանգիր աղա

լավ գիտեին, որ սուլմալեցին, իգդիրցին բարի է և երբեք պարտքի տակ չի մնա: Դժբախտությունն այն էր, որ այստեղով անցած բռնագավթիչներից կարակյունլիները ու ակկոյունլիները, նաև սրանց նախորդներից ոմանք, հաստատել տարածքում, Իգդիրում և, բազմանալով, չարիք էին դարձել հայ բնիկների համար:

Իգդիրի, Սուլմալուի եզդիները հաճախ էլ իրենց անասունները ու ոչխարները բերելով քաղաք, տալիս էին հայ առևտրականներին կամ մտագործներին՝ դրանք վաճառելու համար և այլն:

Քաղաք բերած անասունները, ոչխարները ու բուրդը, յուղն ու պանիրը լրիվ չվաճառած՝ սրանք գիշերում էին բարեկամ հայերի մոտ, հյուրընկալվում մինչև առուծախն ավարտելը: Տարեցների մտերմությունը փոխանցվում էր երիտասարդներին, սիրով օգնում էին իրար: Սակայն, դրան հակառակ, այլ էին թուրք-թաթարների մնացուկները: Որքան էլ հայ մարդը նրանց հանդեպ լիներ բարի ու մարդասեր, միևնույն է, հարմար պահին (հավանաբար թուրքական պետական գաղտնի քարոզչության հետևանքով) նրանք մասնակցում էին հայերի նկատմամբ կատարվող բռնություններին: Հայ-եզդիական անկաշառ բարեկամության փայլուն օրինակներ են տվել եզդի ժողովրդի արժանավոր զավակներ Ջահանգիր աղան և Ուսուբ բեգը: Այդ տարիներին Սուլմալուում, Իգդիրում, նաև հայրենի Ասլանլու գյուղում էր անցկացնում ձմռան ամիսները եզդիների հայտնի ղեկավար Ուսուբ բեգ Թեմուրյանցը: Այստեղ երկար ժամանակով մնում էր նաև հայերին լավ հայտնի և շատ հարգված Ջահանգիր աղան: Իգդիրում սրանց հայտնվելը երիտասարդությանը ձգում էր նրանց հետ հանդիպման:

Ջահանգիր աղան ծնունդով Վանի նահանգի Բերկրի գավառի Չիբուխ-

չի գյուղից էր: Ծնվել է 1874 թ. եզդի մեծահարուստ ցեղապետ Խաբիվ աղայի ընտանիքում: Հայրը դրդում պատգամել էր՝ «Բարեկամացիր հայերի հետ, զենքով պաշտպանիր ժողովրդին»: 1904 թ. Ջահանգիր աղան հանդիպում է զորավար Անդրանիկին: Զորավարը սիրում է եզդի ժողովրդի ազնիվ և քաջ զավակին, և այդ օրվանից նրանց ծանոթությունը վերածվում է խորական բարեկամության: Անդրանիկը սիրով դառնում է Ջահանգիր աղայի հարազատի քավորը: Ապա սկսվում է համատեղ պայքարը թուրք բռնակալների հանդեպ: Առանձին դրվագներում Ջահանգիր աղան է իր ջոկատով օգնության գնում հայ ֆիդայիներին, բռնագաղթվող հայերին, մյուս դեպքում էլ զորավարն է օգնում եզդի ժողովրդին, Ջահանգիր աղային՝ պատերազմական բարդ իրավիճակներում: Ջահանգիր աղայի եղբայրը ծառայում էր ռուսական բանակում և թուրքերի դեմ կռիվներում քաջություն է ցուցաբերել: Ջահանգիր աղան սատար է կանգնում Վան-վասպուրականցիների, նաև սուլմալեցիների գաղթին, թույլ չտալով թուրքերին՝ կազմակերպել անզեն բնակչության կոտորածներ: Անդրանիկը եղել է նաև Ջահանգիր աղայի հետ Սուլմալուի Ասլանլու գյուղում, Ուսուբ բեգին հյուր: Ժամանակակիցները պատմում են, որ այս երկու ժողովուրդների ազնիվ զավակները շատ մտահոգված են եղել հայ և եզդի ժողովուրդների ճակատագրով և այդ հյուրընկալման օրերին հիմնականում մշակել են թշնամուն հակահարված տալու հնարքներ ու ձևեր: Ջահանգիր աղան, թուրքերի դեմ բազում կռիվներում քաջություն և հերոսություն ցուցաբերելու համար, պարգևատրվել է ռուսական բարձրաստիճան Գեորգիևյան խաչ շքանշանով: Դեռ 1918 թ. Իգդիրի բնակչությանն անվնաս հասցնում է Մարգարայի (Ղարադարայի) կամրջով Արաքսի ձախ ափ: Հետագայում մասնակցում է Սարդարապատի կռիվներին ու նվաճում հայ ժողովրդի անկեղծ սերն ու համակրանքը, վաստակում «հայ ժողովրդի անկեղծ դաշնակցի» անունը: Յավոք, 1938 թ. եզդի ժողովրդի ազգային հերոսը, հայ ժողովրդի ազնիվ բարեկամը ձերբակալվում և աքսորվում է: Ստալինյան բռնություններին զոհ գնացած Ջահանգիր աղայի պայծառ անունը նորից հնչեց 1959 թ. օգոստոսի 1-ին: Ջահանգիր աղան արդարացվեց:

Եզդիների բարեկամության վերաբերյալ հայ պատմաբանը գրում է՝ «Եզդիները ընտելագույնն են հայոց»:

Ժամանակին եզդի այս նշանավոր մարդկանց՝ Ուսուբ բեգի, Ջահանգիր աղայի երևալը Սուլմալուում, Իգդիրում, երկար ամիսներ այստեղ նրանց մնալը, հայերի հետ ակտիվ շփումները սանձում էր թուրք խուժանի՝ հայերի հանդեպ ոտնձգություններ ու բռնություններ կատարելու ախորժակը:

Ջահանգիր աղան ու Ուսուբ բեգն օժտված էին մարդկային բոլոր դրական հատկանիշներով, լավ զրուցակիցներ էին, հայրենասերներ և իրենց

շունչն էին փոխանցում հայ և եզդի երիտասարդներին, ամրապնդում երկու ժողովուրդների բարեկամության հիմքերը: Եզդի ժողովրդի այս մեծ զավակները ցավով էին տանում հայ ժողովրդի բազում տառապանքները, վիրավորվում անարդարությունների և բռնությունների համար: Այն հանգամանքը, որ իրենց արյունակից, բայց ոչ դավանակից քրդերը (եզդիները բուրդ ժողովրդի մի ճյուղն են, որը մուսուլմանություն չի ընդունել) հայերի բնաջնջման գործում անխոհեմաբար ծառայում էին թուրքական իշխանություններին, եզդիները խիստ ամոթով էին տանում:

Եզդիները Սուրմալուում հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ: Սրանք, համագործակցելով հայերի հետ, խնամում էին նաև շատերի անասունները (իրենց անասնահոտերում, նախիրներում), փոխարեն հայերը, աշնանը կամ տարվա ընթացքում, նրանց տալիս էին բանջարեղեն, խաղող, մրգեր, նաև հացահատիկ: Հայ-եզդիական այս համագործակցությունը ձեռնտու էր երկուստեք: Եզդիները համարյա թե երկրագործությամբ չէին զբաղվում: Իգդիրի շրջակա բերրի դաշտերում բաղաքարնակներից համարյա բոլորն էլ ունեին իրենց մեծ ու փոքր հողակտորները: Ցանում և մշակում էին հիմնականում հացահատիկ (մեծամասնությամբ ցորեն), բանջարա-բոստանային կուլտուրաներ (ձմերուկ, վարունգ, սեխ, Սուրմալուի հանրահայտ դրթման), որոշ մարդիկ ունեին խաղողի այգի ու պտղատու ծառեր: Մշակում էին նաև յուղատու բույսեր, ինչպես գերչակ, կանեփ, բամբջուք, կտավիատ և այլն: Իգդիրում կառուցվել և գործում էր բամբակագին գործարան: Ինչպես իգդիրցիները, այնպես էլ համարյա ողջ Սուրմալուի բամբակագործ գյուղացիները այստեղ էին հանձնում բամբակի բերքը: Վերամշակումից առանձնացված հունդը (բամբակենու սերմերը) ըստ պայմանավորվածության կարող էին վերադարձնել գյուղացուն, տիրոջը: Գործում էր նաև ձիթհանք, որտեղ ինչպես բամբակենու հունդի, այնպես էլ յուղատու այլ բույսերի սերմերից ստանում էին բուսական յուղ՝ ձեթ: Սուրմալեցիները, ինչպես նաև իգդիրցիները, ըստ սովորության բուսական յուղերը շատ էին օգտագործում: Առանձնապես հարգի էին կտավիատի, գերչակի յուղերը:

Գավառում արտադրվում էր հացահատիկի ավելի շատ բերք, քան կարող էր Սուրմալուի բնակչությունն օգտագործել, ուստի հաճախ Իգդիր էին գալիս ցորեն, գարի գնողները: Սովորաբար գալիս էին սայլերով, մի քանի օր մնում, ընտրում ցանկացած ցորենը, գարին և ապա սայլերին բարձած՝ շարժվում դեպի Մարգարայի կամուրջ, կամ խճուղով՝ դեպի Հայկական պար լեռնաշղթա...:

Սուրմալեցիները աճեցնում էին ցորենի ընտիր, կարմրահատ տեսակը, որը թեև չուներ այլոց սպիտակությունը, բայց շատ համով ու բուրավետ հաց էր տալիս:

Ցարական իշխանությունների որոշմամբ Իգդիրի տարածքում կազմակերպվել էր նաև կենդանիների ստուգման կետ՝ կարանտին:

Այստեղով անցնող բոլոր ապրանքները ու մթերքները, նաև կենդանի անասունները ու ոչխարները, ենթարկվում էին ստուգման, հաշվառման: Այս մաքսատունը գոյություն ունեցավ մինչև Հայաստանի Հանրապետության հռչակումը, իսկ 1918 թ. վերացվեց, քանզի Իգդիրը դարձավ ոչ սահմանային քաղաք, իսկ երթևեկությունն ու ապրանքների տեղաշարժը դարձան երկրի ներքին գործը առանց տուրքի ու հարկի:

Իգդիրը, բացի սովորական դպրոցներից, կրթական համակարգում ուներ նաև ուսումնամանածագործական արհեստանոց, ուսումնարան: Սրա աշխատանքների, ուսման դասընթացների վերաբերյալ պարբերաբար Երևան հաշվետվություն-տեղեկանքներ էին ուղարկվում: Այստեղ երիտասարդ աղջիկները յուրացնում էին մանածագործի արհեստը, հետո աշխատում քաղաքի մանածագործական ձեռնարկություններում, նաև զբաղվում տնայնագործությամբ: Իսկ տարածքի հատուկ կարևոր նշանակություն ունեին մանածագործությունն ու ջուլհակությունը: Հետաքրքիր է այն փաստը, որ երբ թուրքական ոճրագործները Արևմտահայաստանում բնաջնջեցին միլիոնավոր հայերի, սրանց թվում՝ աշխարհի լավագույն արհեստավորներից շատերին և երկրում չէին թողել անգամ մեկ պայտագործ, որ այդ բարենիների ձիերը պայտեր, կառավարությունն ստիպված եղավ պայտագործական ուսումնարան բացել: Ահա այդ թուրք առաջին արհեստավոր-պայտագործների դասընթացները վերջացնելու առթիվ սրանց մոտ ժամանեց ոչ այլ ոք, քան ինքը՝ հայակուլ Քեմալը՝ Օսմանյան պետության դեկավարը, և իր հուզումնալից ճառում արտահայտեց այն միտքը, որ Թուրքիան այլևս հետ կբարգավաճի, քանզի ունեցավ իր թեկուզև առայժմ քիչ թուրք արհեստավորները:

Իգդիրում և նրա սահմաններից շատ ու շատ հեռու լավ համբավ ուներ իգդիրցի ձեռներեց Տեր-Վլասի լիմոնադը: Այս գեղեցատեսակը, դեռևս պապերից սկսած, աստիճանաբար որոշ միջոցներ կուտակելով, Տեր-Վլասին ուղարկում է Հյուսիսային Կովկաս, որտեղ նա յուրացնում է գովազդային թռուցիկներ պատրաստելու գործի գաղտնիքները: Վլասը վերադառնալով Իգդիր, քաղաքի մի անկյունում կառուցում է գործարան: Որպես հիմնական հումք, Տեր-Վլասն օգտագործում էր լեռնալանջերից բերված աղբյուրը, իսկ որպես համեմունք՝ բնական հյութեր, համեմունքներ: Այդ էր պատճառը, որ Վլասի արտադրած լիմոնադը, իր գեղեցիկ պիտակներով ու հաճելի գույներով, համ ու բուրմունքով առաջնային էր եղածների մոտ: «Որակն ինքը կգտնի սպառողին»,-հաճախ կրկնում էր գործարանատերը պաշտոնական հանդիպումներում և արտադրության մեջ աշխատողների մոտ: Վլասի ար-

տաղանգի դրակի մասին է, խոսում նաև այն, որ Երևան քաղաքում կազմակերպվող մեծ հանդիսությունների ժամանակ և հյուրեր ունենալիս մշտապես Վլասի լիմոնադն էին օգտագործում: Վլասի լիմոնադը հասցվում էր նաև Երևանից շատ հեռու քաղաքներ ու խոշոր բնակավայրեր: Իգդիրցիները հպարտանում էին իրենց գործարանով, քանզի նրա արտադրությունը պայմանավորված էր նաև Իգդիրի սառնորակ ու զուլալ ջրով, տեղական մրգերի քաղցր հյութով, իգդիրցի երիտասարդ աղջիկների ու տղաների աշխատանքով: Իգդիրի լիմոնադի գործարանը հայտնի էր ոչ միայն բնտիր լիմոնադի արտադրությամբ, այլև իր շչակով: Ողջ տարածքը գիտեր այդ գործարանի շչակի մասին: Իգդիրի գործարանի շչակը միակն էր տարածքում, իսկ նրա ձայնն ուժեղ էր, հուժկու: Լիմոնադի գործարանի շչակը, ամեն օր միևնույն ժամին, տալիս էր, տալիս դրպես ազդանշան, զգուշացնում, հրավերք և հրաման՝ աշխատողներին գործարան մեկնելու: Շչակը բավականին երկար ու զիլ էր տալիս, արթնացնում ոչ միայն գործարան շտապողներին, այլ նաև նրանց, ովքեր ուշացել էին առօրյա գործերից: Շչակով հատկապես կարգավորվում էր քաղաքաբնակների, նաև շրջակա բնակիչների աշխատանքային առօրյան: Շատերը, ովքեր տանն ու մոտերը ժամացույց ունեին, սրանով էին ճշտում իրենց ժամացույցների աշխատանքը: Իգդիրցիները այդ շչակը կոչում էին պարզունակ ձևով՝ «Վլասի շչակ»: Սակայն ասում էին՝ «Վլասը ճվակ» (Վլասը գոռաց): «Վլասի ճվոցով «ոչ միայն Վլասի աշխատողներն էին գործի շտապում, այլ նաև գյուղացիները, հոտաղները, անգամ ճմռան շրջանում անասուններին կերակրում էին նրանով՝ ճշտելով ժամանակը:

Մի խոսքով, եթե ոչ բոլորն էին օգտվում Վլասի անուշահամ ըմպելիքից, ապա դա չի կարելի ասել Վլասի շչակի վերաբերյալ: Սրանից օգտվում էին բոլոր իգդիրցիները ու տարածաշրջանի բնակչությունը, օգտվում, այն էլ առանց վարձի:

Իգդիրում գործում էր նաև ժամանակի մեծահարուստ, Սուրմալուում և շատ հեռուներում համբավ ու ճանաչում ունեցող Ավագովների ալյուրաղացը: Քանի որ Իգդիրի տարածքը հարթ էր և ամեն տեղ չէ, որ հարմար գետակ կամ խաղող ջրատար կար, ուստի Ավագովները արտասահմանում ձեռք էին բերել մի հսկա դիզելային շարժիչ, դրա համար պատրաստել առանձին սրահ, տեղադրել բետոնապատ հիմքին և փոկերով աշխատեցնում, շարժում էին հսկա աղացքարը: Այս ալյուրաղացը, համեմատած ջրաղացների հետ, ավելի վստահելի էր, նրա աշխատանքը կապված չէր բնական շատ երևույթների հետ: Օրինակ, եթե ջրաղացը կարող էր խափանվել ջրի բացակայության, պակասի կամ ճմռանը ջրատարի սառչելու հետևանքով, ապա Ավագովների ալյուրաղացը նման պատճառներ չուներ: Իր առավելության

շնորհիվ, ճմռան թե ամառ, տալիս բոլոր եղանակներին, աղացն աշխատում էր և մշտապես հերթեր էին լինում: Թեև աղացը ջրի օգնությամբ չէր աշխատում, բայց սուրմալեցիներին դա չէր խանգարում այն անվանել «ջրաղաց»: Սկզբում տերերը փորձեցին ժողովրդին ճիշտ անվանումը սովորեցնել, բայց հետո հարմարվեցին և այլևս ուշադրություն չէին դարձնում, չէին ուղղում զրուցակցին՝ ասելու «աղաց» և ոչ թե «ջրաղաց»:

Ավագովները իրենց աղացը կառուցել էին կարծես քաղաքակիրթ աշխարհի սկզբունքներով՝ հանգստի սենյակով, հատիկի պահեստավորման, ստացած ալյուրը պարկերի մեջ լցնելու, մայրուղուց թեյի և ճաշի հարմարանքով ու սպասքով, նաև կենցաղային կեղտաջրման ու խնամքի բնդարձակ ծածկով: Այստեղ հերթի սպասողները կարող էին հանգստանալ, թեկ թախտին գցած փալասին, օգտվել բարձից, ծածկոցից: Փայտյա երկար սեղանին մշտապես լինում էր ինքնաեռը՝ տաք թեյով, երբեմն էլ բնտիր չիր ու չամիչ, փշատ, որով խմում էին թեյը:Նման չոր մրգերը (նաև խաղող, տանձ, խնձոր, պտանց չորացրածը) իրենց հետ բերում էին գյուղացիները և, դրպես կանոն, դնում սեղանին՝ բոլորի համար: Մշտապես զվարճասեր սուրմալեցիները Ավագովների այս ալյուրաղացը կոչում էին «Թրմի-թրմի ճաղաց», որով և տարբերում էին հարևան ջրաղացներից, որոնք հաճախ կոչվում էին ամիրոջ, բնակավայրի, վայրի կամ էլ ստեղծող առվի անուններով: Ավագովների աղացին «Թրմի-թրմի» էին անվանում, քանի որ թավանիվը պատրաստվում, փոկերի միացման՝ բարակ և ամուր կաշվե սիրիմով (թելով) իրար կարած փոկի ծայրերը հասնում էին թավանիվին և առանձին, յուրահատուկ «բմբոց» էին առաջացնում, և քանի որ փոկի այդ մասը միևնույն հաճախականությամբ էր հասնում թավանիվին, ապա ձայնն էլ միևնույն հաճախականությամբ էր լսվում:

Իգդիրում գոյություն ուներ նաև բամբակազտիչ գործարան: Այստեղ վերամշակվում էր Սուրմալուի դաշտերում աճեցրած նրբաթել (երկարաթել) բամբակի առատ բերքը: Սա հնարավորություն էր տալիս գյուղացիներին՝ բամբակի հումքն ավելի ցածր գներով մթերողներին չհանձնել: Ըստ ցանկության գործարանը գյուղացուն վերադարձնում էր հանձնած հումքի՝ բամբակի սերմերը, նաև ձեթը:

Գործարանում վերամշակված բամբակի հումքը հակավորվում և տղարկվում էր արտերկրներ:

Տարածքում միակ մեխանիկական գործարանը Իգդիրում էր: Գործարանը պատրաստում էր գյուղատնտեսական զանազան գործիքներ՝ գութան, արոր, սայլերի անվադողեր, կառքերի մետաղյա մասեր, բահեր, քլունգներ և բնակչության ու եղած արտադրական ձեռնարկությունների անհրաժեշտ պահեստամասեր ու գործիք-հարմարանքներ:

Իգդիրի մեխանիկական գործարանը, նրա բարձրարակ արտադրանքը հայտնի էր Սուրմալուի գավառից հեռու:

Զաղաքն ուներ նաև մեծ ու ընդարձակ դարբնոց: Այստեղի դարբիններին մասին ասում էին՝ ոսկի ձեռքեր ունեն, կարող են երկաթից մարդ սարքել: Վաղ առավոտից դարբնոցում վառում էին բուրանները և քիչ անց սկսվում էր ծանր ու թեթև մուրճերով կռիվը կաս-կարմիր, տարբեր մեծության ու հաստության մետաղի հետ: Ցմեռ թե ամառ վառվում էր դարբնոցի բուրանը, ձմռան ցրտերին անգամ դարբիններն աշխատում էին, որպեսզի գարնան գալու հետ բահն ու քլունգը, թաթուջակն ու մանգաղը, փոցխն ու գերանները պատրաստ լինեին: Դարբնոցներում պատրաստում էին զանազան գործիքներ, վերանորոգում ու սրում թաթուջակները ու սղոցները, մանգաղները ու գերանները: Իգդիրում համբավավոր շատ դարբիններ կային, որոնք զաղթելով նոր բնակավայրեր, դարձյալ զբաղվում էին պապենական այդ արհեստով:

Դարբնոցների հարևանությամբ հաճախ լինում էին ատաղձագործական արհեստանոցները: Երբեմն սայլի, կառքի անիվներ պատրաստելիս սրանք համագործակցում էին դարբիններին: վերջիններս պատրաստում էին մետաղյա շրջանակը, իսկ ատաղձագործը փայտյա մասերը՝ թուին ու ճաղերը: Ատաղձագործ-դուրգարները պատրաստում էին դռներ, լուսամուտներ, սեղաններ ու թախտեր, խմորի մեծ տաշտեր ու հայ թխելու օխլավ, գլտնակ, հայի տախտակ (սեղանիկ՝ գնդերը գլտնակելու, օխլավելու), մանկան օրորոց, տայրեր ու կառքեր, արորի ամբողջ փայտյա մասը, եգների լուծը և այլն: Սրանք, շրջապատի բարդիներից, նաև տնկած անտառից ընտրում և կտրում, չորացնում, ապա սղոցում էին տախտակներ, դուռ-լուսամուտի հաստ ու երկար շրջանակների փայտեր: Դռան հատուկ հարմարանքի վրա բանվորները սղոցում, գերանից տախտակ էին ստանում:

Ոչ միայն Իգդիրում, այլև ամբողջ Սուրմալուում և տարածքում մեծ ճանաչում ուներ ատաղձագործ Զաքարը: Սրա պատրաստած երկաթյա բարձր ու տարողունակ պահարան- «սունդուկները» նախշազարդ էին և առանձնակի գեղեցկություն ունեին: Ամուսնության ժամանակ հարսի հագուստեղենն ու այլ իրերը դրվում էին ուստա Զաքարի պատրաստած սունդուկի մեջ, փոքրիկ կողպեքը կախած տեղափոխում ամուսնու տուն: Ուստա Զաքարը սունդուկի չորս պատերը և կիսակլոր կափարիչը զարդարում էր բարակ թիթեղյա փոքրիկ կտորներով, ապա դրանք ներկում զանազան գույնի ներկերով, բայց այնպես, որ այդ բոլորը լինեն գեղեցիկ ներդաշնակության:

Իգդիրում և ողջ տարածքում համարյա թե բոլոր սունդուկները ուստա Զաքարի պատրաստածներն էին: Ավելին, գաղթի դժվարին ճանապարհին-

բով այդ սունդուկներից շատերը հասան Սալդարապատ, Էջմիածին, Երևան, այլ բնակավայրեր ու երկրներ, շատ երկար ծառայում էին սուրմալեցիներին՝ հիշեցնելով սիրելի հայրենիքը և ուստա Զաքարին: Գեղեցիկ այս նախշազարդումների համար էլ ուստա Զաքարին կոչում էին նաև «Ղեշշեմ Զաքար», քանի որ պատվեր ընդունելիս նա հաճախ, գույն թե տեղին-անտեղի սիրում էր կրկնել «ընենց նիշեմ» բառերը:

Իգդիրն ուներ նաև իր նշանավոր դերձակները ու դերձականոցները: Սրանք կարում էին ժամանակակից հագուստներ, ինչպես մեծահասակների, այնպես էլ երիտասարդների ու երեխաների համար: Ռուսաստանից, արտասահմանից բերում էին զանազան կտորներ, որով կարողանում էին գոհացում տալ բարձր ճաշակ ունեցող սուրմալեցիներին: Կային առանձին վարպետներ, որոնք զբաղվում էին միայն տղամարդու գլխարկ կարելով: Գլխարկ կարողների փոքրիկ կրպակ-արհեստանոցներ կային քաղաքի տարբեր մասերում: Գլխարկները հիմնականում լինում էին առջևի մասում հարթ ու կլոր «կոզիրոկով»: Գլխարկի առջևի մասը բարձր էր, եռանմասնյա: Սուրմալեցիները կրում էին նման գլխարկներ, նրանց խորը էին մուրուց փափախները: Ամռան դաշտավարական աշխատանքների ժամանակ գլխարկներին փոխարինում էր սպիտակ գլխաշորը, որը փաթաթում էին գլխի վրա և կապում ճակատամասում, կամ չորսանկյունները «դգում» տված գլխարկի նման հագցնում գլխին: Սրանք տրեխներ համարյա չէին օգտագործում, հագնում էին կարճավիզ կոշիկներ, «չուստակ» և այլն: Ռուսերեն գլխներին կապում էին սպիտակ կտորից լաչակ, որը լինում էր եռանկյունաձև, և ծայրերը հանգուցում ծոծրակի տակ կամ ճակատին: Սրա վրայից գցում էին բրդից գործված «շալը» նախշազարդ, բավականին մեծ (որդանկյուն), ծոպավոր ու նախշավոր գործվածք, որի ծայրերը գլխին գցում էին ծալված, իսկ եռանկյունու ծայրը մեջքից իջնելով հասնում էր մինչև գոտկատեղի: Շատ հարգի էին Խորասանի, Քիշմիրի շալերը: Շատերն օգտագործում էին իրենց իսկ գործած բրդյա կամ բամբակյա շալերը: Իգդիրի դերձակների կարած հագուստները լինում էին շատ դիմացկուն և հարմար, միևնույն ժամանակ՝ զգալի էժան, քան ներմուծածները: Բնակչության մի մասն էլ իրենց հագուստների որոշ մասը կարում էին իրենք: Իգդիրում կար կարի մեքենաների վաճառքի և նորոգման ընկերություն (արտասահմանյան), որը ոչ միայն կանխիկ վճարով էր վաճառում մեքենաներ, այլև դրանք շատ հարմար ու շահավետ եղանակով ապառիկ էլ էր տալիս: Այդ «Զինգեր» մեքենաները իգդիրցի կանայք հավանել էին և տարեցտարի ավելանում էր մեքենատերերի թիվը: -

Իգդիրում կային նաև թիթեղագործների արհեստանոցներ, վարպետ թիթեղագործներ: Սրանք կարողանում էին պատրաստել վառարաններ, խոդու-

վակներ, ջրհորդաններ: Եթե պատվեր կար, ապա սրանք թիթեղապատում էին նաև իգդիրցիների կամ հարևան բնակավայրերի բնակիչների տան տանիքները: Սրանց պատրաստած ջրհորդաններդը լինում էին նախշապատ ու գեղեցիկ ձևավորված: Բազմաթիվ էին նաև կոշկակարները, որոնք կարողանում էին կատարել արագ և որակով պատվերներ: Հաճախորդը ներս մտնելիս արհեստանոց, բացատրում էր, թե ինչպիսի կոշիկ է ցանկանում: Վարպետն անմիջապես վերցնում էր նրա մերկ կամ գոլպան հագած ոտքի չափը և երկու-երեք օրում կատարում պատվերը: Կարում էին Ռուսաստանից բերված չափազանց հարգի, բարձր որակի կաշվից՝ «խրոմից» ճոքարվոր կոշիկներ, որոնք արժանանում էին Սուրմալուի տարածքում տեղաբաշխված ռուսական բանակի սպաների մեծ հավանությանը: Չափազանց հարգի էր ռուսական ներբան- «պադոշը»: Սա բարձր որակի էր, ամուր, դիմացկուն: Կոշկակար-նորոգողները՝ «փինաչիները», ունեին իրենց շատ փոքրիկ արհեստանոցները: Սրանք մեծ մասամբ պատվերները կատարում էին նաև տանը: Հաճախ պոկված ներբանը կամ պատռված կոշիկը վարպետը նորոգում էր անմիջապես, հաճախորդը նստում էր արհեստանոցում դրված «իշոտնուկ» աթոռին, կոշիկը հանում ոտքից, և վարպետը սիրոջ ներկայությամբ այն նորոգում, կալում, կարկատում և ետ էր հանձնում նրան: Հաճախ կոշիկի վրա այնքան կտորներ էին կարվում, որ նախկինից համարյա բան չէր մնում:

Լինելով բանուկ խճուղու վրա, Իգդիրն ապրում էր առևտրական, արտադրական աշխույժ կյանքով: Այստեղ գործում էին նաև ոսկերչական արհեստանոցներ: Իգդիրի ոսկերիչների պատրաստած զարդեղենները հայտնի էին անգամ Երևանում, շրջակա տարածքներում: Վզնոցներ և մատանիներ, ականջօղեր և զանազան զարդեղեններ գնում էին ոչ միայն իգդիրցին կամ սուրմալեցին՝ հայ թե թուրք, քուրդ թե եզդի, այլև ռուսական բանակի բարձրաստիճան ծառայողներ, շարքային զինվորներ, հաճախ էլ նրանք այդ զարդեղեններն ուղարկում էին Ռուսաստան՝ իրենց հարազատներին: Զինվորները պատվիրում էին նաև ոսկյա (արծաթյա) խաչեր և շղթայով գցում պարանոցներին, ի նշան այն բանի, որ Աստված պահպանի չարքերից և առաջինը՝ թուրք ոստիկի գնդակից:

Իգդիրի, ինչպես նաև Սուրմալուի հայկական բնակավայրերի մեծ ու փոքր խանութներում կարելի էր գտնել արդյունաբերական գրեթե ցանկացած ապրանք: Բացի տեղական վարպետների արտադրած-պատրաստած իրերից ու մթերքներից, կարելի էր գնել ամստերդամյան լիկյորներ, երևանյան կոնյակներ, թիֆլիսյան հագուստեղեն, ռուսական կապտին ստվող գլուխ շաքար, պարսկական, թուրքական, անգլիական և այլ երկրների արտադրանքներ: Իգդիրը կարծես դրանց հավաքատեղին ու ցուցադրավայրն էր:

Որպես գավառային կենտրոն, Իգդիրն ուներ իր քաղաքագլուխը, գլավան, պրիստավը: Քաղաքում գործում էր կապի հանգույցը՝ փոստ-հեռագրատունը: Տարածքի համար նախատեսված փոստը, նամակները ու հեռագրերը այստեղ էին գալիս և ապա ուղարկվում ըստ հասցեների: Այդ տարիներին առանձնապես շատ էին զինվորական փոստային ծառայությունները: Երկրամասում գործում էին քաղաքական տարբեր կուսակցությունների կոմիտեներ: Սրանք բոլորն էլ իրենց ծրագրերում ունեին հայ ժողովրդի և Հայաստան աշխարհի ազատության ու փրկության իրենց ձևերն ու ուղիները: Մի մասը գտնում էր, որ միայն զենքով է հնարավոր ազատագրվել թուրքական բռնակալ լծից, միայն հայ ժողովրդի միասնական ջանքերով, մյուսներդ՝ օտար, բարեկամ պետությունների օգնությամբ կամ միջազգային ուժերի ճնշման ներքո բարենոխումներ կատարելով: Գործում էր նաև ռուսաստանյան ՍԴԿ հայկական կոմիտեի մասնաճյուղը: Ինչ խոսք, ինչպես ամենուր, այստեղ էլ Հայ հեղափոխական դաշնակցությունն կուսակցությունն ուներ ամրակուռ կոմիտե, և բնակիչների մեծ մասի համակրանքը սրանց կողմն էր: Ակտիվ էին նաև հայկական Ռամկավար և Հնչակյան կուսակցությունները: Այստեղ էր, որ հայատյաց գավառապետի, Օլգովի լեռնանցքի կայազորի պետին հայ կոմիտեականները գնդակահարեցին: Գնդակահարեցին հայերի հանդեպ բռնություններ գործադրելու, դավաճանություն գործադրելու համար՝ ի ցույց բոլորի:

Աշխույժ էր նաև Իգդիրում մշակութային կյանքը: Քաղաքում գործում էր թատրոն, որտեղ հաճախ հյուրախաղերով հանդես էին գալիս հայ անվանի, ժողովրդի կողմից անչափ սիրված դերասաններ, ինչպես՝ Սիրանույշը «Համլետով», Մեծն Պետրոս Աղամյանը՝ «Օթելլոյով» և այլոքներ: Սովորաբար նման մեծ դերասանների Իգդիր հյուրախաղերի գալը ոչ միայն Իգդիրի, այլև ողջ սուրմալեցիների համար տոնախմբության էր վերածվում: Ներկայացումները դիտելու համար գալիս էին Սուրմալուի մոտ ու հեռու բնակավայրերից՝ Կողբից, Սուրմալուից, Գալֆալուից և այլն: Այդ ներկայացումներին ներկա էին լինում նաև ռուսական զորամասերի սպաներից շատերը: Լեփ-լեցուն դահլիճը հոտնկայս երկար ժամանակ ծափերով ողջունում էր ներկայացման մասնակիցներին և առանձնապես ճանաչված ու սիրված դերասաններին: Ներկայացումից առաջ և հետո սուրմալեցիները կազմակերպում էին մեծ ընդունելություն, ճաշկերույթ՝ ի պատիվ մշակույթի հայ վարպետների: Իհարկե, ներկայացումներին ներկա էին լինում քաղաքի տերերը՝ գլավան ու պրիստավը, բանկային և ֆինանսական աշխատողներ, մեծահարուստներ: Քաղաքում կար մի քանի դպրոց: Քաղաքային դպրոցի շրջանավարտներին իրավունք էր վերապահված մանկավարժությամբ զբաղվել տարածքի տարրական դպրոցներում: Եվ այդ շրջանավարտները

հայրենասիրական ու մասնագիտական պարտքի մեծ զգացումով էին կատարում այդ առաքելությունը: Հաճախ գյուղի երիտասարդները, մեծերի հորդորանքով ու խրախուսանքով, իրենց ուժերն էին չափում գյուղամիջում մեկի կամ մյուսի գոմաղբի հաստ ու պրդեն ամրացած, փափուկ բաստայի վրա: Սա պրդեն կատարվում էր Թումանյանի նկարագրած երկու «հակառակորդ» խմբերի գոռում-գոչյուններով ու կեցցեներով: Այդ մարտերից հետո հաղթողն ու պարտվողը ծիծաղով ու ժպտալով, արդարացուցիչ ու մեղմացուցիչ հանգամանքներ ու պատճառներ գտնելով, հաշտ ու խաղաղ բաժանվում էին: Ճշմարտությունն այն էր, որ տարմալեցիները քիմոտ ու ոխակալ չէին, և կատարված իրողությունը նրանց մոտ բացասական հետք չէր թողնում, ասել կուզի՝ արագ մոռանում էին և իրենց բարյացակամ վերաբերմունքը բոլորովին չէր փոխվում:

Գարնանը, առանձնապես աշնան տաք ու չոր օրերին, Տարմալու էին գալիս վառ վարմիր ու գունագարդ շորեր հագած լարախաղաց-փահլևանները: Սրանք գյուղի կենտրոնում կամ գյուղի եզրին հարթ տարածության վրա խփում էին իրենց սյուները և ամուր ու բարակ մետաղալարի վրա, զառնայի և դիրի տար ու բարձր նվագի տակ սկսում էին իրենց երգերգելը, ցուցադրելով վարպետության և հնարամտության, ճարպկության բազմաթիվ դրվագներ: Վարպետ փահլևանի խաղի ընթացքում, ծաղրածուի հագուստով, երեսը տարբեր գույներով ներկած, մորթե փափախը գլխին «յալանչի»-ծաղրածուն ծամածռություններ անելով, սրախոսելով, հավաքված շատ թե քիչ ունկնդիր մարդկանց անունները տալով, դրամ էր հավաքում: Դե ո՞ր տարմալեցին թույլ կտար, որ հանդիսատեսների, համագյուղացիների մոտ ծաղրածուին մերժի և չվարձատրի: Ստանալով վարձը, ծաղրածուն բարձրաձայն հայտարարում էր՝ Խոսրովը (կամ Մամիկոնը) տվեց մի ասպի: Հաճախ նա մի քանի անգամ ավելին էր ասում, քան իրականում ստացել էր:

Որտեղից-որտեղ գավառ էին գալիս նաև բոշաներ: Սրանք անցնում էին գյուղից-գյուղ կամ մի քանի օր մնում գյուղում որևէ հյուրասեր գյուղացու տանը և, փողոցից-փողոց շրջելով, մաղախնները ուսերին վաճառում հազար ու մի բան, զանազան չափերի ու նպատակների դալար ճյուղերից գործած սալաներ, ալրամաղեր ու ցորնամաղեր, ծամոն, խաղալիքներ, շվիներ ու փոքրիկ դավալ-դափեր և այլն, երբեմն էլ դրանք փոխանակում գյուղատնտեսական մթերքների հետ, մինչև իսկ հացի, կլոճի ու լավաշի հետ: Բոշաները վաճառում էին նաև զանազան մանրուքներ՝ կոճակներ, ասեղներ, թելեր, քորոցներ, լվացք փռելու-ամրացնելու շպիլկաներ, կանանց մազերին ամրացնելու հարմարանքներ, զարդեղեններ: Սրանք ջրով լի կամ առանց դրա տուփերի մեջ ունենում էին նաև ծամոններ, «սարի ծամոն»,

որի հանդեպ մեծ ակտիվություն էին ցուցաբերում երեխաները ու երիտասարդ հարսները: Այսպիսի ծամոններ կարողանում էին պատրաստել նաև տարմալեցիները, առանձնապես հովիվները, որոնք դաշտերում հանդիպում էին այնքան առատ աճող ծամոնի թրելին: Արմատախիլ անելով, դրանց արմատից դուրս եկող կաթնանման հյութը նրանք հավաքում էին ձեռքի մաշկի վրա կամ ողորկ քարին, որն արևի տակ մի քիչ մնալով, չորանում և դառնում էր ծամոն: Ծամելիս, սկզբնական շրջանում, այն փոքր-ինչ հաճելի դառնություն է ունենում, որը, սակայն, արագ անհետանում է: Հաճախ էլ բոշաները իրենց հետ ունենում էին էշեր, որոնց վրա դրված խուրջին-պարկերի մեջ լցնում էին գյուղացիներից հավաքած հացն ու ալյուրը, միրգն ու խմիչքը:

Տարմալու էին գալիս նաև կուժ ու կուլա, կավից պատրաստած կճուճներ ու կարասներ նորոգող վարպետներ: Սրանք ուսերին գցած ունեին հարմարանք, որը ձեռքով պտտեցնելիս պտտվում էր ծայրի ծակիչը. ծակում համապատասխան ամանի կավե պատերը և փափուկ մետաղյա գամերով ջայդրված, ճեղքված կտորները միացվում էին իրար: Այդպես նորոգված տեղը ցեմենտապատում էին, և իրը դառնում էր օգտագործման համար պիտանի: Սրանցից ավելի հաճախ բնակավայրերում շրջում էին նաև «դանակ, մկրատ» սրողները: Անցնելով փողոցից-փողոց, այս վարպետները բարձրաձայն կանչում էին՝ «դանակ-մկրատ սրեմ», և բնակիչները հավաքում էին արդեն սայրերը բթացած դանակները ու մկրատները և հանձնում վարպետին: Սա «չարխով» պտտեցնում էր տարբեր նշանակության մեծ ու փոքր սրաքարերը: Որևէ իր սրելիս, սրաքարից առատորեն դուրս էին ցայտում շիկացած քարի և մետաղի կայծեր: Առանձնապես սրանց շուրջն էին հավաքվում անչափահաս երեխաները, ուրախանում, զարմանում ու հիացնում այդ կայծերով:

Տարեկան մեկ-երկու անգամ գավառ էին գալիս կաթսաներ անագապատողներ: Սրանք գալիս էին ավելի հեռվից, տարմալեցիներն ասում էին, որ սրանք «ասաղիններ» են (օսեթիններ): Գյուղերում այս վարպետները ավելի երկար էին մնում: Տեղավորվում էին հին ծանոթների մոտ և բնակավայրում եղած պղնձյա մեծ ու փոքր կաթսաները ջանասիրաբար անագապատում, կլայեկում: Համարյա յուրաքանչյուր տարի բնակիչներն անագապատման էին տալիս իրենց մեծ ու փոքր կաթսաները, թեյնիկները: Առանձնակի ուշադրություն էին դարձնում երկու-երեք բոնիչ-կանթ ունեցող խոշոր կաթսաների անագապատմանը, որոնց մեջ եփում-տապակում էին աշնանային տհալ-դավուրման: Նման «կանթով դազաններ» ոչ բոլոր բնտանիքներն ունեին և անհրաժեշտության դեպքում հարևաններից փոխ էին վերցնում, օգտագործում: Վերադարձնելիս դրանց մեջ անպատճառ լինում էր

այն մթնոլորտ, որի համար օգտագործվել էր կաթսան: Հաճախ, անհրաժեշտության դեպքում, վարպետ-անագապատողները կարողանում էին մեսաղյա (պղնձյա) կաթսաների մաշված, ծակված մասերում հարմարեցնել այնպիսի թիթեղներ և նորոգել այնպես, որ կաթսան, թեյնիկը ծառայում էին տասնամյակներ: Պղնձյա և ջնարակված կաթսաները, կճուճ-պուտուկները հարգի էին երկրամասում, իսկ խոշոր կաթսա ունեցողները հայտնի էին բոլորին:

Մինչև 1920 թ. թուրքերի կողմից Սուրմալուի զավթումը գավառն ուներ հետևյալ բնակավայրերը և ոստիկանական տեղամասերը

Իգդիր

Իգդիր Մավա
Բահարլու
Արևիս
Մամաքլու
Փիուր
Խայֆալու
Արխաջի

Էվջիլարի գյուղ. համայնք

Ալիջան
Մուրշուդալի
Հուսեին քյանդ
Կազիկշլաղ
Նաջաֆալի
Ամարաթ
Ամենքլու
Փանիկ
Կիզիլ զաքար
Էվջիլար
Թեջրլու
Ջիլֆուդար

Յայջիի գյուղ. համայնք

Յայջի
Կուզիկբան
Կասումջան
Վերին Չարոխչի
Ներքին Չարոխչի
Քյուլմեկ
Ախմամեդ
Արաբքերլու
Քեիքի
Սարիղաման
Աղավերզ
Կոմխաբաթ
Ալիկամարլու
Օբա

Ալիկողակի գյուղ. համայնք

Ալիկողակ
Ջար
Գյունդա
Վերին Բանդամուրադ
Ներքին Բանդամուրադ
Դիմաքլու
Խարաբա Միրզա
Օրուշմիլի

Մուղա
Դաշլուջա
Միղլանլու (Սողանլու)
Կարաքոսար
Կիզիլ Կուլա
Կուջախ
Գյոլ Գերմուզ
Փիրախան
Գարսալա
Քարվանսարա
Կուշչի
Գարմաշո
Օրգով
Բազարխան
Ասմա
Ջագրի
Կարագյունեյ
Կարանոյ
Ջախո Քիշիմյաթ

Երկրորդ պոլիս. տեղամաս

Արալիկի գյուղ. համայնք
Արալիղ
Արալիղ Սարբահան
Արաքան
Ջուլթլիք
Էմինջա
Կարաբաիլ
Սարահլի Հաջի
Սարահլի Փրչո
Ախուրի
Գյոդակլու
Ռամազան քյանդ
Ալի Կզիլ

Դաշբուռունի գյուղ. համայնք

Դաշբուռուն
Կարակոյինլու
Կրոչբաղ
Օքյուզլու
Թոխանշանլու
Թոխանշանլու Բայաթ
Թոխանշանլու Քոջար
Աբաթ կամ Դիզա
Ջանանաթաբաղ
Գեջալու
Շիրաղի
Սաֆարկուլի
Խարաբա Ալիջան
Աբասաբաղ
Քյարիմբեկլու

Ռադիկանի գյուղ. համայնք

Կարահաջլու
Խոդիրլու
Ադամլու
Հասո Պեյխաս
Գամիկ
Միլո
Ռախմանաբաղ
Գամրլու
Գետինդարա
Կորգան
Ալիկիզիլ
Արաքան
Վերին Կոբի
Ներքին Կոբի
Բուլաղբաշի
Բերի
Քաֆարքի
Բարբարա
Բալուշթուք
Աբդուլ Բրուքի

Գյավրո
Քոբախ
Շեմխ Միրզե
Խարաբա Աշաջան
Աքյուզլու
Աքիջա
Քրաջբախ
Հասանխան
Մեշա Բաշի Զաղասի
Ախուրի
Դիզա
Ադամլու
Թազա Կարակոջիլի
Կարագյուներ

<u>Երրորդ պոլիս. տեղամաս</u>
Կողբի գյուղ. համայնք
Կողբ (Կուլպ)
Ագարակ
Սուկի
Ղամիշկուս
Քյանիք
Սուրմալու
Պիրշ
Թուրաբի
Քաղիմլու

<u>Քուլիջայի գյուղ. համայնք</u>
Քուլիջա
Մոլլա Կամարլու
Աբասգյոլ
Քալադա Փարչնիս
Ախունդաբաթ կամ Քյամիրհասան
Ալիքյոսա
Գյուլ Ահմեդ
Ինջա
Կարաջեյրան
Կարակոյունլու
Կաթերլու
Ներքին Կաթերլու
Քոյ Խարաբա
Թովուսգյուն
Յաղլի
Քյուրու Աղաջ
Խարաբա Բարչնիս
Գյուլաբի
Վերին Քյանզակ
Ներքին Քյանզակ
Փիրսախ
Քայքշլաղ

<u>Օղրուժանի գյուղ. համայնք</u>
Փարնաուտ
Ամիրխանլու կամ Աղդաշ
Ալշալիխ
Ներքին Աղդամ
Աղաբեր
Հասանքենդ
Վերին Գրամփա
Ներքին Գրամփա
Ջան Դավրիշ
Կալաղա
Քյաքլու
Քարադաշ
Քիմգլու
Կըրխբուլաղ
Կումբուլախ
Միրզախան
Օղրուջա
Սարիտբդալ
Թաքալթու
Չիրախլու
Չիչակլու
Գիալի կամ Շիալի

<u>Սինակի գյուղ. համայնք</u>
Ջիվանլու թաթարական
Ջիվանլու
Քյազիքյոփարան
Բաղիլու
Կարանլուգ
Օսմանքյանդ
Բախչաջիկ
Ռահմաթ
Ինջասու
Էշակմեյդան
Աշարի
Փիրդամիր
Քյուլո
Կարփիր
Ներքին Թուք
Վերին Թուք
Աղդազ
Թազաքչի
Քարաջիվերան
Թանդրեք
Սարիքուլաղ
Քազնաֆար

<u>Եզիդի Քասամենի գյուղ. համայնք</u>
Ասմաքլու
Ասքարլու
Ալիղանլու
Աշրլ Հուսեին
Զորաբխան
Թաժոկերտ
Օնբուլաղ
Բաշ Սինակ
Կըրխ բուլաղ
Դուքախ
Դաշուրխան
Քյոսբաշ
Յաստբուլախ
Սալոխայ
Սոյուխբուլախ
Խարաբա Կարխտին
Դաշ Ուչան
Կարաշան Քալաֆասի

<u>Ջալալի Սակյանշինի գյուղ.համայնք</u>
Սողուքլու
Կարապոնեի
Նազրվան
Կիզիլ Քալաֆա
Կարակալա
Գոյդաշ

(Հայաստանի պատմության արխիվ, ֆոնդ 107, ցուցակ 2, գործ 7)

Հայերի զանգվածային տեղահանումների, բռնությունների և կոտորածների հետևանքով Սուրմալուի հայ բնիկ բնակչության թվաքանակը տասնյակտարի նվազում էր, բնական աճը նույնպես իր բնականոն ընթացքը չէր ունենում: Այդ է պատճառը, որ միատարր հայ բնակչություն ունեցող շատ բնակավայրերում թուրքական էթնոսի տեղավորումից հետո փոքրամասնություն կազմող հայերը ժամանակի ընթացքում հեռանում էին այդ վայրերից, և բնակավայրերը մնում էին թուրքական էթնոսին:

Սուրմալուի տարածքը հայերով դարեր շարունակ զբաղեցրած լինելը հաստատում են հայ մարդու կողմից դեռևս հնագույն ժամանակներում այնտեղ կառուցած մշակութային, ճարտարապետական, պաշտամունքի և այլ

բազմաթիվ արժեքներ: Ուստի ավելորդ չենք համարում ներկայացնել Սուրմալուի տարածքում եղած հայկական կառույցները, պատմական հուշարձանների անվանումները ու դրանց տեղաբաշխումը գավառի տարածքում ըստ Սամվել Կարապետյանի բերած տվյալների («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1998 թ. , թիվ 27,28, թիվ 101, 102):



ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

ԱԲԲԱՍԳՅՈԼ գյուղ, այժմ ԱԲԲԱՍԳՅՈԼ

1. Ս. Սարգիս եկեղեցի, գտնվում է գյուղի արևմտյան եզրին

2. Գերեզմանոց գյուղում, պահպանվել է ին արձանագիր շիրմաքարեր

3. Ջրաղաց, գտնվում էր գյուղից 1,8 կմ հյուսիս-արևելք

ԱԳԱՐԱԿ-ԱԳԱՐԱԿ գյուղ, այժմ ՅՈՒՉԿԱՅԱ

4. Ջրաղաց, գտնվում է գյուղի հար. եզրին

ԱԼԳԹԼՈՒ գյուղ, այժմ ՅՈՒՋԲԱՇԼԱՐ

5. Ս. Ստեփանոս եկեղեցի, գյուղի մեջ

6. Ս. Լուսավորիչ ուխտատեղի, գտնվում է Ալեթլու գյուղից քիչ հեռու

ԱԼԻԴԱՄԱՐ գյուղ, այժմ ԱԼԻՋԱՄԵՐԼԻ գյուղ

7. Ս. Գևորգ եկեղեցի, գտնվում է գյուղի մեջ

ԱԼՄԱԼԸՂ գյուղ, այժմ ԷԼՄԱԼԻԿ

ԱԼՔՅՈՍԵ գյուղ, այժմ ԱԼԻՔՅՈՍԵ

8. Գերեզմանոց, գյուղում

ԱՂԱԲԵԿ գյուղ, այժմ ԱՂԱԲԱՅ

ԱՂԱՎԵՐ գյուղ, այժմ ՉԱՎՈՒՇԲԱԽՉԵ

ԱՄԱՐԱԹ գյուղ, այժմ ՉԱԿԻՐԴԱՇ

ԱՇԵՐ (ԽԱՇԵՐԻ) գյուղ, այժմ ԲՈՍՏԱՆԼԻ

ԱՇԸՂ ՀՈՒՍԵԻՆ գյուղ

9. Բերդ, գտնվում էր եզդիաբնակ Աշըղ Հուսեին գյուղի մոտ, իսկ բլրին նույնպես

ԱՍՄԱ գյուղ, այժմ ԱՍՄԱ

ԱՍՏԱՖԼՈՒ գյուղ, այժմ ԿԱՆԴԻԼԼԻ

ԱՐՀԱՋ գյուղ, այժմ ԱՇԱՂԻ ԷՐՀԱՋԻ

10, 11. Ամրոց և Ս. Գևորգ ուխտատեղի և մի ուխտատեղի Ս. Գևորգ անունով

ԱՐՍԼԱՆԼԻ գյուղ

ԲԱԴԻԼԻ գյուղ

12. Ջրաղաց, գտնվում է գյուղից 150 մ հեռու

ԲԱԽՉԱՋԸՂ գյուղ, այժմ ԲԱԽՉԵՋԻԿ

ԲԱՀԱՐԼԻ, այժմ ԲԱՀԱՐԼՈՒ

13. Ս. Աստվածածին եկեղեցի, գտնվում է գյուղում

ԲԱՆԴԱՄՈՒՐԱԴ գյուղ, այժմ ԲԵՆԴԵՄՈՒՐԱՏ

ԲԱՇՔՅՈԼ գյուղ, այժմ ԱՐԱԼԻԿ

14-16. Եկեղեցի և երկու ջրաղաց գյուղից 1 կմ հեռու

ԲԼՈՒՐ գյուղ, այժմ ԷՆԳԻՆԱԼԱՆ

17. Ս. Կիրակոս եկեղեցի, գտնվում է գյուղի հյուսիս-արևմտյան մասում

18. Ս. Սահակ Պարթև հայրապետի վախճանման վայրը, Ս. Սահակ եկեղեցի կա

19. Գերեզմանոց, գտնվում է գյուղի արևմտյան մասում, առանց տապանագրերի, անտաշ քարեր

20. Շրջապարիսպ 2 դռնով և 9 աշտարակներով, շինված պարսից Մամմար խանի կողմից

21. Ջրաղաց, գտնվում է գյուղից հյուսիս-արևմուտքում, 1 կմ հեռավորության վրա

22. Խաչքար 992 թ. փոխադրվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի բակ

ԲՈՒԼԱՂԲԱՇԻ գյուղ, ներկայումս ԲՈՒԼԱԿԲԱՇԻ

ՎԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳԱՆՋԱԿ գյուղեր, ներկայումս ԱՇԱՂԻ ՍՈՒԹԱՇԼԻ

23-31.9 ջրաղաց գյուղերի հարավային եզրերով հոսող գետակի վրա, 3 կմ երկարության վրա, եկեղեցի կամ բերդ Վ. Գանձակից 0,6 կմ հարավարևելք, լեռան գագաթին

ԳՅԱՐՄԱՇՈ գյուղ, ներկայիս ԳՅՈՒԼԼՈՒՋԵ

33. Ս. Գևորգ եկեղեցի

34. Ուխտատեղի, գյուղից 0,5 կմ հյուսիս

35. Գյուղատեղի «Սոնալու», Գյուլլիջայից հյուսիս

36-37. Երկու ջրաղաց գյուղի հյուսիսային եզրին

ԳՅՈՒՆԳԵՐՄԱՋ գյուղ, ներկայիս՝ ԳՅՈՒՆԳՈՐՄԱՋ

ԳՐԱՄՓԱ գյուղ, ներկայիս ԳՅՈՒՋԵԼԴԵՐԵՆ

ԴԱՄՈՒՐՍԽԱՆ գյուղ, ներկայիս ՅՈՒՆԼԵՆԴԻ

ԴԱՇԲՈՒՌՈՒՆ գյուղ, ներկայիս ՏԱՇԲՈՒՌՈՒՆ

38. Ս. Հարությունի եկեղեցի, գյուղում

ԶԸԼՖԻԴԱՐ գյուղ, ներկայիս ԶՅՈՒԼՖԻԿՅԱՐՔՅՈԼ

ԶՈՌ գյուղ, ներկայիս ԿԱՐԱՉՈՄԱԿ

39. Իջևանատուն ռուս-օսմանյան սահմանագլխին

40. Վանք, որը Զորավանք կկոչվի

ԷՇԱԿՄԵՅԴԱՆ գյուղ, ներկայումս ԲԱԽՉԵԼԻՄԵՅԴԱՆ

ԷՎՋԻ (ԷՎՋԻԼԱՐ) գյուղ, ներկայումս ԷՎԻՋԻ

41. Ս. Աստվածածին եկեղեցի, գտնվում է գյուղի կենտրոնում

ԹԱՋԱԲՅԱՆԴ գյուղ, ներկայումս ԹԱՋԵՔՅՈՅ

ԹԱՔՅԱԼԹՈՒ գյուղ, ներկայումս ԱԿՈԼՈՒԿ

ԹԵՋՐԼՈՒ գյուղ, ներկայումս ԹԱՋՐԼԻ

42. Ս. Գևորգ եկեղեցի, գյուղում

43. Ջրաղաց, գտնվում է գյուղից 0,8 կմ հեռավորության վրա

ԹՈՆԴՈՒՐԵԿ գյուղ, ներկայումս ՅԱՅԼԱՋԻԿ

ԹՈՎՈՒՍԳՅՈՒՆ գյուղ, ներկայումս ԳԱԴԻԿԼԻ

ԹՈՒԹԱԿ գյուղ, ներկայումս ԹՈՒԹԱԿ

ԹՈՒՐԱԲԻ գյուղ, ներկայումս ԹԱՐԱԲԻ

ԻԳԴԻՐ քաղաք, ներկայումս ԻՂԴԻՐ

44.46. Ունի 3 հայկական և 1 ռուսական եկեղեցիներ

47. Գերեզմանոց, եկեղեցու շրջակայքում

48. Ջրաղաց Իգդիրի հյուս. եզրին

49. Սեպագիր արձանագրություն, հայտնաբերված 1881 թ. , Իգդիրից 2 վերստ հեռ.

50. Հուշարձան կոթող թուրքերի դեմ 1877-78 թթ. Տեր Ղուկասովի տարած հաղթանակի առթիվ

ԻԳԴԻՐ ՄԱՎԱ գյուղ, ներկայումս ԻԳԴԻՐ քաղաքի վարչական տարածքում

51. Ս. Գևորգ եկեղեցի Իգդիր Մավայում

ԻՆՋԱ գյուղ, ներկայումս ԻՆՋԵ

52-53. Ջրաղաց Իգդիր Մավայում

ԻՆՋԱՍՈՒ գյուղ, ներկայումս ԻՆՋԵՍՈՒ

ԽԱԴԻՄԼԻ գյուղ, ներկայումս ԽԱԴԻՄԼԻ

54. Բերդ գյուղի հյուս. կողմում

ԽԱԼՖԱԼԻ գյուղ, ներկայումս ԽԱԼՖԱԼԻ

55. Ս. Գևորգ եկեղեցի, գյուղում

56. Վանք գյուղի հար. կողմում

57. Տապանաքար, 1282 թ. , գտնվում է գյուղի հար. մասում

58. Բերդ

ԽԱՄՈՒՐՔՅԱՍԱՆ գյուղ, ներկայումս ԽԱՄՈՒՐՔԵՍԱԿ

ԽԱՔՄԱՄԵԴ գյուղ, ներկայումս ԽԱՔՄԵՀՄԵՏ

ԽՈՇԽԱԲԱՐ գյուղ, ներկայումս ԽՈՇԽԵԲԵՐ

59. Ս. Սարգիս եկեղեցի, գյուղում

60. Ուխտատեղի գյուղում

ԿԱՐՆԲԽ գյուղ, ներկայումս ԿԱՐՏՈՒՏԱՆ

ԿՅՈՒԼԼՈՒԿ գյուղ, ներկայումս ԿՅՈՒԼՅՈՒԿ

ԿՈՂԲ գյուղ, ներկայումս ԹՈՒՋԼՈՒՋԱ

61. Ս. Խաչ եկեղեցի, գտնվում է գյուղի Ներքին թաղում

62. Ս. Երրորդություն եկեղեցի, գտնվում է Կողբի Վերին թաղում, կառուցված 1866 թ.

63. Ս. Աստվածածին եկեղեցի, Կողբի Վերին թաղում

64. Ծխական դպրոց, կառուցված 1874 թ.
65. Եզնիկ Հայրապետի մատուռ, գտնվում է գյուղի Հին թաղում
66. Գերեզմանոց, տարածված էր Եզնիկ Կողբացու գերեզմանի շուրջ
67. Ս. Լուսավորիչ մատուռ, Կողբի Ներքին կամ Հին թաղում
68. Թուխ Մանուկ ուխտատեղի, Հանքասարի ստորոտում
69. Հոր Երանելու ուխտատեղի, Կողբից 2 ժամ հեռավորության, Երասխի աջ ափին
70. Ս. Գևորգ ուխտատեղի, Կողբի արևելյան մասում, աղահանքի սարի գագաթին
71-73. Երեք ավերված եկեղեցիներ, Կողբում
74-75. Խաչքարեր, 1451 և 1580 թթ. , Կողբի ավերակ եկեղեցու հարևանությամբ
76. Պահակատուն-աշտարակ, գտնվում էր աղահանքի սարի գագաթին
ԿՈՒՋՈՒԳՅՈՒՆԴԱՆ գյուղ, ներկայումս ԿՈՒՋՈՒԳՅՈՒԴԵՆ
ԿՈՒԼԱ գյուղ, ներկայումս ԿՈՒԼԱ
ԿՈՒՄԲՈՒԼԱՂ գյուղ, ներկայումս ԿՈՒՄԲՈՒԼԱԿ
ՀԱՎԵՅԻՍ գյուղ, ներկայումս ՀԱԿՎԵՅԻՍ
77. Ս. Ստեփանոս եկեղեցի, գյուղում
ՀԱՋԻԱՂԱՔՅՈՅ գյուղ, ներկայումս ՀԱՋԻԱՂԱ
ՀԱՍԱՆԽԱՆ գյուղ, ներկայումս ՀԱՍԱՆԽԱՆ
ՀԱՍԱՆՔՅԱՆԴ գյուղ, ներկայումս անմարդաբնակ
ՀԻՆ ԱԿՈՌԻ գյուղ, ներկայումս ՀԱՍԱՆՔԵՆՏ
78. Ս. Հակոբ վանք, գյուղի մոտակայքում, վանքի եկեղեցին կառուցվել է 660-ական թթ.
79. Խաչքար, 1303 թ. , Ս. Հակոբ վանքում
80-81. Ամրոց և եկեղեցի, Հին Ակոռիում
82-83. Գյուղատեղի և եկեղեցի, Ս. Հակոբ վանքից ավելի վեր
84. Ս. Հակոբի աղբյուր, գտնվում է Ակոռի գյուղից 3,6 կմ հարավ
ՀԻՆ (ՆԵՐՔԻՆ) ԱՂԴԱՇ գյուղ, ներկայումս ԱՇԱՂԻ ԱԿՏԱՇ
ՀՈՒՍԵԻՆ գյուղ
85. Ս. Մինաս եկեղեցի, գյուղում
ՂԱՋԱՆՉԻ գյուղ, ներկայումս ԿԱՋԱՆՋԻ
86. Սեպագիր արձանագրություն, գյուղում, հայտնաբերված 1886 թ.
ՂԱՋՆԱՖԱՐ գյուղ, ներկայումս ԿՅՈՒՋԵՆՖԵՐ
ՂԱՋԼԼՔՈՓԱՐԱՆ գյուղ, ներկայումս ԿԱՋԿՈՊԱՐԱՆ
87. Բելպ, գյուղի մոտ
88.89.2 ջրաղաց, գյուղից 400-500 մ
ՂԱՋԻՂՇԼԱՂ գյուղ, ներկայումս ԿԱԴԻԿԻՇԼԱԿ

ՂԱԼԱՉԱ գյուղ, ներկայումս ԿԱԼԱՉ
90-93.4 ջրաղաց, գտնվում էր գյուղի հար. մասում
ՂԱՄԻՇԼՈՒ գյուղ, ներկայումս ԿԱՄԻՇԼԻ
ՂԱՅԱԽԱՐԱԲԱ գյուղ, ներկայումս ԿԱՅԱՅՈՐԵՆ
ՂԱՅԱՂՇԼԱՂ գյուղ, ներկայումս ԿԱՅԱԿԻՇԼԱԿ
ՂԱՋԱՐ-ԴՈՂԱՆՇԱԼԻ գյուղ, ներկայումս ԿԱՋԱՐԴՈՂԱՆՇԱԼԻ
ՂԱՐԱԲՈՒԼԱՂ գյուղ, ներկայումս ԿԱՐԱԲՈՒԼԱԿ
94-100.7 ջրաղաց, գյուղից հար.-արևմ., 1-2 կմ հեռավորության վրա
ՂԱՐԱԴԱՇ գյուղ, ներկայումս ԿԱՐԱՏԱՇ
ՂԱՐԱՂՈՅԻՆ գյուղ, ներկայումս ԿԱՐԱԿՈՅԱՆ
101-103. «Ցոլակերտ», բերդ և քաղաքատեղի, սեպագիր արձանագրություն
104. Ջրաղաց, գյուղի հյուս.-արևմ. տարածքում
ՂԱՐԱՆԼԲԽ գյուղ, ներկայումս ԿԱՐԱՆԼԻԿ
ՂԱՐԱՋՈՐԱՆ գյուղ, ներկայումս ԿԱՐԱՋԱՅՈՐԵՆ
105-106.2 ջրաղաց, գյուղից 200 մ հար.
ՂԱՐԱՋԱՎԵՐԱՆ գյուղ, ներկայումս ԿԱՐԱՋԱՅՈՐԵՆ
ՂԲՐԽԲՈՒԼԱՂ գյուղ, ներկայումս ԿԻՐԿԲՈՒԼԱԿ
107. Ջրաղաց, գտնվում է գյուղի հար. տարածքում
ՂՈՒԼԻՔՅԱՆԴ գյուղ, ներկայումս ԿՈՒԼԻՔԵՆՏ
ՄԱՋՐԱԽԱՐԱԲԱ գյուղ, ներկայումս ՄԵՋՐԱ
ՄԻՐՁԱԽԱՆ գյուղ, ներկայումս ԲԵՅՕՂԼՈՒ
ՄՅՈՒՐԾԻԴ գյուղ, ներկայումս ՄՅՈՒՐՇԻՏԱԼԻ
ՄՈԼԼԱՂԱՄԵՐ գյուղ, ներկայումս ՄՈԼԼԱԿԱՄԵՐ
108. Եկեղեցի, Ս. Ստեփանոս գյուղում
ՄՈՒՇԱ գյուղ, ներկայումս ԳՅՈՒԼՊԻՆԱՐ
ՅԱՂԼՈՒ գյուղ, ներկայումս ՅԱՂԼԻ
ՅԱՅՋԻ գյուղ, ներկայումս ՅԱՅՋԻ
ՆԱՋՐՎԱՆ գյուղ, ներկայումս ԴՈՂՈՆՅՈՒՐՏ
ՆԱԽԻՐՂՌԱՆ գյուղ, ներկայումս ՆԱԽԻՐԿԻՐԱՆ
ՆԱՋԱՖԱԼԻ գյուղ, ներկայումս ՆԵՋԵՖԱԼԻ
109. Եկեղեցի, Ս. Ստեփանոս գյուղում
ՆԵՐՔԻՆ ԱՐԱԲԿԻՐ գյուղ, ներկայումս ԲԱՅՐԱԿՏՈՒՏԱՆ
ՆԵՐՔԻՆ ՉԱՐՔՉԻ գյուղ, ներկայումս ԱՇԱՂԻ ՋԻՎԱՆԼԻ
110. Ջրաղաց, գյուղի հյուս. տարածքում
ՆԵՐՔԻՆ ՄՈՏ գյուղ, ներկայումս ԱՂԱԼԻ ԴՈՒՏ
ՆՈՐ ԱԿՈՌԻ գյուղ, ներկայումս ՅՈՒԽԱՐԻ ՏՈՊՐԱԿԼԻ
111. Եկեղեցի Ս. Ստեփանոս

ՇԻՐԵՋԻ գյուղ, ներկայումս ՇԻՐԱՋԻ
ՉԻՉԱԿԼՈՒ գյուղ, ներկայումս ՉԻՉԵԿԼԻ
112. Ջրաղաց, գյուղից 500 մ հյուս.-արևմ.
ՉԻՐԱՔԼԻ գյուղ, ներկայումս ՉԻՐԱԿԼԻ
ՊԵՐՆԱՎՈՒՏ գյուղ, ներկայումս ԳԱՋԻԼԵՐ (ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՌՆԱԿՈՒՏ գյուղ)
113. Բերդ, «Քյորօղլի» բարձր սալի վրա
114. Բերդ, Փառնակուտ և Կողբ գյուղերի միջև, Կարմիր քարափ կոչված մեծ ժայռի վրա
ՋԱՆԴԱՐՎԻՇ գյուղ, ներկայումս ՋԱՆԴԵՐՎԻՇ
ՋԱՆԵԹԱԲԱԴ գյուղ, ներկայումս ՋԵՆՆԵՏԱԲԱՏ
ՋԻՎԱՆԼՈՒ գյուղ, ներկայումս ՅՈՒԽԱՐԻ ՋԻՎԱՆԼԻ
ՌԱՄԱԶԱՆ գյուղ, ներկայումս ՌԱՄԱԶԱՆՔԵՆԴ
ՍԱՐԻԱՎԴԱԼ գյուղ, ներկայումս ՍԱՐԻԱԲԴԱԼ
ՍԱՐԻԲՈՒԼԱՂ գյուղ, ներկայումս ՍԱՐԻԲՈՒԼԱԿ
115. Ջրաղաց, գյուղի արևմ. եզրին
ՍԱՐԻՉՈԲԱՆ գյուղ, ներկայումս ՍԱՐԻՉՈԲԱՆ
ՍԻԼԱՆԼՈՒ գյուղ, ներկայումս ՍԻՇԱՆԼԻ
ՍՈԳՈՒԹԼԻ գյուղ, ներկայումս ՍՅՈՂՅՈՒՏԼՅՈՒ
ՍՈՅՈՒՂԲՈՒԼԱՂ գյուղ, ներկայումս ՍՈՂՈՒԿԲՈՒԼԱԿ
ՍՈՒԿԻ գյուղ, ներկայումս ՍՈՒԿԻ
ՍՈՒՐՄԱԼԻ գյուղ, ներկայումս ՍՅՈՒՐՄԵԼԻ
116. Բերդ, «Ղալաղալա», Փիրլի և Չալպալաքյոյ գյուղերի միջև
117-119. Երվանդակերտ բաղաքատեղի, պալատ, գերեզմանոց, գտնվում է բերդի շրջակայքում
120. Կամուրջ, գյուղից 2 մղոն Արաքսի հունով ներքև, «Ղալաղալա» բերդի մոտ
ՎԵԼԻՋԱՆ գյուղ, ներկայումս ԲԻԼԻՋԱՆ
121-122. Եկեղեցի և բերդ, Փոքր Մասիսի ստորոտում (ավերված)
ՎԵՐԻՆ ԱԼԻՋԱՆ գյուղ, ներկայումս ՅՈՒԽԱՐԻ ԱԼԻՋԱՆ
123. Եկեղեցի Ս. Ստեփանոս, գյուղի մեջ
124. Կամուրջ Արաքսի վրա, Ալիջան և Մարգարա գյուղերի միջև
ՎԵՐԻՆ ԱՂԴԱՇ գյուղ, ներկայումս ՅՈՒԿԱՐԻ ԱԿՏԱՇ
ՎԵՐԻՆ ԱՐԱԹԱՆ գյուղ, ՅՈՒԿԱՐԻ ԱՐԱՏԱՆ
125-126.2 ջրաղաց, գյուղից 200 մ արևելք
ՎԵՐԻՆ ՂԱԹՐԼՈՒ գյուղ, ներկայումս ՅՈՒԽԱՐԻ ԿԱԹԻՐԼԻ
127-128. Բերդ և ռխտատեղի գյուղից հար.-արևել. մասում, սարի գագաթին

ՎԵՐԻՆ ՂՈԲՈՒ գյուղ, ներկայումս ԲԱԲԱՋԱՆ
ՎԵՐԻՆ ՉԱՐՔՉԻ գյուղ, ներկայումս ՅՈՒԽԱՐԻ ՉԱՐԻԿՉԻ
ՎԵՐԻՆ ՉԻՆՉԱՎԱՏ գյուղ, ներկայումս ԿՈՊՐՅՈՒԲԱՇԻ
129. Ջրաղաց, գյուղից 0,8 կմ հար.-արևմուտք
ՏԱՇՈՒՉԱՆ գյուղ, ներկայումս ՏԱՇՈՒՉԱՆ
ՓԱՆԻԿ գյուղ, ներկայումս ԷՈՋԴԵՄԻՐ
130. Եկեղեցի Ս. Աստվածածին, գյուղում
131-133.3 ջրաղաց գյուղում, 1 և 2 կմ արևմուտք և 1 կմ հյուս.-արևմուտք
ՓԱՐԻՉԻՆԻՍ գյուղ, ներկայումս ՅՈՒՋԵՈՉԹԱԿ
134-135. Բերդ և գերեզմանոց, գյուղից վերև
136. Տապանաքար, 1172 թ. գտնվում էր գյուղի արևմտ. կողմի գերեզմանոցում
ՓԻՐԼԻ գյուղ
137. Ջրաղաց գյուղից 600 մ հարավ
ՓԻՐՍԱԽ գյուղ, ներկայումս ԿՅՈՒՉՅՈՒԿՈՎԱ
ՓՐՉԵ գյուղ, ներկայումս ՍԱՐԱՉԼԻ
ՔԱՐԱՔԼՈՒ գյուղ, ներկայումս ԿԵԼԵԿԼԻ
ՔԱՂՈՒՆ գյուղ, ներկայումս ԷԴՐԵԿՂԵՐԵ
138. Ս. Կարապետ ռխտատեղի, Կողբից 450 մ հարավ
ՔԱՐՎԱՆՍԱՐԱՅ գյուղ
139. Իջևանատուն (ավերակ), գյուղից 800 մ արևմուտք, ճանապարհի եզրին
ՔԵԹԻ գյուղ, ներկայումս ՉԱԼՓԱԼԱ
ՔԻՐԱՋԲԱՂԻ գյուղ, ներկայումս ԿԻՐԱՉԲԱՂԻ
ՕԲԱ գյուղ, ներկայումս ՕԲԱՔՅՈՅ
ՕՂՐՈՒՋԱ գյուղ, ներկայումս ՅՈՒՂՐՈՒՋԱ
ՕՆԲՈՒԼԱՂ գյուղ, ներկայումս ՕՄԲՈՒԼԱԿ
ՕՍՄԱՆՔՅՈՅ գյուղ, ներկայումս ՕՍՄԱՆՔՅՈՅ
140. Բերդ «Քյորօղլի», գտնվում է Օսմանքյոյ վտակի ձախ ափին
ՕՐԳՈՎ գյուղ, ներկայումս ՍՈՒՎԵՐԵՆ
141-142. Գյուղատեղի և գերեզմանոց
ՕՐՈՒՇՄԻՇ գյուղ, ներկայումս ԷՈՐՅՈՒՇՄԻՇ

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆԸ

Հայ ժողովրդի կազմավորումը կատարվել է Հայկական բարձրավանդակի ընդարձակ և բնակլիմայական, ռելյեֆային բայց տարածքում: Աշխարհագրական դիրքը, բազմաթիվ բարձրարերձ լեռները ու անանցանելի լեռնաշղթաները սահմանափակել են մի տարածքի բնակիչների շփումը մյուսների հետ: Բնակլիմայական այդ առանձնահատկությունների և շրջապատի այլ գործոնների ազդեցությամբ առաջացել են տարածքային տարբեր բարբառներ, խոսակցական ձևեր:

Նշանավոր լեզվաբան Էդուարդ Աղայանը կարևորություն տալով բարբառներին, անառարկելիորեն գտնում է, որ դրանք հայոց լեզվի զարգացման և հարստացման հիմնական աղբյուրներն են:

«Ամեն մի լեզու գոյություն ունի իր տարածքային ձևերի միասնականությամբ և ամբողջականությամբ (տարածքային բարբառներ, ժարգոններ, գրական ու խոսակցական ձևեր և այլն)»,- գրում է գիտնականը:

Սուրմալուի գավառի (տարածքի) հայ բնակչության մեծ մասը բռնագաղթած լինելով Խոյ և Սալմաստ, բնականաբար հայրենի տարածք վերադարձելով, խոսում էր այդ՝ Խոյի բարբառով: Առանձնապես այդ խոսակցականն

էին օգտագործում Իգդիրի և հարակից տարածքի բնակիչները: Հայ գիտնականներն ու լեզվաբաններն այն անվանում են ՈՒՐՄԻԱՅԻ տարածքի անունով և կոչում ՈՒՐՄԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ: Այն հնագույններից է Հայկական բարձրավանդակի բարբառների թվում: Այս բարբառով խոսել են Խոյի, Սալմաստի, Մակուի, Շարուրի, Իգդիրի և հարակից տարածքների (գավառների) հայերը: Հետագայում բարբառի օգտագործման տարածքը էապես ընդարձակվում է: Այդ բարբառով են խոսում Արտաշատի, Արարատի, Մասիսի, Վայքի, Եղեգնաձորի, մասամբ Էջմիածնի, Սիսիանի, Ապարանի, Կոտայքի նախկին շրջանների բնակիչները:

Խոյի (Իգդիրի) խոսակցական լեզուն իր հնչյունային համակարգով շատ նման է Վանի (Վասպուրականի) բարբառին, իսկ քերականությամբ՝ Մարաղայի բարբառին:

Այստեղ հնչյունային համակարգն ունի Ա, Օ, ՈՒ, Է, Ի, Ը ձայնավորները: Այսպես, ԲԱՆ-հնչում է ՊԱՆ, ԲՈՎ-ՊՈՎ, ԲԵՐԵԼ-ՊԵՐԵԼ և այլն: Բարդ կիսաշփական Ջ, Ճ, Օ, Ջ, Ճ, Չ-ն բաղաձայններից առաջ կորցնում են իրենց պայթական բաղադրիչները և վերածվում պարզ շփականների: Օրինակ, ՄԻՋՆԱԿԸ դառնում է ՄԸՇՆԵԿ, ԿԸՃԿԵԼԸ՝ ԿԸՍԿԵԼ, ԱՉՔԸ՝ ԱՇԸԿ և այլն: Կան նաև բավականին քմայիններ՝ Գ, Կ, Ք: Օրինակ, ԸՆԿԵՐ՝ ԸՆԳԵՐ, ՔԵՌԻ-ՔԷՌԻ և այլն: Գրաբարյան Հ-ն վերածվում է Խ-ի:

Օրինակ՝ ՀԱՅ-ԽԱՅ, ՀԱՅ-ԽԱՅ, ՀՄՆԵԼ-ԽՄՆԵԼ և այլն:

Չխորանալով քերականության (հոլովների և այլն) վերլուծության մեջ, ասենք, որ չնայած տասնամյակներ են անցել, կատարվել է սեղմոլավոխություն, այնուհանդերձ, իգդիրցիները (հարևան տարածքի բնակիչներ ևս) ներկայումս օգտագործում են այդ խոսակցականը (բարբառը):

Ինչ վերաբերում է Կողրին, կողբեցիների խոսակցականին, ապա այն շատ նման է հարևան Կաղզվանի հայ բնակչության խոսակցական լեզվին: Բնականաբար, կողբեցիներն իրենց հայրենի տարածք՝ Կողր, վերադարձել են Կաղզվանի տարածքից, որտեղ և նրանք յուրացրել են այդ յուրօրինակ խոսակցականը: Կողրն իր վարչական տարածքի սահմաններով հարևան էր Կաղզվանի տարածքին, իսկ բնակիչները նույնպես շփման մեջ էին:

Ներկայացնում ենք Կողրի, Իգդիրի (դրանց տարածքների) հայ բնակչության խոսակցական մի քանի տասնյակ բառեր, հուսով ենք, որ այն շատ թե քիչ պատկերացում կտա այդ խոսվածքի մասին:

ԻԳԴԻՐԻ (տարածքի) ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՐՈՇ ԲԱՌԵՐ

Առիք-առաստաղ
Առտուն -առավոտյան
Բանդ-ոռոգման ջրի սկիզբ
Թեշքար-ավելի վատ
Գինասես-գիտես
Գոյնա-հրեն
Գյուռ-ջրազատիչ քար
Դանա-հորթ
Դորեն-որտեղից
Եռանդ-անցյալ օր
Եղ-յուղ
Զուրցալի-խոսում է
Էքամ-գնամ
Էկիր ի -եկել է
Էքի-խաղողի այգի
Էրքիս-երդիկ
Ըշկա-նայիր, տես
Թալ-գցիր
Թաշի-իլիկ
Թփես եմ-ծեծում եմ
Իշքար-ինչպես
Շմա-ինչու
Ինես եմ-ընկնում եմ
Խարճկաք-թոնրի երկաթ
Խուփ-կափարիչ
Սափոր-կուժ
Ծծում-խնոցի
Կե-կեր
Կճճել-քջջել
Կոխրճել-տրորել
Կուռա-խակ խաղող
Կառկա-ագռավ
Ղաջլա-կաչաղակ
Կունդ-գունդ (խմորի)
Ճոռնկաք-ջրհորդան
Ճվա-գոռա
Ճոպան (չվան)-պարան
Մկա-հիմա
Մարգոն-մանգաղ
Յար-արի
Նոխուդ-սիսեռ
Յուրի-ուր է

Չեսնալի-չգիտես
Պախել-պահել
Պախ-բահ
Պտուկ-կճուճ
Պիպու-հոպոպ
Պսպոր-օգնող
Ջոա-մեծ կճուճ
Սափոր-կուժ
Վավ-ով
Վարտեղ-որտեղ
Տնիս-տանիք
Տափել-պառկել-թաքնվել
Քառեշտ-եղան
Քդակ-գլխարկ

ԿՈՂԲԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՐՈՇ ԲԱՌԵՐ

Ափո-հայր
Յաղուզ-ինչու
Ուսուլ-կամաց
Թուշ-ուղիղ
Վայթե-գուցե
Ուղուր-բարի (իսկ)
Ղնամիշ-ծիծաղել
Մանց-ինչպես
Շլինք-վիզ, պարանոց
Քերեղան-կավից ափսե
Եխնի-մտով կերակուր
Ծերպ վարեցի-դուռը կամաց բացեցի
Ջալո-մեծ հարս
Թաքուջակ-քաղհանի ուրագ
Էփ-երբ
Թղմի-լրանա
Օդա-սենյակ
Ընցում-անցկացնում
Չուրի-մինչև
Պարցան-բարձեցին
Կացին-գնացին
Թայնա-նոր
Ուղուր-բարի
Ղնամիշ չէրիք-չհիվանդացնեք
Խրխի-ստոց 2 մարդու
Քա-դեհ
Օչինչ-ոչինչ
Հեղան-եղան
Քթալ-գդալ
Բաղյա-պղնձյա ոչ խորը լայնեզր ամաս
Թեշտ-լվացքի տաշտ
Փարչ-պղնձյա մեծ բաժակ
Ճվալ-գոռալ
Ադե-մայր-տատ
Քդակ-գլխարկ
Պան-բան
Թոյնա-նոր
Բար-բերք
Ըստուն-սրան
Տղնա-նայիր

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Սուրմալուն ի վերուստ գյուղատնտեսական, անասնապահական մթերքների արտադրության երկրամաս էր: Բնակչության հիմնական մասն զբաղվում էր երկրագործությամբ և անասնապահությամբ: Գավառի արևմտյան տարածքը, որն ավելի ընդարձակ էր, քան արևելյանը, հարթ էր ու հարմար երկրագործության համար:

Երկրագործությունում կիրառվում էր երկդաշտ, երբեմն էլ եռադաշտ ցանքաշրջանառության եղանակը: Դա նշանակում էր, որ օգտագործվող հողատարածքը երկու, երեք տարի օգտագործելուց հետո փոխվում էր մշակովի կուլտուրան, երբեմն էլ տարածքը չէր մշակվում, թողնվում էր «խամ», հանգստանալու:

Դաշտերը հարստացնում էին գոմաղբով, որը սայլերով բերվում էր դաշտի մեջ, թողնվում էր մինչև որոշ ինքնայրում կատարվի, մոլախոտերի սերմերը այրվեն, ոչնչանան, ապա եղանեցով շաղ էին տալիս, ցրում դաշտի մեջ: Սուրմալեցիները լավ գիտեին, որ հողը թիթեռնածաղկավոր բույսերի՝ առվույտ, կորնգան, լոբազգիներ և այլն, ցանքից հետո «ուժեղանում» է, և հաջորդ կուլտուրայի առատ բերքն ապահովված է լինում: Առվույտի ցանքատարածությունը վարելով և բանջարաբոստանային կուլտուրաներ կամ հացահատիկ ցանելով, ստանում էին այնպիսի առատ բերք, որ հավաքելն անգամ դժվար էր լինում:

Հողը հիմնականում վարում էին գութանով: Լծում էին եզներ, գոմեշներ: Նայած հողի վիճակին (կավ, ավազային և այլն), գութանին լծում էին երկու, նաև երեք զույգ եզներ: Բոլոր դեպքերում առվույտի, կորնգանի դաշտերը վարելիս լծում էին երեք զույգ եզներ (եթե երկու զույգ, ապա մեկ զույգը՝ անպատճառ գոմեշներ), քանի որ առվույտի, կորնգանի արմատները լինում են շատ խոր ու հաստ, այդպիսի հողերը վարելը շատ դժվար էր: Հողը վարում էին ոչ շատ խոր՝ 20-25 սմ խորությամբ: Վարած դաշտը փոցխում էին լայն ու ծանր փայտյա փոցխերով: Այս դեպքում լծում էին մեկ զույգ եզներ: Երբեմն փոցխի ետևից կապում էին տափանը: Այն կարող էր կատարվել նաև առանձին: Առանձին տափանում, հարթեցնում էին հողը, բայց ոչ վարելուց անմիջապես հետո և ոչ ուշ, որպեսզի վարած հողը չկարողանա կոշտանալ, ամրանալ: Դաշտը հարթեցնելուց հետո այն բաժանվում էր առանձին մարգերի: Եթե հողը նախատեսված էր հացահատիկի, առվույտի ցանքերի համար, ապա դրա մեջ իրարից 1-2 և ավելի մ հեռավորության վրա ոչ բարձր թմբեր էին պատրաստում՝ ջուրը հավասարապես մարգերում գնալու, բույսը հավասարապես ջրվելու համար: Գյուղատնտեսության հիմնական ճյուղերից էր նաև բամբակագործությունը: Այս թանկարժեք կուլտուրան վաղուց

էր մուտք գործել տարածաշրջան: Վերջին շրջանում Ռուսաստանում մանածագործության արդյունաբերության զարգացման հետ բամբակամշակմանը կարևոր նշանակություն էր տրվում և խրախուսվում նրա մշակումը: Այստեղի բամբակը բարձր որակի էր և արտասահմանյան շուկաներում ինչպես բամբակը, այնպես և բամբակաթելն ու նրանից գործած կտորեղենն ու հագուստեղենը բարձրարժեք էին: Բամբակենու մշակման աշխատանքները կատարում էին կանայք, երիտասարդ աղջիկները ու հարսները: Յուրաքանչյուրը կատարվում էր ընտրած, խոշոր և առողջ հունդերով, որն ստանում էին բամբակաթելերը հեռացնելուց հետո: Առաջին ջուրը, որն ամենից դժվարն էր ու պատասխանատու, սուրմալեցի գյուղացիները կատարում էին բծախնդրորեն: Այն կատարում էին այնպես, որ ոչ մի հունդ-սերմ առանց ջրի չմնա, բացի դրանից՝ ավելցուկ, լճացում տեղի չունենա: Հետագա ջրումը համեմատաբար դյուրին էր: Որպես կանոն, հողամասի վերջում ունենում էին առվակ, որտեղ թափվում էին մարգերից ավելացած ջրերը և հեռացվում դաշտից:

Սուրմալեցի կանայք, աղջիկները բամբակի (և ընդհանրապես) բաղիանը, մոլախոտերն արմատից հանելը կատարում էին ձեռքի որոգի՝ թաթուջակի միջոցով: Այն ունենում էր շատ երկար բռնիչ-պոչ, և թաթուջակի բերանը հաճախակի սրվում էր խարտոցի, համապատասխան սրաքարի օգնությամբ: Ծլարձակած և արդեն մի քանի տերևներով վերջ բարձրացած մատղաշ բամբակենու ցողունի մոտակա մոլախոտերը արմատախիլ էին արվում ձեռքով՝ բույսին վնաս չպատճառելու նպատակով:

Բամբակենու դաշտը, բույսը քիմիական նյութերով՝ թունաքիմիկատներով չէր մշակվում, առանձին տերևներ, բույսեր պարզապես քաղվում, արմատախիլ էին արվում: Հավաքած բամբակը մեծ գոգնոցներով դուրս էր բերվում դաշտաեզր և լցվում դրա համար պատրաստված մեծ ու խոշոր բարդան-պարկերի մեջ: Բերքը սայլերով տեղափոխում էին տուն, ապա վառում արևին, նախօրոք մաքրում մեջը եղած չոր տերևներից և այլ ավելորդ պարունակությունից:

Բամբակն այդ վիճակում վաճառում, հանձնում էին վաշխառուներին, որոնք և վերամշակած կամ հումքի ձևով տեղափոխում էին այլ վայրեր: Բամբակը սուրմալեցիները տանը մանում էին իլիկով, տարբեր հաստության թելեր ստանում և զանազան գործվածքներ պատրաստում: Բամբակից նաև անկողիններ էին պատրաստում, սակայն սա ծայր աստիճան աղքատ ընտանիքներում էր լինում: Սովորաբար սուրմալեցիները ներքնակն ու վերմակը պատրաստում էին իրենց իսկ ոչխարների բրդից:

Սուրմալուում 1 հա տարածությունից ստանում էին 4-5 տ բամբակի հումք:

Գութանով, արտրով պատրաստում (քաշում) էին նաև ջրատար առուներ: Երբեմն դա կատարվում էր ձեռքի բահի օգնությամբ: Բնականաբար բանջարեղենի (լոլիկ, սմբուկ, տաքդեղ, սեխ, ձմերուկ, վարունգ և այլն) և այլ կուլտուրաների ցանքի, սածիլման համար պատրաստում էին առանձին, դրանց մշակմանը համապատասխան մարգեր, թմբեր:

Բամբակենու հունդը ցանելու (տնկելու) համար պատրաստում էին ոչ բարձր թմբեր, որոնք իրարից լինում էին 30-40 սմ հեռավորության վրա: Նախ բամբակենու մշակման համար օգտագործում էին առավելապես հարթ տարածքներ, սննդանյութերով հարուստ հողակտորներ: Բամբակենու հունդը (սերմնահատիկը) վերցնում էին բարձր բերքատու և երկարաթել բամբակի տեսակներից: Նախքան դաշտ տանելը, այն տանը վառում էին արևին, չորացնում, ապա առանձին տոպրակներում գոլ ջրով թացացնում, հետո մի քանի օր թողնում տաք տեղում, ոչ հաստ շերտերով: Երբ սկսվում էր հունդի ծլարձակումը, և երբ հողը ցանքի համար լրիվ նախապատրաստված էր, տանում էին դաշտ ցանելու:

Բոլոր դեպքերում պահպանվում էր խստագույն զգուշություն հունդի ծլի լրիվ պահպանության համար: Եթե տեղափոխելիս կամ դաշտում այն տնկելիս ծիլը ջարդվում էր, ապա նման սերմնահատիկներ հողին չէր զցվում: Բույնը, որտեղ զցվում էր հատիկը, պետք է լիներ թմբից ոչ շատ բարձր (թմբի հատակից), որպեսզի ոռոգելիս կարողանար օգտվել ջրից, և ոչ էլ շատ ցածր, առվին մոտ՝ որպեսզի քաղհանելիս արմատախիլ չարվի, նաև չափից ավելի ջուր չստանա:

Երբ ծլարձակած բամբակենին դառնում էր 3-4 տերևանի, կատարվում էր առաջին քաղհանը, ընդ որում փափուկ հողը որոգ թաթուջակի օգնությամբ քաշվում էր բույսի ցողունի բուկը: Այս աշխատատար գործընթացը սուրմալեցի գեղջուկները կատարում էին մեծ վարպետությամբ, մոլախոտերի քաղհանի ընթացքում վարպետ շարժումով փխրում հողն որոգով քաշվում, լցվում էր մատղաշ բույսի հողին կպած ցողունի շրջանակ: Դրանով ձևավորվում էին ապագա ոռոգման առվակը և դրա թմբերը: Եթե բույսը ոչ բոլոր բներում էր ծլարձակել, հարևան բնիկից, որտեղ առկա էին մեկից ավելի մատղաշ բույսեր, հանվում և տեղափոխվում էր չծլարձակ բնի մեջ: Սերմը հողին էր հանձնվում ոչ մեծ խորությամբ՝ 4-5 սմ և միայն այն ժամանակ, երբ հողի 8-10 սմ խորությամբ շերտում ջերմությունը 10-12, իսկ օդինը՝ 15 աստիճանից պակաս չէր: Սուրմալեցի երկրագործը կայողանում էր դա որոշել ձեռքը հողի մեջ մտցնելով: Նման ջերմություն Սուրմալուում սովորաբար լինում էր արդեն մարտ ամսվա մեջ: Այստեղ 1 հա տարածության ցանքի համար ծախսում էին 100-130 կգ բամբակենու սերմ: Բամբակենու մշակման ամբողջ ընթացքում կատարվում էր 4-5 քաղհան-փխրեցում: Սա

հնարավորություն էր տալիս ոչ միայն մոլախոտերի ոչնչացմանը, այլ նաև թթվածնի մուտքին փխրուն հողի շերտից ներս, կլանատում էր բույսի արմատների մոտից խոնավության, ջրի գոլոշիացումը:

Երկրագործը, նայելով բույսի վիճակին, տերևների գույնին, հողի կլեսի շերտին՝ կալորդանում էր ճիշտ որոշել նրա պահանջը: Սովորաբար բամբակենին ջրի պահանջ ավելի շատ է զգում ծաղկման-կոկոնացման շրջանում: Բամբակի բերքահավաքը Սուրմալուում սկսվում էր օգոստոսի վերջերին և ձգվում մինչև ցրտերն սկսվելը՝ նոյեմբեր ամիսը: Ցրտերի հետևանքով դադարում էր բույսի աճը, զարգացումը, և կոգուղները դադարում էին բացվել: Այսպիսի չբացված կոգուղները հավաքում և տեղափոխում էին տուն, լցնում հացատան մեջ կամ դնում մի անկյունում (տաք) և արդեն առանց շտապելու ձմռան ամիսներին թոնրի շուրջին նստած մեծ ու փոքր ձեռքով բացում կոգուղները ու միջից դուրս քաշում սպիտակաթել բամբակը: Սա մնում էր փռված ոչ հաստ շերտով, չորանում, ավելի բացվում, մեծանում և պատրաստի հումք դառնում օգտագործման համար: Բամբակի բերքահավաքը կատարում էին դարձյալ կանայք, աղջիկները: Սրանք թմբերի մեջ (առվակների) քայլելով, լայն ու մեծ գոգնոցները մեջքներին կապած, բացված կոգուղներից արդեն դուրս կախված բամբակը ձեռքով հավաքում և լցնում էին գոգնոցների մեջ: Զգուշությամբ բացված ու արդեն չորացած կոգուղից բամբակը հանելով, աշխատում էին, որ կոգուղի կամ բույսի չոր տերևներ, մասնիկներ չխառնվեն բամբակին: Տղամարդիկ հավաքած բամբակը լցնում էին արտի եզրերին դրած խոշոր բարդանների մեջ, սեղմում, որ պարկը շատ տանի, ապա կապում, կարում բերանները և օրվա վերջին, նայած հավաքած զանգվածի քանակին, սայլով կամ այլ փոխադրամիջոցով (էշ, ձի, ջորի և այլն) տեղափոխում տուն: Բույսի աճի ամբողջ ընթացքում կատարվում էր ընդամենը 5-6 բերքահավաք: Ցանքից մինչև բույսի ծաղկումը տևում էր 3-4 ամիս: Այս ընթացքում կողունը հասցնում է բարձրանալ մինչև 1-1,2 մ: Բերքահավաքն սկսվելուց հետո դրա աճը բնականաբար դադարում է, կողունն աստիճանաբար փայտանում է և ի վերջո չորանում:

Բամբակագործությունից բացի, Սուրմալուում լավ համբավ ուներ տեղացիների մշակած ծխախոտը: Ծխախոտագործությունը ևս բամբակագործության նման անցյալ դարից մշակվում էր տարածքում: Այստեղ մշակում էին ծխախոտի մի քանի բարձր մթերատու և դրսի շուկաներում լավ համբավ վայելող տեսակներ՝ սամսուն, տրապիզոն և այլն: Սրանք ունեին լայն տերևներ և առանձնակի բուրմունք: Ինչպես բամբակի, այնպես էլ ծխախոտի կուլտուրայի մշակումը աշխատատար և հոգատարություն պահանջող գործ էր: Թմբերի հատուկ բներում գցած ծխախոտի մանրիկ սերմերը կամ սածիլած սածիլները խիստ խնամք էին պահանջում: Չնայած մեծ ցանքա-

տարածություններ չէր զբաղեցնում այս արժեքավոր կուլտուրան, սակայն Սուրմալուում ստացվում էր բարձր բերք: Ինչպես բամբակենու մշակման դեպքում, ծխախոտի ցանքի համար ևս տարածքը նախօրոք պարարտացվում էր, մաքրվում մոլախոտերից: Սովորաբար հողատարածքը վարվում էր աշնանը: Գարնանը, երբ վարած, փափուկ ու խոնավ հողից փարթամորեն աճում էին զանազան մոլախոտեր, մեկ անգամ ևս վարում էին, ապա ձեռքով հավաքում և հեռացնում արմատախիլ եղած մոլախոտերը, հողը փոխում, տափանում և նախապատրաստում ծխախոտի սածիլների տնկման համար: Երբ սածիլն ունենում էր 10-12 սմ բարձրություն և ցողունին 3-4 տերևիկներ էր առաջանում, ապա այն տեղափոխում էին դաշտ և սածիլում: Թմբերը պատրաստում էին 50-60 սմ հեռավորության վրա, ապա դաշտը թեթևակի ջրում և թմբերի ներքևից 5-6 սմ բարձր, իրարից 10-15 սմ հեռու խոնավ հողի մեջ զգուշությամբ սածիլի արմատները մատով դնում էին հողի մեջ և խոնավ հողով ծածկում արմատները ու ցողունի մի մասը: Սածիլերից մեկ շաբաթ անց կատարվում էր առաջին ջուրը: Այն մինչև բերքահավաքի վերջը, ցրտերն ընկնելը, կատարվում է 8-10 անգամ: Յուրաքանչյուր ոռոգումից հետո երկու-երեք օր անց (նայած եղանակի չորությանը) կատարվում է քաղհան-փխրեցում, մոլախոտերի ոչնչացում-հեռացում: Ծխախոտի սածիլումից 3-4 ամիս անց ցողունի ներքևի մասի առաջին տերևը դառնում է բաց դեղնավուն երանգի և ծայրի սուր մասը ծռվում, թեքվում է դեպի վեր:

Հիմնական տերևաքաղը, տերևների հասունացումը կատարվում էր Սուրմալուի տարածքի ամենաշոգ՝ օգոստոս ամսին: Հավաքած, պոկած տերևները զգուշորեն դարսում էին իրար վրա, ապա տուն տեղափոխում կամ հենց դաշտի եզրին, ծառերի հովին նստած, նրա կոթունները մեծ ասեղով քաշում, շարում էին բամբակաթելին և կախում հով վայրում թառամելու, չորանալու:

Սուրմալուում յուրաքանչյուր հեկտարից ստանում էին 18-20 ց ծխախոտի տերև:

Այստեղ մշակում էին նաև բրինձ-չալթուկ: Ջրավազանների առատությունը, դաշտերի հարթությունը հնարավորություն էր տալիս սուրմալեցուն մշակել նաև այս կուլտուրան: Հասունացած չալթուկի դաշտերը չորացնում, ապա և հնձում էին: Չալթուկը տեղափոխվում էր կալեր, կալսում էին, հատիկը առանձնացվում էր ցողունից: Հատիկը տեղափոխում էին «դինգ»: Չալթուկի ցողուններն ու տերևները ցորենի ցողունների համեմատ ավելի նուրբ են, և անասուններն այն ուտում էին հաճույքով:

Բրինձը սուրմալեցիների սննդաբաժնում զգալի տեղ էր գրավում: Դրանից պատրաստում էին զանազան փլավներ, քաշովիներ, նաև օգտագործում այլ սննդամթերքների հետ՝ տարբեր կերակուրներ պատրաստելիս:

Առանձնապես հայտնի էր սուրմալեցիների զատկի փլավը՝ համեմված ծիրանաչլով, չամիչով:

Բրնձի ցանքսի համար ընտրվում էին չալթուկի լիարժեք սերմեր և 1 հա տարածության վրա ցանում էին 150 կգ սերմ: Սերմերն արագ ծլարձակում և բալձրանում են: Բրնձի բալձր բերք է ստացվում, երբ բրնձահատիկները իրենց մեջ կարողանում են ջրի զգալի քանակ կուտակել, ասենք իրենց բաշի քառորդի չափով: Բրնձի դաշտը ծածկվում է ջրի 4-5 սմ հաստության շերտով, և այն հեռացվում է, երբ հատիկները հասունացել են: Դաշտի և չալթուկի ցողունների, տերևների չորացումը հնարավորություն է տալիս բերքահավաքին՝ հնձին: Բրնձի բալձր բերք ստանալու նպատակով Սուրմալուում կիրառվում էր երկու եղանակ, առաջինը՝ նախքան դաշտի վարումը այն հարստացնում էին օրգանական պարարտանյութով՝ գոմաղբով, իսկ մյուս եղանակը ցանքաշրջանառությունն էր, որն այստեղ փոխանցվում էր սերնդից-սերունդ: Որպես բրնձի կուլտուրայի մշակման հաջող նախորդ, լոբազգիներն ու թիթեռնածաղկավոր բույսերն էին: Սուրմալեցին լավ գիտեր, եթե վարված առվույտի դաշտում է ցանվում բրինձ, ապա բալձր բերքն ապահովված է: Այս դեպքում ստացվում էր 20-25 ց և ավելի բերք մեկ հեկտարից:

Մշակում էին նաև գարի: Հաճախ այն ցանվում էր առվույտի հետ (ենթացանք), և գարին հնձելուց հետո դաշտը մնում էր առվույտի տակ: Ցանում էին նաև կորեկ, որը չափազանց բարձր բերք էր տալիս և ուներ չափազանց կարճ վեգետացիոն շրջան: Կորեկի մշակումն առանձնակի դժվարություն չի ներկայացնում: Բերքահավաքից հետո չոր խրձերը տեղափոխում են կալատեղ, կալսում և ոսկեգույն հատիկներն առանձնացնում: Կորեկի ցողունը լավ կեր է (համեմատաբար) բոլոր կենդանիների համար: Կորեկի մի մասն օգտագործում են թռչուններին կերակրելու, իսկ մեծ մասը՝ կեղևահանում և դրանից պատրաստում քաշովիներ, շիլաներ: Կորեկի ալյուրից թխած հացը (բոքոնը) շատ դժվարությամբ և տհաճությամբ է ուտվում: Սուրմալուում կորեկի մշակման համար քիչ տարածքներ էին տրամադրվում:

Բնականաբար գավառի հայ բնակչությունը զբաղվում էր նաև բանջարաբոստանային բույսերի մշակմամբ:

Լոլիկի համար առանձնացվում էին բնակավայրերին ավելի մոտ տարածքներ, որոնք տարվա ընթացքում «ձեռի հետ» հարստացվում էին գոմաղբով և այլ օրգանական պարարտանյութերով: Նույնն արվում էր նաև տաքդեղի մշակման դաշտերում:

Լոլիկի, տաքդեղի, սմբուկի սածիլներն աճեցնում էր ինքը՝ հողատերը, կամ փոխ վերցնում հարևանից՝ հաջորդ տարին իր աճեցրածից նրան վերադարձնելու պայմանով: Այս բանջարեղենները մշակվում էին նաև առանց

սածիլների: Պարզապես մշակված հողի թմբերին, մարգերին ցանում էին նախօրոք ծլեցրած սերմերը: Օդի բարձր ջերմության պայմաններում սրանք արագ ծլարձակում էին, տերևակալում: Սովորաբար ջրելուց 1-2 օր անց սկսվում էր քաղհան-փխրեցումը, մոլախոտերի հեռացումը: Առաջին քաղհանից հետո կարծես թե բույսը «սլտապանդվում» էր, որ իրեն խնամող կա և արագ աճում, բարձրանում: Որպես կարգ, սուրմալեցին հունիսին արդեն սեղանին ունենում էր իր աճեցրած լոլիկն ու սմբուկը, տաքդեղն ու զանազան կանաչիներ, համեմունքներ:

Սուրմալուում լոլիկից պատրաստում էին թանձր տոմատ-մածուկ, որն այնքան բուրավետ ու համով էր, որ գյուղացի երեխաները այն քսում էին բոքոն հացին և ախորժակով ուտում: Աշնանը, երբ սկսվում են ցրտերը, նախքան «շախտան տալը», դաշտից հավաքում էին կիսահասած և խակ լոլիկներ, ապա մշակում դրանք (հեռացնում «պոչերը», լվանում և այլն), լցնում զանազան տարողությունների կավե ամանների՝ կճուճների, ջոռաների, փոքր կարասների մեջ և դրանց հետ խառնելով քարուզ, զանազան համեմունքներ, նաև կանաչ լոբի, սոխ, սխտոր, պահածոյացնում՝ թթու դնում: Տաքդեղը, ինչպես և լոլիկը, օգտագործվում էր տարբեր կերակուրներ համեմելու համար: Սրանք սմբուկի հետ անբաժան էին սուրմալեցու սիրած կերակուրներից մեկի՝ խորոված-ի պատրաստման ժամանակ: Առանց կարմիր լոլիկի, կանաչ տաքդեղի և շագանակագույն բարակ ու երկար սմբուկի ոչխարի մսից խորոված-ը արժեք չուներ:

Հաճախ տաքդեղը թողնում էին հասունանա, կարմրի, ապա քաղում, «պոչերը շարում» թելին և կախում չորանալու: Շատ հարգի էր կծու տաքդեղն ու նրա աղացած պղպեղը:

Սմբուկի մշակումը նման էր լոլիկի, տաքդեղի մշակմանը: Սմբուկը՝ ապուրների, խորոված կամ բուսական յուղում տապակած, հայտնի էր Սուրմալուում: Ասենք նաև, որ ամռան, աշնան ամիսներին կեղևահան, երկայնական կտրած սմբուկը շարում էին թելին, չորացնում և դրանով կերակուրներ պատրաստում ձմռան ամիսներին: Սուրմալուում աճում էր ընտիր սոխ: Սոխի մարգերն առանձնակի նախապատրաստում, ապա ցանքին առանձնակի խնամք էին ցուցաբերում: Տարածքը լավ պարարտացնում էին, ապա մաքրում մոլախոտերից, խիճ ու քարից, կոշտերից ու նախորդ ցանքի չոր արմատներից: Մարգերը պատրաստում էին 1-1,5 մ լայնության և ոչ շատ երկար՝ որպեսզի ջրելը դյուրին լիներ:

Սովորաբար սոխը ցանվում էր խիտ, և այդ պատճառով նրա դալար, կանաչ տերևներն ու փոքրիկ գլխիկները մշտապես զարդարել են Սուրմալուի հայ բնակչության սեղանները: Դրանք մշտապես օգտագործվել են նաև զանազան տաք և սառը կերակուրներ պատրաստելիս:

Մատղաշ սոխը կանաչ վիճակում օգտագործելով, ցանքը աստիճանաբար նոսրանում է և հնարավորություն ընձեռում մնացածներին՝ ավելի լավ սնվելու և խոշորանալու: Այս դեպքում «աշնան սոխը» բահելով հանում, տերևները կտրում են և գլուխ սոխը խոլջիններով ու պարկերով տեղափոխում տուն, փռում տան տանիքին հնարավորինս ջրազրկվելու և ձմռանն օգտագործելու համար: Սոխը տեղացիների համար սիրված համեմունք է և այն օգտագործում են (գլուխը և կանաչ տերևները) հում, եփած, տապակած, խաշած ու խորոված վիճակում: Սուրմալեցիները սոխի բուժիչ հատկությունների մասին լավ տեղյակ էին և անհրաժեշտության դեպքում օգտվում էին դրանից:

Մշակում էին նաև համեմունքային կանաչիներ՝ ռեհան, ծիտրոն, համեմ, կոտեմ, թարխուն և այլն:

Սուրմալուում աճեցնում էին ընտիր ձմերուկներ: Սրանք ունենում էին խոշոր ծավալ և քաշ: Սուրմալուի ձմերուկի սերմերը հիմնականում սև էին և, որ շատ կարևոր է, մանր: Բարակ էր նաև ձմերուկի կեղևը: Այս բոլորով հանդերձ, այստեղ աճեցված ձմերուկն ուներ բարձր շաքարայնություն, պարզապես նմանը չկար ողջ տարածքում: Ձմերուկի քիչ ծլարձակած 2-3 սերմերը գցվում էին նախօրոք մշակված հողի թմբերին, կամ մարգերին արված փոքրիկ բնիկների մեջ, փխրում հողի բարակ շերտով ծածկում: Ապա ջրում են դաշտը: Մի քանի օր անց սերմերից դուրս են գալիս առաջին տերևները, աճում ու սողալով բավականին տարածք գրավում: Ծաղկի հետ երևում է ընկույզից փոքր ձմերուկը և արագորեն մեծանում: Սուրմալուի ձմերուկը սայլերով տեղափոխում էին նաև այլ տարածքներ՝ վաճառքի:

Սուրմալուում հայերն աճեցնում էին նաև սեխ: Սրա մշակումը համարյա չի տարբերվում ձմերուկի մշակումից: Եթե ձմերուկը միայն ուտելիս է համ և բուրմունք տալիս, ապա սեխի դաշտերը մտնելիս այն հեռվից զգացվում է: Բավական է տանը մեկ սեխ պահվի, և տուն մտնողն այդ հաճելի հոտն զգում է անմիջապես: Այստեղի սեխերը շաքարի քաղցրություն ունեն, բարակ կեղև և հյութալի փափկամիս:

Ի տարբերություն շատ ու շատ սեխ մշակողների, Սուրմալուում աճեցնում էին նաև սեխի մի տեսակ, որին այստեղ դութմա էին անվանում: Ասենք, որ Հայաստանի միայն Շարուր գավառում էր, որ նման դութմա (և նման եղանակով) էին աճեցնում: Դութմայի բույսի մշակումը նույնն էր, ինչ սեխինը, սակայն սա սեխից քաղցր ու հաճելի էր: Մեծ պատմաբանը գրել է. «Ի Սոսին դութմա կոչեցեալ տեսակն» և այլն:

Մշակվում էին նաև քունջութ, կանեփ: Սրանցից, բացի յուղ ստանալը, պատրաստում էին զանազան աղանդերներ, տոնական օրերին և ընդհանրապես հյուրեր ունենալիս, կամ տան անդամների համար: Սրանց բովում,

խառնում են չամիչին, նոխուդին (առանձնակի պատրաստած) և դնում սեղանին: Օգտագործում էին նաև առանձին տեսակի հացեր թխելիս՝ ցանելով դրանց վրա:

Վարունգի մշակումը համարյա թե նման է ձմերուկ-սեխին, բայց ավելի զգուշություն և խնամք էր պահանջվում: Այստեղ վարունգի լայն թմբերին ցանում էին նաև սեղանի կարմիր ճակնդեղ, որով հողի նույն տարածությունից ստանում էին կրկնակի բերք: Վարունգն օգտագործվում էր ընտանիքի պահանջների համար, այն նաև թթու էին դնում: Սովորաբար խոշոր վարունգները չէին քաղում, թողնում էին գերհասունանան, սերմերը հասունանան: Այս դեպքում առվի ափին բացում էին վարունգի «փոլը», սերմերը հանում, լցնում մաղին, լվանում, չորացնում և պահում հաջորդ տարին ցանք կատարելու համար, իսկ ավելացածն էլ հարևաններին տալիս:

Սեղանի կարմիր ճակնդեղը հարգի էր զանազան կերակուրների պատրաստման, թոնրի, օջախի կրակի մեջ խորովելու համար, իսկ մանրերը՝ անասուններին կերակրելու: Սուրմալեցիները շատ էին օգտագործում կարմիր ճակնդեղի առանձնապես դալար կողունները: Տերևի դալար կողունը խաշում, ապա թավանեի մեջ յուղով տապակում էին ու վրան ձու ջարդում:

Հողամասի ծայրամասերում մնացած ոչ պիտանի տարածքներն օգտագործում էին դդումի ցանքի համար: Սովորաբար դդումի սերմերը դարձյալ ծղեցնում, նոր էին հանձնում հողին: Աշնանն ստանում էին խոշոր ու կլոր դդումներ: Սրանց գույնը լինում էր հիմնականում շագանակագույն և, ունենալով հաստ կեղև, պահպանվում էին անգամ մինչև հաջորդ տարի:

Դդումից պատրաստում էին համով կերակուրներ: Սերմերից և միջուկից ազատված դդումի մեջ լցնում էին չիր ու չամիչ, բրինձ ու յուղ և դնում տաք թոնրի մոխրի մեջ: Որպեսզի ավելի լավ հասունանան, սովորաբար դդումները մինչև ուշ աշուն շարվում էին արևի տակ՝ պատերին, ցանկապատերին, գոմի, մարագի, չարդախի կամ տան տանիքներին:

Յուղատու բույսերի՝ քունջութ, գերչակ, կտավհատ, մշակումը հիմնականում նպատակ ուներ բավարարելու ընտանիքի պահանջները: Սրանք, որպես կանոն, ցանում և մշակում էին համարյա բոլոր բնակիչները: Սուրմալուի կանեփի, գերչակի, կտավհատի յուղն ուներ առանձնակի համ և բուրմունք և շատ բարձր էր գնահատվում արտաքին շուկայում: Առանձնակի արժեք էր ներկայացնում կտավհատի յուղը, որը սուրմալեցիների սննդաբաժնում զգալի տեղ էր գրավում: Տարածքում կային ոչ խոշոր թվով ձիթհանքեր, որտեղ և ճզմելու եղանակով սերմերից զատվում էր յուղը: Գերչակը տալիս էր համեմատաբար բարձր բերք, և հատիկները պարունակում էին յուղի զգալի քանակ: Ինչպես բամբակենու, ծխախոտենու, այնպես և յուղատու բույսերի չորացած կողունները օգտագործվում էին որպես վառելիք թո-

նիլների, օջախների համար: Աշնանն այդ ցողունները բերվում և դարսվում էին տանը կից չալդախների վրա:

ԳԵՐՉԱԿԻ մշակումն այստեղ կատարվում էր ոլոշ առանձնահատկություններով, նախընտրում էին բերրի և փափուկ հող, քանզի բույսի արմատները հողի մեջ խորանում են 2-3 մ: Այս պատճառով էլ բույսը չորադիմացկուն է և Սուրմալուի շոգ կլիմային հարմարված: Դաշտը վարում էին սովորական 20-25 սմ խորությամբ և ապրիլին կատարում ցանքը: Պատրաստում էին ոչ բարձր թմբեր, ապա սերմնահատիկները բների մեջ էին գցում իրարից 50-60 սմ հեռավորությամբ: Բույսը արագ և փարթամ աճում էր: Հասունացած ողկույզները զգուշությամբ կտրում-պոկում են ցողունից, ապա փռում հատակին փռած շորին: Աստիճանաբար սկսվում է տուփիկների բացվելը, և հատիկները դուրս են թափվում: Սրանք հավաքում և, ձիթհանքում ճզմելով, ստանում են գերչակի այնքան հաճելի յուղը: Սուրմալուում գերչակի ցանքի 1 հա տարածքից ստանում էին 11-12 ց բերք: Գերչակի սերմը՝ հատիկները, պարունակում են մինչև 70-75 տոկոս յուղ: Սուրմալուում բավականին շատ էին ձիթհան տները: Այստեղ ճնշման տակ հատիկներից ճզմված յուղը դուրս էր գալիս և թեք առվակով հոսում հավաքման ամաններին, դույլերի, խոշոր կճուճների մեջ: Սերմերի կեղևները նույնպես պարունակում են 4-5 տոկոս յուղ: Սրանք բավականին հարուստ են ազոտ պարունակող նյութերով, կա նաև ֆոսֆորաթթու:

Գերչակի բույսը հասունանալու շրջանում ոռոգման ջրի խիստ պահանջ չի զգում: Գերչակը ցանում են հատիկային բույսերից հետո (ցորեն, գարի): Ցանքի համար կատարում են 20-30 սմ խորության վար: Ցանքի լավ ժամանակը ապրիլ-մայիս ամիսներն են, երբ հողն արդեն բավականին ջերմություն ունի իր մեջ (նրա 10 սմ խորությունում այն պետք է հասնի 10 և ավելի աստիճանի): Ցանելու նպատակով վարած ու լավ փոցխած հողի վրա պատրաստում են ոչ բարձր թմբեր, սրանք իրարից լինում են 60-70 սմ հեռավորության վրա, որպեսզի հնարավոր լինի կատարել քաղհան, բուկլիցվխրեցում: Թմբերին, իրարից 50 սմ հեռավորության վրա, պատրաստում են ոչ խոր փոսիկներ և նախօրոք ծղեցրած սերմերը գցում դրանց մեջ, ապա փափուկ հողաշերտով ծածկում: Այստեղ յուրաքանչյուր 1 հա տարածության վրա ծախսում են 18-20 կգ գերչակի սերմ: Գերչակը Սուրմալուի բնակլիմայական պայմաններում լավ աճում է, 100-125 օրում սերմնահատիկները հասունանում են: Սերմերը հողի մեջ են գցում 5-6 սմ խորությամբ: Երբ բույսը բարձրանում է հողաթմբից և ունենում է 3-4 տերևներ, սկսվում է առաջին քաղհանը, ապա 1-2 օր անց դաշտը ջրում են:

Թիթեռնածաղկավոր բույսերի (առվույտ, կորնգան) ցանքն ինքնանպատակ չէր, այն ծառայում էր անասուններին կերակրելու համար: Այստեղ ցանքը, որպես բազմամյա կերաբույս, օգտագործում էին մի քանի տարի,

ապա վարում այլ կուլտուրա մշակելու համար: Առվույտի դաշտը տարեկան հնձում էին 4-5 անգամ և մեկ հեկտարից ստանում 100-120 ց կանաչ զանգված: Առվույտի (կորնգանի) դաշտերը հնձում էին խմբելով կամ ընտանիքի մի քանի տղամարդկանցով: Հնձած խոտը թողնում էին 1-2 օր չորանալու (բայց ոչ խիստ), ապա խորոմ-խրձերի վերածում, փաթաթում, եզրերը ծալում: Այս վիճակում կարող էր դաշտում մնալ մի քանի օր կամ անմիջապես բարձում էին սայլերին և տեղափոխում տուն: Առվույտի խրձերը սայլին էին բարձում վարպետորեն: Երբեմն բարձած սայլն ունենում էր 3 և ավելի մետր բարձրություն: Բարձած խրձերը հաստ պարաններով-չվաններով կապում էին՝ տեղափոխելիս չթափվելու, սայլին շուռ չտալու համար:

Խաղողագործությունն ու պտղաբուծությունը Սուրմալուում հազարամյակների պատմություն ունեն, հավանաբար, ինչպես ավանդույթն է ասում, Նոյ նահապետը խաղողի առաջին վազը՝ իգին, այստեղ է տնկել: Հետագայում երկրամաս ներմուծվեցին խաղողի ավելի բարձր բերքատու տեսակները: Հայտնի էին խարջին, մսկալին, մովազը (սև), հաչարաշը, ճիլարը, գառան դմակը: Այստեղ խաղողի մշակումը կատարվում էր թմբային եղանակով:

Գարնանը հողի շերտով (կավ) ծածկված վազերը հանում էին դուրս, ապա քիչ անց վազերն էտում, կտրում, կարճացնում էին՝ թողնելով ճյուղին 3-4 բողբոջ-աչք: Այգեփորը դժվարին աշխատանք էր, այն կատարում էին ընտանիքի տղամարդիկ, երբեմն հրավիրվում էին հարևաններ, բարեկամներ: Այգեփորի հիմնական նպատակը խաղողի վազը մոլախոտերից ազատելն է, նաև վազի բունը փխրեցնելը, որպեսզի բարելավվի ջրի և օդային ռեժիմը: Որպես կանոն, այստեղ այգիները ջրում էին տարեկան 4-5 անգամ: Առաջին ջուրը (ոռոգումը) կատարում էին վազը էտելուց հետո: Այգիները ջրում էին գիշերները, երբ և՛ ջուրն էր առատ, և՛ բանջարաբոստանային կուլտուրաները ջրող չկար: Տարվա ընթացքում հատկապես այգու առուների մեջ շատ մոլախոտեր են աճում, սրանք պարբերաբար հնձում էին ձեռքի մանգաղով և չորացնում անասունների համար:

Այգեկութն սկսվում էր սեպտեմբեր ամսին: Հավաքած խաղողը կողովքթոցներով տեղափոխում էին տուն: Այգեկութից որոշ ժամանակ անց՝ հոկտեմբեր ամսվա վերջերին, սկսվում էր այգեթաղը: Սրա համար նախ այգին ջրում էին, ապա մի քանի օր անց, այնպես, որ հողը ցեխ չլինի և ոչ էլ շատ չոր, կատարում այն: Դարձյալ հավաքվում էին ընտանիքի մեծ ու փոքր անդամները: Մի քանիսը (սովորաբար երիտասարդները, երեխաները) վազերի արդեն երկար ճյուղերն էին հավաքում, ի մի բերում, իսկ մեծահասակներն ընտրում էին հարմար հողակտոր, որի վրա կան բույսեր, արմատնելով (որպեսզի հողը չթափվի) դնում վազի վրա: Գարնանը խաղողի վազերը կտրելիս-էտելիս արքատը (կտրած ճյուղերը) հավաքում, կապում էին խրձեր և

տեղափոխում տուն, ապա դարսում չարդախին: Սրանք մինչև ձմռան գալը լավ չորանում էին, վառարանի, թոնրի, օջախի համար օգտագործվում որպես վառելիք: Սուրմալեցիներն առանձնակի հակում ունեին խաղողի վազելով կրակին խորոված պատրաստելու:

Այգու տերերը խաղողի հասունացման շրջանում 1-2 ամիս գիշեր-ցերեկ մնում էին այգում՝ ցերեկները այգու խնամքով զբաղվում, գիշերները այն հսկում առանձին անցանկալի հյուրերից: Սակայն հյուրասեր սուրմալեցին, խաղողի հասած շրջանում մոտով անցնող ծանոթ-անծանոթին անպատճառ կհրավիրեր հյուրասիրության: Ճիշտ տեսակի խաղողը թեև ուտելու համար քիչ է օգտագործվում, սակայն այն խաղչի խաղողի հետ գինուն տալիս է առանձնակի համ և բուրմունք, գինին դառնում է ոսկեգույն-շագանակագույն: Կային նաև խաղողի սև տեսակներ, որոնք օգտագործում էին ինչպես ուտելու, այնպես և գինիներ, դոշաբ պատրաստելու նպատակով: Սուրմալեցիները ասում էին, որ սև (կարմիր) գինին ավելացնում է մարդու արյունը, մաքրում այն օտարածին տարրերից: Գինի պատրաստելու համար նրանք մեծ տաշտերի մեջ լցրած խաղողը ոտքերով սրոտում են, որի համար հաճախ են երեխաների օգնությանը դիմում, հյութը լցնում բլուտագործների ձեռքերով պատրաստված մեծ ու տարողունակ կարասների մեջ, նեղ բերանը ծածկում և թողնում խմորվելու: Ընդամենը մի քանի օր անց այդ հյութը կարասների մեջ սկսում էր «եռալ»: Մաճառը խմում էին հենց կարասների մոտ, երբեմն էլ այն «շտոփների» մեջ լցրած՝ դնում սեղանին: Մաճառը, որ լրիվ գինի չի դարձել, ունենում է պղտոր, անթափանցիկ գույն: Մի քանի օրից, երբ վերջանում է խաղողաշաքարի խմորման գործընթացը, երբ ածխաջրային մասը լրիվ քայքայվում և վերածվում սպիրտի, հեղուկը զուլալվում է, նրա երեսին բարձրացած խաղողի կորիզները ու կեղևները իջնում են կարասի հատակ, ստացվում է ցանկալի խմիչքը: Կարասների բերանները ամուր փակում են և թողնում հետագա օգտագործման: Չնայած Սուրմալուում արտադրվող գինու առատությանը, համարյա այն չէին վաճառում: Օղին, որը հիմնականում ստանում էին խաղողի մնացած «չանչից» և մաճառից, քիչ էր թորվում: Սուրմալեցիները գինու համեմատ օղի քիչ էին օգտագործում: Ամռանը գինին խառնում էին լիմոնադին, ստացվում էր հաճելի ըմպելիք, որին անվանում էին «մավրա»: Խաղողի առանձին տեսակներից պատրաստում էին նաև չամիչներ: Հիմնականում դրա համար օգտագործում էին անկորիզ տեսակները՝ քիշմիշը: Օգտագործում էին նաև սև տեսակը՝ անկորիզ ու կորիզավոր: Ստացած չամիչին դեղին տեսք տալու նպատակով երբեմն այն ծծումբի ծխով ծխեցնում էին և ապա տոպրակների մեջ պահում չոր և հով տեղում:

Խաղողի հյութից պատրաստում էին նաև դոշաբ: Այն պատրաստելու նպատակով հյութը քամում էին մանր անցքերով ցանցի, թանզիֆի օգնությամբ, լցնում մեծ կաթսաների մեջ և դնում կրակին, եփում, եռացնում, ջրազրկում (համարյա): Որպեսզի դոշաբն ունենա պարզ և հաճելի գույն, այդ ընթացքում հյութի մեջ լցնում էին փոքր քանակությամբ սպիտակ կավահող, սա եղած ավելորդ մասնիկները հավաքում էր իր վրա (մեջ) և իջեցնում կաթսայի հատակ: Դոշաբը համարվում էր մրսած մարդու առողջությունը վերականգնելու ամենալավ միջոցը՝ մեկ բաժակ դոշաբ, և հազն ու մրսածությունը կանցնի: Դոշաբն օգտագործում էին ընկույզի միջուկի, ալրի հետ խառնած՝ այնքան հիանալի ու հաճելի տաջուխ պատրաստելու համար:

Չնայած Սուրմալուն ուներ գետերի, գետակների, աղբյուրների ու լճերի մեծ ցանց, սակայն ոռոգման հարցը մշտապես մնում էր գյուղացու, երկրագործության դժվարագույն հարցը: Նախ, հաճախ միևնույն ջրաստարիչ օգտվել ցանկանում էին միանգամից մի քանի հողագործներ, ապա, ամռան տապ օրերին ջրի քանակն զգալի պակասում էր, առուները ու առվակները ծածկվում էին մոլախոտերով, առուն լցվում էր տիղմով և ջրատարողունակությունը խիստ ընկնում էր: Այդ ամիսներին պակասում էին նաև ոռոգման հիմնական աղբյուրների՝ գետերի ու գետակների ջրերը:

Սուրմալուում ևս ոռոգման հարցը կարգավորելու համար նշանակված էին պատասխանատուներ՝ ջրբաշխներ, սակայն սրանք երբեմն այլայլ չէին գործում և առիթներ էին ստեղծվում դժգոհությունների, վեճերի, անգամ ծեծկոտուքի և այլն:

Ընդհանրապես այգիների, առվույտի և հացահատիկային կուլտուրաների, նաև բամբակենու, ծխախոտի դաշտերը ոռոգում էին գիշերային ժամերին: Այս դեպքում հողատիրոջը մնում էր իր դաշտի սկզբնամաս հասցրած ջուրը առանձին առվակներով բաժանել մարգերի թմբերի մեջ և սպասել, որ ջուրը հողամասի վերջում երևա: Ասենք, որ սուրմալեցիները տեխնիկական բույսերի ոռոգումը կատարում էին չափազանց զգույշ և յուրահատուկ: Յուրաքանչյուր դաշտի 1 հա տարածքից սուրմալեցիները ստանում էին 40-50 ց և ավելի բերք, գարու, կորեկի բերքատվությունը ավելի բարձր էր և հասնում էր մինչև 60 կենտների: Փոքր հողատարածքները տրամադրում էին լորու, սիսեռ-նոխուդի մշակմանը: Սրանք մշակում էին հիմնականում ընտանիքի կարիքների համար: Լոբին օգտագործում էին և՛ կանաչ վիճակում, և՛ հատիկներով:

Կանաչ լոբին նաև կախում էին թելի վրա և հով տեղում չորացնում, ապա դրանից ձմռանն ու վաղ գարնանը կերակուրներ պատրաստում: Կանաչ լոբին այլ բանջարեղենների հետ նաև թթու էին դնում: Սիսեռը հալգի էր, և այն ցանում էին առանձին մարգերում: Սրա տարածքը համեմատաբար ավելի փոքր էր, քան լոբունը: Նույնը և գազարի ցանքը:

ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Սուրմալուն ուներ նաև զարգացած անասնապահություն: Դա բացատրվում էր մի կողմից բնակչության սերնդից-սերունդ փոխանցվող ավանդույթներով ու փորձով, մյուս կողմից՝ բնակչության խառնամուսնությամբ անասնապահական մթերքների առատ օգտագործմամբ և, որ կարևորն է, այդ ճյուղի զարգացման համար կային բնական բարենպաստ պայմաններ: Երկրագործության զարգացման բարձր աստիճանի շնորհիվ տարածքում նաև գյուղատնտեսական կենդանիների և թռչունների համար առատ կեր էր արտադրվում: Հողօգտագործման ընթացքում կիրառվող ցանքաշրջանառությունը օգնում էր, որպեսզի մշակվեն այնպիսի բուսատեսակներ, որոնք հիմնականում բարձրարակ կերեր են հանդիսանում անասունների համար: Այսպես, թիթեռնածաղկավորների՝ առվույտ, կորնգան, ցանքը սնուցելով ազոտաբակտերիաներով, բարելավելով հողի կազմությունը, ինքնուտինքյան պայմաններ էին ստեղծվում վիտամիններով, սպիտակուցներով հարուստ և սննդարար անասնակերեր ստանալու համար: Անասնապահությունը հանդիսացել է ոչ միայն սուրմալեցիների ընտանիքներին լիարժեք սննդամթերքներով ապահովելու հիմնական միջոց, այլ նաև երկրագործության անբաժան ու համագործակցող ճյուղը: Այսպես, հողերի օրգանական պարարտացման (հանքային պարարտանյութեր չէին օգտագործվում) հիմնական աղբյուրը անասնապահությունն էր: Դաշտային աշխատանքների՝ վար, փոցխ, բերքի տեղափոխում, զանազան բեռնափոխադրումներ, ընտանիքի վառելիքի (չոր գոմաղբ՝ տարբ, աթար, ցան և այլն) օգտագործման և ստացման միակ աղբյուրը ևս անասնապահությունն էր: Բացի վերը թվարկվածներից, գյուղացին անասնապահությունից ստանում էր նաև ընտանիքի կարիքները բավարարող չափազանց կարևոր մթերքներ՝ բուրդ, մազ, կաշի, իսկ թռչուններից՝ փետուր և բմբուլ:

Ըստ գիտության տվյալների, ներկայիս գյուղատնտեսական կենդանիները մարդու կողմից ընտելացել են 10-12 հազար տարի սրանից առաջ: Բացառված չէ, որ ունենալով բնակլիմայական նպաստավոր պայմաններ, Սուրմալուի և հարակից տարածքներում այդ ընտելացումը կատարվեր հաջողությամբ: Մենք ելնում ենք այն պարզ դրույթներից, որ ջրավազանների առատությունը, հարթավայրային և լեռնային արոտավայրերով հարուստ բուսականությունը հիանալի պայմաններ են եղել վայրի զանազան կենդանիների և թռչունների առաջացման ու բազմացման համար: Դաշտերում և ենթալպյան տարածքներում եղած բուսածածկը կերի լավ աղբյուր էր ոչխարների, ձիերի, ուղտերի համար ոչ միայն գարնան, ամռան և աշնան ամիսներին, այլ նաև սակավաձյուն տարիներին, որը հաճախ էր լինում:

Գյուղացիներից շատերը, որոնց անասուններին ապահովված չէին ձմռան կերերով, ամռան ամիսներին հնձում էին ենթալպյան և ալպյան տարածքներում հարուստ բուսածածկը և հիմնականում սայլերով, ձիերով չորացած խոտը տեղափոխում տուն:

Խոտհունձն սկսում էին, երբ դաշտում ծաղկած էին լինում խոտերի կեսից ոչ ավելին: Հնձում էին մի քանի հոգով՝ հայրեան ու բարեկամ միասին: Հնձվորները, համարյա բոլորն էլ, գլխներին կապում էին սպիտակ թաշկինակ-այրոխներ: Սա պաշտպանում էր արևահարությունից: Դաշտային աշխատանքների, առավելապես խոտհնձի ժամանակ, սուրմալեցիները հագնում էին տրեխ-չարոխներ: Այստեղ չարոխները այնպիսի սրածայր ու գունավոր բրդյա թելերով չէին, ինչպես Արցախում, Զանգեզուրում: Ամենուր չարոխների մեջ դրվում էր քեչայից կտրած հաստ շերտ, որն ինչ-որ չափով ոտքը պաշտպանում էր կոշտերից և մանր խիճերից:

Անասնապահության մեջ կենդանիների հիմնական գլխաքանակը կովերն էին: Այստեղ կովերը տեղական, համեմատաբար ցածր կաթնատու էին, սակայն սրանց կաթի մեջ յուղի քանակը բավականին բարձր էր: Սուրմալուում տավարաբուծությունը հիմնված էր էքստենսիվ խնամքի, բուծման և պահպանման եղանակների վրա: Անասուններն ունենում էին ցածր կենդանի զանգված՝ 250 և քիչ ավելի կգ: Սակայն սրանք ունեին ամուր կազմվածք, խնամքի և կերակրման հանդեպ պահանջկոտ չէին: Կովը սուրմալեցու համար մի ամբողջ հարստություն էր, այդ պատճառով սերնդից-սերունդ փոխանցում էին նրա հանդեպ ուշադիր և հոգատար վերաբերմունքը: Կովերն այստեղ արագ հասունանում և 7-8 ամսական հասակում ծածկվում ու հղիանում էին: Սակայն գյուղացիներից շատերը առաջին անգամ ցանկության եկած մատղաշների՝ երինջների ծածկը հետաձգում էին մի քանի ամսով: Պարզապես այդ օրերին (ցանկություն) 3-4 օր նախքան չէին ուղարկում (ցուլի մոտ): Հղիության շրջանը տևում էր 285 օր: Այն կարող էր տատանվել 10 օրով: Ինչպես միշտ, արու հորթերը ծնվում էին 3-5 օր շուտ: Նորածիններն նույնպես ունենում էին ցածր կենդանի քաշ, որը չէր անցնի մոր կենդանի զանգվածի 5-6 տոկոսից: Որպեսզի հետագա մթերատվությունը բարձր լինի, երինջների ծածկը կատարվում է 13-15 ամսական հասակում, երբ կենդանու քաշը հասնում էր մեծահասակի 3/4-ին: Այս դեպքում առաջին ծիրը բարդություններով չէր լինում և ստացվում էր բարձր կաթնատվություն:

Ծնից հետո կովերի ծածկը թույլատրում էին նրանց առաջին իսկ ցանկության արտահայտման ժամանակ: Քանի որ կենդանիների բուծումը կատարվում էր ազատ եղանակով, ապա նախրի մեջ եղած համապատասխան քանակի ցուլերը ժամանակին կատարում էին ցանկության եկած կովերի ծածկը: Ստերջ՝ «ղլսր», մնացած կովը գյուղացու ընտանիքի համար մեծ

դժբախտություն էր: Եթե հնարավոր չէր այդ կենդանուն վաճառել, մորթել, ապա ամբողջ տարին նրան պետք է կերակրեին և խնամեին, սպասելով հաջորդ հղիությանը: Եթե անասունը հաջորդ տարին ևս ստերջ էր մնում, ապա նրան այլևս չէին պահում:

Կովերի կենդանի զանգվածի ցածր լինելու հետ, ցածր էր նաև նրանց կաթնատվությունը, որը տարեկան չէր անցնում 1200-1300 լիտրից: Կովերի կաթնատվության շրջանը տևում էր մինչև 10-11 ամիս:

Որպես կանոն էգ հորթերին պահում էին (լավագույններից՝ լավագույններին) հետագայում երիտասարդ կով ստանալու համար, իսկ արուներին հիմնականում 8-10, կամ 12 ամսական հասակում մորթում: Գյուղում համայնքի անդամների խորհրդով և խնդրանքով առանձին ցուլիկներ խնամվում էին ընդհանուր նախրում որպես արտադրողներ պահելու համար: Մնացած արուներին 2-3 ամսական հասակում ամրձատում էին և օգտագործում որպես մսատու կամ որպես քաշող անասուններ՝ եզներ: Սրանց, 2-3 տարեկան հասակից, աստիճանաբար սովորեցնում էին սայլին լծած լեռներ տեղափոխելուն: Սկզբում սայլը դատարկ է լինում, իսկ նորահաս եզան հետ լծում են ուժեղ և փորձառու եզ, որը նորեկին պարտադրում է իր կամքն ու համբերատարությունը: Ապա լծում են գութանին որպես առջևի քաշող՝ հորիկին:

Նախրի մեջ խնամվում էր մի քանի ցուլ: Սովորաբար սրանք ունենում էին խոշոր զանգված և սերված էին լինում ավելի բարձր կաթնատու, յուղատու մայրերից: Եթե կովը ծածկվում էր, ապա նախրապանն այդ մասին անպատճառ տեղյակ էր պահում նրա տիրոջը: Հաճախ առաջին ծածկը լինում էր անարդյունք, որոշ ժամանակ անց կովը նորից ցանկություն էր ունենում: Պատահում էր, որ կովը ծածկվում էր առաջին անգամ մեկ ցուլով, ապա նույն կամ հաջորդ օրը՝ մեկ ուրիշ ցուլով. այս հանգամանքը դրական էր գնահատվում, որով և ստերջության քանակը նվազեցվում էր: Սուրմալուում կովերի տնտեսական օգտագործման ժամկետը տարբեր էր՝ կախված նրանց կաթնատվությունից, սակայն այն 5-6 տարուց չէր անցնում: Կովը տարեկան տալիս էր մեկ, երբեմն էլ 2 հորթ, որը տնտեսության համար դարձյալ բավականին օգտակար էր՝ կերի առատ բազայի հիման վրա դրանք մեծանում էին համարյա առանց նյութական ծախսերի: Կովի կաշվից պատրաստում էին կոշիկ-չարոխներ նաև, որպես նուրբ կաշի ձիերի, էշերի, ջորիների թամբերի համար, նաև զանազան պայուսակներ պատրաստելու նպատակով:

Եզները սուրմալեցիների համար գյուղատնտեսական աշխատանքների, բեռներ տեղափոխելու միակ (համարյա) միջոցն էին: Այդ է պատճառը, որ որոշ բնակավայրերում եզների գլխաքանակը կովերի քանակից գերազանցում էր: Այսպես, ըստ 1873 թ. տվյալների, Կողբում խնամվում էր 317 գլուխ կով և 451 գլուխ եզ: Եզների գլխաքանակի շատությունը հիմնականում բացատրվում է հողի մշակման և բեռների տեղափոխման պատճառով: Եզներու սայլ ունենալը ընտանիքի, գերդաստանի բարեկեցության նշան էր: Սայլը, որը հիանալի կարողանում էին պատրաստել դուրգար-հյուսները, հեռավոր ու մոտավոր ճանապարհների ամենալավ ու հուսալի փոխադրամիջոցն էր:

Ջրային ավազանների առատությունը (գետեր, գետակներ, լճակներ, նաև Արաքսը) լավ պայմաններ էին գոմեշների, որպես կաթի, մսի, նաև լծկան կենդանիների խնամքի համար: Այստեղ խնամում էին հնդկական տեսակի կարճեղջյուր գոմեշներ, որոնց կենդանի զանգվածը 400-600 կգ էր: Արուներին՝ քարերին, լծում էին ծանրաբեռ սայլերին, նաև՝ ծանր հողերը վարելիս և այլ աշխատանքներ կատարելիս: Օգտագործում էին գոմեշի յուղալի կաթը, որը տարեկան հասնում էր 500-600 կգ-ի: Գոմեշները ուշահաս, բայց երկարակյաց են, և օգտագործվում են 20-30 տարի: Սրանք առանձնակի խնամք չեն պահանջում, սիրում են ժամերով մինչև դնչի ծայրը խորասուզվել ջրի մեջ՝ շոգից և բոռերից պաշտպանվելու համար: Այլ կենդանիների համեմատ գոմեշները ունեն չափազանց մեծ առավելություն՝ սրանք չեն հիվանդանում կենդանիների տարափոխիկ հիվանդություններով, և ստացված մթերքը նույնպես լինում է առանց վարակիչ մանրէների: Իր սննդարարությամբ, համի և այլ հատկանիշներով գոմեշի միսը ոչնչով չի զիջում խոշոր եղջերավոր անասունների մսին, իսկ առանձին կերակուրներ պատրաստելու համար գոմեշի միսը առավել հարմար է: Այու գոմեշները, որոնք ամրձատված չեն, խնամվում են որպես արտադրողներ՝ մատակներին ծածկ կատարելու համար: Ամրձատած գոմեշներին նույնպես բալ են անվանում, սրանք բեռնակիրներ են, և կատարում են զանազան գյուղատնտեսական աշխատանքներ, գութանով վար, սայլ քաշել և այլն: Սուրմալեցի երեխաները գոմեշներին արածեցնելիս կամ դաշտ տանելիս ու ետ բերելիս նստում էին նրա մեջքին: Այդ կենդանին խելոք է, ծանրաբայլ և եթե նրան քիչ սովորեցնում էին, ապա գլուխն իջեցնում էր մինչև գետին, և երբ երեխան նստում էր գլխի վրա, նա այն բարձրացնում էր մեջքին հավասար, ու հեծյալը ետ գնալով հարմար դիրք էր գրավում կենդանու մեջքին:

Գարնանը, երբ ձմռան ամիսներին մութ գոմից կենդանիներին դուրս են հանում, նրանք վազվզում են աջ ու ձախ, և երբ հանդիպում են գեղակցի, անպատճառ պետք է մարտի մտնեն իրար հետ: Սա հետաքրքիր և զարմանալի տեսարան է: Գոմեշները ահռելի ուժով գլուխ-գլխի են խփում, ետ գնում, ապա թափով նորից բախվում իրար: Սուրմալեցիները սիրում էին այդ ուժեղ կենդանուն և հոգատարությամբ վերաբերվում նրան:

Սուրմալեցիները սիրում էին նաև ձի խնամել: Շատերն իրենց ընտանիքներում խնամում էին ռուս զինվորների (սպաների) կողմից ինչ-ինչ հանգամանքներում իրենց թողած (նվիրած, վաճառած) ձիու մատղաշը՝ բուռակը: Այս դեպքում հեծյալը պարծենում էր իր նժույգով և առանձին մրցումներում անպատճառ գրավում առաջնություն:

Ձիերը հիմնականում օգտագործվում էին բեռներ տեղափոխելու, հացահատիկ կալսելու, բարձելու, բայց ոչ վար կատարելու համար: Հանսխ երկու ձի լծած՝ դաշտը փոցխում էին: Սա ուներ այն առավելությունը, որ աշխատանքը կատարվում էր շատ արագ, ինչը եգեներով չէր կատարվի: Նույնը և կալսման աշխատանքներում, ձի լծած կամը մի քանի անգամ արագ էր պտտվում, քան եգեներինը:

Սուրմալեցիները լավ հեծյալներ էին: Սա հավանաբար գալիս էր հնագույն ժամանակներից, իսկ վերջին շրջանում երիտասարդները, տեսնելով ռուս կազակներին, ընդօրինակում էին նրանց: Դեռ մանկուց, առանց բամբի, սուրմալեցի երեխան կարողանում էր ձիու մեջքին կպած, բաշից բռնած սուրալ ու պանալ:

ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ: Հայոց լեռնաշխարհը եղել է վայրի ոչխարի՝ մուֆլոնի հայրենիքներից մեկը: Դեռ հիմա էլ Վայքի լեռներում կարելի է հանդիպել բնության այդ չքնաղ հրաշքին՝ մուֆլոնին:

Սուրմալուում ոչխարաբուծությունը լավ զարգացած էր: Այստեղ խնամում էին կոշտաբուրդ, դմակավոր տեսակի ոչխարներ: Ոչխարաբուծության զարգացման համար կային բնակլիմայական լավ պայմաններ՝ հարթավայրային և լեռնային արոտավայրեր: Սուրմալուի ձմեռները սակավաձյուն են և ոչ խիստ ցրտերով: Ամբողջ տարին ոչխարները կարողանում են օգտվել արոտից: Դաշտավարությունից, խաղողի և պտղատու այգիներից, նաև ջրատարների եզրերից քաղած, չորացրած խոտը նրանց բավարարում էր, երբ հնարավոր չէր լինում արոտավայրերից օգտվել: Սովորաբար, ամռան և վաղ աշնան ամիսներին ոչխարների հոտերը տեղափոխվում էին ամառային արոտավայրեր՝ Արարատի, Բալդրդի, Թաքալթուի լեռնալանջերը: Ամառային արոտի էին տեղափոխում նաև խոշոր եղջերավոր անասուններին: Սկզբում արոտավայրն արածեցվում էր խոշոր եղջերավորների կողմից, ապա, սրանցից հետո, դաշտ էին մտնում ոչխարները: Պատճառն այն էր, որ խոշոր եղջերավոր անասուններն ընդունակ չէին արոտավայրում եղած ցածրանիստ խոտերը պոկել, ուտել, իսկ ոչխարները դա կարողանում էին:

Յայլաղներում կատարվում էր նաև ոչխարի երկրորդ խուզը, այստեղ վերամշակում էին ոչխարի կաթը, որը հիմնականում օգտագործվում էր պա-

նիր պատրաստելու համար: Սուրմալեցիները ոչխարներին կթում էին 3-4 ամիս: Սրանց միջին կաթնատվությունը չէր գերազանցում 100 լիտրից (կթի շրջանում): Ունեին ոչ բարձր կենդանի զանգված և այն չէր անցնում 35-50 կգ-ից: Մեկ ոչխարը տարեկան տալիս էր 1,5 կգ բուրդ, իսկ գառներից աշնան խուզին ստացվում էր 0,5 կգ: Շատ ընտանիքներ տարեկան խնամում էին 15-20 և ավելի ոչխարներ: Աշնանը՝ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, մեծ գերդաստանները, որպես ձմռան պահածոյացված միս, հիմնականում մորթում էին ոչխարներ և դրանց մսից պատրաստում տիպ-դավարմա: Այս դեպքում ոչխարի դմակը օգտագործվում էր գոլորշեփ, ապա յուղում (դմակի) տապակած, կարմրացրած մսակտորները՝ հալած դմակի յուղով ամանում ծածկելու, պահածոյացնելու համար:

Սուրմալուի բնակավայրերից վաղ առավոտյան հովիվն իր հոտն էր քշում դեպի արոտատեղեր: Գարնան ամիսներին, երբ սկսվում էր ոչխարների զանգվածային ծիրը, հովիվները հաճախ էին դաշտից դուրս բերում մի քանի նորածին գառների, մեծ մասամբ դրանք դրվում էին էշի կամ ձիու վրա՝ նախօրոք այդ բանի համար կախված խուրջին-պայուսակում:

Արոտավայրերում ջրավազանների առկայությունը հնարավորություն էր տալիս շոգ ժամերին հոտը քշել ջրավազանի ափ, երբեմն ամբողջ հոտը գետակով անցկացնել, լողացնել: Հովիվները ունեին օրվա ուտելիքի պաշարը, որը երբեմն տալիս էր այս կամ այն ոչխարատերը: Հաճախ նրանք իրենց շատ պարզ ճաշը կատարում էին դաշտում ծառի կամ քարի հովին նստած՝ ոչխարի կթած թարմ կաթի մեջ բրդած բրքոնիկով կամ չոր լավաշով: Բնականաբար, նրանք չէին մոռանում իրենց վստահելի օգնականներին՝ գամփռ, գելխեղդ շներին: Ինչպես հարթավայրային արոտներում, այնպես և առավելապես լեռնային ոչխարի հոտը ապահովված չէր գիշատիչների, առանձնապես գայլերի հարձակումներից: Այդ պատճառով հովիվների մեծ մասն ունենում էր որսորդական հրացան և, իհարկե, մի քանի հավատարիմ շներ:

Որպես կանոն, սուրմալեցիները ոչխարների համար պատրաստում էին թեթև պատերով ու ծածկով գոմեր կամ դրանց խնամում անասնագոմերում: Այս դեպքում աշխատում էին, որ գոմում արձակ (առանց կապի) անասուն չլինի, հակառակ դեպքում նրանք կարող էին տրորել գետնին պառկած ոչխարի դմակը: Ծնի առաջին օրերը մայր ոչխարներին արոտի չեն ուղարկում, սրանք մնում են տանը, բակում իրենց նորածինների հետ, մինչև վերջիններս կազդուրվեն, սովորեն կանաչից օգտվել: Կային ունևոր սուրմալեցիներ, որոնք ոչխարներին չէին կթում, կամ շատ քիչ էին կթում, կաթը թողնելով մատղաշին: Այս դեպքում գառների աճը բնականաբար լինում էր անհամեմատ շատ բարձր:

Գառների հոտն արածեցվում էր ավելի խոտառատ և մատղաշ կկոնաբույսերով ծածկված հանդերում: Գառների հոտը տուն էին քշում ավելի վաղ, և երբ մայրերը հասնում էին գյուղի, բնակավայրի եզրը՝ սկսվում էր մայրերի և գառների մայումն ու մկկոցը: Արու գառներին վաղ հասակից ամորձատում էին՝ արագ աճի, ճարպակալման, հետագայում մորթելու նպատակով:

Բալբաս ցեղի դմակավոր ոչխարներն ունենում էին զգալի կենդանի զանգված, որը հասնում էր մինչև 40-45 կգ-ի (մայրերինը) և 50-60 կգ-ի (արուներինը): Ինչպես և կովերի, ոչխարների բազմացումը կատարվում էր ազատ ընտրության եղանակով՝ հոտում պահում էին մի քանի խոշոր և առույգ որձեր, որոնք կարողանում էին անսխալ, ժամանակին գտնել ցանկության եկած մայրերին և կատարել ծածկ: Սա հնարավորություն էր տալիս մայրերի գլխաքանակի լրիվ բեղմնավորմանը: Հաճախ մայր ոչխարը՝ մաքին, ծնում էր 2, նաև երեք գառնուկ: Այս դեպքում տերը այդ ոչխարին չէր կթում, կաթը թողնվում էր գառնուկներին: Ընդհանրապես զանգվածային ծածկը լինում էր աշնանը, երբ մաքիները ու ալուները տալիս ընթացքում, օգտվելով հարուստ կերադաշտերից, ձեռք էին բերում բարձր կենդանի զանգված, լինում առողջ և հանգստացած: Եթե ոչխարը կթվում էր. ապա ծածկից 1-1,5 ամիս առաջ կիթը դադարեցվում էր, որպեսզի մայր մաքին ավելի կազդուրվի: Սովորաբար ծածկից 4-4,5 ամիս անց սկսվում է ոչխարների զանգվածային ծինը: Որպեսզի մաքին ծածկվի և բեղմնավորվի, հոտում յուրաքանչյուր 40-50 մայր ոչխարի հաշվով խնամվում էր մեկ առողջ ու կենսունակ խոյ: Որքան էլ ոչխարների գլխաքանակը շատ լիներ տվյալ հոտի մեջ, հովիվը լավ ճանաչում էր յուրաքանչյուր ոչխարին, նրա տիրոջը և եթե կատարվում էր ծածկ, ապա նա ոչխարի տիրոջն անպատճառ տեղյակ էր պահում այդ մասին: Սովորաբար դաշտերում, որտեղ արոտից հետո օրվա ընթացքում ոչխարի հոտը հանգստի էր քշվում, սալ քարերին աղ էր շաղ տրվում կամ կոշտ աղի կտորներ էին դրվում: Նույնը կատարվում էր նաև տանը՝ փարախում կամ չարդախի տակ, անձրևից, ձյունից ապահով վայրերում:

Ոչխարների խուզը կատարվում էր գարնան սկզբին: Քանի որ ոչ բոլոր գյուղացիներն էին տիրապետում խուզի արհեստին, ապա գյուղերում եղած վարպետ խուզողները դա կատարում էին իրենք՝ վարձով կամ որպես օգնություն: Սուրմալեցիների անկողինները՝ ներքնակ ու վերմակ, բրդից էին, նրանք բրդից էին գործում իրենց տաք հագուստները ու գուլպաները, գորգերն ու կարպետները,. , փալասները ու խուրջինները: Բարձր արժեք ուներ ոչխարի աղբը: Սա, համեմատած գոմաղբի հետ, ավելի շատ օրգանական պարարտանյութ էր պարունակում, ազոտ (հիմնականում), որի համար տա-

րեկան մեկ անգամ փարախները մաքրում էին և հավաքված աղբը տեղափոխում դաշտ՝ հողը պարարտացնելու: Այս դեպքում լինում էին շատ զգույշ՝ «հողը չվառելու» համար, քանի որ ոչխարի աղբի շատությունից հողն «այրվում» էր և երկար ժամանակ ոչ մի բույս չէր աճում նրա վրա: Պատճառը պարզ է՝ ազոտի մեծ քանակությունը:

Սուրմալեցիների մոտ ոչխարի միսը հարգի էր, նրանից պատրաստում էին զանազան ջրալի, տաք կերակուրներ, տապակում, խորովում, ջրխաշում: Առանձնապես հարգի էր ոչխարի մսից պատրաստած տհալ-դավուրման: Ինչ խոսք, սիրում էին նաև ոչխարի «ոտ ու գլխից» պատրաստած խաշը, որի մեջ պարտադիր էին բարակ աղիների և ստամոքսի հագարքելիքի մաքրած մանր կտորները: Ոչխարի հոտի մեջ, որպես կանոն լինում էին այծեր: Ճիշտ է, չարաճճի այծերը հովիվներին երբեմն շատ անհանգստություն էին պատճառում, բայց հոտի խաղաղ կյանքի համար դրանք խիստ անհրաժեշտ էին:

Այծերից լավագույնն ու խոշորը, նաև տալեցը, գլխավորում էր հոտի տեղաշարժերն ու ապահովությունը: Դբոը (սուրմալեցին այդպես էր կոչում հոտի առաջնորդ արու այծին) լինում էր երկար ու ոլորուն եղջյուրներով, պատկառելի մորուքով, միևնույն ժամանակ՝ բավականին հմուտ ու բնազդին ենթարկվող այծ:

Սուրմալուի այծերն օրական տալիս էին 1-2 լիտր դյուրամարս կաթ, որը հիմնականում օգտագործվում էր պանիր պատրաստելու համար: Օգտագործում էին նաև այծի միսը, մազը: Միսը խորովում էին թոնրի մեջ, իսկ մազից՝ պատրաստում ամուր ու երկար պարաններ: Այստեղ այծերը տալիս էին 2-3 ուլիկներ: Այծերը սովորաբար չէին հիվանդանում: Սրանք վաղահաս կենդանիներ են, հղիությունը տևում է 150 օր, մատղաշը մեկ-երկու օրից արդեն ընդունակ է ազատ վազվզել, թռչկոտել: Այծերն այստեղ լավ հարմարվել են բնակլիմայական պայմաններին, սրանք համարյա խնամքի առանձնակի կարիք չեն պահանջում, չեն պահանջում նաև առանձնակի կերեր և կերակրում: Այծերն օգտվում են ծառերի բարակ ճյուղերից, մացառուտներից, կանաչ ու չոր տերևներից:

Այծի կենդանի զանգվածը հասնում է մինչև 25-30 կգ-ի, ընդ որում՝ մայրերի կշիռը զգալի պակաս է արուներից: Սրանց գուգավորումը նույնպես կատարվում է ազատ ընտրությամբ և համարյա ստերջներ չեն լինում:

Այլ կենդանիներից Սուրմալուում խնամում էին ուղտեր, էշեր, քիչ քանակությամբ հանդիպում էին ջորիներ:

Ուղտեր այնտեղ մշտապես խնամել են: Դրանք օգտագործվել են դեռ հին ժամանակներից՝ Կողբի քարաղի տեղափոխման համար: Նրանք և՛ դիմացկուն են, և՛ ուժեղ, և խստապահանջ չեն կերերի, խնամքի նկատմամբ:

Ոլորտ կանոն, Սուրմալուում ուղտերը տարին բոլոր պահվում էին բաց երկնքի տակ, լավագույն դեպքում նրանց համար պատրաստում էին բարձր առաստաղով չարդախներ, որոնց վրա լցնում էին բամբակի, ծխախոտի, եղեգնի ցողունները, իսկ սրա վրա դարսում չոր խոտն ու ծառի ճյուղերը:

Եթե միայն Կողբի օրինակով ցույց տանք ուղտերի և մյուս բեռնատար կենդանիների քանակը, ապա 1862 թ. այդ բնակավայրում խնամում էին 88 ուղտ, 45 էշ և համարյա ուղտերի գլխաքանակին հավասար ձիեր: Ուղտի քաշը հասնում է մինչև 500 կգ-ի, բայց, չնայած դրան, նա կարողանում է օրական կտրել և անցնել մինչև 100 կմ ճանապարհ: Ուղտի կաթն ու միսը չէր օգտագործվում, սակայն առանձին հիվանդությունների ժամանակ օգտագործում էին որպես բուժամիջոց:

Սուրմալուի բնակիչները խնամում էին ***ընտանի թռչունների*** համարյա բոլոր տեսակներից՝ հավ, բադ, սագ, հնդկահավ: Սրանց համար առանձին բներ, թռչնանոցներ համարյա թե չէին պատրաստում: Մեծ մասամբ սրանք գիշերում, քառում էին անասնագոմերում: Ամռան ամիսներին (գարուն, ուշ աշուն) թռչունները համարյա մշտապես լինում էին բաց օդում՝ ցերեկը բակում, գիշերը չարդախի, մարագի մի անկյունում դրած թառերի վրա: Այս թռչունները բազմանում էին բնական եղանակով. վաղ գարնանը մի քանի տասնյակ ձու ածելուց հետո թուխս էին նստում: Առաջին օրերին տաք տարեցները մաղած գարեալյուրը քիչ խոնավացնում՝ «փլոյ» էին անում և կերակրում ճտերին, ապա մայր հավը հոգ էր տանում նրանց կերակրման և խնամքի հարցերով:

Ոլորտ կանոն, խնամվում էին տեղական, ցածր ձվատվության և կենդանի զանգվածի հավեր, որոնք ունենում էին չափազանց համով միս: Հավի մսից պատրաստում էին ինչպես ջրալի ապուրներ, նաև տապակում, խորովում, շոգեխաշում էին:

Չուն սուրմալեցիների սիրած և ամենօրյա ուտելիքներից էր: Դաշտային աշխատանքների, հեռու ճանապարհորդության, վար ու ցանքի, հնձի և այլ աշխատանքների ժամանակ սուրմալեցի տանտիկինները, մայրերն ու քույրերը իրենց մշակներին միշտ հասցնում էին հացաշրջի մեջ փաթաթած փափուկ լավաշ, ձու և պանիր, բուրավետ և համեղ կանաչիներ: Ձվից պատրաստում էին յուղածվեր, ձվածեղներ, օգտագործում զանազան կերակուրների մեջ: Այսպես, նոխուդով, մսով ապուրի-շորվայի մեջ եռման պահին ջարդում էին մի քանի ձվեր, որոնք անմիջապես եփվելով-մակարդվելով, ճաշին տալիս էին արտակարգ համ ու հոտ: Հաճախ հավերը ձու էին ածում մարագի կամ չարդախի մի անկյունում, ապա թուխս նստում և տնեցիներին հանկարծակի բերելով, հայտնվում փոքրիկ ճուտիկներով:

Սագն ու հնդկահավերը չնայած դարձյալ ցածր կենդանի զանգված ու-

նեին (համեմատաբար), բայց շատ հարգի էր ինչպես դրանց խնամքը, այնպես էլ դրանց միսը: Այս թռչունների ձվերը որպես սնունդ չէին օգտագործվում, պահվում էին ճտահանության համար: Երբեմն այս ձվերը դնում էին բարեխիղճ թխսկան հավի տակ: Ճիշտ է, սրանց ձվերից ճտերը դուրս են գալիս համարյա մեկ շաբաթ ուշ, քան հավինը, սակայն թխսկան հավն իր պարտականությունները կատարում էր բարեխիղճ: Բադերի, սագերի խնամքը հեշտացնում էին մոտակա ջրավազանները, որոնց ափերին լինում էր առատ ու մատղաշ կանաչ:

Սուրմալեցիների մոտ հարգի էին նաև թռչունների վերտերը ու բմբուլը: Սրանցից հիմնականում պատրաստում էին բարձեր, որոնցից և հարսի օժիտ էր կազմվում:

Սուրմալեցիները զբաղվում էին (առանձին տնտեսություններ) նաև ***մեղվաբուծությամբ, շերամապահությամբ***: Յանովի, ինչպես նաև դաշտային բույսերի բազմազանությունը, նախալեռնային մարգագետինների առատ բուսականությունը հիանալի կերային բազա էր մեղուների համար: Այստեղի մեղրը առանձնակի համ ու բուրմունք ուներ: Շերամապահության համար լավ պայմաններ կային. նախ՝ թթենիների առատությունը, ապա՝ գարնան ժամանակ անասուններից ազատ գոմերն ու այլ տարածքները: Սակայն մետաքսաթելի ստացումը կատարվում էր տնայնագործական եղանակով, ձեռքի աշխատանքով: Սերնդից-սերունդ անցնում էր շերամապահության պարզ ու նուրբ մասնագիտությունը: Ստացված բուժուր կամ մետաքսաթելը հանձնվում էր վաշխառուներին:

ՍՈՒՐՄԱԼԵՑԻՆԵՐ

Չնայած Սուրմալու գավառի փոքր տարածքին և հայ բնակչության ոչ ստվար քանակին, Սուրմալուն Հայաստանին և հայ ժողովրդին տվել է տաղանդավոր մարդկանց մի մեծ ու պայծառ աստղաբույլ:

Հնագույն ժամանակներից սուրմալեցին ձգտել է լույսի ու գիտության: Այստեղից սերել են գիտության, մշակույթի, պետական ու ռազմական արվեստի բազմաթիվ գործիչներ, գյուղերի ու բանաստեղծներ: Վերջապես Սուրմալուն տվել է Եզնիկ Կողբացի՝ իր դարի փիլիսոփայական մտքի կարկառուն դեմքերից մեկին:

Այստեղից են հանրահայտ Խոնդկարյանները ու Ղարիբջանյանները, Կանայանները ու Իսաբեկյանները և շատ ու շատ մեծատաղանդ հայորդիներ: Սուրմալուում է ծնվել հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Ռուսը բեգ Թեմուրյանցը:

Չնայած ժամանակի դժվարություններին, սուրմալեցիները մեծ ուշադրություն են դարձրել կրթության բնագավառին, և տարածքի բոլոր գյուղերն ունեցել են դպրոցներ, իսկ խոշոր բնակավայրերում (Իգդիր, Կողբ)՝ նաև ուսումնարաններ: Սուրմալեցի երիտասարդները իրենց ուսման ծարավը հագեցրել են Երևանի, Էջմիածնի, Թիֆլիսի, Մոսկվայի և արտասահմանյան շատ երկրների ուսումնական կենտրոններում, միաժամանակ չմոռանալով վերադառնալ հայրենի երկիր՝ կատարելու իրենց ազգային պարտքը հայրենի երկրի կրթության և մշակույթի, ժողովրդի հանդեպ:

Սուրմալեցին, լինի նշանավոր թե շարքային, բնորոշվում է իր աշխատասիրությամբ, շիտակությամբ և հայրենիքին անչափ նվիրվածությամբ: Ի տարբերություն հայկական շատ տարածքների, սուրմալեցիները կարողացել են պաշտպանել իրենց գոյատևումը և թույլ չեն տվել բռնազավթիչներին զանգվածային ահաբեկչություն ու կոտորածներ կազմակերպել:

Փորձելով տալ Սուրմալուի հայ բնակչության բնութագիրը, բնականաբար հնարավոր չի եղել ընդգրկել նշանավոր բոլոր մարդկանց: Սակայն, ըստ մեզ, ներկայացվածներն էլ բավականին ցայտուն բնութագրում են տարածքի հայ մարդուն, նրա էությունը:

«Սուրմալեցիներ» բաժինը կազմելիս, նշանավոր սուրմալեցիների կենսագրականները գրելիս մեզ օգնել են Լաուրա (Էլեոնորա) Գևորգյանը, Լյուդվիգ Ղարիբջանյանը, Էդվարդ Խոնդկարյանը, Էդվարդ Իսաբեկյանը և ուրիշներ, որոնց և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Միաժամանակ մեր բոլոր ընթերցողների ներողամտությունն ենք հայցում, եթե շատերին չենք կարողացել ընդգրկել սույն բաժնում:

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

Ծնվել է Մեծ Հայքի Ճակատք աշխարհի (նահանգի) Սուրմալուի գավառի Կողբ գյուղում, մոտավորապես 380 թ.: Մեծն Ղևոնդ Ալիշանը «Այրարատում» գրում է. «Կայ հռչակագույն շեն գավառին Ճակոց, Կողբ գեղավան, ընթերակայ Աղանվիքն և հայրենիք զոլով յստակագույն գրչի և թարգմանչի հայերեն լեզուիս՝ Եզնակ կամ Եզնիկն կոչեցելոյ առաջին կես Ե դարու»:

Եզնիկ Կողբացին զբաղվել է փիլիսոփայությամբ, թարգմանչությամբ, հասարակական աշխատանքներով: Նա եղել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից, կրթությունն ստացել է Եդեսիայում, Կոնստանտինապոլսում: Նա հայ փիլիսոփայական մտքի պայծառ աստղերից է, որի ուսմունքը չի կորցրել իր արդիականությունը մեր օրերում անգամ:

Ըստ Եզնիկ Կողբացու ուսմունքի, բնությունը հիմնականում կազմված է չորս տարրերից՝ կրակից, օդից, ջրից և հողից: Նրա մտքերը բժշկության, բնագիտության, կենսաբանության, նաև կյանքի այլ բնագավառների վերաբերյալ, իմաստալից և գիտականորեն հիմնավորված են, ուսանելի մեր ժամանակներում ևս: Նրա կարևոր աշխատություններից պահպանվել և մեզ է հասել «Եղծ աղանդոցը», որը հայ փիլիսոփայական մտքի բարձրագույն արտահայտություններից է: Այստեղ Եզնիկ Կողբացին անհաշտ կռիվ է տվել բոլոր այն գաղափարների դեմ, որոնք հակադրվել են քրիստոնեության ուսմունքին, միաժամանակ հերքել հեթանոսության գաղափարները: Նա գտնում է, որ երկաթից սուր ու նետ պատրաստելիս չարություն է գործվում, սակայն դրա մեղավորը ոչ թե երկաթն է, սուրն ու նետը, այլ դրանք պատրաստողը: Կողբացին դեռևս հնագույն ժամանակներում գտնում էր. «... ինչը որ զգայարաններով շոշափվում կամ զննվում է, զգայվում է, այն նյութական է, իսկ ինչը որ զգայարանների վրա չի ազդում՝ ոչ նյութական»: Նա գտնում էր, որ ավելի լավ է մեռնել, զոհվել բարու և արդարի, գեղեցիկի, ազատության համար, քան ապրել ստրկական ու անարգված պայմաններում: Կողբացին կատարել է նաև բազմաթիվ թարգմանություններ, որոնք կարևոր նշանակություն ունեցան հայ իրականության մեջ:

Սուրմալու գավառի Կողբի ծնունդ հայ խոշորագույն փիլիսոփա, հասարակական գործիչ Եզնիկ Կողբացին իր մահկանացուն կնքեց 450 թվականին, ապրելով մոտավորապես 70 տարի:

ԽՈՆԴԿԱՐՅԱՆՆԵՐ

Համազասպ Խոնդկարյանի և Նվարդ Պետրոսյանի ընտանիքը: (ընտանեկան ալբոմից)

Թե երբ և որտեղից են սկիզբ առել Խոնդկալյանները, դժվար է պարզել, բայց հավանաբար նրանք ապրել են Անի մայրաքաղաքում: Նախապապերն ու ժառանգները ծառայել են պետական զորամիավորումներում, աչքի ընկել քաջությամբ և հայրենասիրությամբ: Սրանք օրենքով մշտապես կրել են զենք և առանց դատ ու դատաստանի արժանի պատիժ տվել հարստահալողներին: Քաջության և արդարամտության համար նրանց տվել են ԽՈՆԴԿԱՐ տիտղոս: Ըստ Ա.Դավրիժեցու վկայության, նման տիտղոս կրել են հզոր ու ռազմատենչ սուլթանները:

Խոնդկալյանների նախապապի անունը անհայտ է, հայտնի է, որ ունեցել է բազմանդամ գերդաստան և ժամանակի բերումով նրանցից շատերը բնակություն են հաստատել տարբեր երկրներում՝ Արցախ, Ռուսաստան և այլուր:

Անիից Սուրմալու տեղափոխված նախապապը իր մեծ որդուն քաջության համար անվանել է Խոնդկար: Սա մշտական բնակություն է հաստատել Հախվերդիս գյուղում, ունեցել որդիներ՝ Հակոբ, Ադամ (Աբան), Ավագ, սրանք ունեցել են քույրեր:

ՀԱԿՈԲ ԽՈՆԴԿԱՐՅԱՆԸ ունեցել է Գեղամին, Երեմին: Գեղամն ամուսնացել է համագյուղացի Լուսաբերի հետ և ունեցել են Հրանտին, Ռոզային, Ամասիկին, Արսենին: Գեղամն զբաղվել է առևտրով, ունեցել խանութ, նաև՝ արհեստներով:

ՀՐԱՆՏՆ ամուսնացել է Բուդումյան Սոնյայի հետ և ունեն Շուշանին, Դավթին, Լուսաբերին: Հրանտը բալձրագույն կրթությամբ տնտեսագետ է, աշխատել է մայրաքաղաքի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում: Նա մասնակցել է Հայրենական Մեծ պատերազմին, պարգևատրվել շքանշաններով, մեդալներով:

ՇՈՒՇԱՆԻԿՆ ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետը, երկար տարիներ աշխատել է հանրապետության բույսերի պաշտպանության ինստիտուտում:

ԴԱՎԻԹԸ երկրաբան ինժեներ է, աշխատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ակադեմիայում՝ ավագ գիտաշխատող է: Դավիթ Խոնդկարյանը ամուսնացել է Նունե Առաքելյանի հետ. ունեն Հրանտին, Հայկին:

ԼՈՒՍԱԲԵՐԸ մանկավարժ է, աշխատում է Գյուքելի պալատում բաժնի վարիչ:

ՌՈԶԱՆ ամուսնացել է Արամայիսի հետ, ունեն Ռիմային, Արթուրին, Արկադիին:

Արթուրն ունի Արամայիսին, Արկադին ունի Արմենին: Արմենն ունի Կարենին, Սառային:

Ամասիան զոհվել է Հայրենական մեծ պատերազմում:

ԵՐԵՄ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ: Ամուսնացել է Արուսյակ Լալայանի հետ: Արուսյակը զորավար Դրաստամատ Կանայանի թոռ աղջիկն է: Երեմ և Արուսյակ ամուսիններն ունեցել են Արծվիկին, Հուրիերին, Հեկտորին, Լիպարիտին, Քնարիկին, Ամալյային:

Արծվիկն ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, դասախոսել բժշկական տեխնիկումներում, ճանաչված դեղագործ է: Արծվիկն ունի Կարինեին, Գայանեին, Ցողիկին:

ԿԱՐԻՆԵՆ վերջացրել է Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը, ունի Հուրիկին: Հուրիկը վերջացրել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, ունի Կարենին: Կարենն ունի 3 զավակ, բնակվում է Մոսկվայում:

ՀՈՒՐՀԵՐ ԽՈՆԴԿԱՐՅԱՆԸ 1927 թ. անհիմն մեղադրանքով աքսորվում է Սիբիր: Որդուն՝ Կարենին, խնամում են քույրերը: Կարենը վերջացրել է Մոսկվայի կոնսերվատորիան, անվանի ջութակահար է: Կարենն ունի

Անուշին, որը լրագրող է, բնակվում են Մոսկվայում:

ՀԵԿՏՈՐԸ վերջացնում է միջնակարգ դպրոցը և անհիմն կերպով ձերբակալվում, աքսորվում է: Ամուսնանում է ռուս կնոջ հետ և ունենում են Խոնդկարին (Վիտալի): Խոնդկարը (Վիտյան) ունի Հեկտորին, Լիպարիտին: Լիպարիտն ունի Արուսյակին, Երնսին: Արուսյակն ունի 2 զավակ:

ՔՆԱՐԻԿԸ վերջացրել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը:

ԱՄԱԼՅԱՆ վաղամեռիկ է և ժառանգ չունի:

ԱԴԱՄ (ԱԹԱՆ) ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ադամը ծնվել է 1856 թ. Սուրմալուի գավառի Հախվերիս գյուղում: Ամուսնացել է արևմտագաղթական Մանուշակի հետ և ունեցել են Թևոսին, Թադևոսին ու Գալուսն աղջկան:

ԹԵՎՈՍՆ ունեցել է բազմանդամ ընտանիք, զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով: Գեղարատանի անասունները վստահված էին տան ծառային, քուրդ Ավդոյին: Հետագայում Թևոսը սկսել է տնավորվել, ամուսնացրել ու չի տարբերել իր զավակներից: Թևոս Խոնդկարյանին Սուրմալուում լավ գիտեին և հարգում էին, նա յոթ գյուղի քյոխվա էր, հաշտարար: Թևոսին լսում և հարգում էին գավառի բոլոր ազգության մարդիկ:

Թևոս Խոնդկարյանն ուներ Եսթերին, Համազասպին, Վարշին, Արշամին, Նազենիկին, Անահիտին, Արշանուշին, Նվարդին: Եսթերն ամուսնացել է Ավետիս Հովհաննիսյանի հետ և ունեցել են Վալդիքերին, Սերիկին: Սերիկն ունեցել է Նելլիին, Ջեմսին: Նելլին ունեցել է Նոնային, Աշոտին: Նոնան ունի Աննային, Ռաֆիկին:

ՀԱՄԱԶԱՍՊ ԹԵՎՈՍԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ծնվել է Սուրմալու գավառի Հախվերիս գյուղում, 1876 թ.: Ընտանիքն զբաղվել է երկրագործությամբ, մշակել խաղող, խնամել անասուններ: Թուրքական ներխուժման վտանգի պատճառով գաղթում են և հանգրվանում Երևանում:

Համազասպ Խոնդկարյանն ամուսնացել է Իգդիր Մավայիս Նվարդ Պետրոսյանի հետ, ունեցել են Նեկտարին, Էդվարդին, Լևոնին:

ՆԵԿՏԱՐԸ ծնվել է 1915 թ. Հախվերիս գյուղում: Երևանում վերջացնելով միջնակարգ դպրոցը, մեկնում է Մոսկվա և ավարտում Բաումանի անվան տեխնիկական ինստիտուտը: Նեկտարն ամուսնացել է գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Ալեքսանդրյանի հետ, ունեն Վիտալիին, որը տեխնիկական գիտությունների թեկնածու է, դասախոսում է Երևանի պոլի-

տեխնիկական ինստիտուտում (այժմ ճարտարագիտական համալսարան), նաև ղեկավարում իր հիմնած քոլեջը:

ՎԻՏԱԼԻՆ ամուսնացել է Աննա Ջանիբեկյանի հետ, ունեն Գևորգին, Աննային: Գևորգը վերջացրել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Աննան սովորում է Երևանի պետական համալսարանում:

ԷԴՎԱՐԴ ԽՈՆԴԿԱՐՅԱՆԸ ծնվել է Սուրմալու գավառի Հախվերիս գյուղում 1915 թ.: Մեկ տարեկան Էդվարդին ծնողները ամբողջ ընտանիքի հետ գաղթեցնում են Սարդարապատ, ապա Երևան:

1931 թ. Էդվարդը վերջացնելով Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի ոչ լրիվ դասընթացը, ընդունվում է Շինարարական տեխնիկում, մեկ տարի սովորում, ապա դառնում Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանող, որն ավարտում է 1938 թ.: Մեկ տարի անց նա զորակոչվում է զինվորական ծառայության: Էդվարդ Խոնդկարյանը մասնակցում է ֆիննական, ապա Հայրենական մեծ պատերազմին: Մարտերից մեկում ծանր վիրավորվում է և ապաքինվելուց հետո զորացրվում զինվորական ծառայությունից: Խոնդկարյանը պարգևատրված է կառավարական մի շարք մեդալներով, շքանշաններով, պատվոգրերով: Անցնելով դասախոսական աշխատանքների, նա գլխավորել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտի հրատարակչությունը, միաժամանակ դասախոսել, եղել փոխդեկան, դեկան: 1965 թ. նախարարի հրամանով նրան տեղափոխում են Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի ամբիոնի վարիչի, դեկանի պաշտոնով: 1965 թ. Էդվարդ Խոնդկարյանը պաշտպանում է թեզ և ստանում մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան: Շուտով նրան շնորհվում է դոցենտի, ապա պրոֆեսորի կոչում: Նա արժանացել է ժողովրդական կրթության վաստակավոր գործչի, ԽՍՀՄ բարձրագույն կրթության գերազանցիկի կոչումներին, բազմաթիվ պարգևների: Էդվարդ Խոնդկարյանն ամուսնացել է Ռիմա Սահակյանի հետ և ունեն Անահիտին, Գայանեին, Լևոնին:

ԱՆԱՀԻՏԸ վերջացրել է Երևանի բժշկական ինստիտուտը, պաշտպանել թեզ և ստացել բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան, դասախոսում է բժշկական համալսարանում, դոցենտ է: Անահիտն ունի Արսենին, որը վերջացրել է Պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը և աշխատում է իր մասնագիտությամբ:

ԳԱՅԱՆԵՆ ավարտել է Պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը, երկար տարիներ աշխատում է Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում: Գայանեն ամուսնացել է Գևորգ Սարգսյանի հետ և ունեն Աննային, Լիանային, Սերգեյին:

ԼԵՎՈՆ ԷԴՎԱՐԴԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, ունի ՆԳ ծառայության կապիտանի կոչում: Լևոնն ամուսնացել է Նարինե Բեգլարյանի հետ: Նարինեն վերջացրել է Պետական համալսարանի ռոմանո-գերմանական ֆակուլտետը, աշխատել մանկավարժ: Լևոնն ու Նարինեն ունեն Էդվարդին, Կարինեին:

ԼԵՎՈՆ ՀԱՄԱՋԱՍՊԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Լևոնը, Երևանում վերջացնելով միջնակարգ դպրոցը, զորակոչվում է զինվորական ծառայության: Նա մասնակցում է գերմանացիների դեմ մղվող բազում մարտերի և հերոսի մահով զոհվում հայրենիքի պաշտպանության համար:

ՎԱՐԴ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ: Վաղամեռիկ է և ժառանգ չունի:

ԱՐՇԱՄ ԹԵՎՈՍԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ծնվել է 1881 թ., Սուրմալուի գավառի Հախվերդիս գյուղում, Խոնդկարյանների գերդաստանում: Բարձրագույն կրթությունն ստանում է Օդեսայում՝ վերջացնելով տեղի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Վերադառնում է Հայաստան, լծվում հասարակական-քաղաքական գործերի, դառնում սոցիալ-դեմոկրատական (Էս-Էռ) կուսակցության անդամ: Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից հետո Արշամ Խոնդկարյանը եղել է կառավարության անդամ և գլխավորել Արդարադատության ու հաղորդակցության նախարարությունը: Պառլամենտում գլխավորում էր ընդդիմադիր շարժումը: Հաճախ էր վեր հանում կառավարության քաղաքականության թերի կողմերը: Հայաստանում իշխանությունը բոլշևիկներին հանձնելուց հետո, հետապնդումներից խուսափելու նպատակով, Խոնդկարյանն ստիպված թողնում է հայրենիքը և հեռանում արտասահման: Արտասահմանում, հայրենիքից հեռու, բազմակողմանի կրթված և կազմակերպչական մեծ ձիրք ունեցող հայրենասերը չէր կարող հանգիստ կյանք վարել: Նա մասնակցություն է ունենում Հայաստանին օգնելու հարցերում, զբաղվում ակտիվ քաղաքականությամբ՝ պաշտպանելով Հայաստանի, հայ ժողովրդի արդարացի պահանջները, Հայ դատը: Խոնդկարյանը հանդես է գալիս ժամանակի զանգվածային մամուլում («Հայրենիք», «Հառաջ», «Ազատամարտ»), նաև օտարազգի մամուլում:

Վտարանդիությունը հոգեկան ծանր ապրումներ է առաջացնում Արշամ

Խոնդկարյանի մոտ, մանավանդ որ կինը՝ Աստղիկ Շահխաթունին, չմեկնեց արտասահման, մնաց Հայաստանում: Խոնդկարյանը, լինելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար, զգալի աշխատանքներ է կատարել երկրում կարգուկանոն մտցնելու, օրենքները ճշմարտությամբ կատարելու, ստեղծված քաոսն ու անօրինականությունները վերացնելու գործում: Նա փորձում էր օրենքի գերակայությունն ապահովել ամենուր և ամեն հարցերում, դնելով իրավաբանական պետության ստեղծելու հիմնաքարը: Խոնդկարյանը արտասահմանում նույնպես վայելում էր հարգանք ինչպես հայ փտարանդիների, այնպես և նրան ճանաչող պետական պաշտոնյաների մոտ, նրան հաճախ «պարոն մինիստր» էին անվանում, պատշաճը մատուցելով նրա գործունեությանը: Խոնդկարյանն զբաղվում էր նաև Հայաստանի պատմության ուսումնասիրությամբ: Բազմազան էր նրա հետաքրքրությունների ոլորտը: Ունենալով անձնական մեծ գրադարան, նա այն նվիրում է Հայաստանի Ազգային գրադարանին, իսկ գրքերի մի մասը հորեղբոր որդուն՝ Էդվարդ Խոնդկարյանին: Արշամ Խոնդկարյանի կյանքը հայրենիքին անմնացորդ և ազնվորեն ծառայելու օրինակ է, որի ուսումնասիրությունը մեր պատմաբանների, ուսումնասիրողների գործն է: Արշամ Խոնդկարյանը մահացավ Փարիզում, 1965 թ.:

ՆԱԶԵՆԻԿ ԹԵՎՈՍԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ամուսնացել է համագյուղացի Թադևոս Հովհաննիսյանի հետ և ունեցել են Օֆելյային, Յուլյային: Օֆելյան ունի Ջուլիետային, Հերմինեին: Ջուլիետան ունի Տիգրանին, Արմենին:

Հերմինեն ունի Նարինեին, Զարինեին:

Յուլյան ունի Գրիգորին (Գոշ): Գոշն ունեցել է Էդգարին, Վիկտորին:

ԱՆԱՀԻՏ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ամուսնացել է բանասիրական գիտությունների թեկնածու Գրիգոր Ներսիսյանի հետ: 1949 թ. Գրիգոր Ներսիսյանին անհիմն կելպով աքսորում են: Չհանդուրժելով այդ անարդարությունը և բռնությունը, Անահիտն ինքնասպանություն է գործում:

ԱՐՇԱՆՈՒՇ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ (ՆՈՒՇԻԿ)

Ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, ամուսնացել Արարատ Ղարիբյանի հետ, ունեն Ջուլիետային: Ջուլիետան ամուսնացել է Մավր Դավթյանի հետ (ՀԽՍՀ կուսակցական-պետական գործիչ) և ունեն Տիգրանին, Անուշին:

Տիգրանն ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանը և

աշխատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում: Տիգրանն ունի Զարուհի անունով դուստր: Անուշն ունի Լուսինեին:

ՆՎԱՐԴ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Նվարդը հաջողությամբ վերջացնում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական բաժինը և աշխատանքի անցնում մայրաքաղաքի ֆինանսական հիմնարկներում: Բնավորությամբ ազնիվ և արդարամիտ Նվարդը չէր կարողանում հաշտվել խորհրդային կարգերում տիրող հակաժողովրդական, հակազգային քաղաքականության հետ: Ուսանողական տարիներին ներգրավվում է ընդհատակյա երիտասարդական կազմակերպության մեջ՝ ընդդեմ տիրող կարգերի: Շուտով այն հայտնի է դառնում իշխանություններին: 1927 թ. Նվարդ Խոնդկարյանին ձերբակալում, երկար բռնություններից ու հարցաքննումներից հետո աքսորում են Սիբիր: 1960 թ. Նվարդ Խոնդկարյանն արդարացվում է և վերադառնում Երևան: Նա մշտական բնակություն է հաստատում Արարատ Ղարիբյանի ընտանիքում, ստանալով նրա և ընտանիքի բոլոր անդամների հոգածությունն ու հովանավորությունը: Իր հերթին նա մայրաբար զբաղվում է Ղարիբյանների թոռների՝ Աննայի և Տիգրանի դաստիարակության գործով:

ԹԱԴԵՎՈՍ ԱԴԱՄԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է նախկին Երևանի նահանգի Սուրմալու գավառի Հախվերդիս գյուղում: Ընտանիքը եղել է բազմանդամ, զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով: Սրանք Սուրմալուում հանրահայտ և ճանաչված Խոնդկարյաններից էին:

Շատերի նման 1918 թ. Թադևոսյանները գաղթում և հասնում են Երևան: Թադևոսի ավագ որդին՝ Սիրեկանը, ունեցել է երեք զավակներ՝ Ջանիբեկ, Վահրիհ և Հրայր: Սիրեկանի կինը հայտնի դաշնակցական Լևոն Գալստյանի քույրն էր՝ Օլգան, որը 1915 թ. թուրքական կոտորածների ժամանակ երեխաներին հասցնում Արաքսի ձախ ափ, ապա վերադառնում է Հախվերդիս՝ ծնողներին օգնելու: Այստեղ նրա վրա հարձակվում են թուրք ասկյարները: Նա կռվում կարողանում է նրանցից մի քանիսին անշնչացնել, բայց և պատվով նահատակվում է: Օլգայի եղբայրը՝ Լևոն Գալստյանը, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, շատ հայրենասերների նման, գնդակահարվում է հեռավոր Սիբիրում: Առանց ծնողների մնացած երեխաները՝ Վահրիհն ու Հրայրը, մահանում են տարափոխիկ հիվանդությունից Երևանի Ամերիկյան որբանոցում:

ՋԱՆԻԲԵԿՆ ակտիվ մասնակցում է թուրքերի դեմ կռիվներին, մի քանի անգամ վիրավորվում է, լինում է Դարալագյազում: Հայկական բանակի

վաշտի հրամանատար էր: Որպես ՀՀԴ կուսակցության հավատարիմ-նվիրվյալ անդամ, մինչև կյանքի վերջը մնում է նրա սկզբունքներին անդավաճան: Մեծ հայրենասեր էր, հայասեր:

Ջանիբեկի կինը՝ Զաբելան, նույնպես հայրենասեր ու խելացի կին էր, որն ամենուր ամուսնու խորհրդատուն ու հավատարիմ ընկերուհին էր:

Ջանիբեկ և Զաբելա ամուսիններն ունեցան Հրաչին, Վահրամին, Նորայրին, Արտակին, Իզաբելային:

ՎԱՀՐԱՄ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1938 թ., ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, աշխատում է Հանրապետության արդարադատության համակարգում: Վահրամն ամուսնացել է Հրանուշի հետ և ունեն Հրաչին, Նորայրին, Արտակին, Իզաբելային:



ՀՐԱՉ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1963 թ., Երևանում: 1985 թ. գերազանց ավարտել է Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության և իրավագիտության ֆակուլտետը, աշխատել մանկավարժ հանրապետության դպրոցներում: Նա ՀՀԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ է, ակտիվ գործիչ և հայրենասեր: 1993-94 թթ. ակտիվ մասնակցել է արցախյան ազատամարտերին, երկու անգամ վիրավորվել: Հրաչ և Նելլին Թադևոսյաններն ունեն Վահրամին և Արմենին:

Հրաչ Թադևոսյանը պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

ՆՈՐԱՅՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1964 թ., Երևանում, ամուսնացել է Նունեի հետ, վերջացրել է միլիցիայի բարձրագույն դպրոցը, Արցախյան ազատամարտի և ՀՀ սահմանների պաշտպանության ակտիվ մասնակից է, երկու անգամ վիրավորվել է, պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

ԱՐՏԱԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ ծնվել է Երևանում, 1975 թ.: Վերջացրել է ՀՀ ՆԳՆ միլիցիայի բարձրագույն դպրոցը: Աշխատում է Երևանի շրջաններում քննիչի պաշտոնով, միաժամանակ սովորում է Հայ-ամերիկյան համալսարանում:

ԻԶԱԲԵԼԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ ծնվել է Երևանում, ավարտել է Պետա-

կան համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ամուսնացել է Արմեն Վարդանյանի հետ, ունեն Դավթին:

ԱՎԱԳ ԱԴԱՄԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ավագը Խոնդկար նահապետի երրորդ զավակն էր, ծնվել է Հախվերդիսում: Ավագն ուներ Արշավիրին, Շավարշին, Գենյային, Ժենյային:

ԱՐՇԱՎԻՐԸ ծնվել է 1889 թ. , Հախվերդիս գյուղում, ամուսնացել է Աստղիկի հետ և ունեցել են Հարությունին, Արտիկին (Արտավազդ), Մարտիկին, Նելլիին:

Արշավիր Խոնդկարյանն սկզբնական կրթությունն ստացել է Հախվերդիսի ծխական դպրոցում, ապա ծնողները նրան տեղափոխում են Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանում սովորելու: Ճեմարանում սովորում էին նաև Սուրմալու գավառից բավականին թվով երիտասարդներ: Հաջողությամբ ավարտելով ուսումը, նա վերադառնում է հայրենի գավառ և զբաղվում մանուկների կրթության գործով:

Արշավիր Խոնդկարյանի գերդաստանը 1918 թ. գաղթից հետո հաստատվում է Երևանում: Նա զբաղվում է մանկավարժությամբ, գրականագիտությամբ: Երկար տարիներ եղել է հանրապետության թիվ մեկ օրաթերթի՝ «Խորհրդային Հայաստանի» պատասխանատու քարտուղար, զբաղվել թարգմանչական աշխատանքներով: Արշավիր Խոնդկարյանը նշանավոր թարգմանիչ է, որի թարգմանած գործերն աչքի էին ընկնում իրենց պարզությամբ և բնագրի հարազատությամբ: Մահացել է 1957 թ.:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ վերջացրել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, պաշտպանել թեզ և ստացել տնտեսագիտական գիտությունների թեկնածուի աստիճան: Հարություն Խոնդկարյանն աշխատել է հանրապետության պետական, կուսակցական հիմնարկներում, զբաղվել դասախոսությամբ, երկար տարիներ գլխավորել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի և Պետական համալսարանի տնտեսագիտության ամբիոնի վարիչների պաշտոնը, ունի դոկտորի կոչում:

Հարություն Խոնդկարյանն ունի Ռուզաննային և Աստղիկին:

ՌՈՒԶԱՆՆԱՆ բժշկական գիտությունների թեկնածու է, մեծ ծառայություն է մատուցել հանրապետության բժշկությանը՝ նրա ախտաբանական-ախտորոշման-բարելավման աշխատանքներին: Ռուզաննան ամուսնացել է բժիշկ-ակնաբույժ Սպարտակի հետ և ունեն Վիկտորին ու Թելմանին:

ԱՍՏՂԻԿՆ ունի Լիլիթին, Դավթին:

ԱՐՏԻԿ (ԱՐՏԱՎԱԶԴ) ԽՈՆԴԿԱՐՅԱՆԸ ավարտել է Երևանի Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը, զորակոչվել զինվորական ծառայության և զոհվել Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում:

ՄԱՐՏԻԿ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Պատմական գիտությունների թեկնածու է, ունի դոցենտի կոչում: Աշխատել է Երևանում՝ պետական, կուսակցական հիմնարկներում: Եղել է Պետական համալսարանի ուսումնական մասի վարիչ և այլն:

ՆԵԼԼԻ ԱՐՇԱՎԻՐԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆՆ ունի Նալինեին, Մարտիկին ու Մարինեին:

ԳԵՆՅԱ ԱՎԱԳԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆԸ ծնվել է Սուրմալուի Հախվերդիս գյուղում, ամուսնացել է Կողբի բնակիչ Բարսեղ Ասատրյանի հետ, ունեցել են Անժելային: Անժելան ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, աշխատել տարբեր բժշկական հիմնարկներում, պաշտպանել թեզ, ստացել բժշկական գիտությունների դոկտորի աստիճան: Հանրապետությունում ճանաչված և հարգված մասնագետ է:

Ունեն Արմենին:

ԱՐՄԵՆՆ ակտիվ մասնակցել է Արցախյան ազատագրական և հանրապետության սահմանների պաշտպանության մարտերին, ձեռք բերել թաջի և անվախի համբավ, բազմիցս ցուցաբերել խիզախ գործողություններ և զոհվել հերոսի մահով:

ԺԵՆՅԱ ԱՎԱԳԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ավարտել է Երևանի պետական համալսարանը: Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներին քրոջ՝ Գենյայի հետ աշխատել են կուսակցական շրջկոմների Կին-բաժնում, տանելով հասարակական-բաղաքական աշխատանքներ Հայաստանի կին աշխատավորության շրջաններում: Հետագայում աշխատել է Հանրապետության արհմիութենական կոմիտեներում, կատարել մանկավարժական աշխատանք Երևանի միջնակարգ դպրոցներում:

Ժենյան ունեցավ Անժիկին և Ջոնին: Անժիկը ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը, աշխատում է մայրաքաղաքի բուժհիմնարկներում: Անժիկն ունի Մուկուչին, որն աշխատում է ՆԳՆ համակարգում, ունի Սուրենն, Հակոբ զավակներին:

ՋՈՆՆ ստացել է բարձրագույն կրթություն, աշխատել Երևանի Հաշվիչ մեքենաների ինստիտուտ-գործարանում, եղել արհմիութենական գործիչ:

ՄԿՐՏՈՒՄ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ծնվել է Սուրմալու գավառի Հախվերդիս գյուղում: Ընտանիքն զբաղվել է անասնապահությամբ, դաշտավարությամբ: Մկրտումը քաջ ու ռազմատենչ

երիտասարդ էր: Իմանալով, որ թուրքերը հալածում են դալաբաղցի հայերին, նա փոքրիկ ջոկատով մեկնում է այնտեղ, հակահարված տալիս անօրենններին և պաշտպանում հայերի արդար իրավունքները: Ղալաբաղցիները շատ են հարգում Մկրտումին և խնդրում՝ մնա երկրամասում: Այդպես էլ լինում է: Մկրտումն ամուսնանում է դարաբաղցի Վարդանուշի հետ և ունենում են Ավետիսին, Հունանին, Առուստամին և դուստրեր:

ԱՎԵՏԻՍՆ ունեցել է **ԳԱՐԵԳԻՆԻՆ**՝ մասնագիտությամբ իրավաբան, երկար ժամանակ աշխատել է դատավոր, դատախազ, ունեն Այմենին, Շահենին: Շահենն ունեցել է երկու զավակներ՝ Ալեքսան և Գալուեգին:

Ալեքսանն ունեցել է Հովհաննեսին (Հովիկ):

ՀՈՎԱԿԻՄՆ ապրել է Ռուսաստանում, ճանաչված բժշկի համբավ վայելել:

ԳԵՐԱՍԻՄԸ ծառայել է ռուսական բանակում, ունեցել սպայի կոչում, մասնակցել մի քանի ճակատամարտերի և զոհվել Կազանի մատույցներում:

ԱԲԵԼԸ բժիշկ-հոգեբույժ էր, երկար տարիներ ապրել ու աշխատել է Հյուսիսային Կովկասում՝ Ժելեզնովոդսկ քաղաքում, ունեցել է Սպրգսին (Սաշա):

ՀՈՒՆԱՆ ԽՈՆԴԿԱՐՅԱՆԸ Սուրմալուում զբաղվել է հողագործությամբ, ունեցել Ալեքսանին: Ալեքսանն ունեցել է Գելմանին, Դաթիկոյին և Վալսենիկին:

ԳԵՐՄԱՆՆ ունեցել է Հերբերտին, որն ստանալով տնտեսագետի բարձրագույն կրթություն, աշխատել է Երևանի խոշոր ձեռնարկություններից մեկում: Հերբերտն ունեցել է Կարենին և մեկ դուստր:

ԴԱԹԻԿՈՆ ունեցել է Լյովային (Լևոն), Կարենին և մեկ դուստր:

Լյովան ունեցել է Կարենին: Կարենը բժիշկ-թերապևտ է:

ՎԱՐՍԵՆԻԿԸ կրում է հայրական՝ Խոնդկարյան ազգանունը, որը և անցել է որդուն՝ Վալերիին: Վալերին իրավաբան է, աշխատում է ՀՀ արդարադատության նախարարությունում, ունի Ալեքսան և Վարդան որդիներին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

Ունեցել է Վոլոդյա, Ժորա, Յուրա, Ռաֆիկ, Ռազմիկ զավակներին: Վոլոդյան զոհվել է Հայրենական պատերազմի ռազմաճակատում:

ՅՈՒՐԱՆ ունի հինգ դուստրեր:

ԺՈՐԱՆ ունի Վոլոդյային, որը ՀՀ պաշտպանության նախարարությունում աշխատում է սպայի աստիճանով: Վոլոդյան ունի դուստրեր:

ՌԱՖԱՅԵԼԸ (Ռաֆիկ) ունի Էդիկին, Վոլոդյային և Ավետիսին:

ՌԱԶՄԻԿԸ ժառանգ չունի:

ԱՐՇԱԿ ԽՈՆԴԿԱՐՅԱՆՆ ունի Ագանին, Արկադիին, Նորային և Ռիմային:

ԱԳԱՆՆ ինժեներ է, բնական գազի կոտրակման, պահեստավորման մասնագետ: Ագանն ունի Նարինեին, Կարինեին: Նունեն և Ռիման ապրում և աշխատում են Մոսկվայում:

Արկադին երկաթուղային է, մեքենավար, երկար տարիներ աշխատել է Ռուսաստանում: Անբասիր աշխատանքի համար արժանացել է բազմաթիվ պարգևների, Կառավարական թոշակի: Ունի Աշոտին և երկու դուստրեր:

ԱՌՈՒՍՏԻ ՄԿՐՏՈՒՄԻ ԽՈՆԴԿԱՐՅԱՆՆ ունեցել է Զինավոր և Նիկոլայ զավակներին: Նիկոլայը զոհվել է Հայրենական պատերազմում:

ԶԻՆԱՎՈՐԸ երկար տարիներ ծառայել է Կապի ծառայությունում, արժանացել դրվատանքի: Ունեցել է Սլավիկին, Օնիկին, Պետրոսին:

ՍԼԱՎԻԿԸ Լենինային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի զինվորական շտաբի պետն է:

ՊԵՏՐՈՍԸ զոհվել է Ռուսաստանում՝ իրավաբանի իր պոստում, անկաշառ աշխատանքի անուն էր վաստակել:

ՕՆԻԿՆ ունի Աշոտին և մեկ դուստր:

Խոնդկարյանները Ղարաբաղում հիմնավորվելուց հետո, սրանց երկու եղբայրներ տեղափոխվում են այն ժամանակներում հայաշատ Շամխոր քաղաք: Սրանց սերունդների մի մասը տեղափոխվում է Ռուսաստան մշտական բնակության:

Շամխորում բնակություն հաստատած **ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԽՈՆԴԿԱՐՅԱՆՆ** ունեցել է Անդրիասին, սա ունեցել է Հովհաննեսին և Սերգեյին (Սրգար):

ՍԵՐԳԵՅՆ ունեցել է իրավաբանական կրթություն և երկար տարիներ աշխատել Բաքվում, Շամխորում, Ստեփանակերտում, նաև Երևանում:

Սերգեյ Խոնդկարյանն ունեցել է Վալերիին, Նիկոլային: Նիկոլայն ունի Տիգրանին, Սերգեյին:

Հովհաննեսի եղբայր **ՍԵՐԳԵՅ-ԱԲԳԱՐՆ** ունեցել է Յուրային, որը երկար տարիներ աշխատել է երկաթուղային համակարգում, արժանացել պարգևների ու Ռուսաստանի Դաշնության կառավարության անհատական թոշակին: Ունեցել է Յուրա և Երան զավակներին:

Սերգեյ-Աբգարը ՍՍԿԿ անդամ է եղել 1917 թ.: Նա կուսակցական, պետական բարձր պաշտոններ է վարել Միջին Ասիայում, եղել մարզկոմի քարտուղար և այլն: Ապրել և մահացել է Մոսկվայում:

Յուրա Խոնդկարյանի զավակները՝ Յուրան և Երանը, գիտությունների թեկնածուներ են, աշխատում են ըստ մասնագիտության, բնակվում Մոսկվայում:

ԱՆԴՐԻԱՍ՝ ունեցել է եղբորորդիներ՝

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ-Սա ունեցել է Արմենակին, Հայկազին և դուստրեր: Հայկազն ունի Համբարձում որդի:

ՌՈՒԲԵՆ՝ և ԱՐՏԵՄ եղբայրներ-Ռուբենն իրավաբան է, երկար տարիներ աշխատել է իրավապահ մարմիններում, ունեցել է Աստատին, իսկ Արտատն էլ ունեցել է Ռուբենին:

Արտեմն ունեցել է Ժորային, Ժորան ունեցել է մեկ զավակ:

ՀԱՅԿԱԶՆ՝ ունի Արմենակին և Աբգարին: Աբգարն ունի երկու զավակներ:

ՈՍԿԱՆԸ (Անդրիասի մյուս հորեղբոր որդին) ունի Գուրգենին: Գուրգենը երկար տարիներ աշխատել է ՆԳՆ՝ համակարգում: Գուրգենն ունեցել է Վոլոդյա, Վիլեն և Հենրիկ որդիներին: Հենրիկն ունի Երվանդին:

ՄԱՐՏԻՐՈՍԸ (Անդրիասի հորեղբոր որդին) ունի Յուրային:

ԿԱՆԱՅԱՆ՝ ՍՏԵՓԱՆ՝ ՄԿՐՏՉԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Իգդիր քաղաքում 1860 թ. դեկտեմբերի 25-ին:

Սկզբնական կրթությունն ստանում է Իգդիրի նշանավոր Վարդանյան-Շուշանյան դպրոցում, ապա 1874 թ. , ուսման մեջ մեծ առաջադիմություն ցուցաբերած երեխային ծնողները տեղափոխում են Էջմիածին՝ սովորելու Գևորգյան ճեմարանում: 1883 թ. հաջողությամբ ավարտելով Գևորգյան ճեմարանը, Ստեփան Կանայանը հետագայում ուսանում է նաև Դորպատի, Մյունխենի, Ստրասբուրգի համալսարաններում: 1888 թ. մեկնում է Հունաստան՝ լեզուներ ուսումնասիրելու: Վերադառնալով Հայաստան, դասավանդում է Գևորգյան ճեմարանում, իսկ 1893-96 թթ. դասավանդում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Շուտով մեկնում է Արցախ, դասավանդում Շուշիի թեմական դպրոցում: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո աշխատում է (1920-22 թթ.) հանրապետական գրադարանի վարիչ, ապա՝ գիտության և արվեստի ինստիտուտում:

Ստեփան Կանայանը գրում է մի շարք պատմական, բանասիրական, ազգագրական և բնագիտական ծավալուն աշխատություններ: Նա բազմակողմանի զարգացած խոշոր գիտնական ու ազգասեր անձնավորություն էր: Նրա գրչին են պատկանում նաև Հայաստանի պատմական աշխարհագրության վերաբերյալ մի շարք արժեքավոր աշխատություններ:

1925 թ. Ստեփան Կանայանն ընտրվում է ՀԽՍՀ գիտության և արվեստի

ինստիտուտի գիտխորհրդի իսկական անդամ: Լայն ճանաչում ունեցի գիտական շրջաններում, մեծ հարգանք էր վայելում ինչպես աշխատանքային կոլեկտիվներում, այնպես էլ ողջ սուրմալեցիների կողմից:

Տաղանդավոր գիտնականի ու ազնիվ հայրենասերի կյանքն ընդհատվեց 1937 թ. հոկտեմբերի 8-ին, Երևան քաղաքում:

ԿԱՆԱՅԱՆ՝ ՀԱՅԿ ՄԿՐՏՉԻ

Ծնվել է 1875 թ. փետրվարի 4-ին (16) Սուրմալուի գավառի կենտրոն Իգդիր քաղաքում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքում, ապա տեղափոխվել է Օդեսա և 1905 թ. ավարտել Օդեսայի համալսարանի բժշկական բաժինը: Բժիշկ Հայկ Կանայանն աշխատել է Օդեսա քաղաքի, Բեսարաբիայի, Հյուսիսային Կովկասի քաղաքներում, Բաքվում: Ամենուր նա վաստակել է շրջապատի և հիվանդների անկեղծ սերն ու համակրանքը:

Հայաստանի Հանրապետության համապատասխան հիմնարկների հրավերով, նաև հայրենիքի կանչով բժիշկ Հայկ Կանայանը 1925 թ, գալիս է Երևան: Դասախոսում է Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում, կազմակերպում աչքի հիվանդությունների ամբիոն և գլխավորում այն: Այդ տարիներին Հայաստանում տարածված էին աչքի զանազան հիվանդություններ (տրախոմա և այլն): Բժիշկ Կանայանն անձամբ գլխավորում է պայքարը այդ հիվանդությունների սկզբնաղբյուրների դեմ, ինչպես և բուժման գործը: Դասախոսությունների հետ միասին նա գրում է բազմաթիվ գիտահանրամատչելի հոդվածներ, մենագրություններ, կատարում մասնագիտական գրքերի թարգմանություններ: Նրա անմիջական օգնությամբ և ջանքերով կազմակերպվում է Երևան քաղաքի աչքի հիվանդությունների կլինիկան:

Բժշկական ծառայություններում մեծ ավանդ ունեցող, հարգված ու սիրված հայրենասեր բժիշկ Հայկ Կանայանը մահացավ 1950 թ. օգոստոսի 10-ին, Երևան քաղաքում:

ԿԱՆԱՅԱՆ՝ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԿՐՏՉԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Իգդիր քաղաքում 1881 թ. նոյեմբերի 8-ին: Սկզբնական կրթությունն ստանում է հայրենի քաղաքում, ապա 1896-1905 թթ. սովորում Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Ճեմարանն ավարտելով, վերադառնում է Իգդիր և զբաղվում մանկավարժությամբ, ապա աշխատում Թիֆլիսի, Երևանի դպրոցներում: 1934-36 թթ. դասախոսում է Երևանի հա-

մալսարանում: 1967 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: Դասախոսում է Հայկական մանկավարժական ինստիտուտում, նաև հեռակա մանկավարժականում: 1957-ից եղել է հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

Հայաստանում անգրագիտության վերացման աշխատանքների կազմակերպմանն ակտիվ մասնակցություն է ունեցել: Մասնակցել է միջնակարգ դպրոցների, բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրերի մշակմանը, դպրոցական դասագրքերի հրատարակմանը:

Խաչատուր Կանայանը ճանաչված լեզվաբան էր, հասարակական ակտիվ գործիչ: Սկզբնավորել է հայ գրողների լեզվաոճի գիտական ուսումնասիրությունը: Տաղանդավոր գիտնական, հասարակական ակտիվ գործիչ Խաչատուր Կանայանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, Խաչատուր Աբովյանի անվան մեդալով: Մահացավ 1976 թ. Երևանում:

ԿԱՆԱՅԱՆ ԴՐԱՍՏԱՄԱՏ ՄԱՐՏԻՐՈՍԻ (ԴՐՈ)

Ծնվել է Սուրմալուի գավառի Իգդիր քաղաքում 1883 թ. մայիսի 15-ին: Կանայանները հայտնի էին Իգդիրում, Սուրմալուում և ողջ տարածքում իրենց աշխատասիրությամբ, տաղանդով ու հայրենասիրությամբ: Դրաստամատի ծնողները, տեսնելով երեխայի աշխատասիրությունն ու սովորելու մեծ հակումը, քաղաքային դպրոցը վերջացնելուց հետո նրան տեղափոխում են Երևան: Այստեղ նա սովորում և 1904 թ. ավարտում է Երևանի ռուսական գիմնազիան:

Դրաստամատ Կանայանը մանկուց լավ հասկանում էր թուրքական ոճրագործների դեմ պայքարի անհրաժեշտությունը և հաստատորեն վճռում է դառնալ զինվորական, հայ զինվոր: 1904 թ. ընդունվում է ռազմական ուսումնարան: 1905-06 թթ. զենքը ձեռքին մասնակցում է հայ-թուրքական ազգամիջյան ընդհարումներին: Ցարական կառավարության թողտվությամբ այդ թվականներին Կովկասի հայաշատ վայրերում կազմակերպվում են հայկական ջարդեր: Բաքվի նահանգապետ Նակաշիձեն օժանդակում է թաթարներին և կատարվում է հայ բնակչության զանգվածային կոտորած, արյունալի ջարդեր: Երիտասարդ Դրաստամատ Կանայանը, կատարելով Հայ հեղափոխական դաշնակցության հանձնարարությունը, որի անդավաճան անդամն էր, մեկնում է Բաքու և հայ ժողովրդի դահճին օրը ցերեկով սպանում: Այս իրադարձությունը լայն արձագանք և հավանություն է գտնում ոչ միայն հայերի, այլ նաև վրացիների շրջանում:

1908 թ. Դրաստամատ Կանայանը կուսակցության առաջադրանքով

անցնում է Արևմտահայաստան, Բայազետ քաղաք: Նա կազմակերպչական աշխատանքներ է կատարում հայերին զինելու, ինքնապաշտպանական կռիվներին պատրաստվելու նպատակով:

Սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Թուրքական ազգայնամոլները, աշխարհի խոշոր պետությունների աչքի առջև, նրանց թողտվությամբ Արևմտահայաստանում բնաջնջում են ավելի քան 2 մլն հայություն: Դրաստամատ Կանայանը նշանակվում է Իգդիրի կամավորական գնդի հրամանատար, պաշտպանում քաղաքն, երկրամասը թուրքական հարձակումներից, մասնակցում թուրքերի դեմ մղվող բազմաթիվ մարտերի: Անվախ ու խիզախ հրամանատարն ամենուր հաղթող է դուրս գալիս, դառնում թուրքերի ահ ու սարսափը:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումով Դրաստամատ Կանայանը նշանակվում է հայկական կորպուսի հրամանատար: Նա ամենուր էր հայ ժողովրդի թշնամիների, Հայաստանի տարածքները զավթողների դեմ: 1918 թ. Դրաստամատ Կանայանը փայլուն կերպով կազմակերպում է Լոռու մարզի ազատագրումը: Նա իր զորամասով բախում էր Թիֆլիսի դռները, սակայն «դաշնակիցները» համոզում են ձեռնպահ մնալ դրանից: Հեղափոխությունից հետո Դրաստամատ Կանայանը նշանակվում է Ռազմական նախարար, ապա հիասթափված և հետագա հետապնդումներից խուսափելով, անցնում արտասահման: Որտեղ էլ եղել ու ծառայել է հայրենասեր Դրաստամատ Կանայանը, միայն մտածել ու մտահոգվել է Հայաստանի, հայ ժողովրդի ճակատագրով: Կանայանը հայ իրականության մեջ, հայ ժողովրդի 20-րդ դարասկզբի հասարակական, քաղաքական, ռազմական փայլուն աստղերից էր, որի անունը երբեք չի խամրի՝ ի հեճուկս նրա քաղաքական թշնամիների անիմաստ ջանքերի:

Դրաստամատ Կանայանը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ դարձյալ միայն հայ ժողովրդի և Հայաստանի շահերով էր ապրում ու գործում:

Նա մահացավ իր սիրելի Սուրմալուից, Իգդիրից, Հայաստանից հեռու՝ Բոստոն քաղաքում, 1956 թ. մարտի 8-ին:

Դրոն մեր ժողովրդի սիրելին է, երիտասարդ սերնդին հայրենասիրությամբ դաստիարակելու վառ օրինակներից մեկը:

ԿԱՆԱՅԱՆ ԱՐԴՎԱՐԴ ՄԿՐՏՉԻ

Ծնվել է Իգդիր քաղաքում 1884 թ. ապրիլի 13-ին: Ավարտելով Իգդիրի քաղաքային ուսումնարանը, Արդվարդ Կանայանը մեկնում է Մոսկվա, ընդունվում Լազարյան ճեմարան, որը հաջողությամբ վերջացնում է 1904-ին: Ապա նա տեղափոխվում է Օդեսա, ընդունվում տեղի համալսարանի իրա-

վարանական բաժին: Դեռևս Մոսկվայում, Լազարյան ճեմարանում սովորելու տարիներին, Արդվարդն ընդգրկվում է Հայ հեղափոխական սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ, հրատարակում «Ստուդիում» և այլ հանդեսներ, հոդվածներ:

1905 թ. Օդեսայում, մասնակցելով իշխանությունների դեմ կազմակերպված ուսանողական ցույցերին, սև հարյուրյակայինների հետ ընդհարման ժամանակ տաղանդավոր երիտասարդը նոյեմբերի 2-ին զոհվում է և թաղվում այնտեղ:

ԿԱՆԱՅԱՆ ԱՐԴՎԱՐԴ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Արդվարդի հայրը՝ Խաչատուր Կանայանը, մանկավարժական աշխատանքի բերումով ընտանիքով ժամանակավորապես Իգդիրից տեղափոխվել էր Թիֆլիս, որտեղ և 1910 թ. նոյեմբերի 28-ին ծնվում է Արդվարդը:

Շուտով ընտանիքը տեղափոխվում է Երևան, և 1932 թ. Արդվարդը վերջացնում է Երևանի շինարարական ինստիտուտը, ապա՝ ասպիրանտուրան: Մի քանի տարի դասախոսում է նույն ինստիտուտում, ապա, 1943 թվականից՝ Երևանի գեղարվեստի ուսումնարանում: 1944-47 թթ. եղել է Հայաստանի Հանրապետության ժողկոմխորհին կից ճարտարապետական գործերի վարչությունում հուշարձանների պահպանության բաժնի ավագ ճարտարապետ: 1971 թ. նրան շնորհվում է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության վաստակավոր ճարտարապետի բարձր ու պատվավոր կոչում: 1950-ից աշխատել է «Հայարդնախագիծ» ինստիտուտում: Նրա անմիջական ղեկավարությամբ կառուցվել են մի շարք հասարակական-մշակութային շենքեր, պալատներ, մարզադաշտեր, բնակելի տների թաղամասեր, պիոներական ճամբարներ և այլ կառույցներ հանրապետության զանազան շրջաններում (Գորիս, Լենինական և այլուր):

ԱՀԱՐՈՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ ԱՌԱՔԵԼԻ

Ծնվել է Երևանի նահանգի Սուրմալուի գավառի Իգդիր Մավա գյուղում 1866 թ.: Ծնողները զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ: Փոքրիկ Ավետիսը վերջացրել է Իգդիր Մավայի (սա գտնվում էր Իգդիր քաղաքի մոտակայքում, նրա հարևանությամբ) ծխական դպրոցը, ապա ուշիմ և աչքաբաց երեխային տեղափոխում են Էջմիածնի Գևորգյան ճեմարան: Փայլուն կերպով ավարտելով Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լրիվ դասընթացը, նա մեկնում է Եվրոպա, Շվեյցարիա և 1901 թ. ընդունվում Լոզանի հռչակավոր համալսարան, ապա Փարիզում ունկնդրում Սորբոնի համալսարանի դասընթացներին: Վերադառնալով հայրենիք, հայրենի Սուրմալու, շուտով մեկնում է Թիֆլիս և աշխատանքի անցնում Ներսիսյան դպրոցում որպես տեսուչ:

Ցարական իշխանությունները հետապնդում են ազատամիտ ու հայրենասեր երիտասարդին: 1909 թ. նրան ձերբակալում են և երեք տարի անց՝ 1911 թ. , արգելում Կովկասում մնալ: Նա մեկնում է արտասահման:

Ավետիս Ահարոնյանը երիտասարդական վաղ հասակից չափազանց անհանգստացած էր Հայաստանի և հայ ժողովրդի առկա ստրկական վիճակից և իրեն նվիրում է նրա ազատագրմանը: Վաղ տարիներից գրում է պատմական, հայրենասիրական հոդվածներ, դառնում Հայ հեղափոխական դաշնակցության նվիրյալ անդամն ու գաղափարախոսը:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման ու կազմավորման գործում Ահարոնյանը հսկայական ջանք ու ներդրում ունի: Եղել է հանրապետության խորհրդարանի անդամ, 1917 թ. ընտրվել Հայոց Ազգային խորհրդի նախագահ, մասնակցել Հաագայի խաղաղության երկրորդ կոնգրեսին և իր ելույթներում ներկայացրել Հայաստանի և հայ ժողովրդի արդար պահանջները, որոնք, սակայն չեն ընդունվել: Իր հեղինակության, ազգին և հայրենիքին նվիրվածության և մտավոր փայլուն ունակությունների համար նրան ընտրում են կառավարության նախագահ: 1918 թ. հունիս-նոյեմբեր ամիսներին Կոնստանտինապոլսում տեղի ունեցող բանակցություններում Ավետիս Ահարոնյանը գլխավորում է հայկական պատվիրակությունը: Ստորագրել է Սևրի հաշտության պայմանագիրը, ակտիվորեն մասնակցել Լոնդոնի (1921 թ.) և Լոզանի (1922-23 թթ.) կոնֆերանսներին, պաշտպանելով Հայկական հարցը միջազգային բարձրագույն ատյաններում:

Մեծ հայրենասերը և գրողը մինչև իր կյանքի վերջին վայրկյանը մնաց Հայաստանի և հայ ժողովրդի ազնվագույն զավակը, նրա հոգսերի տառապյալ կրողը: Ավետիս Ահարոնյանն իր մահկանացուն կնքեց հայրենիքից հեռու՝ Փարիզում, 1948 թ. մարտի 20-ին:

ԱԲԳԱՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

Ծնվել է 1868 թ., Սուրմալուի գավառի Խոշխաբար գյուղում: Մխիթարն ամուսնանում է Մխիթարյան Չիչագի հետ: Աբգարյանների ընտանիքը հազարավորների նման 1919 թ. ստիպված գաղթում է: Դեռևս նոր բնակավայրում՝ Սարդարապատի շրջանի Ջաֆարաբադ գյուղում չբնավորված, նորից անցնում են Արաքսը և մտնում հայրենի Խոշխաբար: Սակայն ուրախությունը երկար չի տևում, նորից բռնում են գաղթի ճանապարհը:

Բազում տառապանքներից ու զրկանքներից հետո կայտղանում են Ջա-

ֆարաբաղ գյուղում հողամաս ստանալ, տուն կառուցել և սուրմալեցուն հատուկ ջանասիրությամբ աշխատել՝ բարեկեցություն ստեղծելու համար: Ծնվում են երեխաները. Ներսիակը, Հայրապետը, Կարապետը, Մանյան:

Հայրենական պատերազմի առաջին օրվանից Ներսիակը մեկնում է զինվորական ծառայության, մասնակցում բազում ճակատամարտերի, դառնալով մեկում և զոհվում է քաջի մահով:

Հայրապետ Արգարյանը, գյուղական դպրոցն ավարտելով, մեկնում է մայրաքաղաք, ստանում բարձրագույն կրթություն և երկար ժամանակ դասախոսական աշխատանքներ կատարում Հայկական գյուղատնտեսական ինստիտուտում (ակադեմիայում): Նա ունի գիտական աստիճան:

Կարապետ Արգարյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և հաղթանակով վերադարձել հայրենի գյուղ: Արժանացել է կառավարական բազում շքանշանների, մեդալների:

Ներսիակն ունի Գառնիկին, Պարույրին, Աշոտին:

Գառնիկն ունի Գարիկին, Հերմինեին, Եպրաքսյային:

Հայրապետն ունի Աշոտին, Վեգդալին, Նարեկին:

Կարապետն ունի Ներիկին, Հրանտին:

Մանյան ունի Վազգենին, Ջավենին, Ռազմիկին, Վարդանին, Գոհարին:



ՈՒՍՈՒԲ ԲԵԳ ԹԵՄՈՒՐՅԱՆՑ

(Կենսագրականը տրամադրել է թոռը՝ Ահմադն Գոգին 08.06.1999 թ.)

Ծնվել է Սուրմալու գավառի Ասլանլու գյուղում 1869 թ. , Անդրկովկասի եզդի-քրդերի հայտնի ցեղապետ Հասան աղայի ընտանիքում: Ուսուբ Բեգի հայրը 1877-78 թթ. ռուսական զորքերի շարքերում կռվել է տաճիկ բռնագավթիչների դեմ, պարգևատրվել ու խրախուսվել իշխանության կողմից:

Ուսուբ բեգի պապը՝ Թեմուր աղան, ծանոթ է եղել Խ. Աբովյանին, որը նրա մասին գրել է «Կովկաս» ամսագրում՝ «Եզդիները» հոդվածում: Թեմուր աղայի մասին գրում է նաև Ա. Պուշկինը իր «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» գրքում, նկարագրելով եզդիական 300 հոգիանոց հեծելազորի մարտերը թուրքերի դեմ Թեմուր աղայի գլխավորությամբ: Թեմուր աղան իր որդուն՝ Ուսուբին, Սուրմալուից բերում է Էջմիածին և կրթության տալիս Գևորգյան ճեմարանում: Այստեղ նա ծանոթանում է Մեծն Կոմիտասի և ժամանակի հայ երիտասարդության հետ, դառնում է Կոմիտասի մտերիմ ընկերն ու լավ բարեկամը: Ամառային արձակուրդներին, լինելով Ասլանլու-

ում, Կոմիտասը ծանոթանում է եզդի ժողովրդի երգերին, սովորույթներին և հետագայում այդ մասին բազմաթիվ երկերում ներկայացնում այն: 1917-18 թթ. Սուրմալուում ծավալված մարտերին Ուսուբ բեգը իր զինյալ ջոկատով հայկական զորքերի հետ ակտիվ մասնակցություն է ունենում: Նա ակտիվ մասնակցում է նաև Բաշ Ապարանի ճակատամարտին: Խորհրդային կարգերի հաստատումից հետո հայրենասեր Ուսուբ բեգը ևս աքսորվում է, ենթարկվում հետապնդումների, հալածանքների, սակայն բռնադատողների առջև չի խոնարհվում, մնում է մաքուր և ազնիվ:

Հայ ժողովրդի ազնիվ բարեկամի, հայ-եզդիական բարեկամության անխոնջ մարտիկի սիրտը դադարեց բաբախելուց 1934 թ.: Նրա գերեզմանը Շամիրամում դարձել է սրբավայր եզդի քրդերի, նաև հայերի համար: Նրա թոռները՝ Հասան աղան և Մահմադ բեգը, գյուղում կանգնեցրել են եզդիների սուրբ-սրբոցի՝ Մալակե տաուսի (սուրբ ոգու) հուշակոթող, որը երկրորդն է աշխարհում Շանգալի սրբավայրից (Իրաք) հետո:

Ուսուբ բեգը Սեյրան խանումից ունի Ալիբեգին, Ղուլիբեգին, Սուսիկին, Գյավազին, Ամինային (տե՛ս Ամիդե Գոգի):

Ալիբեգն ունի Մահմադ, Մաջիթա, Քարամ, Ղադի որդիներին և Քուրբան դստերը: Ղուլիբեգը 1941 թ. հերոսի մահով զոհվեց Հայրենական մեծ պատերազմում: Սուսիկեն ունի Զուլբա, Բաղդի, Ամր, Գեգո, Քուբան, Փոլոս, Գյավազ զավակներին: Գյավազն ունի Բահար, Գոգե, Խազալ, Քարամ երեխաներին:

ՊԵՏՐՈՍՅԱՆ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱԲՍԵՂԻ

Հարություն Պետրոսյանը ծնվել է 1880թ. Սուրմալու գավառի արաքսամերձ Դաշրուռուն գյուղում, գյուղացու ընտանիքում: Ծնողները նրան տեղափոխում են Էջմիածին, որտեղ և նա ստանում է սկզբնական կրթություն. ապա վերջացնում Գևորգյան ճեմարանը: 1904 թ. աշխատանքի է անցնում Շուշիի հոգևոր սեմինարիայում, դասավանդելով հայոց լեզու և գրականություն: Հետագայում աշխատում է Գևորգյան ճեմարանում, Երևանի մի շարք դպրոցներում ու բարձրագույն հաստատություններում: 1936 թ. մինչև իր կյանքի վերջը Պետրոսյանը Երևանի պետական համալսարանում դասավանդել է գրաբար: Պետրոսյանը մանկավարժության հետ միասին լրջորեն զբաղվել է հայ գրականության ուսումնասիրությամբ, առանձնապես գրաբարի: 1944 թ. հաջողությամբ պաշտպանում է թեզ և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան, միաժամանակ դոցենտի կոչում:

Ավելի քան 54 տարի աշխատելով մանկավարժության բնագավառում, Պետրոսյանն աճեցրել է հայոց լեզվի և գրականության, մասնավորապես գրաբարին տիրապետող բազմաթիվ հիանալի մասնագետներ, մայրենի լեզվի դասավանդումը բարձրացրել նոր աստիճանի: Նա հիանալի գիտնական էր, ուներ պրպտուն բնավորություն և անսահման նվիրված էր իր ժողովրդին, նրա ոսկեդենիկ լեզվի կատարելագործմանը: Զբաղվելով գիտական բեղմնավոր գործունեությամբ, նա գրել է մի շարք կարևոր մենագրություններ, հոդվածներ: 1927 թ. Հարությունն Պետրոսյանը հրատարակեց «Հայոց լեզվի գործնական քերականություն» ծավալուն աշխատությունը, որը դարձավ ուսանողության սեղանի գիրքը, նաև իր արժանի տեղն ունեցավ գիտության բնագավառում: Այդ մենագրությունն ունեցավ հինգ հրատարակություն: Տաղանդաշատ սուրմալեցին ոչ միայն բեղմնավոր գիտնական էր, այլև շնորհալի բանաստեղծ, գրել է մի շարք բանաստեղծություններ: Տիրապետելով գերմաներենին, նա բնագրից թարգմանել է գերմանացի մեծ բանաստեղծներ Գյոթեի, Շիլլերի, Հայնեի մի շարք չափածո գործեր: Նրա թարգմանությամբ հրատարակվել են նաև ռուս հայտնի բանաստեղծների մի շարք չափածո և արձակ երկեր:

Հարությունն Պետրոսյանը արտակարգ համեստ մարդ և մեծ հայրենասեր էր: Մինչև կյանքի վերջը ծննդավայրի կարոտն ու հուշը սրբորեն էր պահում նա և իր սերնդին, հայ երիտասարդությանը տոգորում նույն ոգով:

ԲԱԳՐԱՏ ԲԵԳԼԱՐԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
(1890-1920)

Բագրատ Ղարիբջանյանը ծնվել է 1890 թ. մայիսի 10/22/-ին, Երևանի նահանգի Սուրմալուի գավառի Իգդիրի շրջանի Բահարլու գյուղում, կոշկակարի ընտանիքում: Սովորել և փայլուն կերպով ավարտել է նախ Իգդիրի զեմսկի դպրոցը, ապա՝ քաղաքային ուսումնարանը (1906 թ.): Բ. Ղարիբջանյանը 1906 թ. հուլիսին ընդունվում է Թիֆլիսում կազմակերպված հաշվապահական դասընթացը, որն ավարտելուց հետո, 1907 թ. փետրվարից մինչև 1908 թ. մարտը աշխատում Իգդիրի փոխատվական խնայդրամարկղի մանր վարկերի ընկերությունում, որպես հաշվապահի օգնական: Միաժամանակ, Երևանի արական գիմնազիայում էքստեռն կարգով քննություն հանձնելով, նա ձեռք է բերում ուսուցչի որակավորում: Ապա մեկնում է Թիֆլիս՝ նորաբաց ֆիզկուլտուրայի ուսուցչական երկամյա դասընթացներում սովորելու:

Ուսուցչական կուրսերն ավարտելուց հետո, 1908 թ. սեպտեմբերին Բ. Ղարիբջանյանը նշանակվում է Ալեքսանդրապոլի (Գյումրի) գավառի

Տավշանոշլաղ (Շիրակավան) գյուղում ուսուցիչ և աշխատում է մինչև 1910 թ. սեպտեմբերը: Այստեղ է կազմում նա իր «Պատմվածքներ և գիտական բնույթի այլ գործեր» խորագիրը կրող տետրը, ուր զետեղված էին չորս մանր պատմվածքներ և մի շարք ուսումնասիրություններ՝ լեզվաբանության, կամքի դաստիարակության, կյանքի ծագման և այլ հարցերի շուրջը: 1915 թ. Ղարիբջանյանը նշանակվում է Տավշանոշլաղ գյուղի ռուսական երկդասյան ուսումնարանի վարիչ:

1910 թ. սեպտեմբերին տեղափոխվում է Մարգարա գյուղ, որտեղ նույնպես աշխատում է որպես ուսուցիչ: 1917 թ. մարտին ընտրվում է Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի կազմում, իսկ 1918 թ. հունվարին՝ կոմկոսի քաղաքային կոմիտեի նախագահ:

1920 թ. մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում իշխանությունն անցնում է բանվորների ու գինվորների ձեռքը: Բ. Ղարիբջանյանը նշանակվում է ֆինանսների կոմիսար: Սակայն այս իշխանությունը կարճ է տևում, և Ղարիբջանյանը ձերբակալվում է:

1920 թ. օգոստոսի 14-ին այլ վայր տեղափոխելու պատրվակով Բագրատ Ղարիբջանյանին և ընկերներին հանում են Երևանի բանտից և գնդակահարում Նոյբի ձորում, որտեղ այժմ աղբյուր-հուշարձան է կառուցված: Ապա մարտական ընկերների հետ 1921 թ. հուլիսին նա թաղվել է Երևանի կենտրոնական այգում: Նրա անունով մեր հանրապետությունում կան գյուղ, դպրոց, գրադարան, փողոցներ:

Ղարիբջանյանի կինը՝ Արմենուհի Ղարիբջանյանը արհմիութենական ղեկավար աշխատանքների է եղել: Աղջիկը՝ Օֆելյա Ղարիբջանյանը, մանկավարժական գիտ. թեկնածու է, դոցենտ, որի մեծ տղան՝ Բագրատը, տնտեսագիտության դոկտոր է, տիրապետում է մի շարք լեզուների, Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ակադեմիայի ավագ գիտաշխատող է, աղջիկը՝ Ասյան, Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ավագ դասախոս: Բագրատ Ղարիբջանյանի որդին՝ Գևորգ Ղարիբջանյանը, մի քանի ակադեմիաների ակադեմիկոս է:

ՀԱՍՄԻԿ ԱԼԵՔՍԱՆԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Ծնվել է 1896 թ., Իգդիրում: 1900 թ. Ղարիբջանյանների ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս՝ երեխաներին ուսման տալու նպատակով: 1906 թ. Հասմիկ Ղարիբջանյանն ընդունվում է Թիֆլիսի Գայանյան օրիորդաց ուսումնարանը, որն ավարտում է 1914 թ.:

1923 թ. ընդունվել և 1927 թ. ավարտել է Պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը: ՀՍԽՀ ժողկոմխորհի 1930 թ. մայիսի 17-ի որոշմամբ Հասմիկ Ղարիբջանյանին շնորհվում է բժշկի կոչում:

Ուսմանը զուգահեռ Հ. Ղարիբջանյանը աշխատել է Երևանի №1 քաղաքային հիվանդանոցում, որպես բուժքույր, իսկ 1928 թ.՝ Երևանի №1 կլինիկական հիվանդանոցում, որպես բժշկուհի:

1930 թվականից, շուրջ քառորդ դար, աշխատել է Երևանի Հոգեբուժական հիվանդանոցում, որպես բժիշկ:

1953 թ. նշանակվել է Հանրապետական նկար-հոգեբուժական դիսպանսերի գլխավոր բժիշկ, զուգահեռաբար աշխատել է նաև Երևանի հոգեբուժական հիվանդանոցում, որպես բաժնի վարիչ: 1957 թվականից անցել է կենսաթոշակի: Զբաղվել է նաև գիտահետազոտական և մանկավարժական գործունեությամբ:

Երևանի բժշկական համալսարանի առաջին շրջանավարտ Հասմիկ Ղարիբջանյանը առողջապահության մարմիններում երկարատև և անբասիր աշխատանքի համար պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, «Առողջապահության գերազանցիկ» մեդալով և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Մահացել է 1964 թ. հունվարի 23-ին, Երևան քաղաքում:

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ՝ ՂԱՐԻԲՋԱՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Ծնվել է Իգդիր քաղաքում 1896 թ. հոկտեմբերի 15-ին:

Պատանի Ղարիբջանը սկզբնական կրթությունն ստացել է Իգդիրի քաղաքային դպրոցում, ապա շնորհալի երեխային տեղափոխում են Թիֆլիս և դառնում է Ներսիսյան դպրոցի սան, որն ավարտում է 1914 թ.: Այնուհետև նա մեկնում է Դոնի Ռոստով և ընդունվում տեղի համալսարանի բժշկական բաժին: Ավարտելով այն, Ղարիբջանյանը որպես բժիշկ աշխատում է տարբեր քաղաքներում՝ ձեռք բերում հմտություն և ժողովրդի հարգանքը:

1934 թ. բժիշկ Ղարիբջան Ղարիբջանյանին զորակոչում են ԽՍՀՄ Կարմիր բանակ՝ զինվորական բժշկի ծառայության: Նրան նշանակում են Հեռավոր Արևելքի ռազմածովային ուժերի հոսպիտալի պետ: Շուտով տաղանդավոր բժշկին տեղափոխում են Լենինգրադ և նշանակում Ռազմաբժշկական ակադեմիայի կլինիկայի դիրեկտոր: 1938 թ. սկսվում է պատերազմ Հեռավոր Արևելքում՝ ճապոնացիների դեմ, և Ղարիբջանյանը մեկնում է ԽՍՀՄ-Մոնղոլիայի սահման, պատերազմին մասնակցելու, ապա 1939-40 թթ. որպես փորձառու զինվորական բժիշկ մասնակցում է ֆիններին դեմ պատերազմին: Հայրենական պատերազմի առաջին օրերից Ղարիբջանյանը գլխավորում է խորհրդային բանակի վիրաբուժական ծառայությունը, հանդիսանալով գլխավոր վիրաբույժ:

Բժշկական ծառայությունների գնդապետ Ղարիբջան Ղարիբջանյանը պարգևատրվում է ԽՍՀՄ բազմաթիվ շքանշաններով, մեդալներով: Նա մեծ հարգանք էր վայելում բոլոր այն կոլեկտիվներում, որտեղ աշխատել ու ծառայել է: 1960 թ. գնդապետ Ղարիբջանյանը զորացրվում է զինվորական ծառայությունից և աշխատում Լենինգրադի ռազմաբժշկական ակադեմիայում: Որտեղ էլ ապրել ու աշխատել է Ղարիբջան Ղարիբջանյանը, ամենասերտ կապերով կապված է եղել մայր Հայաստանի, նրա բնակչության, սուրմալեցիների և իր հարազատների հետ: Նա հաճախ էր այցելում Հայաստան, լինում Արաքսի ափերին, առանձնապես կարոտով նայում հայրենի Սուրմալուին, հուզվում և արտասվում: Տաղանդավոր բժիշկը բաղված է Լենինգրադում՝ ակադեմիկոս Ի. Պավլովի շիրիմի կողքին: Փաստորեն ակադեմիկոս Լևոն Օրբելուց հետո Լենինգրադի ռազմաբժշկական ակադեմիայի սաներից Ղարիբջան Ղարիբջանյանը եղավ նրա գործի շարունակողը:

Լենինգրադցիները սրտի ցավով և խորը հարգանքով հողին հանձնեցին հռչակավոր բժշկի դին:

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ՝ ՀԱԿՈԲՋԱՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

Ծնվել է Սուրմալու գավառի Բահարլու գյուղում 1902 թ. փետրվարի 1-ին: Հակոբջանի սրտում մինչև կյանքի վերջը մնում էին 1905-06 թթ. բուրքական հարձակումների և հայ բնակչության, Ղարիբջանյանների գկղդաստանի տղամարդկանց զինված ինքնապաշտպանության մասին հիշողությունները:

Հակոբջանն սկզբնական կրթությունն ստանում է Բահարլու գյուղի դպրոցում: Գյուղում բնակվում էին միայն հայեր, գործում էր Ս. Աստվածածին եկեղեցին, որի ամենօրյա զանգերի ղողանջը հասնում էր Բահարլուից շատ հեռու, փռվում դաշտերին:

Սուրմալուի գաղթը ծանր հարված էր Ղարիբջանյանների գկղդաստանի համար: Թողնելով պապենական տունն ու ունեցվածքը, շատերի հետ՝ մերկ ու քաղցած, բռնեցին գաղթի ճանապարհը: Ընտանիքը տեղավորվեց Սարդարապատի բնակավայրերում:

1922 թ. երիտասարդ Հակոբջանն ընդունվում է Թիֆլիսի Գեղարվեստի ակադեմիա: Այստեղ նա ուսանում է հանրաճանաչ գեղանկարիչ Եղիշե Թադևոսյանին, Ե. Լանսերին, Բ. Ֆոգելին և ուրիշների: 1929 թ. ավարտելով ակադեմիան, նա գործուն մասնակցություն է ունենում «Հայարտան» աշխատանքներին, աշխուժացնում նրա գործունեությունը:

1970 թ. Հակոբջանը տեղափոխվում է Երևան: Այստեղ նա իրեն հատուկ ջանասիրությամբ ծառայում է հայ մշակույթին, զբաղվում բարձրարժեք

նկարների բարդ ու դժվարին, բայց այնքան կարևոր վերականգնման աշխատանքներով: Նա այդ գործի ճանաչված մասնագետ էր ոչ միայն Հայաստանում, այլև ողջ ԽՍՀՄ-ում: Մանրանկարչության, կիրառական արվեստի հնագույն և արժեքավոր օրինակների կրկնօրինակումները որպես մենագրություններ հրատարակվել են Հայաստանում, Վրաստանում և բարձր է գնահատվել մասնագիտական լայն շրջաններում:

Հակոբջան Ղարիբջանյանն ամուսնացած էր Ռուսաստանում բնակվող գերմանուհու հետ: Ունեցան մեկ դուստր: Հայրենական պատերազմից հետո գերմանուհի կինը աղջկա հետ տեղափոխվեց Գերմանիա՝ մշտական բնակության, իսկ Հակոբջանը մնաց հայրենիքում:

ԳԵՎՈՐԳ ԲԱԳՐԱՏԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՄԱԿ-ի միջազգային տեղեկատվական ակադեմիայի ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը հայրենական պատմական գիտության ականավոր ներկայացուցիչներից է:

Նա ծնվել է 1920 թ. մայիսի 5-ին Ալեքսանդրապոլ (այժմ Գյումրի) քաղաքում, ականավոր բոլշևիկ Բագրատ Ղարիբջանյանի ընտանիքում:

Ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանի գրչին են պատկանում ավելի քան 300 գիտական աշխատություն և հրապարակախոսական հոդված, 75 գիրք և բրոշյուր՝ նոր և նորագույն շրջանի պատմության, հայ ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների մի շարք կարևոր պրոբլեմների, հայոց ցեղասպանության վերաբերյալ:

Գ. Բ. Ղարիբջանյանը հրատարակել է «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին», «Ակնարկներ հայրենալուծարական բարեկամության պատմության», «Ավարայրից մինչև Սարդարապատ», «Ավետիք Իսահակյան», «Ժողովրդական հերոս Անդրանիկը», «Հայկական ցեղասպանությունը և համաշխարհային հասարակությունը» և այլ արժեքավոր գրքեր:

1941-1948 թթ. Գ. Բ. Ղարիբջանյանը ծառայել է Խորհրդային բանակում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1961-1968 թթ. եղել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար, 1968-1977 թթ.՝ ԽՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի տնօրեն, 1977-1982 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիայի նախագահության անդամ: 1954-1981 թթ. Ղարիբջա-

նյանը եղել է ՀԽՍՀ Կենտկոմի անդամ, 1968-1969 թթ.՝ ՀԽՍՀ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու:

Գևորգ Ղարիբջանյանը ԽՄԿԿ 22-րդ, 23-րդ և 30-րդ համագումարների պատգամավոր էր, ԽՍՀՄ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների դեպուտատ: Գ. Բ. Ղարիբջանյանը Լենինականի, Քութայիսիի, Կիրովաբադի պատվավոր քաղաքացի էր:

1985 թ-ից Գ. Բ. Ղարիբջանյանը ղեկավարում էր ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը: 1947-ից նա նաև գիտամանկավարժական աշխատանք էր տանում հանրապետության բուհերում:

Ղարիբջանյանի գրչին են պատկանում Ավ. Իսահակյանի, Հ.Շիրազի, Մ.Սարյանի, Հ.Բաղրամյանի, Գ.Սարյանի, Ա.Արմենյանի, Ա.Մելիք-Փաշայանի և այլոց մասին արժեքավոր հրատարակումներ:

Իր մարտական և աշխատանքային ծառայությունների համար Գ.Ղարիբջանյանը պարգևատրվել է հինգ շքանշանով և ավելի քան երկու տասնյակ մեդալներով, «Բարեկամության գործի ավանդի», «Ոսկե պսակ» պատվո նշաններով:

Նշանավոր գիտնականը իր մահկանացուն կնքեց 1999թ. դեկտեմբերին:

Գևորգ Ղարիբջանյանի կինը՝ Լենան, քիմիկոս է, իսկ նրանց ժառանգները՝ Բագրատը, Գևորգը և Արմենուհին, գիտությունների տարբեր բնագավառներում նույնպես ճանաչված անուններ են:



ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԼՅՈՒԴՎԻԳ ՊԱՊԻԿԻ

Ծնվել է Երևան քաղաքում, 1922 թ. օգոստոսի 24-ին, Սուրմալուի գավառից գաղթած Ղարիբջանյանների հայտնի ընտանիքում: Ավարտելով Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցը, 1940 թ. նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որը հաջողությամբ ավարտում է 1945-ին: Շուտով երիտասարդ պատմաբանը պաշտպանում է թեզ և ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հանրապետության ղեկավարության աչքից չի վրիպում բանիմաց երիտասարդ գիտնականը և նրան նշանակում են Երևան քաղաքի կոմկուսակցության շրջկոմի, ապա և քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար: 1951-1975 թթ. նա կատարում է կուսակցական մի շարք պատասխանատու աշխատանքներ, լինում է համալսարանի կուսկոմիտեի քարտուղար, Երևան քաղաքի Սպանդարյանի կուսակցական շրջանային կոմիտեի առաջին քարտուղար, Երքաղկոմի առաջին քարտուղար: Միաժամանակ Լյուդ-

վիգ Ղարիբջանյանը դասավանդում է համալսարանում, որտեղ և նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Լյուդվիգ Ղարիբջանյանը կուսակցական, մանկավարժական աշխատանքներում ջանք չի խնայել հայ երիտասարդության դաստիարակման, հայկական ոգին նրանց մեջ արթնացնելու ու վառ պահելու հայրենասիրական վեհ գործում:

Իր շիտակության, ազնվության և բյուրեղյա մաքրության համար Երևան քաղաքի բնակչությունը, երիտասարդությունը նրան հայրում և հավատում են: Լինելով Երևան քաղաքի ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար, Լյուդվիգ Ղարիբջանյանը ջանք չի խնայել մայրաքաղաքի բարեկարգման, նրա ազգային դեմքի ձևավորման ու գեղեցկացման գործում: Անգնահատելի է նրա հասարակական-քաղաքական գործունեությունը մայրաքաղաք Երևանի քաղաքաշինության, բնակչության սոցիալական վիճակի բարելավման գործում:

1975 թ. Լյուդվիգ Ղարիբջանյանը նշանակվում է Հայաստանի Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր, որտեղ աշխատած 14 տարիների ընթացքում ջանք չի խնայում հանրապետությունում մասնագիտական կրթությունը բարձր հիմքերի վրա դնելու, երկրի համար լիարժեք մասնագետներ պատրաստելու դժվարին ու պատասխանատու խնդրում:

Ժողովուրդը նրան բազմիցս ընտրել է ԽՍՀՄ և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի մի շարք գումարումների դեպուտատ:

Լյուդվիգ Ղարիբջանյանը հեղինակ է մի շարք գիտական հոդվածների և «Երևանի պետական համալսարանը» և «Երևան» մենագրությունների: ԽՍՀՄ կառավարությունը բարձր է գնահատել Ղարիբջանյանի հասարակական-քաղաքական, դասախոսական աշխատանքները և պարգևատրել Կարմիր դրոշի, ժողովուրդների բարեկամության շքանշաններով, բազմաթիվ մեդալներով ու պատվոգրերով: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի սովետական հանրագիտարանի հրատարակման գործում:

Լյուդվիգ Ղարիբջանյանն ունի երկու որդի՝ Աշոտ և Լևոն:

Աշոտը վերջացրել է բժշկական ինստիտուտը, ապա Մոսկվայում պաշտպանել թեկնածուական թեզ և աշխատում է Երևանի Նորքի հիվանդանոցի վիրաբուժական բաժինների ղեկավար, գլխավոր բժշկի տեղակալ: Աշոտն ունի Արեգ և Կարեն որդիներին:

Լևոնը նույնպես մասնագիտությամբ բժիշկ է: Մոսկվայի 1-ին բժշկական ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ և աշխատում է հանրապետության Արմավիրի մարզում որպես գլխավոր վիրաբույժ: Լևոնն ունի Իռեն և Լյուդվիգ զավակներին: Իռենն ունի Հենրիկ որդուն:

Ղարիբջանյան գերդաստանը հարգված է մեր ժողովրդի կողմից:

ՕՖԵԼՅԱ ԲԱԳՐԱՏԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Օֆելյան ծնվել է Բագրատ Ղարիբջանյանի և Արմենուհի Տեր-Դավթյանի ընտանիքում: Ծնողները Իգդիր քաղաքից են գաղթել Երևան:

Օֆելյան ամուսնանում է Հայկ Երզնկյանի հետ, ունենում են Բագրատին, Աստղիկին, Արմենին, Դավթին: Բագրատ Հայկի Երզնկյանը 1971 թ. հաջողությամբ ավարտում է Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի տեխնիկական կիբեռնետիկայի բաժինը: 1983-86 թթ. սովորում և վերջացնում է ՀԽՍՀ Պետպլանի տնտեսագիտական ինստիտուտի ասպիրանտուրան և պաշտպանում թեկնածուական թեզ, ստանում տնտեսագիտության թեկնածուի աստիճան:

1971-72 թթ. աշխատել է Երևանի Միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական ինստիտուտում, ինժեների պաշտոնում, ապա՝ ՀԽՍՀ Զանգեզուրյան լաբորատորիայում: Շուտով նա տեղափոխվում է Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ՝ գիտաշխատողի պաշտոնով: Հետագայում Բագրատ Երզնկյանն աշխատանքի է անցնում հանրապետության Առևտրաարդյունաբերական պալատում՝ էքսպերտի պաշտոնով: 1976 թ. մինչև 1987 թ. աշխատել է ՀԽՍՀ Պետպլանում՝ որպես ավագ գիտաշխատող: 1987 թ. Բագրատ Երզնկյանը տեղափոխվում է Մոսկվա և



աշխատանքի անցնում ԽՍՀՄ Պետպլանում որպես գիտաշխատող, ապա՝ բաժնի վարիչ, մինչև 1994 թ.:

Երզնկյանը երկար տարիներ դասախոսում է Հայաստանի, նաև Մոսկվայի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ավարտել է նաև ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի Մոնտերեյի ռեսուրսների ղեկավարման Պաշտպանական ինստիտուտը, ապա Պետական կարգավորման եվրոպական ինստիտուտը (Ֆիդերլանդներ), Տեղեկատվության աշխատողների մասնագիտության բարձրացման մոսկովյան ինստիտուտը և այլն: Բազմակողմանի զարգացած, բազմաթիվ լեզուների (հայերեն, ռուսերեն, անգլերեն, լեհերեն, ճապոներեն, ֆրանսերեն, իտալերեն) տիրապետող գիտնականը մեծ ճանաչում ունի ոչ միայն նախկին ԽՍՀՄ տարածքում (ներկա ԱՊՀ), այլև արտասահմանում: Բագրատի զավակները՝ Լիլիթը, Միքայելը, նույնպես ընթանում են հոր ուղիով, սիրված և հարգված են հասարակության կողմից:

ԳԵՂԱՄ ՏԻՐԱՆԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Գեղամ Տիրանի Ղարիբջանյանը մեկն է միջին սերնդի այն ներկայացուցիչներից, որոնց համար մեր պետականության կայացման խնդիրը առանձնակի նշանակություն ունի: Քաղաքական որևէ հոսանքի չի պատկանում: Նրա հավատամքը ազգի միասնությունն է:

Ծնվել է 1951 թ., Երևանում: Հայրը՝ **Տիրան Ղարիբջանյանը**, որն իր արմատներով հնագույն Սուրմալու գավառից էր և մեծ ծառայություններ ունի հանրապետության ավտոտրանսպորտի զարգացման ոլորտում, իր զավակներին դաստիարակել է Ղարիբջանյանների գերդաստանին հատուկ ավանդապահության, հայ ընտանիքի սրբության ոգով:



Գեղամ Ղարիբջանյանը Իրանի Իսլամական հանրապետության նախագահ Խաթամիի հետ

1973 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի արևելագիտական ֆակուլտետը, Գեղամ Ղարիբջանյանն աշխատանքի է անցել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում, որպես խորհրդական, ապա՝ ավագ խորհրդական և բաժնի վարիչ: Այդ տարիներին հնարավորություն է ունեցել ավելի մոտիկից ծանոթանալու աշխարհայրիվ հայությանը հուզող խնդիրներին:

1978-81 թթ. նա աշխատել է Իրանում, այնուհետև ղեկավարել է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի արևելյան և երիտասարդական բաժինները: 1991 թ. մայիսին Գեղամ Տիրանի Ղարիբջանյանը նշանակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության փոխնախարար:

Նրա եռանդուն ջանքերի շնորհիվ նախարարությունը գործնական կապեր է հաստատել տարբեր երկրների համապատասխան նախարարությունների, բարեգործական, հասարակական կազմակերպությունների հետ:

Մեծ է նրա ավանդը աղետի գոտու զոհված ազատամարտիկների որբացած երեխաներին օժանդակելու, նրանց հանգիստը կազմակերպելու գործում: Գեղամ Տիրանի Ղարիբջանյանը Հայաստանի մանկատների հիմնադրամի նախաձեռնողներից է և այդ հիմնադրամի խնամակալական խորհրդի անդամ:

1993 թ. հոկտեմբերից փոխնախարարը միաժամանակ ղեկավարում է սոցիալական ծառայությունների նորաստեղծ վարչությունը: Գ. Ղարիբջանյանը «Փարոս» ծրագրի համահեղինակներից է:

1995 թ. հուլիսին ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր, սեպտեմբերից՝ ՀՀ ԱԺ սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, 1997 թ. փետրվարից՝ նույն հանձնաժողովի նախագահ: Հիմնադրել և ղեկավարել է «Սոցիալական պետության» պատգամավորական խումբը:

1999 թ. հունիսի 14-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Իրանի Իսլամական հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:

Ամուսնացած է, երեք զավակի հայր:

Կինը՝ Աիդա Ղարիբջանյանը, Հայաստանի պարի պետական համույթի վաստակաշատ մենապարուհի, հրաժեշտ է տվել բեմին 1998 թ. հոկտեմբերի 14-ին:

ԲԱԳՐԱՏ ՏԻՐԱՆԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱ Ալ. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն, բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի բժշկական գիտությունների, Ռուսաստանի բնական գիտությունների, Միջազգային բնության և հասարակության մասին գիտությունների ակադեմիաների իսկական անդամ:

Բագրատ Տիրանի Ղարիբջանյանը ծնվել է 1937 թ. մարտի 4-ին, ՀՀ Կիրովական (այժմ Վանաձոր) քաղաքում, ծառայողի ընտանիքում:

Ավարտել է հայկական միջնակարգ դպրոցը Երևան քաղաքում:

1960 թ. Մոսկվայում պաշտպանել է թեկնածուական, իսկ 1976 թ.՝ Կիևում, դոկտորական թեզ՝ նվիրված քաղցկեղի ուսումնասիրության և բուժման հարցերին:

Տպագրել է 207 աշխատանք, այդ թվում՝ 3 մենագրություն (ԱՄՆ, Մոսկվա, Երևան):

Ունի 29 հայտնագործության արտոնագիր:

Գիտական զեկուցումներով հանդես է եկել 14 համամիութենական և 5 միջազգային գիտաժողովներում:

Դասախոսություններով հանդես է եկել Հունգարիայում (1967 թ.), ԱՄՆ-ում (1970, 1973, 1992 թթ.), Իտալիայում (1974-1991 թթ.), Հնդկաստանում (1980 թ.), Կանադայում (1984 թ.), Գերմանիայում և Ճապոնիայում (1991 թ.):

Բ. Տ. Ղարիբջանյանի կողմից հայտնագործած 3 հակաուռուցքային միացություն առաջարկվել է նախակլինիկական, 2-ը՝ կլինիկական փորձար-

կումների համար:

Հայաստանում 1994 թ. կազմակերպել է Հայ-Ամերիկա-Գերմանական համատեղ դեղագործական ձեռնարկություն: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 14 թեկնածուական, 3 դոկտորական թեզ:

1964-72 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետում:

Բազրատ Տիրանի Ղարիբջանյանը «Նոր մտահղացումներ քաղցկեղի բուժման բնագավառում» միջազգային գիտական ընկերության անդամ է, Ռուսաստանի Դաշնության քաղցկեղի ֆարմակոթերապիայի պլորլենային խորհրդի անդամ, ՀԳԱ բժշկակենսաբանական պլուրլենային խորհրդի անդամ, Հայաստանի դեղագետների ընկերության փոխնախագահ), Հայաստան-Կանադա, Հայաստան-ԱՄՆ ընկերությունների անդամ:

1997 թ. առաջարկ է ստացել կենսագրությունը տպագրելու «20-րդ դարի 2000 նշանավոր մարդիկ» Միջազգային Հանրագիտարանում:

ԱՇՈՏ ՏԻՐԱՆԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Ծնվել է 1945 թ. դեկտեմբերի 6-ին, Երևանում, իգդիրցու ընտանիքում:

1964 թ. ավարտել է Երևանի Ն. Կլուպսկայայի անվան միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ, որն ավարտել է 1970 թ.:

1974-78 թթ. սովորել է Լենինգրադի Պուլկովոյի աստղադիտարանում՝ որպես ասպիրանտ ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Օ. Ա. Մելնիկովի մոտ:

1984 թվականին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա՝ նվիրված կլանող նյութի և ջերմ աստղերի բաշխմանը Բյուրականի աստղադիտարանում:

1970-ից մինչև 1996 թ. մայիս ամիսն աշխատել է Բյուրականի աստղադիտարանում որպես գիտաշխատող: Ունի շուրջ 40 տպագրված գիտական աշխատանքներ:

1994 թ. ընտրվել է Բյուրականի աստղադիտարանի տնօրեն, սակայն Լ. Տեր-Պետրոսյանի և Վ. Համբարձումյանի համատեղ ջանքերով ընտրությունը ճանաչվել է անվավեր և տնօրեն է նշանակվել (միաժամանակ նախարար) Ա. Պետրոսյանը՝ «Հայաստան» հիմնադրամի նախկին գործադիր տնօրեն Մանուշակ Պետրոսյանի ամուսինը:

Երբեք չի մասնակցել կոլեկտիվ նկարահանումների կամ չի հայտածվել մամուլում, քանի որ չի սիրում, որ խոսեն իր մասին: Սակայն իգդիրցու ժա-

ռանգ լինելը համարում է վերին աստիճանի պատվավոր և պարտավորեցնող, այդ իսկ պատճառով ներկայացրել է կենսագրական սույն համառոտ տվյալները:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՄԿՐՏԻՉ ՇՄԱՎՈՆԻ

Ծնվել է նախկին Երևանի նահանգի Սուրմալու գավառի Քուլուջա գյուղում: Ծնողները զբաղվել են երկրագործությամբ, ընտանիքը եղել է բազմանդամ:

Սկզբնական կրթությունն ստացել է Քուլուջայի գյուղական դպրոցում: Ինչպես համագյուղացիներից շատերը, նա ևս զորակոչվում է ռուսական բանակ: Այստեղ ուշիմ և ուսումնատենչ երիտասարդին արագ նկատում են հրամանատարները և գործուղում ռազմական ուսումնարան: Շուտով Մկրտիչը ենթասպայի կոչումով հայտնվում է գրամասում և մեկնում թուրքական ռազմաճակատ:

Համագյուղացիների նման Մկրտիչ Գևորգյանը, որի բազմանդամ ընտանիքի անդամներն արդեն չկային, հասնում է Սարդարապատ, ապա Երևան:

Իր ժողովրդի փրկությունը օրհասական այդ տարիներին նա ևս տեսնում էր ռուսական զենքի, Ռուսաստանի հզորության մեջ: Շուտով կոմունիստական կուսակցությանն անդամագրված կապիտան Գևորգյանը նշանակվում է Հայկական 3-րդ հրաձգային գնդի 2-րդ գումարտակի հրամանատար:

Հայաստանի Խորհրդային Հանրապետության կառավարությունը 1921 թ. նրան պարգևատրում է հանրապետության Կարմիր դրոշի շքանշանով:

Զինվորական հրամանատարությունը Գևորգյանին գործուղում է Մոսկվա՝ ռազմական բարձրագույն կրթություն ստանալու:

Հաջողությամբ ավարտելով «Վիստրել» ռազմական ուսումնարանը, վերադառնում է Հայաստան և նշանակվում Երևանում գտնվող հայկական «մայրաքաղաքային» գնդի հրամանատար, իսկ 1935 թ. նրան շնորհում են գնդապետի կոչում:

Համեստ, գործունյա, մշտապես հոգատար ենթակաների նկատմամբ, ազնվագույն հայը 1937 թ. զոհ գնաց այս անգամ արդեն «յուրայինների» դավադրությանը: Գնդապետ Մկրտիչ Շմավոնի Գևորգյանի պայծառ կյանքը ընդհատվեց 1937 թ.: 1955 թ. գնդապետ Մկրտիչ Գևորգյանն արդարացվում է: Նույն թվականին էլ ԽՍՀՄ կառավարությունը ետմահու նրան շնորհում է գեներալ-մայորի կոչում: Մկրտիչ Շմավոնի Գևորգյանը ամուսնացավ համագյուղացի Իզաբելլա Գևորգի Նազանյանի հետ և ունեցան Լաուրային, Էլեոնորային և Գևորգին:

Լաուրա Գևորգյան: Ծնվել է 1924 թ., Երևանում: Ավարտելով միջնակարգ դպրոցը, ընդունվում է Երևանի օտար լեզուների ինստիտուտ: Հաջողությամբ վերջացնելով ինստիտուտը, Լաուրան աշխատում է մայրաքաղաքի դպրոցներում, ապա Հայաստանի Հանրապետության Երկրաբանական գիտահետազոտական ինստիտուտի գիտական գրադարանում որպես նրա վարիչ: Ծնողներից ժառանգած համեստությունն ու աշխատասիրությունը, բարությունն ու մարդասիրությունը գայլայլում են Լաուրա Գևորգյանին:

Էլեոնորա Մկրտչի Գևորգյան: Ծնվել է Երևանում, 1926 թ: Ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և երկար տարիներ աշխատում է մայրաքաղաքի դպրոցներում որպես ուսուցչուհի:

Գևորգ Մկրտչի Գևորգյան: Ծնվել է Երևան քաղաքում, 1929 թ: Գևորգն ավարտել է Երևանի Լենինամեջալուրգիական տեխնիկումը, ապա՝ պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային բաժինը:

Ավարտելուց հետո, նա լծվում է հանրապետությունում թափ առնող լեռնային գործին: Երկար ժամանակ աշխատել է հանրապետության երկրաբանական վարչությունում, ապա ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի խորհրդական: Գևորգ Գևորգյանը մահացավ 1998 թ. Երևանում:

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԳԵՎՈՐԳԻ

Ծնվել է Իգդիր քաղաքում, 1890 թ.:

Ադիլխանյանների ընտանիքը բազմանդամ էր և երիտասարդ թե տարեց՝ յուրաքանչյուրը գիտեր իր աշխատանքի բնագավառը ու այն կատարում էր ամենայն բարեխղճությամբ: Հիմնականում զբաղվում էին բամբակենու, ծխախոտի, բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ, ունեին նաև խաղողի այգի, մրգատու ծառեր: Երկրագործությունից բացի ընտանիքն ուներ անասունների և ոչխարների մեծ գլխաքանակ, որի մթերքներն օգտագործում էին ընտանիքի կարիքների համար՝ միս, յուղ, կաթ, կաթնամթերք: Եզների, գոմեշների, կովերի կաշին տնայնագործական եղանակով մշակում և զանազան տեսակի կոշիկ-չարխեներ էին պատրաստում:

Անասուններին և ոչխարներին խնամելու համար վարձում էին եզդի նախրապան-հովիվներ: Սրանք Ադիլխանյանների անասուններին պահում էին իրենց անասունների, ոչխարների հետ: Ամռանը կենդանիներին տեղափոխում էին լեռնալանջերի փարթամ արոտավայրեր: Այստեղ էլ պատրաստում էին այնքան պատվավոր պանիրն ու բուրմունքով յուղը, ապա տեղափոխում Իգդիր: Ընտանիքը թեև մեծ էր, բայց այնտեղ մշտապես լինում էր

ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ անասնապահական մթերքների ավելցուկ, որը վաճառում-փոխանակում էին քաղաքում կամ շրջակա բնակավայրերում:

Սկսվում է ռուս-թուրքական պատերազմը և, Խաչատուրը իր եղբայրների հետ մասնակցում է կռիվներին: Նրանք պաշտպանում են հայրենի Իգդիրը թուրք և քուրդ թալանչիներից: Սակայն շատերի նման Ադիլխանյաններին ևս չէր վիճակվել մնալ պապական օջախում, հայրենի Սուրմալուում: Կատարվում է անհավատալին՝ Սուրմալուն գաղթում է: Սկզբում տեղավորվում են Վաղարշապատի գյուղերից Մեծ Շահրիարում, ապա 1930 թ. Խաչատուրի որդի Հենրիկը տեղափոխվում է Երևանի մոտակա Գոգոմրեր գյուղ, կառուցում տուն, մասնակցում կոլեկտիվացմանը: Այստեղ նույնպես հիմնականում մշակում են բամբակենի: Իսկ սուրմալեցիները, Ադիլխանյան գերդաստանը այդ կուլտուրայի մշակման հմուտ մասնագետներ էին:

Հենրիկ Ադիլխանյանն ամուսնանում է նույնպես գաղթական շալուրցու դուստր Անուշ Հովսեփյանի հետ:

Ունենում են Վարազդատին (Վարիկ), Խաչատուրին, Վաչիկին:

Վարիկն ունենում է Կարենին, Արտյոմին, Քրիստինային: Կարենն ունեցավ Մարիամին, Արտյոմին: Արտյոմն ունի Հենրիկին, Սոնային:

Խաչատուրն ունի Կարապետին, Նոնեին, Նարինեին: Կարապետն ունի Խաչիկին:

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՉԻԿ ՀԵՆՐԻԿԻ

Ծնվել է գաղթականներ Իգդիրցի Խաչիկ Ադիլխանյանի և շալուրցի Անուշ Հովհաննիսյանի ընտանիքում 1957 թ. , Գեղանիստ գյուղում: Գեղանիստը մայրաքաղաքի ամենամոտ բնակավայրերից էր, և Վաչիկն անմիջական շփում ուներ Երևանի հետ:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Վաչիկ Ադիլխանյանին զորակոչում են զինվորական ծառայության: Աչքաբաց ու նախաձեռնող Վաչիկն աչքի է ընկնում ինչպես զինվորական ծառայության մեջ, այնպես էլ հայրենի Գեղանիստում: Օգնում է հորը ժամանակակից բնակարան կառուցելու, հողատարածքները արդյունավետ օգտագործելու, բարեկեցիկ կյանքով ապրելու:

Նա երիտասարդական ավյունով, ազնվությամբ հնարավոր ամեն բան անում է համագյուղացիներին օգնելու և նրանց ամենօրյա կարիքները թեթևացնելու գործում: Բարի և մարդամոտ Ադիլխանյանները վայելում են համագյուղացիների հարգանքը: Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծմամբ փոխվում է նաև գյուղական համայնքների կարգավիճակը:

Սկսվում է հողերի սեփականաշնորհման գործընթացը, և Վաչիկ Ադիլխանյանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում այդ դժվարին ու պատասխանատու աշխատանքներն անթերի և անկողմնակալ կատարելու, արդարությունը պաշտպանելու հարցում:

Այս բոլորի արդյունքում համագյուղացիները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում նրան ընտրում են Գեղանիստ գյուղի համայնքի գյուղապետ:

Այս պաշտոնում բանիմաց և ձեռներեց Վաչիկ Ադիլխանյանը նոր եռանդով է սկսում հայրենի գյուղի բարեկարգման աշխատանքների կատարումը: Նա առանձնակի ուշադրություն է դարձնում գյուղացիներին այնքան մտահոգող և դժվարություն հարուցող Հրազդան գետի կամրջի շինարարական-վերանորոգման աշխատանքներին, և մի քանի ամսում կամուրջն սկսում է գործել: Առանձնակի ուշադրություն է դարձնում գյուղական համայնքում մշակութային աշխատանքներին: Կազմակերպվում է մանկական երգչախմբի համույթ, որն իր ելույթներով հիացմունք է պատճառում բոլորին: Առանձնակի ուշադրություն է դարձնում գյուղական դպրոցին, կարիքավոր, սոցիալապես անապահով ընտանիքներին, մասնավորապես այդպիսի ազատամարտիկների ընտանիքներին: Հատուկ հոգածություն է ցուցաբերում զոհված ազատամարտիկների գերեզմանների կառուցման ու բարեկարգման գործին:

Վաչիկ Ադիլխանյանն ամուսնացել է Հասմիկ Ենոքյանի հետ և ունեն Անուշին, Սամվելին, Վարսենիկին, Աննային:

Անուշն ունի Անահիտին, Կարենին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՀԱԿՈԲԻ

Սարգիս Հովհաննիսյանը ծնվել է Ալիղամալ գյուղում, 1892 թ.: Այստեղ վկայագրում է երկդասյան դպրոցը, աշխատում տարբեր վայրերում:

1918 թ. թուրքական կոտորածներից մազապուրծ հասնում են Սարդարապատ, բնավորվում Ջաֆարաբադ գյուղում: Սարգիսը պատմում էր (1999 թ. հունվարի 12-ին). «Մոտ լինենք հարազատ Իգդիրին և առաջին հնարավորության դեպքում «Արազն անցնենք»: Նա համոզված ասում է, որ հիմա էլ պատրաստ է Արաքսը լողալով անցնել: Լավ հիշում է Ալիղամալի իրենց տունն ու հարևան շինությունները: Սարգիսն ունի Հայրապետին, Վռամին, Կոլյային, Լևոնին, Կարլենին, Արկադիին, Դեզդեմոնային, Պետիկին, Հակոբին:

Հայրապետն ունի Մուրադին, Քաջիկին, Գելասիմին, Ռոզային, Մանիկին: Քաջիկն ունի Վիգենին, Արաքսային, Անիին:

Մանիկն ունի Մակարին, Արթուրին:

Վռամը 1940 թ. զորակոչվում է Կարմիր բանակ և Հայրենական պատերազմի առաջին օրերից մասնակցում կռիվներին: Նա փառապսանծ 25-րդ տանկային կորպուսի կազմում մտնում է Բեռլին: Քաջակորով տարմպլեցին քաջության և խիզախության համար պարգևատրվում է ԽՍՀՄ կառավարության կողմից Հայրենական Մեծ պատերազմի շքանշաններով, Կարմիր աստղի երկու շքանշանով, մեդալներով և այլ պարգևներով: Պատերազմի հաղթական ավարտից հետո զորացրվում է: Ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը, որպես գյուղատնտես աշխատում է հայրենի գյուղում: Վռամ Հարությունյանն ունի Արտավազդին, Գայանեին, Շուղակաթին, Հռիփսիմեին, Աշոտին: Արտավազդն ունի Աշոտին, Աշոտն ունի Արտավազդին: Վռամի մյուս զավակը՝ Լուսինեն, ունի Գրիգորին: Վռամի մյուս դուստրը Իրինան է:

Լևոն Հովհաննիսյանն ունի Նելսոնին, Հրաչին, Արդային:

Նելսոնն ունի Լյովային, Մարինային:

Հրաչիկն ունի Արկադիային, Գայանեին:

Արդան ունի Արմենին, Վարսիկին:

Արկադիան ունի Կարենին, Գագիկին, Սարգսին:

Կարենն ունի Գրիգորին: Գագիկն ունի Գուրգենին, Արկադիային: Սարգիսն ունի Զարուհուն:

Հակոբ Հովհաննիսյանն ունի Արայիկին, Համլետին:

Իրար, Սարմալուի արժանի ժառանգներն իրենց աշխատասիրությամբ, բարությամբ և համեստությամբ կերտում են իրենց ապագան, հուսավառ աչքերով նայում դեպի հայրենյաց երկիր, հավատով սպասում, որ վաղ թե ուշ տեր կլինեն իրենց հայրերի ու պապերի դրախտային երկրամասին:

Նյութը պատրաստեց Պետրոս Պետրոսյանը 1999 թ. հունվարի 12-ին Հովհաննիսյանների բնակարանում:

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ԱՐԱՄ ՎԱՀԱՆԻ

Ծնվել է Երևանի Նահանգի Սարմալու գավառի Իգդիր քաղաքում, 1893 թ. մայիսի 3-ին: Սկզբնական կրթությունն ստացել է Իգդիրի քաղաքային դպրոցում: Ուշիմ երեխայի ուսումնատենչությունը բավարարելու նպատակով ծնողները նրան տեղափոխում են Ռումինիա: Սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, և Արամը մեկնում է զինվորական ծառայության ռուսական բանակում: Նա ընկնում է ռուս բոլշևիկների ազդեցության տակ և ինքն էլ սկսում է ակտիվ քարոզչական աշխատանքներ կատարել ռուսական բանակում, առանձնապես նրա հայազգի զինվորների շրջանում: 1917 թ. ընդունվում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական (բոլշևիկյան) կուսակցության շարքերը և մինչև մահ մնում է այդ կուսակցության դավա-

նանքին հավատարիմ: Պատերազմի ավարտից հետո նա վերադառնում է Հայաստան, Երևան և ընտրվում Երևանի քաղաքային կոմիտեի անդամ (1920 թ.): 1920 թ. նոյեմբերի վերջին Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր: Մանուչարյանին վստահում են կապի, առողջապահության, հողագործության բնագավառների բարձր և պատասխանատու պաշտոններ, որը նա կատարել է պատվով և իմաստությամբ: Եղել է Հայաստանի կապի գրասենյակի պետ և այլն: Ազնիվ, հայրենասեր Արամ Մանուչարյանի կյանքի թելը կտրվեց 1937 թ.: Նա ևս դարձավ ժամանակի անարդարությունների զոհը: Մանուչարյանն զբաղվել է նաև գրական աշխատանքով: 1933 թ. նա հրատարակել է «Հուշեր և փաստեր ընդհատակյա կյանքից» մենագրությունը:

Արամ Մանուչարյանը Հայաստանում աշխատած տարիներին հաճախակի էր հանդիպում համերկրացիներին: Նրանք երբեմն նեղ շրջանում հիշում ու պատմում էին Իգդիրի, Սուրմալուի ծաղկուն տարածքների, իրենց մանկության օրերի մասին:

Շիտակ ու ազնիվ սուրմալեցին վաղ հրաժեշտ տվեց կյանքին: Նրա հիշատակը սուրմալեցիների մոտ անցնում է սերնդից-սերունդ:

ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ԱՂԱՍԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Կողբ գյուղում, 1893 թ.: Աղասին ունեցել է Արսենին, Կարլենին, Լուսիկին, Մելանյային, Սոկրատին, Մարտունին: Հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր: Ունեին 400-ից ավելի ոչխար: Այս տոհմին Կողբում անվանում էին Փախչոյենց:

Կարլենն ունի Սողոմոնին, Արսենն, Մանյային, Հասմիկին: Սողոմոնն ունի Վահանին, Հասմիկին: Հասմիկն ունի Լիլիթին, Շավարշին, Անդրանիկին:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԵՐԱՆՈՍ ԳԱԼՈՒՍՏԻ

Ծնվել է Սուրմալուում, 1893 թ.: Ամուսնանում է համերկրացի Աշխեն Գևորգյանի հետ: Զբաղվել են երկրագործությամբ, մշակել բամբակ, խաղողի այգի, բանջարաբոստանային կուլտուրաներ, ձիթատու բույսեր:

Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն պես հայ երիտասարդները կամավոր անդամագրվում էին ռուսական բանակին կամ մտնում հայկական աշխարհազորային ինքնապաշտպանական ջոկատներ: Երանոսը դրանց կազմում էր: Եկան հայերի համար տառապանքի ու մղձավանջի ծանր օրեր, և սուրմալեցին ևս ողջ մնացած հայության հետ բռնեց գաղթի ճանապարհը:

Հալմար տեղն ընտրվեց Ջաֆարաբադը:

Ծնվեցին Շահանդուխտը, Ազատը, Արաքսյան, Ռոզան, Լևոնը:

Շահանդուխտն ունեցավ Արդա, Լյալա, Աշոտ, Գայանե, Սուսաննա, Գառնիկ, Ալլա, Գագիկ զավակներին: Արդան ամուսնացավ Համլետի հետ և ունեն Աննային, Քրիստինեին, Արմինեին: Լյալան ամուսնացավ Բորիսի հետ և ունեն Գոհարին, Համլետին: Աշոտն ամուսնացավ Համլետի հետ և ունեն Նարինեին, Արտավազդին, Արմենին, Քաղցրիկին:

Գայանեն ամուսնացել է Ռաֆայելի հետ և ունեն Լուսինե, Հասմիկ, Քրիստինե, Լիանա, Համլետ զավակներին: Սուսաննան ամուսնացել է Ջաջիկի հետ և ունեն Էդգարին, Քրիստինեին: Գառնիկն ամուսնացավ Ժաննայի հետ և ունեն Արտակին և Անդին: Ալլան ամուսնացել է Մյասնիկի հետ և ունեն Անուշին, Երանոսին, Վահանին: Գագիկն ամուսնացավ Մարինեի հետ և ունեն Դավիթն ու Շահանդուխտին: Ազատ Կիրակոսյանն ունի Էմմա, Ջեմմա, Աշոտ, Ազատուհի զավակներին: Էմման ամուսնացել է Գեղամի հետ և ունեն Արմանին, Աղավնուն: Ջեմման ամուսնացել է Այրիկի հետ և ունեն Մերիին և Լիզային: Աշոտն ամուսնացել է Անահիտի հետ և ունեն Ազատին, Էրիկին: Ազատուհին ամուսնացել է Արայիկի հետ և ունեն Էդգարին:

Արաքսյա Կիրակոսյանն ամուսնացել է Դրաստամատի հետ և ունեն Աշոտին, Զավենին, Վազգենին, Վարդգեսին: Աշոտն ամուսնացել է Մարգարիտայի (Ռիտա) հետ, ունեն Սուսաննային (Սյուզիին), Նունեին:

Ռոզա Կիրակոսյանն ամուսնացավ Սերյոժայի հետ և ունեցան Մարիամին (Մարո) և Արսենին:

Լևոն Կիրակոսյանն ամուսնացավ Լաուրայի հետ և ունեցան Գալուստին, Հովհաննեսին, Գագիկին: Գալուստն ամուսնացավ Արմինեի հետ և ունեն Աշխենին, Լևոնին: Հովհաննեսն ամուսնացավ Վալտենիկի հետ և ունեն Հայկուհուն, Աննային: Գագիկն ամուսնացավ Իրինայի հետ և ունեն Լաուրային:

ԱԹՈՅԱՆ ՀԱԿՈԲ ԹԱԴԵՎՈՍԻ

Ծնվել է Երևանի նահանգի Սուրմալուի գավառի Իգդիր քաղաքում, 1895 թ.: Ծնողները զբաղվել են երկրագործությամբ: Հակոբը սովորում է Իգդիրի ծխական դպրոցում, ապա՝ երկրագործության ուսումնարանում, ավարտում Երևանի ուսուցչական դասընթացները:

Սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, և Աթոյանը կամավոր մեկնում է ծառայելու ռուսական բանակում: 1917 թ. վերջերին Ռուսաստանում հաղթում է

բոլշևիկյան հեղափոխությունը, և ռուսական զորքերը այլան գնով ազատագրված Արևելյան Հառաստանի տարածքները բաղնելով անպաշտպան, հեռանում են: Թուրքերի դեմ կռիվներում արիություն և հնարամտություն ցուցաբերելու համար նա պարգևատրվել է Գեորգիևյան խաչով: Հրամանատարությունը քաջ ենթասպային ուղարկում է Վլադիկավկազ՝ սպայական դպրոցում սովորելու: Երիտասարդ Աբոյանը սպայի ուսադիրներով անմիջապես մեկնում է թուրքական ճակատ: Գեներալ Նազարբեկովի հրամանատարությամբ գործող հայկական կորպուսը թվաքանակով և զինվորական հանդերձանքով շատ էր զիջում թուրքերին: Հանգամանքների բերումով թուրքերն իրենց ապահով էին զգում Արևմտյան ճակատում: Սրանք այստեղ, Ստամբուլից հյուսիս, կատաղանում են անգլո-ֆրանսիական ծովային դեսանտին ջարդել, և բոլոր եղած ուժերը տեղափոխում են Արևելյան ճակատ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Աբոյանը եղել է վաշտի, գումարտակի, ընդ որում՝ Երևանյան գումարտակի հրամանատար, ապա՝ Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատար: Նրա հրամանատարությամբ գործող դիվիզիան մշտապես զինվորական ստուգատեսներում փայլուն քննություն էր բռնում և լինում առաջինը: Այս և այլ հաջողությունների համար ԽՍՀՄ զինված ուժերի ժողկոմը նրան հրավիրում է Մոսկվա, նա ընտրվում է ԽՍՀՄ Կենտգործկոմի անդամ, պարգևատրվում շքանշանով: Աբոյանն ընտրվում է նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի անդամ: 1937 թ. , օգոստոսի 31-ին գնդապետ Հակոբ Աբոյանին կեղծ և հորինած մեղադրանքով ձերբակալում են և տեղափոխում ՆԳԺ կոմիսարիատի ներքին բանտ: Օրեր և ամիսներ են տևում ազնիվ հայրենի, բյուրեղյա մաքրություն ունեցող Աբոյանի խոշտանգումները ու տանջանքները, որոնք ոչ մի արդյունք չեն տալիս: Այդ կապակցությամբ Մոսկվայից գալիս են արհեստավարժ չեկիստներ: Սակայն ապարդյուն: Ազնիվ հայրենասերը մինչև վերջ մնաց աննկուն և իր ընկերներին չալատավորեց: 1937 թ. հոկտեմբերի 5-ին կտրվեց Աբոյանի կյանքի թելը:

ՍՍՀՄ Մինիստրների սովետը Աբոյանին եռմահու շնորհել է գեներալ-մայորի կոչում: Նա պարգևատրվել է Կարմիր դրոշի, Կարմիր աստղի, Հայաստանի Հանրապետության Կարմիր դրոշի և այլ շքանշաններով: Սովորել է Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում: Հակոբ Աբոյանը թոռեց հիանալի զավակներ՝ Մուրին և Լիլյային: Մուրը հերոսի մահով զոհվեց Դոնբասի ազատագրման համար մղվող մարտերում:

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Իգդիր քաղաքում, 1896 թ. հունվարի 21-ին: Հայ թուրքական ընդհարումների ժամանակ թուրքական չընդհատվող բռնություններն բազմանդամ ընտանիքին ստիպում են գաղթել: Սկզբնական շրջանում հանգրվանում են Սարդարապատում, ապա տեղափոխվում Երևան: Ընդունվում և 1925 թ. ավարտում է Կիևի պետական համալսարանի բժշկագիտության բաժինը: Որպես բժիշկ աշխատում է երկրի տարբեր բուժհիմնարկներում, իր ավանդը ներդնում բնակչության առողջապահության բարելավման գործում: Սկսում է Հայրենական պատերազմը, և Հայկ Շահբազյանը որպես զինվորական բժիշկ մասնակցում է պատերազմին մինչև նրա հաղթական ավարտը:

Պատերազմի ավարտից հետո Հայկ Շահբազյանը պաշտպանում է թեկնածուական, ապա՝ նաև դոկտորական թեզ: Նրան շնորհվում է Ուկրաինական ԽՍՀ գիտությունների վաստակավոր գործչի պատվավոր կոչում: 1947-ից մինչև 1952 թ. եղել է Ուկրաինայի մայրաքաղաքի՝ Կիևի աշխատանքի հիգիենայի և պրոֆեսիոնալ հիվանդությունների ինստիտուտի տնօրեն: Դասավանդել է Կիև քաղաքի բժշկական ինստիտուտում, եղել ամբիոնի վարիչ: Հայկ Շահբազյանը ԽՍՀՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր, Առողջապահության համաշխարհային կազմակերպության փորձագետ: Ակադեմիկոս Հայկ Շահբազյանը լայն ճանաչում ուներ ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ արտերկրներում:

Ակադեմիկոս Շահբազյանը հեղինակ է բազմաթիվ մասնագիտական հոդվածների, մենագրությունների, հեղինակ է աշխատանքի հիգիենայի վերաբերյալ բարձրագույն ուսումնական հաստատությունների դասագրքերի: ԽՍՀՄ կառավարությունը բարձր է գնահատել մեր հայրենակից, տաղանդավոր բժիշկ Հայկ Շահբազյանի ծառայությունները երկրի և ժողովրդի առջև և նրան պարգևատրել Կարմիր դրոշի, «Պատվո նշան» շքանշաններով, բազմաթիվ մեդալներով, պատվոգրերով:

Սուրմալուի հայրենասեր զավակը դրսեղ էլ եղել է, իր ամուր կապն է ունեցել մայր Հայաստանի հետ, սումալեցիների հետ: Նա հաճախ էր այցելում Հայաստան և այն արժանի ձևով ներկայացնում ուկրաինացի իր բնկերներին:

Բազմավաստակ բժիշկ Հայկ Շահբազյանը մահացավ 1982 թ. Կիևում, որտեղ երկար տարիներ աշխատել և բնակվում էր:

ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ ՄԵԽԱԿ ՍԱՐԳՍԻ

Ծնվել է 1896 թ., Սուլմալուի Կողբ գյուղաքաղաքում: Ընտանիքն զբաղվել է բամբակի, հայահատիկային կուլտուրաների մշակմամբ, պահել անասուններ, ոչխարներ: Գելդաստանի որոշ մարդիկ աշխատում էին Կողբի նշանավոր աղահանքերում որպես հորատող-կտրողներ: Զբաղվում էին նաև քարաղի առևտրով: Մեխակն ամուսնանում է Աստղիկ Կարապետյանի հետ:

Սկսվում է թուրքական ավազակների ներխուժումը տարածք, և Վարդերեսյանների ընտանիքը տեղահան է լինում, թողնում ամեն ինչ և համարյա մերկ ու քաղցած, գիշերով մի կերպ անցնում Արաքսը:

Սարդարապատի շրջանի Ջաֆարաբադ գյուղում, որն այդ ժամանակ լքված էր թուրքերի կողմից, հողամաս են վերցնում և բնակարան կառուցում: Ջաֆարաբադը, որը հետագայում վերանվանվեց Գետաշեն, շատ սուլմալեցիների և կողբեցիների ընդունեց: Գյուղը բարեկարգվեց, կառուցապատվեց, ունեցավ մշակույթի պալատ, եռահարկ դպրոցական շենք և բազմաթիվ այլ հասարակական, տնտեսական շինություններ: Սուլմալեցի, կողբեցի, իգդիրցի գաղթականները կառուցեցին հիանալի առանձնատներ, սկսեցին ապրել բարեկեցիկ կյանքով: Սակայն տարեցները, ամենուր և ամեն անգամ, հիշում ու հիշատակում են Սուլմալուն: Այն Սուլմալուն, որի ձեռքբերումը 1945-46 թթ. թվում էր լրիվ հասանացած և հնարավոր: Որքիշ է Սուլմալուն, որքիշ է նրա հողն ու ջուրը, օդն ու կլիման՝ այս գիտակցությամբ ու հավատով են աճում Գետաշենի սուլմալեցիների սերունդները:

Մեխակն ու Աստղիկն ունեցան Սիրանուշին, Մայրանուշին, Տիգրանուհուն, Լենային, Զեփյուռին, Սարգսին: Սիրանուշն ամուսնացել է կողբեցի Գառնիկի հետ և ունեն Ստեփանին, Զեմֆիրային, Գեորգին: Ստեփանն ունի Դավթին, Սիրանուշին, Մայրանուշին: Մայրանուշն ունի Սամվելին: Զեմֆիրան ունի Կարինեին, Մարինեին, Գայանեին, Գեղամին: Գեորգն ունի Գառնիկին, Լալային, Մարային: Տիգրանուհին ամուսնացել է Մեխակի հետ և ունեն Հրանուշին: Զեփյուռն ունի Նազարեթին, Ավետիսին, Նազիկին, Հասմիկին: Սարգիսն ունի Մեխակին, Արկադիին, Աստղիկին, Կարինեին:

Կողբեցի Վարդերեսյան Մեխակի մեծ գերդաստանում սիրով ու կարոտով են մտաբերում նախնյաց սուրբ Սուրմալուն, գեղատեսիլ Կողբը:

ԽԱՆԱՄԻՐՅԱՆ ՎԱՆՈՒՇ ԳԵՐԱՍԻՄԻ

Վանուշ Խանամիրյանը ծնվել է բնիկ իգդիրցիներ Գերասիմ Խանամիրյանի և Սիրանուշ Վառիկյանի ընտանիքում 1927 թ. , Երևան քաղաքում:

Թուրքական բռնակալների սրից ազատվելով, գաղթական Գերասիմի

ընտանիքը հասնում է Սարդարապատ, ապա՝ Իջևանում և տեղավորվում Երևան քաղաքում: Ավարտելով Երևանի Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը, Վանուշն ընդունվում է Երևանի Պարալվեստի դպրոց, որը վերջացնում է 1940 թ.: Աշխատանքային առաջին երկրորդով հանդես է գալիս Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում՝ որպես բալետի պարող: Երկար տարիներ աշխատելով Օպերային թատրոնում, նա հաջողությամբ հանդես է գալիս բազմաթիվ բալետային ներկայացումներում՝ որպես մենապարող: Փայլուն կերպով կատարում է մի շարք դերեր «Սպարտակ», «Սասունցի Դավիթ», «Գայանե», «Հավերժական կուռք», «Լոռեցի Սաքոն», «Ռայմոնդա» և այլ ներկայացումներում: Ճանաչված և հասարակության կողմից սիրված Վանուշ Խանամիրյանը 1968 թ. կարողանում է իրականացնել վաղեմի իր մտահղացումը. կազմակերպում է Հայաստանի պարի պետական համույթ, որի ղեկավարն էր մինչև 1991 թ.: Խանամիրյանի բնածին տաղանդն ու կազմակերպչական մեծ ինտելեկտը Հայաստանի պարի համույթ հասցնում է համաշխարհային բարձրության: Խումբը Խանամիրյանի գլխավորությամբ հանդես է գալիս աշխարհի բազմաթիվ բեմերում, ելույթ ունենում զանազան ազգությունների առջև և վաստակում մեծ փառք, ներկայացնելով հայ մշակույթը, հայ մարդու ստեղծագործական հզոր ուժը: Խանամիրյանի պարի հիասքանչ կոլեկտիվը հանդես է եկել ԱՄՆ-ում, Իսպանիայում, Իտալիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Լիբանանում, ԽՍՀՄ համարյա բոլոր հանրապետություններում, մասնակցել բազմաթիվ փառատոների, միջազգային մրցույթների: Վաստակաշատ ու շնորհաշատ Խանամիրյանի աշխատանքը բարձր է գնահատվել ԽՍՀՄ և Հայկական Հանրապետության կառավարությունների կողմից: Նա պարգևատրվել է Կարմիր դրոշի, «Աշխատանքային արիության համար» շքանշաններով, բազմաթիվ պատվոգրերով, շնորհակալագրերով: 1999 թ. Վանուշ Խանամիրյանը պարգևատրվում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն պարգևով՝ «Մովսես Խորենացու» շքանշանով: Խանամիրյանն արժանացել է «ՀԽՍՀ Պետական մրցանակի, եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Վանուշ Խանամիրյանն ամուսնացել է Վիկտորիա Ռադնյանսկայա-Խանամիրյանի հետ, որն օպերային թատրոնի մենակատարուհի էր, ապա՝ Հայաստանի Պարի պետական համույթի պարուսույց և վարիչ:

Խանամիրյաններն ունեն Գայանեին, որը վերջացրել է Պարալվեստի դպրոցը, աշխատում է Երևանի օպերային թատրոնում՝ որպես մենապարուհի:

Վանուշի հայրը՝ ***Գերասիմ Պողոսի Խանամիրյանը,*** Երևանում աշխատում էր որպես բեռնատար ավտոմոբիլների վարորդ, մասնակցում Օպերային թատրոնի շինարարական աշխատանքներին: Համեստ, աշխատասեր Գերասիմին 1937 թ. որպես Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության անդամ անհիմն մեղադրանքով ձերբակալում են, երկար հարցաքննում և բռնանում, ապա աքսորում Սիբիր, որտեղ և կնքում է իր մահկանացուն:

ԽՍՀՄ կառավարության կողմից Գերասիմ Խանամիրյանն արդարացվում է և նրա անբիծ անունն ու հիշատակը դարձյալ գարդարում են նրա ժառանգների ու մեր ժողովրդի:

Գերասիմ Խանամիրյանն ունեցել է նաև Վարդգեսին, Ռոզային: ***Վարդգես Խանամիրյանը*** ծնվել է 1924 թ., Երևան քաղաքում: Վերջացնելով միջնակարգ դպրոցը, ընդունվում և հաջողությամբ ավարտում է Երևանի Ֆիզկուլտուրայի պետական ինստիտուտը: Հանրապետության սպորտի վաստակավոր վարպետ է: Վարդգես Խանամիրյանը մեծ ավանդ ունի մեր հանրապետությունում սպորտի զարգացման գործում: Նրա նեռանդուն ջանքերի շնորհիվ մայրաքաղաքի Շենգավիթի (Լենինյան) շրջանում ստեղծվեց և կազմավորվեց Սպորտի Բարձրագույն դպրոց, որը շնորհալի շատ մարզիկներ է տվել երկրին: Նա հանդիսացել է այդ դպրոցի հիմնադիրն ու տնօրենը: Վարդգես Խանամիրյանն ունի Լևոնին, Տաթևիկին, Լիլիթին:

Լևոնը վերջացրել է Երևանի կոնսերվատորիան և օպերային երգիչ է: Ունեն երկու զավակ: Տաթևիկը վերջացրել է Երևանի բժշկական ինստիտուտը, աշխատում է առողջապահության ոլորտում: Տաթևիկն ունի Զարուհուն, որն անգլերեն լեզվի ուսուցչուհի է: Լիլիթն ունի Արմենին:

Ռոզա Խանամիրյանն ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը, գրադարանային գործի մասնագետ է:

Ռոզան ունի Արմենին, Արթուրին:

Արմենը վերջացրել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, պատմաբան է, ունի հրատարակված բազմաթիվ հոդվածներ, նաև մենագրություն՝ «Հայոց պատմություն» վերնագրով: Աշխատել է որպես ՀՀ առաջին նախագահի խորհրդական, ՀՀ դեսպանատների աշխատող: Ներկայումս աշխատում է Մատենադարանում, դասախոսում Ամերիկյան համալսարանում: Արթուր Խանամիրյանը բիզնեսմեն է:

ԱԼՈՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՆԱԶԱՐԻ

Ծնվել է 1897 թ., Կողբ գյուղում: Նազարը Կողբում և շրջակա բնակավայրերում որմնադիրի լավ համբավ ուներ և նրան հրավիրում էին այս կամ այն

Մնացական և Օլգա Ալոյաններ

շինությունը կառուցելու:

Հոր մահից հետո Մնացականի խնամակալությունը վերցնում է հորեղբայր Գևորգը: Ալոյանների ընտանիքը բաղկացած էր 32 հոգուց: Գևորգը 7 տարեկանից Մնացականին հաճախ էր իր հետ տանում աղ վաճառելու, փոխանակելու: Մի քանի էշի աղ բարձած, հասցնում էին մինչև Բիթլիս և շրջակա հեռու ու մոտ բնակավայրեր: Բացի դրանից, Գևորգը Կողբում ուներ խանութ, վաճառում էր աղ և զանազան այլ ապրանքներ: Գերդաստանը հիմնականում զբաղվում էր անասնապահությամբ:

Երկրորդ գաղթի լուրը նա ստանում է ջրաղացում ցորեն աղալիս: Հարևանները ձայն են տալիս, սակայն ջրաղացում եղած կողբեցիներն չեն լսում, ստիպված՝ հարևանը հրացանով մի քանի անգամ կրակում է, և Մնացականն ու գյուղացիները լսում են, այդպես էլ ալրաթաթախ թողնում ջրաղացը, ցորենն ու ալյուրը, և մի կերպ հասնում են գաղթականների խմբին, հանգրվանում Մեծ Շահրիար գյուղում: Ապա նրանց հարազատները կանչում են Աղջաղշլաղ (Գետափ): Այստեղ Մնացականն ամուսնանում է կողբեցի փախստական մի աղջկա հետ: Գևորգի տղան՝ Ալեքսանը, գտնվում էր Ալեքսանդրապոլի (Գյումրու) որբանոցում: Մնացականը լսելով, որ ամերիկացիները որբերին ցանկանում են տանել Ամերիկա, գնում և Ալեքսանին մանկատնից գողանում ու բերում է իր մոտ: Հետագայում Ալեքսանն ավարտում է Երևանի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական բաժինը, մանկավարժությամբ զբաղվում: Սկսվում է պատերազմը Ֆինլանդիայի հետ, և Ալեքսանը զորակոչվում ու մասնակցում է ֆիննական պատերազմին: Հայրենական պատերազմի առաջին օրվանից նա գտնվել է ռազմաճակատում և 1943 թ. հերոսաբար զոհվել Կերչ քաղաքի մատույցներում:

Մնացականն ունեցավ Քրիստինային, Նունուֆարին, Թամարային, Հայրապետին, Նազարեթին, Հակոբին:

Քրիստինան ունի Կարենին, Արմենին:

Նունուֆարն ունի Սեյրանին, Անահիտին, Արմենին: Սեյրանն ունի Նունեին, Նարինեին, Տաթևիկին: Անահիտն ունի Սերյոժային, Վանիկին և Նարեկին: Արմենն ունի Արաքսային և Գայանեին:

Թամարան ունի Արմենին և Արսենին: Հայրապետն ամուսնացել է կողբեցի Վերգինե Ամիրյանի հետ, ունեն Ալեքսանին, Անուշին:

Նազարեթն ունի Մնացականին, Օլգային, Մարինեին:

Հակոբն ունի Գևորգ և Գարիկ տղաներին:

Հիշողությունները պատմեց Հայրապետ Ալոյանը, Գետափ գյուղի իրենց տանը, 1999 թ. հունվարի 30-ին:

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ ԱՐԶՈՒՄԱՆԻ

Մաթևոս Ղազարյանը ծնվել է Սուրմալուի գավառի Ալիղամար գյուղում, 1897 թ: Ծնողները զբաղվել են երկրագործությամբ, խնամել անասուններ, ունեցել թռչուններ: Շատերի նման Արզումանն Ղազարյանը ևս, իրենց ընտանիքի անդամների հետ, գաղթել է Սարդարապատ, հասել Երևան: Արզումանն ունեցել է նաև Մարգարիտային՝ տնային տնտեսուհի: Թուրքական ռեժիմների հալածակումները Հայաստանի և հայ ժողովրդի վրա հայրենասեր Մաթևոսի, ինչպես և շատ համագյուղացիների մոտ զայրույթ ու վրդովմունք են առաջացնում: Նա էլ է անդամագրվում Հայաստանի Հանրապետության բանակին՝ Դաշնակցության բանակին: Այդ տարիներին հայկական ազգային բոլոր կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները և ողջ հայ ժողովուրդը ոտքի էր կանգնել, զենք վերցրել իր գոյատևումը պահպանելու համար: Մաթևոս Ղազարյանի համար միևնույն էր՝ ում բանակն է, միայն թե պաշտպանի հայ ժողովրդին: Նա իր քաջության և խելամտության շնորհիվ հասնում է ենթասպայի աստիճանի: 1918-20 թթ. մասնակցել է թուրքերի դեմ բազում մարտերի: Հետագայում մասնակցել է Մայիսյան ապստամբությանը, կռվել դաշնակցական բանակի դեմ, եղել «Կարմիր պարտիզան»:

1942 թ. օգոստոսի 11-ին կեղծ մեղադրանքով Մաթևոս Ղազարյանին ձերբակալում են, սակայն հետագայում Զինվորական դատարանի (Տրիբունալ) այդ մեղադրանքը հերքվում է, 1958 թ. նա արդարացվում է: Գտնվելով «տուգանային գումարտակում» իր արիության համար մայոր Մաթևոս Ղազարյանը վաղաժամկետ ազատվում է և վերականգնվում իր նախկին ծառայողական պաշտոնին ու կոչմանը: Ուր էլ եղել է Մաթևոս Ղազարյանը, անմնացորդ ծառայել է իր հայրենիքին, հայ ժողովրդին: Բազում մարտերն ու փորձությունները չեն ընկճել ազնիվ հայրենասերին: 1920 թ. Մաթևոսն ամուսնանում է Սոֆյա Հովհաննիսյանի հետ: Ունեցել են երեք զավակներ՝ Սուրեն, Մարլենա և Կիմա:

ՄԱՐԼԵՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ: Ամուսնացել է Նիկոլայ Գայկավենկոյի հետ, ունեցել են Իլյային և Ալլային: Իլյան ինժեներ է, իսկ Ալլան՝ առողջապահական բնագավառի աշխատող:

Կիմա Ղազարյան: Ամուսնացել է Յուրա Հովհաննիսյանի հետ: Կիման երկար տարիներ աշխատել է Գաբրիել Սունդուկյանի անվան պետական թատրոնում որպես կաղբելի բաժնի պետ: Կիմա և Յուրա ամուսիններն ունեն Արմենին, Իրային, Մարգարիտային: Արմենը բարձրագույն կրթությամբ իրավաբան է, աշխատում է հանրապետության Արդարադատության նախարարության համակարգում:

Իրան բարձրագույն կրթությամբ ինժեներ է, աշխատում է իր մասնագիտությամբ:

ՄԱԳԱՐԻՏԱՆ ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը և աշխատում է Երևանի միջնակարգ դպրոցներից մեկում:

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՄԱԹԵՎՈՍԻ

Սուրեն Ղազարյանի ծնողները գաղթել են Սուրմալու գավառի Ալիղամար գյուղից: Սուրենը ծնվել է Երևանում, 1923 թ. մայիսի 15-ին: Հայրը՝ Մաթևոս Ղազարյանը, այդ տարիներին ծառայում էր հայկական բանակում: Վերջացնելով Ա. Մռավյանի (հետագայում Ալ. Պուշկինի) անվան դպրոցը, 1940 թ. նա ընդունվում է Երևանի հատուկ հրետանային դպրոց, ապա՝ 1943 թ. Կրասնոդարի Ակադեմիական-զենդայրային ուսումնարան: Այնտեղից օգոստոսի սկզբներին կամավոր մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Դոնբասի ազատագրական մարտերին: Խիզախության և քաջության համար պարգևատրվել է կառավարական շքանշաններով, բազմաթիվ մեդալներով:

Զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո 1946 թ. Ս. Ղազարյանն ընդունվել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան, որը հաջողությամբ ավարտել է 1965 թ.: 1973 թ. ավարտել է Կրասնոդար քաղաքի համալսարանի նկարչա-գրաֆիկական ֆակուլտետը: Բազմակողմանի կրթված և զարգացած Սուրեն Ղազարյանը երկար տարիներ դպրոցներում իր հարուստ գիտելիքներն է հաղորդելու արվեստասեր երեխաներին: Նա դասավանդել է կերպարվեստ, գեղագիտություն, գծագրություն: Եղել է Երևանի թիվ 24 դպրոցի ուսումնական մասի վարիչ, թիվ 1 երեկոյան դպրոցի տնօրեն, նաև դասավանդել Փանոս Թերլեմեզյանի անվան ուսումնարանում, Հայկական մանկավարժական ինստիտուտում և այլն:

Սուրեն Ղազարյանը մանկավարժական բնագավառում կատարած անբասիր և նվիրված աշխատանքների, երեխաների մոտ գեղագիտության և

հայրենասիրության բարձր զգացմունքների դաստիարակման համար արժանացել է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության «Ժողովրդական կրթության գերազանցիկի» պատվավոր կոչմանը և պարգևատրվել համանուն կրծքանշանով: Սուրեն Ղազարյանն ամուսնացել է Բելա Թադևոսյանի հետ, ունեցել են Արսենին: Արսեն Ղազարյանն ստացել է բարձրագույն կրթություն, աշխատել հանրապետության խոշոր ձեռնարկություններում, ապա հաջողությամբ պաշտպանել թեզ, ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: Բնակվում և աշխատում է Մոսկվայում: Սուրեն Ղազարյանը նաև ճանաչված նկարիչ է, ունեցել է անհատական ցուցահանդեսներ:

Բելա Ղազարյան (Թադևոսյան): Ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: Ճանաչված մանկաբույժ է: Հարգված և սիրված է բնակչության կողմից: Սուրեն և Բելա ամուսիններն ունեն երկու բոռներ՝ Դավիթ և Դիանա:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԻ

Ծնվել է 1898 թ. նախկին Երևանի նահանգի Սուրմալու գավառում: Սկզբնական կրթությունն ստանում է Սուրմալուի ծխական դպրոցում: 1915 թ. թուրքական իշխանությունների կողմից կազմակերպած զանգվածային կոտորածները և ռուս-թուրքական պատերազմները հնարավորություն չեն տալիս ընտանիքին նորմալ ապրելու: Այսպես էլ, 1918 թ. , մեծ գերդաստանը, արտերը թողնելով չհնձած, անասունները՝ դաշտում, մի կերպ, մերկ ու քաղցած թողնում են հարազատ օջախն ու Արաքսն անցնում: Այդ թոհուբոհում ընտանիքի (գերդաստանի) շատ անդամներ անհայտ կորչում են, իսկ Վահրամը հայտնվում է Նովոչերկասսկում: Այստեղ նա շարունակում է ուսումը, վերջացնում տեղի ճարտարապետական ինստիտուտը և շուտով վերադառնում հայրենիք: Բանիմաց և գործունյա մասնագետին այստեղ աշխատանքի են ընդունում հանրապետության Ջրային տնտեսության նախարարությունում: Վարում է մի շարք դժվարին և պատասխանատու պաշտոններ: Հետագայում գլխավորում է այդ ոլորտի շինարարական աշխատանքները, որպես գլխավոր ճարտարապետ, կառուցում ջրամբարներ, ջրանցքներ և այլն:

Որպես սկզբունքային, ազնիվ ու ճշմարիտ անձնավորություն, նրան ամենուր հարգել ու գնահատել են: Նա կոլեկտիվում վայելել է մեծ հարգանք, համակրանք: Վահրամ Հովհաննիսյանն ամուսնացել է Վիկտորիա Թադևոսյանի հետ և ունեն Լիլյային, Էդուարդին, Բելային: Լիլյա Հովհաննիսյանը, ավարտելով միջնակարգ դպրոցը, ընդունվում է Երևանի պետական համալսարանի օտար լեզուների բաժին և դառնում անգլերեն լեզվի

մասնագետ: Ամուսնացել է Մարատ Էլչիբեկյանի հետ և ունեն Ալեքսանդրին:

Ալեքսանդրը միջնակարգ կրթությունն ստացել է Մոսկվայում և սովորել Մոսկովյան բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկում:

Բելլա Հովհաննիսյանը, Երևանում վերջացնելով միջնակարգ դպրոցը, տեղափոխվում է Մոսկվա և ընդունվում Մոսկվայի լեզվաբանական ինստիտուտ, որը հաջողությամբ ավարտելով, շարունակում է ուսումը և հաջողությամբ պաշտպանում թեզ, ստանալով գիտությունների թեկնածուի կոչում: Նրան հրավիրում են աշխատանքի Ֆինլանդիա, ապա աշխատում է Մոսկվայի ձեռնարկություններում: Բելլա Հովհաննիսյանն ամուսնացել է Դմիտրի Սարգսյանի հետ, ունեն Բագրատին և Անդրանիկին: Այստեղ էլ որ աշխատել է հայրենասեր Բելլա Հովհաննիսյանը, նա ամենուր բարձր է պահել հայ մարդու պատիվն ու արժանապատվությունը և լավագույնս ներկայացրել Հայաստանն ու հայ ժողովրդին:

ԷԴՈՒԱՐԴ ՎԱՀՐԱՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Էդուարդ Հովհաննիսյանը ծնվել է 1932 թ. Երևան քաղաքում, սուրմալեցիներ Վահրամ Հովհաննիսյանի և Վիկտորիա Թադևոսյանի ընտանիքում:

Էդուարդը, Երևանում ստանալով միջնակարգ կրթություն, տեղափոխվում է Մոսկվա, ընդունվում և 1955 թ. ավարտում Մոսկվայի Հաստոցաշինական բարձրագույն հաստատությունը: Հետագայում հաջողությամբ ավարտելով ասպիրանտուրան, նա Լենինգրադում պաշտպանում է թեզ և ստանում գիտությունների թեկնածուի կոչում:

Շարունակելով գիտական հետազոտություններն ու աշխատանքները, Հովհաննիսյանը նվաճում է գիտությունների դոկտորական բարձունքը ևս:

Էդուարդ Հովհաննիսյանը մինչև 1972 թ. աշխատում էր Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարբեր գիտական հիմնարկություններում: 1972 թ. մեկնում է արտասահման և ավելի քան 25 տարի զբաղեցնում «Ազատություն» ռադիոկայանի հայկական խմբագրության տնօրենի պաշտոնը: 1997 թ. վերադառնալով հայրենիք, Էդուարդ Հովհաննիսյանը դարձյալ մնում է իր դավանանքին անդավաճան հայապաշտպան, հայրենիքի կորուսյալ տարածքների հարցերի լուսաբանման ու հզորացման ջատագով: Նա գլխավորում է Հայկական հարցերի հաստատության տնօրենի պաշտոնը, որը հիմնվել է 1997 թ. Մյունխենում: Էդուարդ Հովհաննիսյանը հանդիսանում է մեր ժողովրդի ազգային կուսակցության՝ Հայ հեղափոխական դաշնակցության, ակտիվ գործող անդամ և իրեն նվիրել է

այդ կուսակցության ծրագրային դրույթների պաշտպանման ու իրագործման սուրբ գործին:

Էդուարդ Հովհաննիսյանն ամուսնացել է Սեդա Մարինոսյանի հետ և ունեն Վահանին, Վիկտորիային, Արտավազդին:

Վահան Հովհաննիսյան (տե՛ս Վահան Հովհաննիսյան)

Վիկտորիա Հովհաննիսյանը, Երևանում ավարտելով միջնակարգ դպրոցը, ուսանում և վերջացնում է Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը: Վիկտորիան ամուսնացել է շվեյցարացի Ռեդո Մարսելի հետ և տեղափոխվել բնակության Շվեյցարիա: Ունեն Ռեդո Կատրինին և Ռեդո Սեդային: Ընտանիքը սերտ կապերի մեջ է Մայր Հայաստանի հետ:

Արտավազդ Հովհաննիսյանն ամուսնացել է Ռուզան Շալդճյանի հետ և ունեն Միերին և Վահեին:

Էդուարդ Հովհաննիսյանը դաստիարակել է ազնիվ ու հայրենասեր հիանալի գերդաստան, որոնք նվիրված են մեր ժողովրդին, Հայաստանին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԱՆ ԷԴՈՒԱՐԴԻ

Ծնվել է 1956-ին, Երևանում:

Վահանի պապը՝ Վահրամ Աբրահամի Հովհաննիսյանը, 1918 թ. թուրքական կոտորածներից մազապուրծ՝ Սուրմալուից գաղթելով, հասնում է Նովոչերկասկ: Դեռ մանկուց Վահանի վրա անջնջելի տպավորություն են թողնում պապի և հոր՝ Էդուարդ Հովհաննիսյանի հայրենասիրական և հայասիրական դաստիարակությունն ու տանը տիրող ազգասիրական մթնոլորտը:

Վահան Հովհաննիսյանը, 1973 թ. վերջացնելով միջնակարգ դպրոցը, երկու տարի սովորում է Երևանի մանկավարժական ինստիտուտում, ապա տեղափոխվում Մոսկվա և 1978 թ. վերջացնում Մոսկվայի մանկավարժական համալսարանը: Այդ տարի նրան զորակոչում են խորհրդային բանակ՝ զինվորական ծառայության:

1980 թ. զորացրվելով, բանակային ծառայությունից վերադառնում է հայրենիք և աշխատանքի անցնում «Էրեբունի» թանգարանում որպես բաժնի վարիչ: Այդ տարիներին Վահանի հայրը՝ Էդուարդ Հովհաննիսյանը, գտնվում էր արտասահմանում և «Ազատություն» ռադիոկայանով հակախորհրդային քարոզչություն կատարում: Վահան Հովհաննիսյանը ելազում էր հայրենիքում կատարել հնագիտական պեղումներ, աշխարհին ցույց տալ իր ժողովրդի բազմադարյան մշակույթն ու պատմությունը: Այստեղ իրականանում է այդ երազանքը, և նա ակտիվ լծվում է հնագիտական պեղումներ կատարելուն: Վահանը հեղինակ է 60-ից ավելի գիտական աշխատությունների, իսկ 1989 թ. պաշտպանում է թեզ և ստանում պատմական գիտությունների թեկնածուի կոչում:

Վահան Հովհաննիսյանը կատարում է նաև քաղաքական ակտիվ աշխատանքներ: 1989-ին ընդունվել է Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության շարքերը:

1992 -ին Վահան Հովհաննիսյանն ընտրվել է կուսակցության բյուրոյի անդամ:

1989-ից մասնակցել է Արցախի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

1995-ին ձերբակալվում է Հայաստանի այն ժամանակվա իշխանությունների դեմ ակտիվ պայքարի պատճառով և ազատվում է միայն Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո:

1996 թ. հուլիսից ՀՅԴ Գերագույն մարմնի ներկայացուցիչն է:

1998-ին նշանակվում է ՀՀ նախագահի խորհրդական և տեղական ինքնակառավարման հարցերով հանձնաժողովի նախագահ: Այժմ ԱԺ պատգամավոր է, ԱԺ պաշտպանության, ՆԳ և ԱԱ մշտական հանձնաժողովի նախագահ: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՍՔԱՆԱԶ ԳԵՎՈՐԳԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Էվջիլար գյուղում, 1899 թ. հոկտեմբերի 31-ին:

1919 թ. զորակոչվել է Հայկական բանակ, կռվել թուրք բարբարոսների դեմ, ստացել մարտական մկրտություն: Սարիղամիշի զորամասերում ծառայելիս ծանոթանում է բոլշևիկյան քարոզիչների հետ, հարում նրանց: 1920 թ. հայ զինվոր Ասքանազ Կարապետյանը մասնակցում է Հայաստանում հակակառավարական խռովությանը և հետապնդումից խուսափելու նպատակով անցնում Աղրբեջան: Նույն թվի նոյեմբերին Կարմիր բանակի շարքերում մասնակցում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը:

Ասքանազ Կարապետյանը 1923-27 թթ. սովորում է Երևանի ռազմական դպրոցում: 1937 թ. նշանակվում է գնդի հրամանատար, 1940 թ. մասնակցել է Արևմտյան Բելոռուսիայի ազատագրման մարտերին: Հայրենական պատերազմի առաջին օրվանից Կարապետյանի ղեկավարած զորամասերը մշտապես լինում են կռիվների մեջ: 1942 թ. նրա հրամանատարության գունդը մասնակցում է Ստալինգրադյան ահեղ ճակատամարտերին: Ցեռնելեց և ռազմական արվեստին տիրապետող գնդապետ Ասքանազ Կարապետ-

յանին 1943 թ. նշանակում են 315-րդ դիվիզիայի հրամանատար: Նա մասնակցում է Դոնի Ռոստովի, Նովոչերկասկի և այլ բնակավայրերի ազատագրմանը: Ռազմական արվեստի տիպապետման, զորամասերի գրագետ ղեկավարման ու հնարամտության, անձնական խիզախության համար նրան շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում: Նա Մելիտուպոլ քաղաքի ազատագրման համար մղված մարտերում հանդես է բերում զորավարական մեծ հնարամտություն: Նրան այդպես էլ անվանում էին «Մելիտուպոլյան հերոս»:

Պատերազմի հաղթական ավարտից հետո գեներալ Ասքանազ Կարապետյանը գործուղվում է Մոսկվա, Մ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում սովորելու: Այստեղ նա կատարում է նաև դասախոսական աշխատանքներ և կուտակած ռազմական փորձը փոխանցում երիտասարդ սպաներին: 1952-54 թթ. գեներալ Կարապետյանը նորից նստում է ուսանողական սեղանին, այս անգամ նա դառնում է Կ. Վորոշիլովի անվան ռազմական ակադեմիայի սան: Զինվորական անբասիր ծառայության, անձնական խիզախության և զորամիավորումների գիտակից ղեկավարման համար նա պարգևատրվել է ԽՍՀՄ կառավարության բազմաթիվ շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով:

Ուկրաինական Սենժի քաղաքի համար մղված արյունահեղ մարտերի և քաղաքի ազատագրման համար Ասքանազ Կարապետյանին շնորհվում է քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում: Նա մշտապես կապի մեջ է եղել Հայաստանի, հայ ժողովրդի և առանձնապես հայրենի սուրմալեցիների հետ. արժանացել նրանց սիրուն և անկեղծ հարգանքին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԱԼԵՔՍԱՆԻ

Ծնվել է 1899 թ. մայիսի 2-ին, նախկին Երևանի նահանգի Սուրմալուի գավառի Բահարլու գյուղում: Սկզբնական կրթությունն ստանում է հայրենի գյուղում: 1905-06 թթ. սկսվում է թուրքական խժդժությունները: Փոքրիկ Նիկոլայը տեսնում և հիշում է, թե ինչպես տան տղամարդիկ զենք ու զինամթերք են կուտակում և թուրքերի դեմ տարած հաղթանակներից հետո մեծ գերդաստանի անդամներին ոգևորությամբ պատմում դրանց մասին: Հավանաբար դա էր, որ երիտասարդ Նիկոլայի մեջ սեր արթնացրեց դեպի ռազմական գործը: Ընտանիքով գաղթում են Սարդարապատ, հարմարվում, փոքրիկ կայարան կառուցում: 1920 թ. դեկտեմբերից, երբ Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր, Նիկոլայ Հովհաննիսյանն անդամագրվում է Կարմիր բանակին:

Շուտով հրամանատարությունը բանիմաց զինվորին գործուղում է Մոսկվա՝ Հրետանային դպրոց, որը հաջողությամբ ավարտելով, ծառայում

է որպես դասակի հրամանատար, իսկ տարիներ անց հասնում գեներալի աստիճանի: Եղել է դիվիզիայի հրամանատարի օգնական: Ձեռք բերած ռազմական արվեստի հարուստ գործնականը տեսականով հարստացնելու նպատակով բարձրագույն հրամանատարությունը Նիկոլայ Հովհաննիսյանին գործուղում է Մոսկվա՝ Մ. Ֆրունզեի անվան ռազմաքաղաքական ակադեմիա: 1936 թ. Հովհաննիսյանը փայլուն կերպով վերջացնելով ռազմական ակադեմիան, նշանակվում է 76-րդ Հայկական լեռնահրաձգային դիվիզիայի օպերատիվ բաժնի պետի տեղակալ, քիչ անց՝ դիվիզիայի օպերատիվ բաժնի պետ, շուտով՝ դիվիզիայի հրամանատար: 1939 թ. մասնակցում է Արևմտյան Բելոռուսիայի ազատագրման մարտերին, իսկ 1940 թ.՝ Ֆինլանդիայի դեմ մղվող կռիվներին: Շուտով հրամանատարությունը նրան տեղափոխում է ԽՍՀՄ զինված ուժերի Գլխավոր շտաբի ակադեմիա, որն ավարտելով, նշանակվում է Պոդոլսկ քաղաքի հրետանային ուսումնարանի պետ: Սկսվում է Հայրենական պատերազմը, և Նիկոլայ Հովհաննիսյանն ակտիվորեն մասնակցում է, մշտապես գտնվելով ռազմաճակատներում: 1944 թ. փետրվարի 20-ին գնդապետ Նիկոլայ Հովհաննիսյանը նշանակվում է 3-րդ գվարդիական տանկային բանակի հրետանու պետ: Լեհաստանի ազատագրական մարտերից մեկում՝ Վերին Սիլեզիայում, 1945 թ. հունվարի 1-ին գնդապետ Նիկոլայ Հովհաննիսյանը զոհվում է հերոսի մահով:

Գեներալ Հովհաննիսյանը պարգևատրվել է կառավարական մի շարք շքանշաններով, մեդալներով (Լենինի, Հայրենական պատերազմի առաջին, Սուվորովի, Կարմիր դրոշի 4-րդ, Կարմիր աստղի և այլն):

ՄԱՐՋԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Ծնվել է 1900 թ. նոյեմբերի 11-ին, Երևանի նահանգի Սուրմալուի գավառի Քյուլփի գյուղում: Հայկազն սկզբնական կրթությունն ստացել է Սուրմալուում, ապա ընտանիքը գաղթել է Էջմիածին, Երևան: Հայկազ Մարջանյանը մասնակցել է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման գործին: 1928 թ. Մարջանյանն ավարտում է Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսության բաժինը և իրեն նվիրում հանրապետության գյուղատնտեսության աշխատանքներին, նրա հասարակական-քաղաքական աշխատանքներին:

1933-35 թթ. նա եղել է Երևանի կոմունիստական համալսարանի փոխտնօրեն, միաժամանակ կատարելով դասախոսական աշխատանքներ համալսարանում:

1938 թ. Հայկազ Մարջանյանը նշանակվում է Հայաստանի Հանրապետության հողժողկոմ՝ այդ պաշտոնում մնալով համարյա 10 տարի: Նա շրջում է հանրապետության համարյա բոլոր գյուղերն ու շրջանները, ծանո-

քանում գյուղատնտեսության վիճակին: Առանձնակի ուշադրություն է դարձնում գյուղատնտեսական արտադրության (այդ թվում՝ անասնապահության) մեքենայացման գործին: Պատերազմի ծանր տարիներին Հայաստանի գյուղատնտեսությունը գտնվում էր իր բարձրության վրա, արտադրելով զգալիորեն ավելի գյուղատնտեսական, անասնապահական մթերքներ, ապահովելով գործող բանակի և բնակչության պահանջված պահանջը:

Պատերազմի ավարտից անմիջապես հետո Մարջանյանին (որին ողջ հանրապետության բնակչությունը գիտեր) նշանակում են ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ, ապա՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի գյուղատնտեսության բաժնի վարիչ: Աշխատանքի հետ համատեղ նա կատարում էր նաև գիտական աշխատանքներ, որի հետևանքով 1955 թ. նա պաշտպանում է գիտական թեզ և ստանում գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի աստիճան: 1956 թ. նրան նշանակում են Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ռեկտոր: Այստեղ ևս նա դասախոսական աշխատանքներ է կատարում, պատրաստելով մասնագետներ հանրապետության գյուղատնտեսության բնագավառի համար: Գյուղատնտեսական ինստիտուտի ռեկտորի պաշտոնում դարձյալ ցուցաբերվում են գիտական մասնագետի կազմակերպչական, դաստիարակչական, մանկավարժական ունակությունները:

Մարջանյանը հեղինակ է բազմաթիվ մասնագիտական հոդվածների՝ գյուղատնտեսության արտադրության բարձրացման, նորի և արդիականի կիրառման հարցերի վերաբերյալ: Սուրմալուի գավակ Հայկազ Մարջանյանը որտեղ էլ աշխատել է, շահել է բոլորի անկեղծ սերն ու հարգանքը: Նա հաճախ է Արաքսի ձախ ափից կարոտով նայել Սուրմալուին: Կարոտով և հույսով...

Ազնիվ հայրենասեր Հայկազ Մարջանյանը մահացավ 1967 թ. հունվարի 8-ին, Երևանում:

ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Ծնվել է Սուրմալուի գավառի Կողբ գյուղում, 1900 թ., բազմանդամ ընտանիքում: Ինչպես հարևաններն ու համագյուղացիները, այս ընտանիքը ևս զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, առևտրով: Փոքրիկ Տիգրանն սկզբնական կրթությունն ստացել է ծխական դպրոցում: Ժամանակները խառն էին և երիտասարդությունը ձգտում էր գենքի: Տիգրանը առաջիններից էր երիտասարդների մեջ, որ ունեցավ իր հրացանն ու սկսեց սովորել անվրեպ խփել: Նա, 17 տարին նոր լրացած, անդամագրվում է Հայկական զինվորական կամավորական ջոկատներին և ռազմական

առաջին մկրտությունն ստանում 1918 թ. գարնանը՝ Բաշ Ապարանի ճակատամարտում:

Ընտանիքը տեղափոխվում է Էջմիածին, ապա Երևանից 2 կմ հեռավորությամբ գտնվող Ներքին Շենգավիթ գյուղ: Սկսվում է Տիգրան Գյուլբուդաղյանի զինվորական ծառայության տարեգրությունը, ծառայում է Կ. Վորոշիլովի անվան 76-րդ հայկական դիվիզիայում, ապա 1938 թ. ուսանում և վերջացնում է Լենինգրադի հրետանային դպրոցը: Վերադառնալով Հայաստան, նա նշանակվում է հրետանային գնդի պետ:

Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը: Հրամանատար Տիգրան Գյուլբուդաղյանն իր ստորաբաժանման հետ մասնակցում է Սմոլենսկի, Մոսկվայի, Վոլխովի ռազմաճակատներում ծավալված մարտերին: Լենինգրադի պաշտպանության ահեղ մարտերի ժամանակ ցուցաբերած ռազմական բարձր գիտելիքների, հրամանատարական լավագույն ցուցանիշների համար նրան շնորհում են հրետանային զորքերի գնդապետի կոչում: 1946 թ. , զորացրվելով զինվորական ծառայությունից, նա իրեն նվիրում է երիտասարդների դաստիարակման վեհ գործին, ակտիվ մասնակցելով Հայաստանի Հանրապետության ԴՕՍԱԱՖ հանրապետական կոմիտեի գործունեությանը:

Պարգևատրվել է կառավարական բազմաթիվ շքանշաններով, մեդալներով:

Տիգրան Գյուլբուդաղյանն ունեցավ Կարլենին, որը բարձրագույն կրթությամբ մասնագետ է, երկար տարիներ աշխատել է մայրաքաղաքի միջնակարգ դպրոցներից մեկում:

Կարլեն Գյուլբուդաղյանն ամուսնացավ Օֆելյայի հետ և ունեցան Սամվելին ու Մանվելին:



ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՍՊԱՆԴԱՐԱՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Ծնվել է Երևանի նահանգի Սուրմալուի գավառի Բլուր գյուղում, 1900թ.: Կամսարականների բազմանդամ ընտանիքը զբաղվում էր երկրագործությամբ: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում, իսկ բարձրագույն բժշկականը՝ արտասահմանում: 1922 թ. Կամսարականն աշխատանքի է անցնում Երևանի համալսարանում որպես նորաստեղծ բժշկական բաժնի դեկան: Նա գլխավորել է վարակիչ հիվանդությունների ամրիոնը, ամենայն աչքի ընկնելով իր եռանդով ու նախաձեռնություններով: Դասախոսական աշխատանքներով հանդերձ, նա ակտիվ պետական-քաղաքական գործիչ էր, հանդիսանում էր ՀՍՍՀ Կենտգործկոմի անդամ, գլխավորել է Հայաս-

տանի Կարմիր խաչի կենտրոնական վարչությունը: Որպես բազմավաստակ գիտնականի, կառավարությունը Կամսարականին գործուղել է արտասահմանյան մի շարք երկրներ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Անգլիա և Ամերիկա: Նա ուսումնասիրել է այդ երկրների բժշկագիտությունը և աշխատել դրանց փորձը կիրառել Հայաստանում: Նրա անմիջական նախաձեռնությամբ Հայաստանում կազմակերպվում են բժշկական ժամանակակից մի շարք ձեռնարկությունների, հիմնարկությունների կազմակերպումն ու ընդարձակումը:

Սպանդարատ Կամսարականը եղել է Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետի դասախոսական կազմի առաջին ներկայացուցիչներից մեկը, վաստակել երիտասարդ մասնագետների խոր հարգանքն ու սերը:

Կամսարականն ուներ բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան և ջանք չէր խնայում հայրենի երկրի բժշկական ծառայությունների բարելավման, ժողովրդի առողջության բարելավման պատվավոր գործում:

Սուրմալեցի մեծ հայրենասերի, ազնիվ քաղաքացու կյանքի թելը կտրվեց 1937 թ., երբ նա զոհ գնաց կոմունիստական բռնապետության անօրինական հալածանքներին:

Կամսարականը թողեց հայրենասեր հիանալի սերունդ, որոնք իրենց նախնիների նման հարազատ Սուրմալուի, հայկական այդ չքնաղ մարգարիտի սերը մշտապես վառ են պահում իրենց սրտերում, որով և անմահացնում Սպանդարատ Կամսարականի անմահ հիշատակը:

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Ծնվել է 1900 թ., Սուրմալուի գավառի Բլուր գյուղում, որտեղ և ստացել է միջնակարգ կրթություն: Երևանում վերջացնում է ուսուցչական սեմինարիան և երկար տարիներ զբաղվում մանկավարժությամբ: 1921 թ. Աղաջանյանը մանկավարժական աշխատանքներ է կատարում Երևանում: 1922 թ. Աղաջանյանն ընդունվում է Երևանի համալսարանի գյուղատնտեսական բաժինը, դասավանդում դպրոցում: 1926-ին ավարտելով համալսարանը, աշխատանքի է անցնում երկրագործության ամբիոնում, ապա սովորում ասպիրանտուրայում: 1930 թ. Գեղամ Աղաջանյանը նշանակվում է նորաստեղծ Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ընդհանուր երկրագործության ամբիոնի վարիչ, որը գլխավորում է մինչև իր կյանքի վերջին օրերը:

1937 թ. Գևորգ Աղաջանյանին առանց թեզ պաշտպանելու շնորհվում է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,

նաև դառնում է պրոֆեսորի պաշտոնակատար:

Հանրապետության գյուղատնտեսության երիտասարդ մասնագետների պատրաստման ասպարեզում մեծ է Աղաջանյանի գիտամանկավարժական աշխատանքների նշանակությունը: Դասախոսական աշխատանքներին զուգընթաց նա կատարում է գիտական խոր ուսումնասիրություններ, որի արդյունքում 1939 թ. նա Մոսկվայում պաշտպանում է դոկտորական թեզ, ստանում նաև պրոֆեսորի կոչում:

1941-1951 թթ. Աղաջանյանը եղել է ինստիտուտի դիրեկտորի տեղակալ գիտության և ուսումնական գծով, իսկ 1956 թվից՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ: Հետագայում Գեղամ Աղաջանյանն աշխատել է Հայաստանի գյուղատնտեսության մինիստրությունում՝ որպես գիտության գլխավոր վարչության պետ:

Աղաջանյանի ղեկավարությամբ շուրջ 30 երիտասարդ մասնագետներ խորացել են գյուղատնտեսական գիտությունների բնագավառում և պաշտպանել գիտական թեզեր: Ակնառու աշխատանքներ է կատարել գիտության նվաճումները գյուղատնտեսության արտադրության մեջ ներդնելու, գյուղատնտեսության վարման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Պրոֆեսոր Աղաջանյանը գրել է շուրջ 100 գիտական աշխատություն, ընդհանուր երկրագործության դասագիրք ու մի շարք ձեռնարկներ:

Իր անբասիր ու արդյունավետ աշխատանքային գործունեության համար Գևորգ Աղաջանյանին շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում: Պարգևատրվել է պետական, կառավարական մի շարք շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով: Աղաջանյանը մինչև կյանքի վերջը հիշում և սրտի ցավով էր պատմում հայրենի Սուրմալուի, Բլուր գյուղի մասին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

Ծնվել է Սուրմալուի Կողբ գյուղում, 1900թ.: Երբ թուրքական արնավառ գորքերը մոտենում են Կողբին, հորից զրկված Հրաչյան, ընտանիքի հետ մի կերպ կարողանում է անցնել Արաքսը և բնակություն հաստատել Արմավիրի (Հոկտեմբերյան) շրջանի Քալագարախ գյուղում: Սովորում է գյուղական դպրոցում: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո նա կազմակերպչական աշխատանքներ է կատարում գյուղի երիտասարդության շրջանում, դառնում գյուղական պատկոմների ղեկավար: 1926 թ. Հրաչյա Հովհաննիսյանն ընտրվում է կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար: Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, Հովհաննիսյանը մեկնում է զինվորական ծառայության: 1941 թ. դաժան ձմեռը Հրաչյա Հովհաննիսյանն ընդունում է Մոսկվայի մոտ, գերմանացիների ահեղ կրակի տակ: Հովհաննիսյանի հրամանատարությամբ գործող ջոկատը թշնա-

մուն մեծ կորուստներ է պատճառում, նա պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով: Հաղթականորեն առաջ շարժվելով՝ նա մասնակցում է Օրյոլ, Բրյանսկ, Լյուբլին և շատ այլ բնակավայրերի ազատագրման մարտերին, մի քանի անգամ վիրավորվում է, սակայն կողբեցու քաջ զավակը ապաքինվելուց հետո նորից վերադառնում է մարտական շարքեր, նորից մասնակցում մարտերին:

Խիզախության և մարտական առաջադրանքները հաջող կատարելու, անվախության համար նա պարգևատրվել է Կարմիր դրոշի 2, Կարմիր աստղի 2, Հայրենական պատերազմի Առաջին և Երկրորդ աստիճանի և այլ շքանշաններով ու մեդալներով: Հրաչյա Հովհաննիսյանը սիրված ու հարգված էր բոլոր կողբեցիների կողմից:

ՀԱԿՈԲՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Ծնվել է 1901 թ. Սուրմալուի գավառի Բլուր գյուղում: Գյուղը բավականին խոշոր էր և հայ բնակչության թվաքանակը զգալի: Հովհաննեսի հայրը՝ դասաբ Հարությունը, Բլուրում հայտնի էր որպես վարպետ մսագործ: Համագյուղացիներն ու օտար գնորդները երբեք Հարությունից դժգոհ չլինի: Հարությունն ուներ Սոֆյային, Հովհաննեսին և Զաքարին: Հարությունի մահից հետո, երբ Սուրմալուն գաղթում է, բլուրցիները, որ համարյա Արաքսի կամրջի հարևանությամբ էին գտնվում, առաջիններից են գաղթում:

Հովհաննեսն ուսումնատենչ էր: Նա Բլուրի գյուղական դպրոցում վերջացնում է 7-րդ դասարանը, մի բան, որը քչերին էր հաջողվում այն ժամանակ:

Սուրմալուի երկրորդ գաղթից հետո ընտանիքը տեղավորվում է Էջմիածնի շրջանի Արբատ գյուղում: Սա խարխուլ ու լքված բնակատեղի էր: Հետագայում դրա հարևանությամբ կառուցում են նոր գյուղ՝ դարձյալ Արբատ անունով: Հովհաննեսն այստեղ ամուսնանում է Արփենիկ Մանուկյանի հետ, ունենում են Մայրանուշին, Էմմային: Մայրանուշն ամուսնանում է Արամ Մնացականյանի հետ (շարուրցու ժառանգ) և ունենում են Ջեմմային, Արփինեին, Զարուհուն, Հայկին, Թամարային և Ոստանիկին:

Ջեմման վերջացրել է հաշվապահական դասընթացներ և աշխատում է այդ բնագավառում: Ունեն Գայանեին, Գագիկին և Գարեգինին: Գայանեն ունի Անահիտին: Գագիկն ունի Աստղիկին, Աշոտին:

Գայանեն գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժինը և աշխատում է մանկավարժության բնագավառում:

Արփենիկն ունի միջնակարգ մասնագիտական կրթություն: Ունի Հասմիկին, Հովհաննեսին:

Զարուհին ունի Աննային, Արթուրին, Արմենին: Աննան ունի Էլինային:

Հայկն ունի միջնակարգ մասնագիտական կրթություն: Ամուսնացել է Լուսինե Բաղդասարյանի հետ, ունեն Հովհաննեսին, Կարինեին: Թամարան ունի Աշոտին, Գայանեին, Հռիփսիմեին: Ոստանիկն ունի Արամին և Մարիամին:

ԱԶԱՏՅԱՆ ՀԱԿՈԲ ՆԻԿՈՂՈՍԻ

Ծնվել է 1902 թ. փետրվարի 26-ին, Սուրմալուի գավառի Իգդիր քաղաքում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքում: Թուրքական հարձակումների ժամանակ պատանի Հակոբը զենքը ձեռքին պաշտպանել է կանգնել հայրենի երկրամասին, քաղաքին: Հայաստանին, մասնավորապես Արևմտահայաստանին հասած աղետը ծանր ու ողբերգական եղավ նաև հայոց այս չնաշխարհիկ երկրամասի համար: Սուրմալեցիներն ստիպված գաղթի ճանապարհը բռնեցին: Ազատյան գերդաստանը, թողած տարիների իրենց ստեղծածն ու կուտակածը, բռնեց գաղթի ճանապարհը: Տեղավորվում են Էջմիածնի տարածքում: Երիտասարդ Հակոբը կրթությունը շարունակում է Էջմիածնում, ապա Երևանում:

Դեռ մանկուց սիրում էր բնությունը և «ձեռքի հետ» նկարում Իգդիրն ու շրջակա բնությունը: Իր աշխատասիրության ու բնատուր տաղանդի շնորհիվ շուտով Հակոբ Ազատյանը դառնում է ճանաչված ու հարգված նկարիչ, փորագրիչ: Նրա կատարած փայլուն աշխատանքները ձեռք են բերում ԽՍՀՄ շատ նշանավոր թանգարաններ (Հեղափոխության, Պետական), լավագույն ստեղծագործություններն իրենց արժանի տեղն են գրաղեցնում նաև Հայաստանի ժողովրդական ստեղծագործության տանը, Պետական պատկերասրահում, նաև երկրի այլ խոշոր թանգարաններում:

Բացի գեղանկարչությունից, քանդակագործությունից, Հակոբ Ազատյանը հանդես է գալիս նաև բազմաթիվ մասնագիտական հոդվածներով, սովորեցնում ու դաստիարակում բազմաթիվ երիտասարդ արվեստագետների: Նա հեղինակն է նաև «Փայտի գեղարվեստական փորագրություն» արժեքավոր մենագրության:

Տաղանդավոր նկարիչն ու փորագրիչը թողել է բազմաթիվ այլ աշխատություններ ևս, որոնք խիստ ուսանելի կարող են լինել երիտասարդ ստեղծագործողների համար: Տաղանդավոր մասնագետն իր մահկանացուն կնքեց 1963 թ. մարտի 21-ին, Երևանում:

ՀԱԿՈԲՅԱՆ ՊԵՐՃ ՆԱՎԱՍԱՐԴԻ

Ծնվել է 1905 թ. փետրվարի 2-ին, Սուրմալուի գավառի Էվջիլար գյուղում: Նախնական կրթությունն ստանալով հայրենի գյուղում, նա չի կարողանում շարունակել այն, քանի որ վրա է հասնում անիծյալ գաղթը, և Հակո-

բյանների բազմանդամ ընտանիքը, ջարդից մի կերպ փրկվելով, անցնում է Արաքսի ձախ ափ: Այստեղ, Էջմիածնի շրջանում, նա վերջացնում է միջնակարգ դպրոցը, ապա 1930 թ. ընդունվում և 1934 թ. հաջողությամբ ավարտում է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը: Ինստիտուտում զբաղվում է դասախոսությամբ, երիտասարդ գյուղատնտեսների ուսման և դաստիարակության պատվավոր գործով:

1966 թ. Պերճ Հակոբյանին շնորհվում է կենսաբանական գիտությունների դոկտորի աստիճան, մեկ տարի անց նա արժանանում է պրոֆեսորի կոչման:

Պերճ Հակոբյանը մեծ վաստակ ունի հանրապետության գյուղատնտեսության, նաև կենսաբանության զարգացման, երիտասարդ կադրերի պատրաստման գործում: ՀԽՍՀ կառավարությունը բարձր գնահատելով պրոֆ. Հակոբյանի աշխատանքները, նրան շնորհում է գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Հակոբյանը երկար ժամանակ (1969-74 թթ.) գլխավորել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ընդհանուր երկրագործության ամբիոնը:

Պրոֆ. Հակոբյանի գիտական աշխատությունները առանձնակի նշանակություն ունեն հանրապետության լեռնային շրջանների երկրագործության զարգացման գործում: Նա հեղինակ է մի շարք գիտական կարևոր հետազոտությունների, որոնք ամփոփված են բազմաթիվ հոդվածներում, մենագրություններում:

Ազնիվ ու աշխատասեր սուրմալեցի տաղանդավոր գիտնականը վախճանվեց 1977 թ. հոկտեմբերի 27-ին, Երևան քաղաքում:

ԱՍԼԱՆՅԱՆ ՀԱՅԿԱԶ (ՀԱՅԿ) ԳԱԲՐԻԵԼԻ

Ծնվել է 1903 թ. Սուրմալուի գավառի Կողբ գյուղաքաղաքում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի Կողբի դպրոցում: Սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, հայ երիտասարդները անդամագրվում են ռուսական բանակին, հայ կամավորական ջոկատներին:

Հայ-ռուսական զենքի հաղթանակը ոգևորում է սուրմալեցիներին, սակայն ռուսական հեղափոխությունից հետո արևմտահայության վիճակը դառնում է խիստ ողբերգական: Ռուսական զորքերի նահանջից հետո հայկական կամավորական, զինյալ ջոկատները ի վիճակի չեն լինում կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը: Անդրկովկասյան սեյմի դավաճանական քայլերը մեծ վնաս են հասցնում ռազմաճակատում հերոսաբար կռվող հայկական զորքերին: Թուրքերի առաջխաղացումը սպառնում էր նաև Սուրմալուին: Հայ փախստականների մի մասը Սուրմալուի տարածքով անցնելով, փրկություն են որոնում Արաքսի ձախ ափին: Սուրմալեցիները, այդ թվում և

կողբեցիները, բռնում են գաղթի ճանապարհը, տեղավորվում ալաքսամերձ բնակավայրերում, հույս ունենալով կրկին վերադառնալ իրենց բնօրրանը, որն այդպես էլ չի իրականանում: Ասլանյանը 1926 թ. վերջացնում է Թիֆլիսում գտնվող Անդրկովկասյան կոմունիստական համալսարանը, դասախոսական աշխատանք կատարում Թիֆլիսում, Երևանում:

1948-53 թթ. նա գլխավորել է ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական բաժանմունքը, 1956-69 թթ. եղել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայական և իրավունքի սեկտորի վարիչ: Հեղինակ է բազմաթիվ գիտական, քաղաքական, փիլիսոփայական հոդվածների և մի շարք բուհական դասագրքերի:

Տաղանդավոր գիտնականը վայելում էր ուսանողության և ծանոթների, համերկրացիների սերն ու հարգանքը:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ ԱԲՐԱՀԱՄԻ

Ծնվել է 1906 թ. հոկտեմբերի 14-ին, Սուրմալուի գավառի Բլուր գյուղում: Ծնողները զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ: Ունեցել են բազմանդամ ընտանիք: Հայրը շատ էր ցանկանում որդուն տալ հիմնավոր կրթության: Պարույրը հաճախում է Բլուրի դպրոց, ուսման մեջ, առաջին դասարանից ցուցաբերում մեծ առաջադիմություն, աշխատասիրություն: Գաղթելով հայրենի բնակավայրից, Հովհաննիսյանների ընտանիքը հետագայում բնակություն է հաստատում Երևանում: Հանրապետության Հողժողկոմատը Պարույրին գործուղում է Վոլոնեժ, որտեղ 1930 թ. նա հաջողությամբ ավարտում է անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը: Վերադառնալով Հայաստան, աշխատում է հանրապետության տարբեր շրջաններում, խորանում անասնաբուժության գործում, միաժամանակ զբաղվում գիտական աշխատանքներով: Պարույր Հովհաննիսյանը 1941 թ. հաջողությամբ պաշտպանում է թեզ և ստանում անասնաբուժական գիտությունների դոկտորի աստիճան: Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում երկար տարիներ դասախոսական աշխատանքներ կատարելու համար 1941 թ. նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում: Մինչև իր բեղմնավոր կյանքի վերջը պրոֆեսոր Պարույր Հովհաննիսյանը աշխատեց Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում որպես դասախոս, ապա որպես գյուղատնտեսական կենդանիների ներքին ոչ վարակիչ հիվանդությունների ամբիոնի վարիչ: 1956 թ. մինչև 1972 թ. նա գլխավորել է Ախտաբանության և բուժման, գյուղատնտեսական կենդանիների ներքին ոչ վարակիչ հիվանդությունների միավորված ամբիոնը:

Հեղինակ է մի շարք կարևոր մասնագիտական հրատարակությունների, գրքերի և հոդվածների՝ հայերեն և ռուսերեն:

Պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Պարույր Հարությունյանը դաստիարակել և աճեցրել է բազմաթիվ երիտասարդների, որոնք հաջողությամբ աշխատել են հանրապետության անասնաբուժության բնագավառում: Նրա սաներից շատերը դարձել են ճանաչված գիտնականներ, գյուղատնտեսության բնագավառի հայտնի ղեկավարներ: Մեծ գիտնականը, Սուրմալուի անվանի զավակը մահացավ 1972 թ. մայիսի 24-ին, Երևանում:

ԻՍԱԲԵԿՅԱՆ ԷԴՎԱՐԴ ՀՄԱՅԱԿԻ

Էդվարդ Իսաբեկյանը ծնվել է 1914 թ. նոյեմբերի 8-ին, Սուրմալու գավառի կենտրոն Իգդիր քաղաքում: Այդ տարիներին Իգդիրը տարածաշրջանի տնտեսական աշխույժ կյանքով ապրող քաղաք էր, որն ուներ նաև կարևոր ռազմավարական նշանակություն՝ Արևմտահայաստանին կապող հանգուցակետ լինելով:

Թուրքական կոտորածների սպառնալիքի ներքո Իսաբեկյանների գերդաստանը, թողած հայրենիք ու պապական օջախ, տեղափոխվում են Թիֆլիս: Այստեղ շնորհալի պատանի Էդվարդը հաջողությամբ վերջացնում է միջնակարգ դպրոցը և ընդունվում Գեղարվեստի ակադեմիա: 1941 թ. վերջացնելով ակադեմիան, Էդվարդ Իսաբեկյանը լուրջ հայտ է ներկայացնում որպես տաղանդավոր և փայլուն գեղանկարիչ: Շուտով ընտանիքը տեղափոխվում է Երևան, և նա սկսում է դասավանդել Երևանի գեղարվեստի ինստիտուտում: 1963 թ. Իսաբեկյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1967 թ. պրոֆեսոր Էդվարդ Իսաբեկյանը նշանակվում է Հայաստանի պետական պատկերասրահի դիրեկտոր: Նրա կազմակերպչական ունակությունների շնորհիվ պատկերասրահը հարստանում է մի շարք թանկարժեք գործերով, կտավներով, բարձր հիմքերի վրա են դրվում տարվող աշխատանքները:

Իսաբեկյանը բազմաժանր նկարիչ է, նրա կտավներից շատերն աչքի են ընկնում հայրենասիրությամբ, արտահայտչականությամբ: Միաժամանակ, Իսաբեկյանը գրքի հիանալի նկարազարդող է: «Վարդանանք», «Մխիթար Սպարապետ» և այլ գրքերի նրա նկարազարդումները հայրենասիրական մեծ շնչով են արված, պարզ են ու մատչելի: Պրոֆեսոր Էդվարդ Իսաբեկյանը հարյուրավոր երիտասարդ արվեստագետներ է դաստիարակել, նրանց տաղանդը դնելով ճշմարիտ արվեստի ուղու վրա:

Բեղմնավոր աշխատանքի համար 1963 թ. Իսաբեկյանին շնորհվում է

Հայաստանի հանրապետության ժողովրդական նկարչի պատվավոր կոչում, ընտրվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, պարգևատրվում Կարմիր դրոշի շքանշանով, մի շարք պատվոգրերով:

Էդվարդ Իսաբեկյանի հայրը՝ Հմայակ Իսաբեկյանը, Իգդիրից էր, մայրը՝ Սաթենիկ Ղազարյանը, Կողբից: Հմայակն զբաղվել է առևտրով և Իգդիրում ուներ առևտրական խանութ: Նա առևտրի բնագավառում աշխատեց նաև խորհրդային կարգերի օրոք: 1918 թ. գարնանը Իսաբեկյանները Սուրմալուից գաղթում են, ապա նույն թվի ամռանը նորից վերադառնում, հավաքում հացահատիկի բերքը և կրկին թողնում հայրենի օջախը: Հմայակը և Սաթենիկն ունեցել են Կարինեին, Հրայրին, Ռուզաննային, Էդվարդին: Կարինեն վերջացրել է Երևանի պետական համալսարանը և երկար տարիներ աշխատել «Արարատ» տրեստում: Կարինեն ունի Ռաֆայել և Սյուզան զավակներին: Ռաֆայելը քանդակագործ է, երկար տարիներ բնակվում ու աշխատում է Մոսկվայում, ունի երկու զավակ:

Հրայր Իսաբեկյանը ճանաչված արվեստագետ է (տե՛ս Հրայր Իսաբեկյան):

Ռուզաննան սովորել է Մոսկվայի համալսարանում, ճարտարապետ է: Ամուսնացել է ակադեմիկոս, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Նագուշ Հարությունյանի հետ և ունեն Արային:

Էդվարդ Իսաբեկյանն ամուսնացել է փառաբանված նկարիչ Դմիտրի Նալբանդյանի քրոջ՝ Արփենիկ Նալբանդյանի հետ:

Իսաբեկյանի նկարները ցուցադրվել են Երևանում, Մոսկվայում, ԱՄՆ-ում, Թիֆլիսում, Հալեպում: ԽՍՀՄ մի շարք պատկերասրահներում, նաև մասնավոր անձանց մոտ բազմաթիվ են Էդվարդ Իսաբեկյանի վրձնի հնամյա աշխատանքները:

Էդվարդ Իսաբեկյանն ու Արփենիկ Նալբանդյանն ունեն Միհրին և Արամին: Միհր Իսաբեկյանը վերջացրել է Երևանի Գեղարվեստի ինստիտուտը, նկարիչ է, ունի բազմաթիվ հանրաճանաչ կտավներ և ներկայումս բնակվում ու աշխատում է ԱՄՆ-ի Լոս Անջելես հայաշատ քաղաքում: Միհրն ունի Արփենիկին, Էդվարդին:

Արամը վերջացրել է Երևանի Գեղարվեստի ինստիտուտը (տե՛ս Արամ Իսաբեկյան):

ԻՍԱԲԵԿՅԱՆ ՀՐԱՅՐ ՀՄԱՅԱԿԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Իգդիր քաղաքում, 1906 թ. հունվարի 3-ին: Այս տարիներին (1905-06 թթ.) Անդրկովկասի հայաշատ բնակավայրերում տեղական թաքարները զինված ջոկատներով հարձակվում էին հայերի

վրա: Շատ խոշոր քաղաքներում, որտեղ հայությունը փոքրամասնություն էր կազմում, տեղի ունեցան հայկական կոտորածներ: Սուրմալուն բացառություն չէր, մանավանդ թուրքական և քրդական տարրը միացած դեմ չէին կոտորածներին և հայերի ունեցվածքի բռնի թալանին: Սակայն սուրմալեցիները կարողացան թուրքերին ընդդիմանալ, հակահարված կազմակերպել և այդ ոճրագործների ախորժակը փակել:

Հրայրն սկզբնական կրթությունն ստանում է Իգդիրի քաղաքային դպրոցում: Սկսվեց Առաջին աշխարհամարտը և շատ երիտասարդ սուրմալեցիների հետ միասին ռուսական բանակին անդամագրվեցին, ապա և հայկական կամավորական ջոկատների կազմում հայրենի երկիրը պաշտպանելու համար զենք վերցրին նաև Իսաբեկյան տոհմի շատ անդամներ: Ավաղ, կատարվեց անսպասելին: Իգդիրը, Սուրմալուն, կենդանի մնացած ողջ Արևմտահայաստանը բռնել էր գաղթի ճանապարհը: Գաղթում էին նաև Արևելահայաստանի բուն տարածքներից՝ Շարուրից, Նախիջևանից: Դրանց հետ էլ՝ պատանի, դեռ 14 տարին չլրացած Հրայր Իսաբեկյանը:

Երևանում վերջացնելով միջնակարգ դպրոցը, Հրայր Իսաբեկյանը մեկնում է Մոսկվա, ընդունվում ճարտարապետական ինստիտուտ, որը և հաջողությամբ ավարտում է 1932 թ.: Նշանավոր ճարտարապետների տեսությունից չի վրիպում նախաձեռնող և լայն մտահորիզոնի տեր երիտասարդ ճարտարապետը, և նրան ընդգրկում են Մոսկվա քաղաքի գլխավոր հատակագծի մշակման և կազմման արվեստանոցում, որտեղ նա ծանոթանում է ԽՍՀՄ նշանավոր ճարտարապետների հետ, նաև քաղաքաշինության արդի սկզբունքներին: 1937թ. փորձառու ճարտարապետ Հրայր Իսաբեկյանն արդեն Հայաստանում էր: Նրան գրկաբաց ընդունում են Երևանի նորաբաց նախագծային ինստիտուտում, միաժամանակ կատարում է դասախոսական աշխատանքներ Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Մայրաքաղաքի, հանրապետության այլ բնակավայրերի կառուցապատման գործում ցուցաբերած ակնառու ծառայությունների համար ՀԽՍՀ կառավարությունը նրան շնորհում է «Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի» պատվավոր կոչում: Իսաբեկյանի մտքի փայլուն դրսևորումներից են հանրապետության մի շարք քաղաքների՝ Դիլիջանի, Ալավերդու, Ղափանի, Լենինականի գլխավոր հատակագծերը:

Հայրենասեր, տաղանդավոր ճարտարապետ Հրայր Իսաբեկյանը հայկական ճարտարապետական արվեստում թողել իր ուրույն և առանձնակի ձեռագիրը: Իգդիրցի ճարտարապետը համոզված էր, որ վաղ թե ուշ հայրենի Սուրմալուն նորից կլինի հայկական և ինքը այնտեղ կիրականացնի նոր ու շքեղ կառույցներ:

ԻՍԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՄ ԷԴՎԱՐԴԻ

Արամ Իսաբեկյանը ծնվել է 1952 թ., Երևան քաղաքում, հանրահայտ արվեստագետ Էդվարդ Իսաբեկյանի և Արփենիկ Նալբանդյան-Իսաբեկյանի ընտանիքում: Ծնողները գաղթել են նախկին Երևանի նահանգի Սուրմալու գավառի Իգդիր քաղաքից:

Արամը մանկուց մեծ հակում է ունեցել դեպի արվեստը, հատկապես դեպի նկարչությունը, ագահությամբ նայել հոր՝ Էդվարդ Իսաբեկյանի վրձնի կախարդական հալվածներին: Ավարտելով միջնակարգ դպրոցը, նա առանց երկմտության ընդունվում է Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտ: 1976 թ. հաջողությամբ ավարտում է ինստիտուտի գեղանկարչական բաժինը և նույն թվին զորակոչվում զինվորական ծառայության:

1979 թ. Արամ Իսաբեկյանին հրավիրում են Գեղարվեստաթատերական ինստիտուտ՝ դասավանդելու: Շուտով նրան շնորհվում է դոցենտի (1989 թ.), ապա և պրոֆեսորի (1991 թ.) կոչում: Արամ Իսաբեկյանի բարձրարժեք աշխատանքները ցուցադրվել են աշխարհի շատ քաղաքներում (Փարիզ, Լոնդոն, Հալեպ), ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում, ԱՄՆ-ում: Նրա լավագույն գործերը ցուցադրվում են տարբեր պատկերասրահներում:

Արամ Իսաբեկյանն իր ընտանիքի գեղարվեստական ավանդույթների հիանալի շարունակողն է, իր ուրույն ոճն ու մտահղացումները իրագործողը:

Որպես նկարիչ նա անտարբեր չէ մարդկային հոգսերի ու ցավերի, նրա կյանքի հանդեպ: Նրա արվեստում արտացոլվում է սեփական հայեցակետի արտահայտությունը:

Արամ Իսաբեկյանն ամուսնացել է Իրինա Բաղյանի հետ: Իրինան ավարտել է Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը և դասախոսում է նույն ինստիտուտում:

Ունեն Մհերին և Աննային:

Մհեր Արամի Իսաբեկյանը ծնվել է 1978 թ., Երևան քաղաքում: Վերջացնելով միջնակարգ դպրոցը, նա ընդունվել և հաջողությամբ ավարտել է Երևանի Գեղարվեստի ինստիտուտի դիզայնի բաժինը, իր տաղանդով գեղեցկացնելով մայրաքաղաքի զանազան կառույցներ, ձեռնարկություններ:

Աննա Արամի Իսաբեկյանը ծնվել է 1984 թ., Երևանի պարարվեստի ուսումնարանի սանուհի է:

Լինելով սուրմալեցիների ժառանգ, Արամ Իսաբեկյանն իր հոր՝ Էդվարդ Իսաբեկյանի նման սիրում և երազում է հայրենի Սուրմալուն, ծննդավայրն իր նախնիների:

Արամ Իսաբեկյանը որպես տաղանդավոր արվեստագետ սիրված և հարգված է իր բազմաթիվ սաների, կոլեկտիվի և առանձնապես սուրմալեցիների կողմից:

Տաղանդաշատ արվեստագետը դեռ շատ բան ունի տալու հայրենիքին, իր ժողովրդին:

ԲԵԳԻՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

Ծնվել է Սուրմալուի գավառի Կողբ գյուղում, 1906 թ. , բազմանդամ բանվորի ընտանիքում: Ընտանիքի որոշ մասը զբաղվել է երկրագործությամբ, խնամել անասուններ: Այս գեղդաստանից շատերն էլ, ինչպես և Գարեգինի հայրը, բանվորություն են արել: Իրենց մյուս հայրենակիցների նման Բեգինյանները նույնպես ստիպված թողնում են իրենց ողջ ունեցվածքը, գաղթում և բնակություն հաստատում Սալդարապատի գյուղերից մեկում, ապա տեղափոխվում Երևան: 1919 թ. կողբեցիների մի քանի ընտանիքներ զբաղեցնում են մայրաքաղաքի մոտակայքի Սարվանլար ամայի գյուղը: Սկսվում է պայքար կյանքի համար: Կառուցում են (վերականգնում) ավերակներից մեկ-երկուսը: Բոլորն ընտանիքներով տեղավորվում են այդ կացարաններում: Ապա կազմակերպվում է կոլտնտեսություն, ստանում են հողամասեր, և Բեգինյանները կառուցում են իրենց տունը, զբաղվում գյուղատնտեսությամբ: Երիտասարդ Գարեգինը, ունենալով կազմակերպչական մեծ եռանդ, դառնում է գյուղի կոմերիտմիության կազմակերպիչը, ակտիվ մասնակցում հասարակական աշխատանքներին, աչքի ընկնում որպես լավ աշխատող և կազմակերպիչ:

1930 թ. Նոր Կողբի կոլտնտեսության ժամանակավոր նախագահ է ընտրվում Մ. Ասլանյանը, ապա նրան փոխարինում է Գարեգին Բեգինյանը, որն այդ պարտականությունները կատարում է մինչև 1939 թ.: Նա կիսատ թողած ուսումը շարունակում է մայրաքաղաքի երեկոյան դպրոցներից մեկում և հաջողությամբ վերջացնում այն:

Սկսվում է Հայրենական պատերազմը: Բեգինյանը մեկնում է ռազմաճակատ, մասնակցում բազմաթիվ մարտերի, պարգևատրվում ԽՍՀՄ կառավարության շքանշաններով, բազմաթիվ մեդալներով:

Վերադառնալով ռազմաճակատից, Բեգինյանն ընտրվում է կուսակցական կազմակերպության քարտուղար և ավելի քան երկու տասնամյակ կատարում կուսակցական աշխատանք:

ԲԵԳԻՆՅԱՆ ՎԱԶԳԵՆ ՊՈՂՈՍԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Կողբ գյուղում: Հայրը՝ Բեգինյան Պողոսը, Կողբում, շրջակայքում և ողջ Սուրմալուում հայտնի էր իր աշխատասիրությամբ, բարությամբ և առատաձեռնությամբ: Նա միշտ լավություն էր անում հարևաններին, խիստ մատչելի գներով կամ ապառիկ կարգով գանազան ապրանքներ տալիս նրանց:

Բեգինյանները գաղթի ճանապարհը բռնեցին 1918 թ. ապրիլ ամսին: Հրամայված էր 2 ժամում թողնել Կողբը և Ղարաղալայի (Սև բլուր) կամրջով անցնել Արաքսը: Այս խառնաշփոթում իրար կորցրած մայր ու զավակ, հայր ու որդի բնականաբար չէին կարող իրենց հետ վերցնել անկողին, կահկարասի, առավել ևս՝ իրենց անասուններին:

Անցան Արաքսը, ցիրուցան եղան Սարդարապատի մոտակա բնակավայրերում:

1919 թ. հոկտեմբերին կարոտյալ կողբեցիների երազանքը իրականացավ՝ վերադարձ դեպի հայրենի օջախ, դեպի Կողբ: Այստեղ ցրտից և սովից Բեգինյան ընտանիքը զգալի կորուստներ տվեց: Բայց ահա, շատ չանցած, կողբեցիները դարձյալ ճանապարհ ընկան Կողբից ընդամենը 18 վերստ հեռավորության վրա գտնվող Արաքսի կամուրջը: Անցան, տեղավորվեցին ով որտեղ կարող էր:

Բեգինյաններն ու դարձյալ Կողբից գաղթած 30 ընտանիք բնակության վայր ընտրեցին Երևանից հարավ-արևմուտք, 2 կմ հեռավորության վրա գտնվող, նախկինում թուրքաբնակ, այդ օրերին ավերակների վերածված Սարվանլար գյուղում:

Բեգինյան գեղդաստանն ուներ. Վոֆան՝ 1882 թ. ծնված, ամուսնացած կողբեցի Վահրազյան Ուստիանի հետ՝ 1885 թ. ծնված: Սրանք ունեին Աբրահամ Բեգինյանին, ծնված 1914 թ. (ԱՄՆ), Գալուստ Բեգինյանին:

Վոֆանը և Ուստիանն ունեցան Մնացականին՝ ծնված 1903 թ., Կողբում, Գարեգինին՝ ծնված 1906 թ., Կողբում, Վազգենին՝ ծնված 1922 թ. , Սարվանլարում (Նոր Կողբում):

Վոֆանի մեծ որդի Մնացականն ունի Ամասիկին և Ռազմիկին: Ամասիկն ունի Աշոտին և Մնացականին: Աշոտն ունի Գոռին և Էդգարին: Գարեգին Բեգլարյանն ունի Գագիկին: Գագիկն ունի Մարգարիտային (Ռիմա), Գարիկին, Քրիստինային: Ռիման ունի Միշային:

Վազգեն Բեգինյանն ունի Լաուրային, Լյովային, Հռիփսիմեին, Հայկին:

Լաուրան ունի Հասմիկին: Հասմիկն ունի Թամարային, Լյովային, Լաուրային:

Լյովան ունի Վարդանին, Արամին, Նարային:

Հռիփսիմեն ունի Անահիտին, Ռաֆայելին: Անահիտն ունի Անդրանիկին, Քրիստինեին:

Վազգեն Բեգինյանի կրտսեր որդին՝ Հայկ Բեգինյանը, ամուսնացել է Սաֆարյան Ալլայի հետ և ունեն Արտակին ու Ռոզային:

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՐԱՅՐ ԹԵՆԻԱՄԻՆԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Էվջիլար գյուղում, 1907 թ. մարտի 7-ին: Էվջիլարը հայկական խոշոր բնակավայր էր և այստեղ բնակվում էին միայն հայեր: Ըստ 1886 թ. տվյալների (Ա-Դ0, «Հայ-թուրքական ընդհարումները Կովկասում 1905-06 թթ.», Ե.1907 թ.), Էվջիլարում կար 170 հայ բնտանիք, գյուղի բնակչության թիվը հասնում էր մինչև 1000-ի: Գյուղում կար եկեղեցի՝ սուրբ Աստվածածին, այն գտնվում էր գյուղի կենտրոնում, կառուցված էր հում աղյուսից, փայտից:

Էվջիլարը, որին ներկայումս թուրքը Էվիջի է անվանում, գտնվում էր Երևան-Էջմիածին-Իգդիր խճուղու հարևանությամբ և կապը Էջմիածնի, Իգդիրի հետ շատ դյուրին էր:

Հրայրն սկզբնական կրթությունն ստանում է գյուղական դպրոցում, ապա տեղափոխվում Երևան, ընդունվում Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժին: 1933 թ. նա ավարտում է համալսարանը և զբաղվում մանկավարժությամբ: 1942 թ. աշխատանքի է անցնում ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Հրայր Մուրադյանը միաժամանակ հանդես է գալիս որպես գրականագետ-հրապարակախոս: Նրա գրչին են պատկանում հայ խոշորագույն գրողների կյանքի, ստեղծագործության մասին մի շարք մենագրություններ: Գրել է նաև դրամաներ: Ակտիվ մասնակցություն է ունեցել մեր դասական գրողներ Ռ. Պատկանյանի, Խ. Աբովյանի երկերի ժողովածուների կազմմանն ու հրատարակմանը:

1963 թ. Հրայր Մուրադյանը հաջողությամբ պաշտպանում է դոկտորական թեզ: Նա ճանաչված գրականագետ էր, սիրված՝ գրողների և լայն հասարակայնության կողմից, նաև հիանալի դրամատուրգ:

Ազնիվ ու բարի սուրմալեցին, ժողովրդի կողմից սիրված ու հարգված Հրայր Մուրադյանը վախճանվեց 1984 թ. մայիսի 5-ին, Երևան քաղաքում:

Հրայր Մուրադյանն առանձնակի սիրով էր կապված սուրմալեցիների, մասնավորապես հայրենակից իգդիրցիների հետ:

ՌՈՍՏՈՄՅԱՆ (ՌՈՒՍՏԱՄՅԱՆ) ՎԱՐԴԳԵՍ ԱՐՇԱԿԻ

Ծնվել է 1908 թ., Սուրմալուի գավառի Ալիղամար գյուղում: Թուրքերն այդ գյուղին անվանում են Ալիջամերլի: Գյուղում գործում էր Սուրբ Գևորգ եկեղեցին, որին կից գործում էր դպրոց: Գյուղում կար 126 հայ բնտանիք (1886 թ. տվյալներով), որը կազմում էր ավելի քան 700-800 շունչ հայ բնակչություն:

1919-20 թթ. Ռոստոմյան գերդաստանը նույնպես բռնում է գաղթի ճանապարհը: Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, և երիտասարդ Վարդգես Ռոստոմյանը մեկնում է զինվորական ծառայության: Մասնակցում է

Հյուսիսային Կովկասի համար մղված ճակատամարտերին: 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի կազմում ավագ սերժանտ Ռոստոմյանը մասնակցում է Գրոզնի քաղաքի ազատագրմանը, նաև հայ բաջերի հետ Հյուսիսային Կովկասի շատ բնակավայրերի ազատագրման մարտերին: Ազատագրում են Ղրիմը, անցնում Բելոռուսիա, մասնակցում Լեհաստանի ազատագրական մարտերին: Սուրմալեցի քաջ զինվորը հասնում է Բեռլին: Քաղաք, որի իշխանությունները 1914-20 թթ. ոգևորում և օգնում էին թուրք բարբարոսներին՝ ոչնչացնելու հնագույն մի ժողովրդի:

Ռազմաճակատում ցուցաբերած արտակարգ խիզախության և մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցելու համար 1945 թ. մարտի 24-ին սուրմալեցի հերոս զավակին շնորհվում է Սովետական Միության հերոսի պատվավոր կոչում:

Այդ կոչմանը նա արժանացավ 1944 թ. մայիսի 9-ին բանալի Գդինայա բարձունքի գրավման, Սևաստոպոլ քաղաքի գրավման ժամանակ ցուցաբերած արիության համար:

Պատերազմի հաղթական ավարտից հետո Ռոստոմյանը վերադառնում է Երևան և անցնում խաղաղ ստեղծագործական աշխատանքի, իր ուժն ու եռանդը նվիրելով մայր Հայաստանի բարգավաճման գործին: Նա պարգևատրվել է ԽՍՀՄ կառավարության մի շարք բարձրագույն պարգևներով, շքանշաններով, մեդալներով, շնորհավորական պատվոգրերով և այլն:

ՍԱՐԳԻՍ ԴՈԼԻՆՅԱՆ

Ծնվել է 1909 թ., Սուրմալուի գավառի Կողբ գյուղում: Դոլինյանների գերդաստանը Կողբում ճանաչված էր և հարգված բոլորի կողմից:

Երբ սկսվում է գաղթը, Դոլինյանները նույնպես՝ թողած տուն ու անասուններ, այգի ու արտ, մի կերպ հասնում են Սարդարապատի շրջան և բնակություն հաստատում Մեծ Շահրիար գյուղում: Այստեղ կային արդեն համագյուղացիներ: Ինչպես և բոլոր գաղթականները, սրանք ևս կրում են մեծ դժվարություններ՝ մինչև կառուցում են փոքր բնակարան, տնավորվում և սկսում են աշխատել դաշտավարության մեջ: Սարգիսը կարճ ժամանակում տիրապետում է տրակտորիստի պատվավոր մասնագիտությանը, աշխատում է որպես տրակտորիստ, ապա նրան վստահում են տրակտորային շարասյան բրիգադիրի պատասխանատու պաշտոնը (պատասխանատու, քանզի այն ժամանակ մի փոքր խոտան հայտնաբերելիս կարող էին նրան և ընտանիքին ուղարկել Սիբիր): Հաշվի առնելով Սարգսի հարուստ աշխատանքային փորձը, շուտով նրան տեղափոխում են Հոկտեմբերյանի ՄՏԿ և նշանակում մեխանիկ: 1941-55 թթ. նա զբաղեցնում է կայանի գլխավոր մեխանիկի պաշտոնը մինչև այն օրը, երբ ՄՏԿ-ն վերացնում են:

1948 թ. շրջանում գյուղատնտեսության բարձր բերքատվության ապահովման, հողերի մշակման աշխատանքներն անթերի կատարելու համար, ԽՍՀՄ կառավարությունը Սարգիս Դոլինյանին շնորհում է Սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր ու պատվավոր կոչում:

Սարգիս Դոլինյանը նաև հասարակական ակտիվ աշխատող էր: Եղել է ՀԿԿ Հոկտեմբերյանի կուսշրջկոմի անդամ, շրջանային խորհրդի պատգամավոր, աշխատել որպես գյուղի կուսկազմակերպության քարտուղար և այլն:

Դոլինյանը հոգատար ծնող էր: Նրա բոլոր 9 զավակներն էլ ստացել են բարձրագույն կրթություն և իրենց ազնիվ աշխատանքով նպաստում են մեր երկրի հարստացմանն ու բարգավաճմանը:

ՍԵԿՈՅԱՆ ՎԱԶՐԻԿ ՄԵԽԱԿԻ

Ծնվել է 1909 թ. ապրիլի 1-ին, Իգդիր քաղաքում: Սուրմալուի հայտնի գաղթից հետո Սեկոյան ընտանիքը հայտնվում է Աղրբեջանում: 1934 թ. Վազրիկ Սեկոյանն ավարտում է գյուղատնտեսական ինստիտուտը և աշխատում գյուղատնտեսության բնագավառում՝ իր մասնագիտությամբ: 1941 թ. զորակոչվում է զինվորական ծառայության, մասնակցում բազմաթիվ ճակատամարտերի, պարգևատրվում ԽՍՀՄ կառավարության բազմաթիվ շքանշաններով, մեդալներով:

Պատերազմի ավարտից հետո, 1945 թ. Վազրիկ Սեկոյանը զորացրվում է և աշխատանքի անցնում Հայաստանի գյուղական և կոլտնտեսային շինարարության գլխավոր վարչությունում՝ որպես նրա պետ: 1950-54 թթ. Վազրիկ Սեկոյանը գլխավորում է Երևան քաղաքի գործադիր կոմիտեն՝ որպես գործկոմի նախագահ: Այդ տարիներին բուռն կերպով աճում, կառուցապատվում և բարեկարգվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանը, և Վազրիկ Սեկոյանի անձնական ներդրումները հսկայական են այդ ուղղությամբ:

Հանրապետությունում բուռն վերելք էր ապրում հիդրոշինարարությունը: Կառավարությունը նրան նշանակում է «Հայհիդրոէներգոշին» վարչության պետ (1955-1965 թթ.): 1965 թ. Վազրիկ Սեկոյանը նշանակվում է հանրապետության շինանյութերի արդյունաբերության մինիստր, պաշտոնավարում մինչև 1973 թիվը: Ապա նշանակվում է Սևան-Հրազդան կասկադի ջրամբարների և Արփա-Սևան թունելի վարչության պետ: Այստեղ ամենօրյա եռանդուն աշխատանքով աշխատում է օր առաջ շահագործման հանձնել թունելը՝ թեթևացնելու համար Սևանին հասցված ծանր կորուստը: Նա ակտիվ և անմիջական մասնակցություն է ունեցել հանրապետությունում կառուցվող ժամանակակից խոշոր ջրային հանգույցների նախագծման և

իրագործման աշխատանքներին: Հմտանալով էլեկտրաէներգիայի արտադրության տարբեր կառույցների շինարարության գործում, նա ակտիվ մասնակցություն է ունենում Հրազդանի, Երևանի ջերմաէլեկտրակայանների շինարարության աշխատանքներին:

Ամենուր, որտեղ էլ աշխատել է Վազրիկ Սեկոյանը, սուրմալեցու համառությամբ ու գործարարությամբ կարողացել է մինչև վերջ հասցնել և պատվով կատարել կառավարության առաջադրանքները՝ անմնացորդ նվիրվելով Հայաստանի և հայ ժողովրդի բարգավաճմանն ու զարգացմանը:

Բանիմաց և գործունյա Վազրիկ Սեկոյանի աշխատանքները բարձր են գնահատվել կառավարության և իշխանությունների կողմից: Նա պարգևատրվել է ԽՍՀՄ և ՀԽՍՀ շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով:

ԹՈՓՉՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՍՏԵՓԱՆԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Էվջիլար գյուղում, 1911 թ. հուլիսի 11-ին: Այդ տարիներին Էվջիլարն ուներ 170 տուն հայ բնակչություն:

Էդուարդը չի հասցնում գյուղական դպրոց գնալ, կրթություն ստանալ հայրենի գյուղում: Վրա են հասնում գաղթի տանջալից ժամանակները:

Թոփչյանների ընտանիքը տեղավորվում է Էջմիածնի գյուղերից մեկում:

Հաջողությամբ վերջացնելով միջնակարգ դպրոցը, Էդուարդն ընդունվում և 1932 թ. ավարտում է Երևանի պետհամալսարանի պատմագրական բաժինը: Կարճ ժամանակ աշխատելով Երևանում, 1935 թ. մեկնում է Լենինգրադ և ընդունվում Լենինգրադի արվեստագիտության ինստիտուտի ասպիրանտուրան: 1938 թ. , փայլուն ձևով ավարտելով ասպիրանտուրան, վերադառնում է Երևան և աշխատանքի անցնում Լեզվի և գրականության ինստիտուտում:

Հայրենական պատերազմի առաջին օրերից զորակոչվում է զինվորական ծառայության: 1943 թ. զորացրվում է, ամբողջովին նվիրվում պատմության և գրականության ասպարեզին: Նրա խմբագրությամբ հրատարակվող «Սովետական գրականություն և արվեստ» ամսագիրը մեծ հեղինակություն էր վայելում և ճիշտ ուղղություն տալիս ժամանակի գրական-հասարակական կյանքին: Էդ. Թոփչյանը եղել է Հայաստանի գրողների վարչության պատասխանատու քարտուղար, ԳԱ գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, նաև՝ դիրեկտոր: Համեստագույն մարդը և սիրված գրականագետը երկար տարիներ ղեկավարել է Հայաստանի գրողների միության վարչությունը՝ որպես առաջին քարտուղար: Հեղինակ է բազմաթիվ

գիտական հոդվածների, արժեքավոր մենագրությունների:

Էդ. Թովչյանը Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ էր: Եղել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ: Վախճանվել է 1975 թ. սեպտեմբերի 3-ին, Երևան քաղաքում:

ԽԱՉԱՏՐՅԱՆ (ՀՈՒՐՅԱՆ) ԹԱԹՈՒԼ ՍԱՄՍՈՆԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Թաջլու գյուղում, 1912 թ.: 6-7 տարեկան էր ընդամենը Թաթուլը, երբ նրանց ընտանիքը ևս բռնում է գաղթի ծանր ու հուզեմաշ ճանապարհը:

Որոշ ժամանակ մնալով Սալդարապատի գյուղում, կարիքից դրդված, ընտանիքը տեղափոխվում է Բաքու: Թաթուլն այստեղ էլ վերջացնում է միջնակարգ դպրոցը: Ծնողները ու բարեկամները տաղանդավոր պատանուն օգնում են տեղափոխվել Մոսկվա: Այստեղ ռուսական հարազատ ու սրտամոտ միջավայրում նա ստանում է բարձրագույն կրթություն (1931 թ.): Թաթուլը, որին Չարենցը կոչել էր Հուրյան ազգանունով, ստեղծագործում էր դեռևս աշակերտական նստարանից: 1932 թ. հրատարակվում է նրա «Հողի արյունը», ապա «Դնեպր» և «Հասակ» բանաստեղծությունների ժողովածուները:

Նախապատերազմյան տարիներին նա կարողանում է հրատարակել նաև «Պոեմներ» բանաստեղծական ժողովածուն:

Սկսվում է Հայրենական պատերազմը, և Հուրյանը՝ անբաժան իր գրչից ու տետրից, մեկնում է զինվորական ծառայության: Նա մասնակցում է Հյուսիսային Կովկասի համար մղված պաշտպանական ահեղ մարտերին, ապա հետապնդելով թշնամուն, անցնում Ղրիմի թերակղզի: 1942 թ. հունիսի 21-ին Սևաստոպոլ քաղաքի ազատագրման համար մղվող դաժան կռիվներից մեկում, կատարելով հրամանատարության առաջադրանքը, նա հերոսաբար զոհվում է՝ հանուն մարտական ընկերների կյանքի ապահովության:

Պատերազմի ամենաօրհասական օրերին անգամ Հուրյանը գրում էր կենսախինդ, հաղթանակի հավատով լի բանաստեղծություններ և ոգեշնչում մարտական ընկերներին: Ետմահու հրատարակվել են նրա մի շարք ժողովածուներ, արժանացել է ՀԼԿԵՄ Կենտկոմի հայտարարած գրական մրցանակին: Հուրյանը գրել է նաև «Ֆրիկ» պատմական դրաման, «Սայաթ Նովա» պոեմը և այլ գործեր:

Սուրմալեցի տաղանդավոր, վաղամեռիկ բանաստեղծ Թաթուլ Հուրյանի հիշատակը հավերժացնելու նպատակով նրա համերկրացիները, որոնք

ներկայումս բնակվում են Արմավիրի շրջանի Արազափ գյուղում, տեղի միջնակարգ դպրոցն անվանակոչել են նրա անունով:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇՄԱՎՈՆ ՌՈՒԲԵՆԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Իգդիր-Մավա գյուղում, 1913 թ.: Թուրքական կոտորածներից մազապուրծ Հալտությունյանների ընտանիքը տեղավորվում է Արաքսի ձախափնյա տարածքի բնակավայրերից մեկում, կրում գաղթականի կյանքի ողջ դառնությունը՝ սով, մերկություն, տանիքի բացակայություն: Այնուհետև ընտանիքը տեղափոխվում է Երևան: Սկզբնական կրթությունն ստանալով Երևանի դպրոցներից մեկում, ավարտելով միջնակարգ դպրոցը, Շմավոնը 1936 թ. ընդունվում է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության բաժին: Ստանալով մանկավարժ-պատմաբանի մասնագիտություն, սկզբում աշխատում է մանկավարժության բնագավառում: 1948-1969 թթ. եղել է Հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմության բաժնի դեկան և ամբիոնի վարիչ, 1969-ից՝ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Հայ ժողովրդի պատմության ամբիոնի պրոֆեսոր, իսկ 1976-ից՝ ամբիոնի վարիչ: Հարուստ և արգասաբեր է եղել պրոֆեսոր Շմավոն Հալտությունյանի գրիչը: 1955 թ. լույս է տեսնում նրա «Հայ ժողովրդի պատմություն. համառոտ ժամանակագրություն, 1801-1917 թ.» գիրքը, ապա «Սովետական Հայաստանը 40 տարում» մենագրությունն ու մի շարք արժեքավոր այլ աշխատություններ՝ նվիրված հայ ժողովրդի պատմագրությանը:

Պրոֆ. Շավարշ Հալտությունյանը դաստիարակել է հարյուրավոր հայրենասեր հայորդիներ, նրանց զինելով հայագիտական, հայրենասիրական վառ գիտելիքներով: Նա հայրենասեր էր ամբողջ էությամբ և հավատում էր հայ ժողովրդի պահանջատիրության արդար լուծմանը:

ՕՀԱՆՅԱՆ (ՕԳԱՆՈՎ) ԱՆԴՐԵՅ ՍԱՐԳՍԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Մոլլաղամար գյուղում, 1915 թ.: Բազմանդամ գերդաստանն ուներ չորս աղջիկ և հինգ տղա, սրանք էլ իրենց ընտանիքները:

Ընտանիքի երեխաները բոլորն էլ իրենց ուսումն սկսում են գյուղի ս. Ստեփանոս եկեղեցուն կից դպրոցում: Սկսվել էր Առաջին աշխարհամարտը, Սուրմալուն ռուսական զորքերի, զինամթերքների կենտրոնական կայաններից էր: Տղամարդիկ համարյա բոլորն էլ զենք են վերցնում՝ մի մասը ռուսական բանակի, մյուսները կամավորական ջոկատների շարքերում: Կռիվ դարավոր թշնամու, մեր ժողովրդի հանդեպ ոճրագործություններ կատարողի, հայ մարդկանց բնաջնջողի դեմ: Ռուսական զենքի

հաղթանակները ոգևորում են հայ մայրկանց, որոնք հավատում էին, որ դարավոր տառապանքներից կազատագրվեն Հայաստանն ու նրա ժողովուրդը: Սակայն 1917 թ. ռուսական հեղափոխությունը գլխիվայր շրջում է դրությունը...: 1918 թ. սկսվում է նաև սուրմալեցիների զանգվածային գաղթը: 1919 թ. Անդրեյը հասնում է Թիֆլիս: Բազմանդամ գերդաստանից ոչ որ չկար մնաց, մի մասին թուրք բարբարոսները էին հոշոտել, մյուսները ցրվել էին անհայտ տարածքներում:

Դեռևս 18 տարին չլրացած՝ Անդրեյը անդամագրվում է Կարմիր բանակին և անցնում զինվորական ծառայության: Շուտով հրամանատարությունը նրան ուղարկում է ռազմական ուսումնարան: Հաջողությամբ վերջացնելով հրետանային ուսումնարանը, երիտասարդ սպան ծառայության է նշանակվում Անդրկովկասյան զինվորական օկրուգի զորամասերում: Օհանյանն այստեղ դրսևորում է իրեն հատուկ բանիմացություն, տիրապետում ռազմական գործին, հրետանու ու հրետանավորի բարդ մասնագիտությանը, որի համար մշտապես խրախուսվում է բարձրաստիճան հրամանատարների կողմից:

1939 թ. Անդրեյ Օգանովին նշանակում են սահմանամերձ Բաթումի քաղաք-նավահանգստի զինվորական պարետ: Այստեղ նա ծանոթանում է Վերգինե Վեմյանի հետ և ամուսնանում: Սկսվում է Հայրենական պատերազմը: Սպա Անդրեյ Օգանովը ևս մեկնում է ռազմաճակատ: 1943 թ. ահեղ մարտեր է մղում Հյուսիս-կովկասյան ռազմաճակատում, փակելով թշնամու մուտքը Անդրկովկաս: Բարձրաստիճան սպա Օգանովին վստահում են զորամասի հակահետախուզության դժվարին աշխատանքների պատասխանատվությունը, որը նա կատարում է փայլուն կերպով: Այդ է պատճառը, որ փոխգնդապետ Անդրեյ Օգանովի մասին քիչ է գրվել և քիչ բան գիտենք: Անգամ տան անդամները իրենց հոր մասին չգիտեին ավելին, բան կար մամուլում: 1950 թ. հրամանատարությունը Օգանովին տեղափոխում է Երևան՝ մայրաքաղաքային գնդի շտաբի պետի և հակահետախուզության բաժնի պետի պաշտոնով:

1944 թ. ծնվում է Սերգեյը, 1954-ին՝ Վահանը (տե՛ս Վահան Օհանյան), 1958 թ.՝ Արմենը: Դուստրը՝ Վալյան, ամուսնացավ Ամիրջանյան Ժորայի հետ և ունեն Արամայիսին, Մարիամին: Արամայիսն ունի Լիլիթին: Մարիամն ունի Լուսինեին, Գևորգին: Արմենն ունի Էդգարին և Վերգինեին:

Հայրենասեր ու հայասեր Անդրեյ Օհանյանի կյանքը հայ ժողովրդին, Հայաստանին անմնացորդ ու ազնվորեն ծառայելու օրինակ է: Այդ ոգով են դաստիարակված նաև նրա բոլոր ժառանգները: Տաղանդաշատ զինվորական Անդրեյ Սարգսի Օհանյանը իր մահկանացուն կնքեց 1993 թ. , Երևանում:

Վահան Օհանյան
Յուլինա Խանգաղյան

ՕՀԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ ԱՆԴՐԵՅԻ

Ծնվել է 1954 թ. , Երևանում, սուրմալեցի զինվորական Անդրեյ Օհանյանի ընտանիքում: Հայր, որ 1918 թ. կորցրել էր հայրենի Սուրմալուն և Մոլլաղամալ գյուղի պապենական օջախը, երևանեցին մշտապես հայրենասիրություն, կորցրած հայրենիքի սերն էր ներարկում:

Վահան Օհանյանը 1971 թ. հաջողությամբ ավարտեց Երևանի N38 միջնակարգ դպրոցը: 1980 թ. , ավարտելով Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի աշխարհագրական բաժինը, նա ջերմեռանդորեն նվիրվում է դեռևս 1969 թ. իր կողմից կազմակերպված «Արձագանք» երաժշտական խմբի աշխատանքներին:

Վահանը երկու տարի ծառայել է խորհրդային բանակում, սակայն չի ընտրել արհեստավարժ զինվորական հոր ուղին:

Օհանյանի ստեղծած երաժշտական խումբն աչքի է ընկել կատարողական բարձր արվեստով, սիրվել հանդիսականի կողմից և նոր խոսք ասել այդ բնագավառում: Այդ առումով զարմանալի չէ, որ մասնակցելով բազմաթիվ փառատոների, շահել է դափնեկրի կոչումներ: Չբավարարվելով ձեռք բերածով, Վահան Օհանյանը 1981-84 թթ. սովորում և վերջացնում է Մոսկվայի Արվեստների ինստիտուտը (հեռակա կարգով):

1992 թ. Օհանյանը հիմնադրում է «Երգի թատրոն», որը, ի պատիվ նրա ջանքերի, կոչվում է «Օհանյանի երգի թատրոն»: Սա նոր խոսք է մշակութային կյանքում և պատիվ է բերում ոչ միայն հիմնադրին, այլև մեր ժողովրդին ու երկրին:

Թատրոնի ելույթները, բարեգործական համերգները (դպրոցներ, հիվանդանոցներ, զորամասեր և այլն) մեծ համբավ են բերել հեղինակին և կատարողներին:

Օհանյանը մինչև հիմա գրել է ավելի քան 150 զանազան երաժշտական ստեղծագործություններ, երգեր, գործիքավորել տարբեր հեղինակների 300-ից ավելի երաժշտական ստեղծագործություններ: Նա առանձնակի սիրով ու գորովանքով է վերաբերվում մանկական տաղանդներին, շրջապատում առանձնակի հոգատարությամբ: Նրա ձեռքի տակ աճել են երիտասարդ շատ տաղանդներ, որոնք իրենց կատարողական արվեստով հայտնի են ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում: Վահան Օհանյանն օժտված է նաև վարչատնտեսական ղեկավարի բարձր ունակություններով: Երկար

տալիներ եղել է մայրաքաղաքի Շենգավիթ տարածքի «Պատանիների և երիտասարդների ստեղծագործական կենտրոնի» տնօրեն: Սուրմալեցու վաստակաշատ զավակ Վահան Օհանյանն ամուսնացել է Յուլինա Գրիգորի Խանզադյանի հետ և ունեն Գրիգորին ու Գագիկին:

ԹՈՎՄԱՍՅԱՆ ՀՈՒՓՍԻՄԵ ԱՐՄԵՆԱԿԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Իգդիր քաղաքում, 1915 թ. , Տեր-Թովմասյանների գերդաստանում: Հայրը՝ Արմենակ Տեր-Թովմասյանը, երիտասարդ հասակից զորակոչվում է ռուսական բանակ, մասնակցում Արևելյան ռազմաճակատում գերմանացիների դեմ մարտերին: Մայրը՝ Լուսաճեմ Տեր-Մանվելյանը, ծնվել է հոգևորականի ընտանիքում, Սիոն վարդապետի դուստրն է: Սիոն վարդապետը սովորել է Գևորգյան ճեմարանում և վարդապետ է ձեռնադրվել Խրիմյան Հայրիկի կողմից ու աշխատել է Իգդիրի եկեղեցում: Հուիսիմե Թովմասյանի հոր՝ Արմենակի պապը, դարձյալ հոգևորական է եղել, ծառայել Իգդիրի եկեղեցում որպես քահանա:

Սիոն Վարդապետ

Թուրքական հարձակումների հետևանքով Թովմասյանների մեծ գերդաստանը 1918 թ. ստիպված թողնում է հայրենի Իգդիրը և տեղափոխվում (գաղթում) Երևան: Հուիսիմեն վերջացնում է Երևանի բժշկական տեխնիկումի դեղագործական բաժինը և աշխատում քաղաքի դեղատներից մեկում: Հայրենական պատերազմի ժամանակ ակտիվորեն մասնակցել է վիրավոր մարտիկների բուժման, խնամքի աշխատանքներին: 1949 թ. Հուիսիմեն ավարտում է Երևանի բժշկական ինստիտուտը և աշխատանքի անցնում Հոկտեմբերյանի շրջանում, որպես քիթ-կոկորդ-ականջի բժիշկ: Ավելի քան 25 տարի նա աշխատել է Երևանի համապատասխան կլինիկայում, ապա կամավոր մեկնել Կամո (Գավառ), նույնպես աշխատել իր մասնագիտությամբ:

Բժիշկ Հուիսիմե Թովմասյանն ամենուր վաստակել է հիվանդների և շրջապատի անկեղծ սերն ու հարգանքը: Նա մեծ հայրենասեր է, սուրմալասեր: Վերջերս շրջագայել է Սուրմալուում, հարազատ Իգդիրում, գաղթի ժամանակվա մանկական ջինջ արցունքներից հետո այնտեղ աչքերից թափել պատկառելի տարիքի աղի արցունքները:

ԱՐՄԵՆԱԿ ՏԵՐ-ԹՈՎՄԱՍՅԱՆՆ՝

ունեցել է Լուգիտանյա, Հուիսիմեն դուստրին: ԼՈՒԶԻՏԱՆՅԱՆ՝ ծնվել է Իգդիրում, 1912 թ. , ամուսնացել է Գարեգին Օհանյանի հետ: Գարեգինը Հայրենական մեծ պատերազմում զոհվել է. ունեցել են Արմենակին, որը վերջացրել է Երևանի բժշկական ինստիտուտը և որպես զինվորական բժիշկ ծառայել խորհրդային բանակում: Արմենակն ունի Լուսինեին, Պերճին... Լուսինեն և Պերճը ունեն մեկական զավակներ:

Հուիսիմե Տեր-Թովմասյանը շատ վաղ հասակում ամուսնացել է Ստեփան Վեհապետյանի հետ, որը վերջացրել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, շինարար-ինժեներ է եղել: Ունեցել են Արթուրին, դարձյալ ինժեներ-շինարար, աշխատում է Երևանի նախագծային ինստիտուտում: Արթուրն ունի Հրանտին, Հուիսիմեին: Հրանտն ստացել է բարձրագույն կրթություն, ներկայումս բնակվում և աշխատում է Մոսկվայում: Հուիսիմեն ունի միջնակարգ բժշկական մասնագիտություն և աշխատում է օդանավակայանում:

ԱԶԱՏՅԱՆ ՎԱՉԳԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Կողբ գյուղում, 1915 թ.: Ազատյանների գերդաստանը նույնպես բազմանդամ էր: Ընտանիքի անդամների մեծ մասն զբաղվում էր երկրագործությամբ, սրանց վրա էր դրված գերդաստանի հացի և բանջարեղենի, մրգերի և խմիչքների ապահովման գործը: Ավելի քիչ թվով Ազատյաններ զբաղվում էին անասնապահությամբ, խնամում էին թե՛ խոշոր եղջերավոր անասուններ՝ կովեր, գոմեշներ, թե՛ մեծ քանակությամբ ոչխարներ ու այծեր: Հողը մշակում էին արորով և գութանով: Հաճախ պտղաջրելու (առանձնապես բամբակենու) հարցում առաջանում էին դժվարություններ, սակայն Ազատյանները լինելով աշխատասեր և բարեխիղճ, պարտաճանաչ ձևով մասնակցում էին առուների մաքրման աշխատանքներին և իրենց հասանելիք ջուրը մշտապես ստանում էին ժամանակին:

Ազատյան ընտանիքը մասնակցել է Կողբի առաջին և երկրորդ գաղթին: Շատ կողբեցիների նման նրանք ևս մերկ ու քաղցած հասան Սարդարապատ, Էջմիածին, ապա բնավորվեցին Երևանից քիչ հարավ-արևմուտք գտնվող փոքրիկ մի գյուղում՝ Աղջաղշլաղում: Այստեղ ծնվեցին որդիները՝

Գեորգը, Սամվելը, Միքայելը: Գեորգն ունի Սերյոժային, Օքսաննային: Օքսաննան ունի Նելլիին:

Վազգենենց ընտանիքից քիչ մարդ ապրեց: Միակ եղբայրը՝ Վալոսը, գրագետ, բաղաքանապես պատրաստված երիտասարդ էր: Նրան 1937 թ., որպես հակախորհրդային քարոզչություն կատարողի, ձերբակալեցին և երկար ժամանակ մնալով սիբիրյան աքսորավայրերից մեկում, մահացավ:

ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Կողբ գյուղաքաղաքում, 1912 թ.: 1919 թ., հայկական ջարդերից մազապուրծ, հասնում է Էջմիածին, ապա բնակություն հաստատում Երևանում: Հաջողությամբ վերջացնելով մայրաքաղաքի միջնակարգ դպրոցներից մեկը, նա ընդունվում և 1939 թ. գերազանց ավարտում է Երևանի պետհամալսարանի քիմիական բաժինը: Երկար տարիներ աշխատել է ինստիտուտի քիմիական լաբորատորիայում, կատարել դասախոսական աշխատանքներ: Գյուլբուդաղյանը, հանրահայտ ակադեմիկոս Լևոն Մնջոյանի հետ, կատարել է մի շարք կարևոր գիտական փորձեր, որոնց արդյունքում ստացել են աշխարհում առաջին անչափ արժեքավոր գանգլերոն և քվատերոն դեղամիջոցները:

Լիպարիտ Գյուլբուդաղյանը 1973 թ պաշտպանեց դոկտորական թեզ, շուտով նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Գիտական աշխատանքների հետ նա կատարել է նաև դասախոսական աշխատանք: Տաղանդավոր գիտնականը, իր համեստության և հայրենասիրության շնորհիվ, մեծ հարգանք էր վայելում գիտության բնագավառի աշխատողների և հայրենակիցների շրջանում:

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Ծնվել է 1915 թ., նախկին Երևանի նահանգի Սուրմալու գավառում: Շատերի նման Սարգիս Գևորգյանի ծնողները թողել են հայրենի Սուրմալուն և գաղթել, թափառելով հասել Երևան և հանգրվանել Երևանում: Սարգիս Գևորգյանն ամուսնացել է Օֆելյա Ալեքսանյանի հետ:

Ունեն Գևորգին, Աշոտին, Էլեոնորային:

<u>Գևորգ Սարգսի Գևորգյանը</u> ծնվել է 1947 թ., Երևան քաղաքում: Հաջողությամբ վերջացնելով միջնակարգը, ընդունվում և ավարտում է Երևանի բժշկական ինստիտուտը: Ինստիտուտը վերջացնելուց անմիջապես հետո զորակոչվում է ԽՍՀՄ զինված ուժերում ծառայելու: Բժիշկ Գևորգ Գևորգյանը զորացրվելուց հետո վերադառնում է հայրենի Երևան և աշխատանքի անցնում նրա բուժհիմնարկներից մեկում:

<u>Աշոտ Սարգսի Գևորգյան</u>: Ծնվել է Երևանում: Աշխատել է դասախոս,

պաշտպանել դոկտորական թեզ, ստացել մաթեմատիկական գիտությունների դոկտորի աստիճան:

Ներկայումս դասախոսական աշխատանքների հետ միասին նա բազմակողմանի օգնություն է ցույց տալիս երիտասարդ մասնագետներին, գիտնականներին: Հանդիսանում է երիտասարդ գիտնականների միության նախագահը:

Աշոտ Գևորգյանն ամուսնացել է Անուշ Արտաշեսի Մարտիրոսյանի հետ: Ունեն Աննային և Մարինային: Աննան վերջացրել է ժողովրդական տնտեսության ինստիտուտը և հաջողությամբ իր գիտելիքները ներդնում է հանրապետության վերակառուցման գործում:

Մարինան ուսանողուհի է:

<u>Էլեոնորա Սարգսի Գևորգյան:</u> Ծնվել է Երևանում: Ամուսնացել է Սիմոն Դանիելյանի հետ, ունեն Գուրգենին ու Նարինեին: Գուրգենը սովորում է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, Նարինեն միջնակարգ դպրոցի աշակերտուհի է:

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՄԱՅԱԿԻ

Ծնվել է 1918 թ. ապրիլի 25-ին, Իգդիր քաղաքում, որը Սուրմալուի գավառի մշակույթի և հոգևոր կենտրոնն էր: Հարությունն ընդամենը 2 տարեկան էր, երբ ծնողները ողջ գերդաստանով գաղթում են: Հարությունը մանկուց սիրում էր հրաշքները, կլանված նայում լայնախաղացներին, ձեռնածուներին: Ստանում է բարձրագույն կրթություն, հողաշինարար ինժեների կոչում, ապա Խորհրդային ռեժիսորի մասնագիտություն: Շատ է շրջում ԽՍՀՄ տարածքներում, լինում խոշոր քաղաքներում: 1943 թ. Հարությունն Հակոբյանն սկսում է հանդես գալ որպես ձեռնածու-ճոպարար: Հանդես է գալիս Հայաստանի շատ շրջաններում, քաղաքներում: Հաջողություններից ոգևորված՝ նա տեղափոխվում է Մոսկվա և աշխատանքի անցնում «Մոսկոնցերտում»: Սովորում է Մոսկվայի Ա. Լունաչարսկու անվան թատերական ինստիտուտի ռեժիսորական բարձրագույն դասընթացներում:

Հարությունն Հակոբյանը լայն ճանաչում ունեցող, սիրված արտիստ էր ողջ ԽՍՀՄ տարածքում: Նրա բեմ բարձրանալն ու արտիստական շարժումները հիացմունք ու ժպիտ էին առաջացնում հանդիսատեսների մոտ: Միջազգային մի շարք մրցություններում նա շահում է մրցանակներ, ձեռք բերում համաշխարհային ճանաչում: Այդպիսի մրցանակարաշխություններից մեկում՝ 1959 թ., Փարիզում շահում է «Մեծ մրցանակ» (Գրան պրի) և ոսկյա մեդալ: Նա բազմաթիվ մրցանակների, ոսկե մեդալների, պատվոգրե-

րի, խլախուսանքների ասպետ է՝ սիրված հայրենակիցների, մանավանդ սուրմալեցիների կողմից:

Հարություն Հակոբյանը գրել է մի շարք մենագրություններ, գեղարվեստորեն նկարագրելով ֆոկուսի գաղտնիքները, նրա կատարման դժվարին ու հետաքրքիր ձևերը: Հակոբյանն իր մասնագիտությունը սիրով փոխանցում է երիտասարդ, տաղանդաշատ արտիստներին, պատրաստում արժանի հետնորդներ:

Նա սիրում է Սուրմալուն, Իգդիրը, նրա աշխատասեր ու տաղանդավոր մարդկանց, մշտապես շփվել է հայրենակիցների հետ:

1961 թ. ՀԽՍՀ կառավարությունը Հարություն Հակոբյանին շնորհում է Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի պատվավոր կոչում: Հարություն Հակոբյանի մոգական ցուցադրումները հայ ժողովրդի, երևանցիների համար վերածվում էին տոնահանդեսի:

ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

Ծնվել է Կողբում, 1890 թ.: Ընտանիքը կրել է բոլոր կողբեցիների կրած դժվարություններն ու գաղթի արհավիրքները: Հասել են Երևան և հիմնել Նոր Կողբը (1920 թ.):

Աշխատել են դաշտավարությունում, մշակել բրինձ, պտղատու այգիներ, զբաղվել խաղողագործությամբ:

Արամայիսը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին և, վերադառնալով գյուղ, ընտրվում է Նոր Կողբի կոլտնտեսության վարչության նախագահ: Իր ազնվության, աշխատասիրության և համեստության շնորհիվ նա մեծ հարգանք է վայելել համագյուղացիների, համերկրացիների,. նաև շրջանի ղեկավարության մոտ:

Նրա ղեկավարության տարիներին Նոր Կողբի կոլտնտեսությունը համալրվում էր շրջանի և հանրապետության առաջավոր տնտեսություններից մեկը, իսկ կոլտնտեսականները վարում էին բարեկեցիկ կյանք:

1931 թ. կոլտնտեսությունն ուներ 15 տնտեսություն, իսկ 1950 թ.՝ 114: Կոլտնտեսությունում աշխատում էին 1954 թ. 165 մարդ, մինչդեռ կոլտնտեսության դրամական եկամուտները 1953 թ. կազմում էին 1585566 ռուբլի՝ խիստ պատկառելի գումար այն տարիների համար: Տնտեսության այս խոշոր հաջողությունները պայմանավորված էին նաև նրա նախագահ Արամայիս Սահակյանի ազնիվ ու անձնուրաց աշխատանքով:

Վայելելով բոլորի անկեղծ համակրանքն ու հարգանքը, Արամայիս Սահակյանը մտահոգվում էր ոչ միայն համագյուղացիների բարեկեցության հարցով, այլև գյուղում կուլտուր-կենցաղային բարենպաստ պայմաններ ստեղծում: Նրա օրոք կառուցվեցին դպրոցական, մանկամսուրային շեն-

քեր, մշակույթի հոյակերտ պալատ, բարեկարգվեցին գյուղի փողոցները ու հրապարակը:

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՌՆՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Առնո Բաբաջանյանը ծնվել է 1921 թ. հունվարի 1-ին, Երևան քաղաքում: Ծնողները բնիկ սուրմալեցիներ են: Ընտանիքը գաղթել և դեգերումներով հասել է Երևան: Մանկուց Առնոյի մոտ նկատվել է հակումը դեպի երաժշտությունը: Պատահական չէ, որ 9 տարեկան Առնոն երաժշտական դպրոցի առաջին դասարանում գրում է իր առաջին ստեղծագործությունը՝ «Պիոներական քայլերգը»: Սրանով Բաբաջանյանը մտնում է երաժշտության հրաշք աշխարհը:

1947 թ. , ավարտելով Երևանի կոնսերվատորիան, մեկնում է Մոսկվա և 1948 թ. ավարտում Մոսկվայի կոնսերվատորիան: Իր բուռն ստեղծագործական աշխատանքի հետ, նա միաժամանակ դասավանդում է կոնսերվատորիայում, սովորեցնում ու դաստիարակում տաղանդավոր երիտասարդների: Բաբաջանյանը ճանաչված դաշնակահար էր, հիանալի մանկավարժ և ազնիվ ու բարի անձնավորություն:

Առնո Բաբաջանյանին առանձնապես հռչակ բերեց 1950 թ. գրած «Հերոսական բալլադը»:

Այս հոյակապ ստեղծագործության համար Առնո Բաբաջանյանն արժանացավ ՍՍՀՄ պետական մրցանակի:

Պրագայի երիտասարդական համաշխարհային փառատոնին նրա ստեղծագործությունները բազմիցս հնչեցին և ջերմորեն ընդունվեցին աշխարհի բազմազգ երիտասարդության կողմից: Այդ ստեղծագործություններն արժանացան Առաջին մրցանակի, նրա համբավն ավելի տարածվեց աշխարհում:

Առնո Բաբաջանյանը խորհրդային երաժիշտների առաջամարտիկներից էր՝ հարգված երաժշտասեր հասարակայնության և, ինչ խոսք, բոլոր սուրմալեցիների կողմից:

Առնո Բաբաջանյանը պարգևատրվել է ԽՍՀՄ մի շարք շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով:

ԱՀՄԱԴԵ ԳՈԳԻ

Ծնվել է Սուրմալուի գավառի Ասլանլու գյուղի եզդիների առաջնորդ Ուսուբ բեգի քրոջ՝ Ամինայի ընտանիքում, 1935 թ. , Աշտարակի շրջ. Շամիրամ գյուղում: Հանրահայտ Ուսուբ բեգի թոռն է: Երևանում ստացել է մանկա-

վարժական բարձրագույն կրթություն, աշխատել որպես հայոց լեզվի ուսուցիչ, եղել դպրոցի տնօրեն: 1963 թ. աշխատել է Հայաստանի ռադիոպետկոմում, որպես թղթական հաղորդումների բաժնի վարիչ: Ամիրդ Գոգին ավելի քան 30 տարի Հայաստանը, հայ ժողովրդին ներկայացրել է աշխարհին, լինելով նրա լավ բարեկամը: Զբաղվել է լրագրողի շնորհակալ գործունեությամբ, ունի բազմաթիվ հոդվածներ: 1997 թ. հրատարակել է «Մեր նախնիների ձայնը» վեպը, որի մասին դրվատանքի ջերմ խոսք է ասել գիտնական, բանասեր Չարքյազե Ռաշը: Գիրքը նվիրված է եզդի-քրդերի և հայ ժողովրդի բարեկամությանը:

Գրքում հետաքրքիր դրվագներ կան Սուրմալուի նշանավոր մարդկանց՝ Խաչատուր աղայի, Մարտիրոս Կանայանի (Դրաստամատ Կանայանի հոր), Ուսուբ բեգի, Ջհանգիր աղայի և այլոց մտերմության, բարեկամության վերաբերյալ:

Ամիրդ Գոգին հասարակական ակտիվ աշխատանքներ է կատարում: Նա հանդիսանում է Հայ-քրդական բարեկամության միության անդամ, հանդես է գալիս նաև արտասահմանյան համաժողովներում՝ ներկայացնելով Հայաստանը և եզդիների ստեղծագործական կյանքը Հայաստանում:

Ամիրդ Գոգին ամուսնացել է նշանավոր գյուղ Հաջիե Ջնդիի աղջկա՝ Զինա Ջաուարիի հետ և ունեն Ասյային ու Աննային:

Ասյան ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության համալսարանը, աշխատում է մայրաքաղաքի հիմնարկներից մեկում, տիրապետում մի քանի լեզուների: Ասյան ունի Շարմին, Ալանին, Արազին:

Աննան վերջացրել է Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը, տիրապետում է հայերենին, քրդերենին, անգլերենին, ռուսերենին: Աննան ունի մեկ դուստր՝ Դաննային:

Ամիրդ Գոգին իր պապերի, ծնողների ավանդույթներն ու պատգամները սրբորեն կատարում է և հայ-եզդիական բարեկամությունն էլ՝ ավելի ամրապնդում:

Մեր ժողովրդի մեծ բարեկամ Ուսուբ բեգի թոռը ևս հայ ժողովրդի լավագույն բարեկամն է, նրա սիրելի հոգեզավակը:

ՄԱՐԳԱՐՅԱՆ՝ ԱՐԹՈՒՐ ՆՈՐԻԿԻ

Ծնվել է 1960 թ. , Երևանում: Ծնողները՝Նորիկ Վահրամի Մարգարյանը և մայրը, բնիկ սուրմալեցիների ժառանգներ են: Արթուրի պապը՝ Վահրամ Փիլիպոսի Մարգարյանը, ծնվել է 1899 թ. , տատը՝ Սաթենիկ Ղևոնդի Հովակիմյանը, ծնված 1900 թ. , Սուրմալուի գավառի Փանիկ հայաբնակ խոշոր գյուղում: Մարգարյանների գերդաստանը բազմանդամ էր, զբաղվում էին երկրագործությամբ՝ մշակում բրինձ, բամբակ, բանջարաբոստանային կուլտուրաներ, մրգատու և խաղողի այգի, նաև անասնապահությամբ:

Մարգարյանները նաև լավ ռազմիկներ էին թե՛ ռուսական բանակի համար, թե՛ հայկական ինքնապաշտպանական ջոկատներում: Թուրք ելուզակները Փանիկին զգուշությամբ և վախով էին մոտենում, բանզի վանիկցիները նրանց ավազակաբարո գործողություններին ամեն անգամ կրկնակի հարված էին հասցնում: 1918 թ. գարնանը դավաճանաբար գաղթեցվում է շրջանը: Այդ մեծ գերդաստանի անդամները ևս գաղթեցին: Սկզբում մի կերպ տեղավորվեցին Սարդարապատի գավառի գյուղերից մեկում, ապա Նորիկ Մարգարյանի ընտանիքը տեղափոխվում է Երևան:

Արթուր Մարգարյանի պապը՝ Վահրամ Մարգարյանը, որպես հայկական բանակի մարտիկ մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին, աչքի ընկել իր խիզախությամբ: Արթուրը հաջողությամբ վերջացնում է Երևանի Ա. Պուշկինի անվան միջն. դպրոցը, զորակոչվում խորհրդային բանակ: 1978 թ. զորացրվելով զինվորական ծառայությունից, ընդունվում և 1984 թ. ավարտում է Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտը, աշխատանքի անցնում մանկավարժական բնագավառում:

1990-ից ակտիվ մասնակցություն է ունենում անկախության շարժմանը: Նրա ջանքերով կազմակերպվում է «Սուրմալու» մարտական ջոկատ, որն արցախյան հերոսամարտերում իրեն դրսևորում է լավագույն կողմերով, արժանանում բարձրագույն հրամանատարության գովասանքին: Արցախում մարտերից մեկի ժամանակ «Սուրմալու» ջոկատի շտաբի պետ Արթուր Մարգարյանը վիրավորվում է, սակայն չի լքում մարտական դիրքերը և նրա շարքերում մնում է մինչև խաղաղության հաստատումը: 1993 թ. բազմաթիվ մարտերում թրծված ու հերոսացած Արթուր Մարգարյանը ծառայության է ընդունվում ՆԳՆ՝համակարգում:Նման մարդկանց կարիքը նախարարությունը վաղուց էր զգում:

Արթուր Մարգարյանն ամուսնացել է Վեներա Հակոբի Բաղալյանի հետ և ունեն Վահանին ու Հռիփսիմեին: Վահանը կնքվել է Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում, իսկ Հռիփսիմեն՝ Էջմիածնի Ս. Հռիփսիմե եկեղեցում:

Արթուրի երակներում հոսող սուրմալեցու արյունը նրան հանգիստ չէր տալիս, և նա իրագործեց վաղեմի երազանքը՝ շրջեց ու տեսավ հայրենի Սուրմալուն, Իգդիրն ու Կողբը, հայրենի Փանիկը:

ՊՈՂՈՍՅԱՆ՝ ՍԵԴՐԱԿ

Ծնվել է Սուրմալուի գավառի Մոլլաղամար, ներկայումս Մոլլակամար գյուղում, 1890 թ.: Գյուղն ուներ ս. Ստեփանոս անունով եկեղեցի և ծխական դպրոց: Ծնողները, ինչպես և շատ համագյուղացիներ, զբաղվում էին երկ-

լագործությամբ՝ մշակում բամբակ, ծխախոտ, հացահատիկային կուլտուրաներ, նաև՝ անասնապահությամբ: Սկզբնական կրթությունը Սեդրակն ստացել է գյուղական դպրոցում, նրա ռուսական բաժնում (ըստ Սեդրակ Պողոսյանի հուշերի):

Արևմտահայաստանում թուրք ոճրագործները հասցրել էին հոշոտել 1,5-2 մլն հայերի: Թուրքական արևածոր յաթաղանի սուրսայրը հասնում է Սուրմալու: Սեդրակը զորակոչվում է հայկական բանակ և մեկնում թուրքական ճակատ: Ռուսական զորամասերի նահանջը, ճակատի լքումը շատ ծանր նստեց հայերի վրա: Պողոսյանների ընտանիքը թողած տուն ու տեղ, անասուններ և այգիներ, բռնում են գաղթի ճանապարհը և հանգրվանում Էջմիածնի շրջանի Ջաֆարաբադ (Գետաշեն) գյուղում: Աշխատասեր սուրմալեցիները արագ վերականգնում են իրենց տնտեսությունը, ակտիվ մասնակցում կոլեկտիվացմանը, ստեղծում բարեկեցիկ կյանք:

Սեդրակ Պողոսյանն ունեցավ Հրաչիկին, Հասմիկին:

Հրաչիկն ունեցավ Մնացականին, Աշոտին, Ջանիբեկին, Սեդրակին, Ավետիքին, Աշխենին:

Մնացականն ամուսնացել է Թեհմրայի հետ, ունեն Գագիկին, Միրային, Սերգեյին, Արմենին: Միդան ունի Վրույրին և Վահրամին:

Աշոտն ունի Ջիվանին, Հրաչյային, Վարդիթերին: Վարդիթերն ունի Վասպուրին:

Ջանիբեկն ունի Սիմային, Ռաֆայելին, Գարեգինին: Սեդրակն ամուսնացավ Անահիտի հետ և ունեն Հասմիկին, Քնարիկին, Աննային, Հրաչիկին:

Ավետիքն ամուսնացավ Վարսենիկի հետ և ունեն Անդրանիկին, Գևորգին:

Աշխենն ամուսնացավ Ռաղիկի հետ և ունեն Ռաֆիկին, Վահրամին: Պողոսյանը հիշում է, որ ընտանիքն զբաղվում էր հացահատիկի, բամբակի, բանջարեղենի և այլնի մշակմամբ: Խնամում էին կովեր, գոմեշներ, ոչխարներ, ձի, էշ: Ըստ նրա հիշողության, Մոլլաղամարն ու Աղդամարը իրար շատ մոտ, հարևան գյուղեր էին: Ժողովուրդն ասում էր՝ մթնշաղին 7-8 տուն կարող էին մեկ լամպով յոլա գնալ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՂԻՇԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Ծնվել է Սուրմալուի Կողբ գյուղում, 1890 թ.: Ընտանիքն զբաղվել է այգեգործությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ: Այստեղ էին աճեցնում Սուրմալուի հանրահայտ սեխն ու դդումը: Խնամում էին անասունների մեծ գլխաքանակ:

Եղիշեն ամուսնանում է համագյուղացի Խունգինյան Նուբարի հետ:

Շուտով սկսվում են կոտորածները ու բռնագաղթը: Գաղթեցին 1918 թ.: 1919 թ. սկզբներին Հայկական Հանրապետությունը կալտոդացավ թուրքերի գրաված հայկական այդ տարածքների մեծ մասը վերցնել իր հովանավորության տակ (դրան օգնեցին Դաշնակիցները): Սկսվում է ուրախություն, ցնծություն: Դեպի երկիր, դեպի հայրենի Սուրմալու, դեպի Կողբ: Եղիշեն հիշում է, որ հայրն ու պապը հպարտանում էին, որ իրենք ճիշտ էին կանխատեսել, որ Սուրմալուն երբեք թուրքին չեն տա, չէ՞ որ այնտեղ են Կողբի «համաշխարհային» կարևորության աղահանքերը:

Բարի լուրի հետ շտապով Արազն անցան: Ավերված էր հայրենի Կողբը, Ավերված ու թալանված: Մեծ ջանքերի գնով հնարավոր եղավ վերականգնել մեկ, երկու օթախ, ցանկապատել անասնատեղը, գրաղվել անասունների ձևոք բերման, հողի վար ու ցանքի, այգիների ոռոգման ու մշակման հարցերով: Ինչպիսին էլ լինեն գաղթն ու վերագաղթը, ծայրահեղ վիճակի մեջ են դնում ժողովրդին:

Շուտով եկավ աշունը. իր հետ բերելով գաղթի նոր գույժ: Ինչ արած, հայի ճակատագիր է: Այս անգամ գաղթեցին 1919 թ. աշնանը և հանգրվանեցին Սարդարապատի Մեծ Շահրիար գյուղում: Բնավորվեցին, տնավորվեցին, ապա երկիրը կարմրեց և դարձավ Խորհրդային Հայաստան: Ընտանիքում իրար ետևից ունեցան Գուրգենին, Վրեժին, Գագիկին, Էդվարդին, Շաբուլին, Տիգրանին, Աշոտին:

Վրեժն ամուսնացավ Ասյայի հետ և ունեն Սամվելին, Վազգենին:

Գագիկն ամուսնացավ Նատալյայի հետ և ունեցան Արմենին, Ամալյային:

Էդվարդն ամուսնացավ Ռուզաննայի հետ և ունեցան Գոռին, Կարենին:

Շաբուլն ամուսնացավ Գոհարիկի հետ և ունեցան Ռիմային, Վահանին:

Տիգրանն ամուսնացավ Միդայի հետ և ունեն Արգիշտիին, Արթուրին, Անժելային:

Աշոտն ամուսնացավ Նելլիի հետ և ունեն Գայանեին, Իսկուհուն, Կարինեին, Հրայրին:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱԶԱՐԻ (Մոր անունը ՍԱՐԱՅԻ)

Ծնվել է Սուրմալուի Մոլլաղամար գյուղում, 1888 թ. , մահացել 1980 թ. , Նորագավթում: 1909 թ. Հովհաննեսն ամուսնացել է Սաթենիկ Զաքարի Նուրյանի հետ՝ ծնված Կողբում, 1892 թ. , մահացել է 1984 թ. , Նորագավթում:

Հովհաննեսն ու Սաթենիկն ունեցել են 14 երեխա, որոնցից 1999 թ. կային միայն 5-ը: Երեխաները գրվել են Ղազարյան ազգանունով:

Ղազարյան Մարջիկ (Հեղինե): Ծնված 1912 թ. , Սուրմալուի Մոլլաղամարում: 1932 թ. ամուսնացել է Ցոլակ Մովսեսի Նահապետյանի հետ, ունե-

ցել 2 աղջիկ, մեկ տղա:

Ղազարյան Հարություն: Ծնված 1922 թ. , Բաքվում: 1945-ին ամուսնացել է Էմմա Եղիշի Վարդանյանի հետ, ունեցել են 3 աղջիկ, 3 տղա:

Ղազարյան Հրանտ (ՀՈՐԻԶՈՆ): Ծնվել է 1927 թ. Նորագավթում: Ամուսնացել է Լաուրա Լևոնի Դավթյանի հետ, ունեցել մի աղջիկ, մի տղա (տե՛ս Հրանտ-Հորիզոն):

Ղազարյան Նուշիկ (Ելենա): Ծնվել է 1930 թ. , Էջմիածնի շրջանի Սամադար գյուղում: 1950 թ. ամուսնացել է Արտաշես Մեսրոպի Եզակյանի հետ, ունեցել 2 աղջիկ, 3 տղա:

Ղազարյան Ռիմա: Ծնվել է 1932 թ. , Էջմիածնի շրջանի Աղջաղալա գյուղում: 1950 թ. ամուսնացել է Գվալդիր Սարգսի Հարությունյանի հետ, ունեցել 2 աղջիկ, մեկ տղա:

Հովհաննեսը ծառայել է ցարական բանակում: Մասնակցել է առաջին համաշխարհային պատերազմին, կռվել ու վիրավորվել Հունգարիայում: Մի քանի տարի Իգդիրում եղել է ոստիկան: 1918 թ. մեծ գաղթին, շեն օջախը թողնելուց հետո, իր բավական մեծ ընտանիքն առած, նա Անդրկովկասում անվերջ տեղից-տեղ է շրջել՝ հայրենի ծննդավայրի նմանակը գտնելու հույսով: Մեկ տասնյակից ավելի արհեստներ տիրապետելու հանգամանքը նրան դարձրել էր բոլորովին հարկավոր մարդ: Նրան դիմողները շատ-շատ էին, իսկ նա ամենքի հանդեպ պատրաստակամ՝ ոչ միայն ձեռքի հունարով, այլև ցորեն լեզվով: Հաճելի էր լսել նրա վերջ չունեցող, համով-հոտով զրույցները, պատմությունները, անեկդոտները: Ասված ամեն նախադասություն իմաստավորում էր հայերեն կամ հարևան ազգերի ասույթներով ու առածներով: (Գիտեր արևելյան մի քանի լեզուներ): Հովհաննեսի ծննդյան անունը շատերը չգիտեին, որտեղ էլ ապրել է, նրան կոչել են՝ «Վարպետ ջան» ... «Վարպետջանը» իր արհեստներով ամենամոտ նեյուկն էր գյուղացուն, շրջապատին: Թեթևացնելով մարդկանց առօրյա հոգսն ու կարիքը, բարձրարժեք աշխատանքի դիմաց նա հաճախ չնչին վարձ էր վերցնում... Երևի այս հանգամանքն էլ, միանալով նրա մյուս մարդկային հատկանիշներին, նրան բոլորի մտերիմն էր դարձրել:

Փոքրի հետ փոքր, մեծի հետ մեծ Հովհաննեսը, բոլոր փոքր ու մեծ ուրախությունների, քեֆերի ու հարսանիքների թամադան էր նշանակվում, միջոցառումները կատարյալ դարձնելու նպատակով:

Հովհաննեսի տասներորդ զավակ, երգիծաբան-ասմունքող Հորիզոնը, հավանաբար իր ընդունակությունների ընտրանին ժառանգել է հորից, որին անչափ սիրել է:

ՀՐԱՆՏ-ՀՈՐԻԶՈՆ
(ՀՐԱՆՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ծնվել է 1927 թ. հուլիսի 10-ին: 1934-35 ուսումնարանում սովորում է ծննդավայրի՝ Նորագավթի միջնակարգ դպրոցում: Հորիզոնը սիրում էր բանը: 4-րդ դասարանից հանդես էր գալիս աշակերտների, հանդիսատեսի առաջ, ասմունքում մեծերից լսած զանազան զվարճապատումներ: Մասնակից էր դպրոցական բոլոր միջոցառումներին և, ժամանակին շատ տարածված, օլիմպիադական մրցույթներին: Շուտով ընդգրկվում է Երևանի Ղ. Ղուկասյանի անվան պիոներների և դպրոցականների պալատի թատերական խմբակում, որի ղեկավարն էր Արուս Ոսկանյանը, իսկ Ա. Ոսկանյանի մահից հետո՝ նշանավոր կոմիկ Մուրադ Բագրատյանը:

Երկու տարի, Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում աշխատելու տարիներին, խաղացել է մի շարք պիեսներում: Թատրոնի նշանավոր դերասանների (Պարույր Սանթրոսյան, Պերճ Գևորգյան, Արշավիր Ղազարյան), խորհրդով ընդունվում է նորաբաց Թատերական ինստիտուտի նախապատրաստական բաժինը: Կուրսը վարում էր ռեժիսոր, հետագայում փայլուն դերակատարումներով հայտնի Թադևոս (Թաթիկ) Սարյանը: Հորիզոնը շատ բան սովորեց Թ. Սարյանից, առաջին հերթին այն, որ չպետք է էժանագին միջոցներով ծիծաղ կորզել հանդիսատեսից: Այնուհետև, առաջին և երկրորդ կուրսերում, դասընթաց է Գուրգեն Ջանիբեկյանի սիրելի ուսանողը, մնալով այդպիսին ինստիտուտից հետո էլ:

Հորիզոնի Ծնողները: Հովհաննես Հովհաննիսյան և Սաթենիկ Նարոյան:

Թատրոնի սիրուց բացի, Հորիզոնն ուներ մի ուրիշ հրապուրանք ևս. գողտրիկ ու քնարական բանաստեղծություններ էր գրում: 1950 թվականին Հայաստանի գրողների միությունում երիտասարդ գրողների չորրորդ խորհրդակցությունում Հորիզոնի «Արևոտ ճամփա» բանաստեղծությունների

շարքը բարձր գնահատականի է արժանանում, որոշվում է նրան ուղարկել Մոսկվա՝ Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտում սովորելու: Դրան նպաստեցին Վահագն Դավթյանի, Հրաչյա Քոչարի, Սիլվա Կապուտիկյանի բանավոր և տպագիր ողջույնները, իսկ ամենից նշանակալիցը Սուրեն Վահունու «Ավանգարդում» տպագրված «Բաց նամակ շնորհալի բանաստեղծին» ծավալուն հոդվածն էր:

Մոսկվայում ուսանելու (1951-1956) հինգ տարիները բախտորոշ եղան ապագա երգիծաբանի համար: Գրականության ինստիտուտում սովորողներին լայն հնարավորություն էր տրվում ցանկացած միջոցառման, ելույթ-այցման հաճախելու: Հորիզոնը նախընտրում էր զվարճալի հանդեսները, հումորիստ-երգիծաբանների կատարումները, իսկ Արկադի Ռայկինին գտնում էր ամենուր՝ մայրաքաղաքի որ դահլիճում էլ նա հայտնվեր:

Վերադառնալով Երևան, Հորիզոնը 1957-1968 թթ. աշխատում է «Հայպետհրատում» (սրբագրիչ, կրտսեր խմբագիր): 1963 թ. , կանանց տոնին նվիրված ցերեկույթին, Հայպետհրատում ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանը, լսելով Հորիզոնի նորաստեղծ երգիծական նովելների կատարումները, ծիծաղի արցունքները սրբելով, թոթին գլուխ. «Ընկերջոջը ընդունեք քաղաքն, եթե ոչ իմ խաթեր համար, գոնե հայ թատրոնի համար»:Նույն տարին Հորիզոնին հրավիրում են ռադիո՝Նոր տարվա կրեկույթին նվիրված հաղորդմանը: Հաղորդումից հետո, որն իրավամբ մտավ ռադիոյի «Ոսկե ֆոնդ»,Նախիր Զարյանը մշակույթի նախարարին դիմեց գրավոր. «Հրանտ Ղազարյանն օժտված է հումորի մեծ զգացումով: Մեր էստրադային բեմում հումորը շատ է պակասում: Իր 70-ի հասնող գործերով նա կարող է լրացնել այդ բացը»:

1965 թվականին համահայաստանյան 2-րդ փառատոնում երգիծաբան-ասմունքողը դառնում է դափնեկիր: Այդ առթիվ մամուլը գրում է. «Զավադանց ինքնատիպ է Հրանտ Ղազարյանի արվեստը... Շարունակելով հայ ժողովրդի հումորիստական ավանդները, նա ստեղծել է իր հերոսին և հերոսուհուն, որոնք ընկնելով տարբեր իրավիճակների մեջ, խարազանում են մեր կյանքի և ժամանակի թերությունները»:

Հայտնի կատակերգու-դերասան Պահարեն (Հայկ Պետրոսյան) Թիֆլիսում, ունկնդրելով Հրանտին, ասել է. «Նրա արվեստին հաղորդակցվելն ուղեկցվում է հրավառության նմանվող ծիծաղի անգուսպ պոռթկումով»:

Հորիզոնը 1966 թվից Հայֆիլհարմոնիայի մենակատար է, Հայաստանի ուրախների և հնարամիտների (ՀՈՒՀԱ) կրկնակի մրցանակակիր (1975-1976), Հայ գրողների միության անդամ՝ 1990-ից: Բազմիցս հանդես է եկել ռադիոյով ու հեռուստատեսությամբ, մի քանի անգամ շրջել ողջ հանրապետությունն ու ներքին սփյուռքը, իր բանաստեղծություններն ու երգիծական

ստեղծագործությունները տպագրվել են մամուլում, ալմանախներում ու առանձին գրքերով: Առանձնապես մեծ թիվ են կազմում նրա հետ վարած հետաքրքիր հարցազրույցները և հոդվածները: Սեն հոդվածագիր աշխատել է յուրովի ներկայացնել «Հորիզոնի արկածների» հերոսին և նրանց կատարող երգիծաբան-ասմունքողին: Այդ ամենի մեջ գուցե ամենարտահայտիչը Գոհար Գասպարյանի խոսքն է՝ կարճ ու դիպուկ. «Նա ստեղծել է իր մենաթատրոնը և ունի առասպելական արագությամբ աճող մշտական հանդիսատես: Սա մեծ գործ է և լայն ժողովրդականություն վայելող արվեստ, որի սակավաթիվ ստեղծագործողների ու պահպանողների համար պետք է դողալ»:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐԿՈՍ ԳԵՎՈՐԳԻ

Ծնվել է 1881 թ. Սուրմալուի գավառի Բլուր գյուղում, հարուստ գյուղացու ընտանիքում: Մարկոս Մելքոնյանն զբաղվում էր ոչ միայն գյուղատնտեսական աշխատանքներով, այլև մեծածախ առևտրով, հասնելով մինչև Հյուսիսային Կովկաս և Դոնի Ռոստով:Նա Բլուր գյուղում ուներ բամբակազտիչ գործարան, իսկ 20-ական թվականներին՝ Երևանում սանգակի (բարեհայի) փուռ: Մահացել է 1935 թ.:

Գաղթել են երկու անգամ: 1917-ին եկել են Արմավիրի շրջանի Ղուզդիգան գյուղ, ետ են գնացել և 1918-ին նորից գաղթել Էջմիածին, ապա՝ Լոր Արմավիր: Մարկոսը գյուղում մառուզելով կռվել է թուրքերի դեմ այնքան ժամանակ, մինչև եկել և հայտնել են, որ իր ընտանիքը ևս ապահով հասել է Արաքսի ձախ ափը:

Մարկոսի առաջին կնոջ անունը Սաթենիկ էր: Սաթենիկից ծնվել է Հակոբը (Ջանիբեկ): Սաթենիկի մահից հետո ամուսնացել է Շուշանիկի հետ, որից ծնվել է Սոսը (Մելքոնյան-Գրիգորյան):

Սոս Մարկոսի Գրիգորյանը ծնվել է1912 թ. , Բլուրում: Երիտասարդ ժամանակ Ղուզդիգանում եղել է կոմերիտմիության քարտուղար, որի սկզբնավորողն ինքն էր: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սոսը եղել է Երևանի Կիրովյան շրջանի կուսկոմիտեի երկրորդ քարտուղար, որից հետո՝ Երևանի կուսքաղկոմի երրորդ քարտուղար: Կոմկուսի անդամ էր 1939 թվականից: Մահացել է 1971 թ.: Մինչև օրս նրան ճանաչողները սիրով են հիշում հայրենիքի այդ նվիրյալի անունը:

Սոս Գրիգորյանն ամուսնացած էր Անահիտ Էվոյանի հետ: Ունեին Նվարդին, Մեղրային և Արտավազդին:

Նվարդն ունի Գագիկին, Մեղրան՝Նանեին և Մարինեին:

Արտավազդն ունի Արտակին և Սոսին:Նանեն ունի Ալբերտին:

ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ ՀԱԿՈԲ ՄԱՐԿՈՍԻ

Ծնվել է 1906 թ. , Սուրմալուի Բլուր գյուղում: Ընտանիքի հետ գաղթել են երկու անգամ՝ 1917 և 1918 թթ.: 1930 թ. ընդունվել է կոմկուսի շարքերը:

Գաղթից անմիջապես հետո եկել է Երևան, մոլեռանդ կողմից իր պապի մոտ, զբաղվել դարբնությամբ: 1923 թ. ամուսնացել է Մարիամի հետ:

Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, եղել է պարտիզանական խմբի ղեկավար Կրասնոդարի երկրամասում, աչքի ընկել իր խիզախությամբ և հնարամտությամբ: Կառավարության կողմից պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով և մեդալներով: Մահացել է 1973 թ. , Երևանում:

Հակոբը և Մարիամն ունեցել են Նշանին և Գևորգին:

<u>Նշան Մելքոնյանը</u> ծնվել է 1924 թ., Երևանում: Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական բաժինը 1951 թ. , աշխատել Մերգելյանի ինստիտուտում, ապա զբաղվել մանկավարժությամբ: Երկար տարիներ նա եղել է N 13 պլտֆտեխուսումնարանի դիրեկտորը, որի հիմնադիրը հենց ինքն էր: Դա այն ուսումնարանն էր, որի պատրաստած ռոբոտը մասնակցել է Բուլղարիայում կազմակերպված միջազգային ցուցահանդեսին: Նշան Մելքոնյանը մահացավ 1992թ., Երևանում:

Նշանն ունի երկու դուստր. Նաիրա (լրագրողուհի) և Սաթենիկ (ինժեներ, ավարտել է պոլիտեխնիկականի մեխանիկական ֆակուլտետը):

ՄԵԼՔՈՆՅԱՆ՝ ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲԻ

Ծնվել է 1927 թ. հուլիսի 6-ին, Երևանում: Ավարտել է Խ. Աբովյանի անվան դպրոցը (այն ժամանակ 7-ամյա էր), ապա՝ բժշկական ուսումնարանը և ֆիզկուլտուրայի ինստիտուտը (1950 թ.): Հանրապետության սպորտի վետերաններից է, ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ, միութենական կարգի մրցավար, ֆիզկուլտուրայի գերազանցիկ, արժանացել է կառավարական բազմաթիվ պարգևների: Նրա սաներից շատերը բարձր են պահել հայրենական սպորտի պատիվը: Կան ՍՍՀՄ չեմպիոններ հունա-հռոմեական ըմբշամարտի գծով:

1954 թ. ամուսնացել է Նինել Մարաբյանի հետ:

Ժառանգները՝ Ստեփան, Մարկոս, Հակոբ:

Ստեփանն ավարտել է պոլիտեխնիկականի շինարարական ֆակուլտետը, ունի Գեորգին և Նինելին:

Մարկոսն ավարտել է ժողտնտինստիտուտը 1989 թ.: Ամուսնացել է Լալա Աբրահամյանի հետ 1983 թ.: Ունեն Մարիամին և Դավթին:

Հակոբն ամուսնացել է Մարիների հետ 1982թ.: Ունեն Հասմիկին և Նոնային:

Գերդաստանը գնալով բազմանում է, և բոլորն էլ հավատում են, որ մի գեղեցիկ օր տեսնելու են իրենց պապենական գյուղն ու հարազատ վայրերը:

«ՍՈՒՐՄԱԼՈՒՆ» ԱՐՑԱԽՈՒՄ

Սուրմալուի հայ բնակիչները հայտնի էին իրենց ազատասիրությամբ և ռազմական գործին նվիրվածությամբ: Առաջին աշխարհամարտում և հետագա տարիներին Սուրմալուն հայրենիքի պաշտպանության համար տվել է փառաբանված բազում մարտիկներ: Այդպես եղավ նաև կրկնվող աշխարհամարտի տարիներին: Խորհրդային բանակի շարքերում իրենց հերոսությունը ցույց տվեցին շատ սուրմալեցիներ՝ շարքային մարտիկներից մինչև զորահրամանատարներ:

Արթուր Խաչատրյան

Նախնիների արյան կանչով Հայաստանի ինքնապաշտպանական և Արցախի ազատագրական կռիվներին սուրմալեցիների ժառանգները նույնպես արիության ու քաջության օրինակ ցուցաբերեցին: Նրանցից շատերը համախմբվեցին և կազմեցին «Սուրմալու» մարտական ջոկատը, որն աչքի ընկավ արցախյան մարտերում:

Ջոկատի ստեղծման նախաձեռնողները էին մինչ այդ արդեն բազմաթիվ մարտերի մասնակից Արթուր Խաչատրյանը, Արթուր Մարգարյանը, Արմեն Խաչատրյանը և սուրմալեցիների ուրիշ ժառանգներ:

1992 թ. կազմավորված ջոկատի հրամանատար է ընտրվում Արթուր Խաչատրյանը, նրա տեղակալ՝ Արթուր Մարգարյանը: Այդ թվին Ասկերանի շրջանի ազատագրական մարտերին մասնակցելուց առաջ ջոկատն օծվում է Ս. Ջորավար եկեղեցում: Օծման արարողությունը կատարում է տեր Սելտվրեն: Նա մարտիկներին մեկիկ-մեկիկ օծելուց հետո օծում է նաև ջոկատի խաչը: Այդ խաչը, որպես հույսի և հավատի պաշտպան, ջոկատի հետ մասնակցում է բազում թեժ մարտերի, մարտիկների հետ կիսում դժվարություններ և պատվով ու հաղթանակով վերադառնում Երևան:

«ՍՈՒՐՄԱԼՈՒ» ջոկատը

Ասկերանի շրջանում հրամանատարության առաջադրանքը կատարելուց հետո ջոկատը պաշտպանական ծանր մարտեր է մղում Քարագլուխ գյուղի դիրքերում, թշնամուն պատճառելով ծանր կորուստներ: Թշնամին ամեն գնով ձգտում էր տիրանալ Լաչինի միջանցքին, կտրելով Արցախը Մայր Հայաստանից: «Սուրմալուն» հրամանատարության կարգադրությամբ շտապ տեղափոխվում և դիրքեր է գրավում Լաչինի շրջանում: Ծավալված թեժ մարտերում «Սուրմալուն» ոչ միայն մեծ կորուստներ է պատճառում հակառակորդին, այլև գրավում է ռազմական տեսակետից չափազանց կարևոր Կորբա բարձունքը, խափանելով նրա մտադրությունը: Վճռորոշ այս մարտերի ժամանակ հրամանները անթերի կատարելու, խիզախության ու հերոսության համար Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 1993 թ. փետրվարի 25-ի թիվ 94 հրամանով ջոկատի բոլոր անդամներին շնորհակալություն է հայտնվում, իսկ առավել քաջերը խրախուսվում և պարգևատրվում են:

Հանգստի համար Երևան վերադարձած ջոկատը համալրվում և ռազմական ուսուցմամբ է զբաղվում: Ջոկատի առանձին մարտիկներ մասնակցում են նաև Ֆիզուլու և այլ բնակավայրերի ազատագրման կռիվներին:

«Սուրմալու» ջոկատը կռիվների մեջ էր մինչև 1994 թ. հունվարը, մինչև խաղաղության հաստատումը:

Լավ է ասել մեծ բանաստեղծը՝ «Մեր սուրը փառքով դրեցինք պատյան»: Ջոկատի մարտիկները վերադարձան իրենց հայրենի օջախները՝ սուրմալեցուն հատուկ ջանասիրությամբ ու աշխատասիրությամբ շենացնելու այն: Մի մասն էլ աշխատանքի անցավ հանրապետության նորաստեղծ գործերի, պաշտպանության և այլ նախարարություններում: Ջոկատի հրամանատար Արթուր Խաչատրյանը, նրա տեղակալ Արթուր Մարգարյանը և ուրիշներ, վերջացնելով հանրապետության նորաստեղծ գործերի նախարարության բարձրագույն հատուկ դպրոցը, հայրենիքին ծառայում են այդ համակարգում, իրենց փորձն ու հայրենասիրական ավյունը հաղորդելով երիտասարդներին:

«Սուրմալու» ջոկատի բոլոր մարտիկները այսօր էլ պատրաստ են ցանկացած պահի զենքով պաշտպանել ոչ միայն Հայաստանի ու Արցախի սահմանները, այլ նաև ազատագրելու իրենց ծնողների, պապերի հայրենի Սուրմալուն, որն այնքան նենգորեն պոկեցին Մայր Հայաստանից:

Փա՜ռք հայրենիքի համար մղված պայքարում զոհված մեր անմահ հերոսներին: Փա՜ռք «Սուրմալու» ջոկատի բոլոր մարտիկներին, հայրենիքին անձնուրաց ծառայող սուրմալեցիների հերոս ժառանգներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա-ԴՕ, «Հայ թուրքական ընդհարումները Կովկասում, 1905-1906 թթ.», Հրատարակչություն Նազարյանց, Երևան, 1907, /3/

Ղ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890 թ.

Աղայան Ծ. , «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից», Երևան, 1976 թ.

Առաքելյան Մ. , «Տրդատ և Գրիգոր Լուսավորիչ», Հլ. Բ. Հ. կուլտուրայի միություն. Բաքու, 1910 թ.

Ասլանյան Ա. , «Հայաստան», «Միտք», Մոսկվա, 1968 թ.

Ավագյան Ղ. , «Հայկական ժողովրդական տարազներ», Երևան, 1983 թ.

Ավագյան Ս. , Տնամերձ թռչնաբուծություն, «Հայաստան», Երևան, 1975 թ.

Ավագյան Լ. , Ավագյան Ս. , «Խոհարարություն», «Ֆենիքս» հր., Երևան, 1996 թ.

Ավագյան Ս. , «Շարուր», «Տիգրան Մեծ» ՓԲԸ, Երևան, 1998 թ.

Բաղրամյան Ի. , «Իմ հիշողությունները», «Հայաստան», Երևան, 1979 թ.

Բալասեղյան Հ. , «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական բառարան», «Լույս», Երևան, 1973 թ.

Գևորգյան Հ. , «Դրո», «Ազատ խոսք», Երևան, 1991 թ.

Գրիգորյան Վ. «Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում», ՀՍՍՌ ԳԱ հր. Երևան, 1958 թ.

Երեմյան Ս. , «Հայաստանը ըստ Աշխարհացույցի», «Հայաստան», Երևան, 1963 թ.

Տեր-Ղևոնդյան Ա. , «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում», ՀՍՍՀ ԳԱ հր. , Երևան, 1965 թ.

Իսաբեկյան Է. , «Իգդիր», «Արևիկ» հր., Երևան, 1994 թ.

Լալայան Ե. , «Ճիսական կարգերը հայոց մեջ», 1913 թ.

Լազյան Գ. , «Հայաստանը և Հայ դատը»

Լաստիվերցի Արիստակես, «Պատմություն», Երևան, 1972 թ.

Լաստիվերցի Ա. , «Հայոց պատմություն», Ալեքսանդրապոլ, 1893 թ.

Լյուդշվեյտ Է. , «Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին», ՄՊՀ, Մոսկվա, 1966 թ.

Խորենացի Մ. , «Պատմություն հայոց», ԳԱ հր. , Երևան, 1958թ.

Կարայան Ա. , «Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը», Երևան, 1924 թ.

Կարապետյան Ս., «Սուրմալու գավառ», «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, Երևան, 27-28 մայիս, 1998 թ.

Կիրակոսյան Ջ. , «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը», «Հայաստան», Երևան, 1965 թ.

Հակոբյան Թ. , «Հայաստանի պատմական աշխարհագրություն», «Միտք», Երևան, 1968 թ.

Հակոբյան Թ. , «Հայ ժողովրդի պատմության հիշարժան վայրերը», «Լույս», Երևան, 1990 թ.

Հայրությունյան Ա. , «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկասում 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները», ՀՍՍՌ ԳԱ հր. , Երևան, 1984 թ.

Հայրությունյան Վ. , «Քրիստոնեության տարածումը Հայաստանում և նրա հետևանքները», Երևան 1963 թ.

Մանանդյան Հ. , «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեստինգյան քարտեզի», «Հայաստան», Եր. , 1936 թ.

Մանուկյան Ա., «Հուշեր», «Արևելք» հր., Երևան, 1991 թ.

Շահինյան Ա. , «Հայրենի դողանջներ», «Հայաստան», Երևան, 1978 թ.

Սարգսյան Ե. , «Դավադիր գործարք Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա», «Հայաստան» հր., Երևան, 1995 թ.

Սիմոնյան Հ., «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից», «Հայաստան» հր., Երևան, 1991 թ.

Վրացյան Ս. , «Հայաստանի Հանրապետություն», «Հայաստան», Երևան, 1993 թ.

Օգտագործվել են նաև ՀՍՀ համապատասխան հատորներից հոդվածներ:

ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարությունյան Ա. և ուրիշներ, «Հայկական ԽՍՀ ատլաս», ՀԽՍՀ ԳԱ հր. , Երևան, 1961 թ.

Հարությունյան Ա. , «Կովկասյան ճակատ», «Հայաստան», Մոսկվա, 1968 թ.

Պիոտրովսկի Բ. , «Ուրարտուի մշակույթը», «Ավրորա», Լենինգրադ, 1967 թ.

Պիոտրովսկի Բ. , «Կարմիր բլուր», «Ավրորա», Լենինգրադ

Շոպեն Ի. , «Պատմական հուշարձանների վիճակը Հայկական մարզում Ռուսական կայսրությանը միացման էպոխայում», Ս. Պետերբուրգ, 1852 թ.

Լոբանով Պ. (գլխավոր խմբագիր), «Գյուղատնտեսական հանրագիտարան», «Գոսիզդատ սելխոզլիտերատուրի», 1-6 հատորներ, Մոսկվա, 1949-1975 թթ.

ՅԱՆԿ

Հեղինակի կողմից 3
Պատմաաշխարհագրական տեղեկություններ 5
Բնակավայրերը, սովորույթները 53
Գյուղատնտեսությունը 117
Սուրմալեցիներ 140
«Սուրմալուն» Արցախում 232
Օգտագործված գրականության ցանկ 234

ՍԵՐԳԵՅ ԱՎԱԳԻ ԱՎԱԳՅԱՆ

ՍՈՒՐՄԱԼՈՒ

Խմբագիր - սրբագրիչ՝
Ա.Ա.Ղազինյան
Համակարգչային ձևավորող
Համլետ Հակոբյան
Համակարգչային շարվածքը՝
Նարինե Ավետիսյան
Գայանե Ներսիսյան

«ՎԱՆ ԱՐՅԱՆ»
ԵՐԵՎԱՆ
2000թ.

Ծավալը՝ 15 տպ.մամուլ: Չափը՝ (60x84)1/16: Տպաքանակը՝ 250:
«ՎԱՆ ԱՐՅԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ